



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
2(110) 2023






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
2(110)2023



ISBN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Յ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.Գ.Ք., դոցենտ Ա. Փխրիկյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Մահմանադրական դատարանի սլաշտոնական դիրքորոշումների հետ: Մահմանադրական դատարանը սլաշտասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ «ԴԱՏԱՎՈՐԸ ԵՆԹԱԿԱ Է ՕՐԵՆՔԻՆ» ԴՐՈՒՅԹԸ CONTRA LEGEM ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – **Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ**.....10

 - ՔՈՒՔԻՆԵՐԻ (COOKIES) ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – **Ս. ՄԻՄՈՆՅԱՆ, Լ. ԱՂԱԶԱՆՅԱՆ**.....44

 - ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԻԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՌՆՈ՞Ղ, ԹԵ՞ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՆՍՏԻՏՈՒՏ – **Ա. ՂԱԶԱՐՅԱՆ, Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**.....75

 - ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ – **Ա. ՔԻՇԱՐՅԱՆ**.....100

 - ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ – **Լ. ԶԻՐՈՅԱՆ**.....116
- ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ**
- СИНЕРГЕТИКА ПЕРЕХОДНОГО КРИЗИСА И ФЕНОМЕН МАЛОЙ КОНСТИТУЦИИ В ПЕРИОД РАСПАДА СССР – **Փ. ԱԳԱԲԵԿՅԱՆ** (ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՄԻՆԵՐԳԵՏԻԿԱՆ ԵՎ «ՓՈՔՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ» ՖԵՆՈՄԵՆԸ ԽՍԿՄ ՓԼՈՒՋՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ – **Ֆ. ԱՂԱՐԵԿՅԱՆ**)134

- ՀԱՆՁՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՁԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ - **Ս. ՀԱԿՈՐՅԱՆ**194
- ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՆՈՐ ՄՈԴԵԼԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ, ԹԵ՛ մԱՍՆԱՎՈՐ ԳԱՆԳԱՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ «ՕՐԻՆԱԿԱՆ» ԱՆՏԵՍՄԱՆ ՄԻՋՈՑ - **Ն. ՇԱՀԻՆՅԱՆ**206

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1683-1692)

- ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 39-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԴ ԿԵՏԻ, «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 43-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 8-ՐԴ ԿԵՏԻ, «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, «ԱՐՀԵՏԱՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1683, 11 ապրիլի 2023 թվականի)244
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Վ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ Ս. Ս. ՍԱՖԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ281
- 2023 թվականի մարտի 24-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՎՃԱՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԲԱԺՆԻ ՄԱՍԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(110)2023

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1684, 14 ապրիլի 2023 թվականի)293

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ297
- ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
 ՎՐԱ՝ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ
 ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
 ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1685, 25 ապրիլի
 2023 թվականի)307
- 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
 ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
 ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
 ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1686, 16 մայիսի
 2023 թվականի).....336
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....342
- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ԵՐԿՈՒ
 ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴԱՐՁ
 ԱՌԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՃԱՄՓՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
 ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1687, 16 մայիսի
 2023 թվականի)351

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....355
- 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՈԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1688, 16 մայիսի 2023 թվականի)364
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....368
- 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱԶ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1689, 30 մայիսի 2023 թվականի)377
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ382
- «ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՉՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ՝ ՄԻՆՉ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ ԼԻՆԵԼԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

- ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1690, 30 մայիսի 2023 թվականի)391
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ս. ՍԱՖԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ414
 - «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 175-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-4-ՐԴ ԿԵՏԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՄԲ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1691, 2 հունիսի 2023 թվականի).....432
 - 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ՀԱՅՏԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎԱԾ՝ «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-Ի ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ (ՎՎԲ/KFW) ՏԵՂԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1692, 13 հունիսի 2023 թվականի).....464
 - ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ469

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՄՊԱՆԻՆ.....480
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ482
- ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ483
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՏՆՕՐԵՆԻՆ486

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ488
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ Մ.ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....490

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(110)2023

ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ.....492

- ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐԿԱ Է ԳՏՆՎԵԼ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԻ՝ ԹԱԳԱՎՈՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ.....494
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ.....495
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է «ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ XI ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ»496
- ՍՈՖԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ 20-ՐԴ ՆԻՍԸ497

DOI: 10.59560/18291155-2023.2-10



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան*

**ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՈՒՆՔԸ ԵՎ «ՂԱՏԱՎՈՐՐ
ԵՆԹԱԿԱ Է ՕՐԵՆՔԻՆ» ԴՐՈՒՅԹԸ CONTRA LEGEM
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում է contra legem իրավունքի զարգացման դոկտրինի և օրինականության սկզբունքի, «դատավորը ենթակա է օրենքին» դրույթի հարաբերակցությունը: Հեղինակը, օրինականության սկզբունքը վերլուծելով «թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի» մաքսիմի տեսանկյունից, եզրակացնում է, որ օրենքի պահանջների անշեղ կատարումը (օրինականությունը) ոչ թե նպատակ է, այլ միջոց է: Եթե օրինականության սկզբունքն անշեղորեն պահպանելը կարող է հասարակարգի համար ունենալ կործանարար նշանակություն, ապա օրինականություն սկզբունքից պետք է կատարել բացառություն և հայտարարել՝ «թող օրենքը պարտվի, բայց աշխարհը չկործանվի»:

Իրավունքի բոլոր սկզբունքները, այդ թվում օրինականության սկզբունքը, ունեն բացառություններ: Օրինականության սկզբունքից և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթից միակ թույլատրելի բացառությունը contra legem իրավունքի զարգացման դոկտրինն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՄԱՐՎԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 2(110)2023

Հետխորհրդային դատավորը, *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա օրենսդրական կարգավորման անտրամաբանության կամ անարդարության աղաղակող լինելը կարող է գնահատել «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով, որի չափորոշիչներն այն աստիճան ցածր են, որ դատավորին կազատի քաղաքական իշխանության հնարավոր «հարձակումներից»:

Հիմնաբառեր. իրավունքի սկզբունք, իրավունքի մաքսիմ, *contra legem* իրավունքի զարգացման դոկտրին, օրինականություն, դատավորը գործում է օրենքին համապատասխան, դատավորը ենթակա է օրենքին, «*Pereat mundus et, fiat justitia*»:

1. Ներածություն

1.1. Ընդհանուր դրույթներ

Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի համատեքստում օրինականության սկզբունքը և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթը քննարկելիս կօգտագործվի «հետխորհրդային պետության դատավոր (հետխորհրդային դատավոր)» ձևակերպումը. նկատի ունենք հետխորհրդային այն պետությունները, որոնց քաղաքական համակարգում դեռևս պահպանվել են իրավունքի նկատմամբ խիստ էթատիկ մոտեցումները, իսկ դատավորների մոտ՝ լեգիզմը:

Սույն հոդվածում չի քննարկվում օրենքին հակառակ իրավունքի զարգացման դոկտրինի կիրառման ինստիտուցիոնալ համակարգը, ուստի «հետխորհրդային դատավոր» ընդհանուր ձևակերպումից չպետք է եզրակացնել, որ այս դոկտրինի հասցեատերերը բոլոր ատյանի դատավորներն են (սա առանձին քննարկման հարց է):

Հետխորհրդային դատավորի կողմից միայն օրենքին համապատասխան գործելու պահանջը թեև դիտարկվում է դատավորի (դատարանի) անկախության սկզբունքի տեսանկյունից, սակայն «դատավորը ենթակա է

օրենքին» կամ «դատավորը գործում է օրենքին համապատասխան» դրույթները պարունակում են նաև դատական գործունեությունում օրինականությունը պահպանելու հրամայական: Ուստի այս աշխատանքում օրինականության սկզբունքը և դատավորների անկախության համատեքստում՝ «օրենքին համապատասխան գործել» դրույթը կդիտարկվեն միասնության մեջ:

1.2. Օրինականության սկզբունքը և «դատավորը գործում է օրենքին համապատասխան» դրույթը ՀՀ Սահմանադրությունում

2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են ինչպես օրինականության, այնպես էլ դատավորի անկախության սկզբունքները: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի (օրինականության սկզբունքը) 1-ին մասի համաձայն. «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Այս դրույթը վերաբերում է բոլոր պետական մարմիններին, իսկ դատավորների (դատարանների) վերաբերյալ ՀՀ Սահմանադրությունում մի քանի անգամ նշվում է, որ նրանք անկախ են և գործում են օրենքներին համապատասխան: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և **օրենքներին համապատասխան**», 164-րդ հոդվածի 1-ին մասում կրկին նշվում է. «Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և **գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան**»:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածում նշվում է, որ արդարադատությունն իրականացվում է Սահմանադրությանը և **օրենքներին համապատասխան**, իսկ դատարանների անկախությունը վերտառությամբ 7-րդ հոդվածի 2-րդ մասում կրկին

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ՂԱՏՐՈՒՄ 2(110)2023

նշվում է, որ դատարանը գործը կամ հարցը քննում և լուծում է Սահմանադրությանը և **օրենքին համապատասխան**:

Ինչո՞վ է պայմանավորված, որ պետությունը (քաղաքական իշխանությունը) հենց դատավորների վերաբերյալ մի քանի անգամ շեշտում է օրենքին համապատասխան գործելու մասին: Քաղաքական իշխանությունը նույնիսկ դատավորի անկախության սկզբունքին վերաբերող հոդվածներում է հետևողականորեն հիշեցնում, որ դատավորը, անկախ լինելով հանդերձ, կախված է օրենքից, ինչը փաստացի նշանակում է կախվածություն հենց քաղաքական իշխանության կամքից (օրենքն այնուամենայնիվ քաղաքական իշխանության կամքի ամրագրման ձև է): Մինչդեռ պետական մյուս մարմինների համար բավարար է համարվել մեկ անգամ նշել, որ նրանք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Օրենքների տեքստերում «դատավորը գործում է օրենքին համապատասխան» ձևակերպման *բազում անգամներ* օգտագործելը հուշում է այն մասին, որ քաղաքական իշխանությունը քողարկված ձևով՝ «դատավորը կախված է միայն օրենքից» ձևակերպման միջոցով փորձում է դատավորին դրդել իներտության, որպեսզի նա ունակ չլինի հակազդելու քաղաքական իշխանության՝ աղաղակող (խելագարության կամ մոլագարության հասնող չափերի) անտրամաբանություններին կամ անարդարություններին, որպեսզի դատավորը դա համարի իր ուժերից (իրավասությունից) վեր գործ, որպեսզի դատավորի մտքով երբևէ չանցնի, որ նա կարող է քննարկել առաջնային մանդատով օժտված մարմնի ընդունած օրենքի կարգավորման համապատասխանությունն իրավունքի սկզբունքներին, այդ թվում՝ իրավական աքսիոմներին, մաքսիմներին, իսկ դրանց միջև աղաղակող անհամապատասխանություններ բացահայտելու դեպքում, երբեք խիզախություն չունենա գործել օրենքի կոնկրետ դրույթին հակառակ:

Ընդ որում՝ քաղաքական իշխանությանը հաջողվել է հետխորհրդային դատավորի մոտ ձևավորել այն մտածողությունը, որ իրավունքի սկզբունքների հետ աղաղակող հակասության մեջ գտնվող օրենքի դրույթին հակառակվելու դեպքում դատավորը կգործի աններելի «մեղք»՝ կհակադրվի ժողովրդին և նրա կողմից ընտրված իշխանությունը:

Այս ամենը վկայում է այն մասին, որ քաղաքական իշխանությունն ամեն գնով փորձում է դատավորին կտրել իր բնական և գոյաբանական հիմքից՝ իրավունքից (իրավունքի սկզբունքներից, իրավական աքսիոմներից, մաքսիմներից¹):

Հետաքրքիրն այն է, որ քաղաքական իշխանությունը, երբ հերթը հասնում է իր կողմից օրինականությունը պահպանելուն, ապա նա նույն բժախնդրությունը, ինչպես դատավորների դեպքում է, իր հանդեպ չի ցուցաբերում: Քաղաքական իշխանությունը որոշ իրավիճակներում կարող է մոռացության մատնել օրինականության սկզբունքը և գործադիր իշխանության մարմիններին նույնիսկ **նորմատիվ իրավական ակտով լիազորել պաշտոնապես** գործել օրենքին հակառակ (այս մասին հաջորդիվ):

1.3. «Թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի», թե՛ «թող օրենքը պարտվի, բայց աշխարհը չկործանվի»

Օրինականության պահպանման ձևապաշտական խստությունը (ռիգորիզմ²) ցայտուն դրսևորվում է դարերի պատմություն ունեցող «Pereat mundus et, fiat justitia (թող աշխարհը կործանվի, բայց իրավունքը հաղթի)» իրավական մաքսիմում (սենտենցիայում), որի էությունն այն է, որ

¹ Այս հասկացությունների միջև առկա աննշան տարբերությունները սույն աշխատանքում անկարևոր են:

² Ռիգորիզմ [ригори́зм - լատ. rigor խստություն] - որևէ սկզբունքի խստագույն պահպանումը: Բարոյագիտության մեջ՝ ձևապաշտության տարատեսակ, որը ենթադրում է բարոյական նորմերի անշեղ կատարումը՝ անկախ կոնկրետ պայմաններից, նույնիսկ հակառակ նպատակահարմարության, մարդկանց և հասարակության շահերի: Տե՛ս Հայրապետյան Ա.Պ., Օտար բառերի բառարան (երկրորդ վերամշակված հրատարակություն): Եր.: Հեղինակային հրատ., 2011, էջեր 487-488:

պոզիտիվ իրավունքի (օրենքի) պահանջները պետք է անշեղորեն կատարվեն, անկախ նրանից, թե օրենքի պահանջների կատարումը գործնականում ինչ հետևանքներ կառաջացնի հասարակության և պետության համար:

Թեև այս իրավական սենտենցիան հիմնականում ընթերցվում և մեկնաբանվում է օրենքի (պոզիտիվ իրավունքի) իմաստով, սակայն այս ձևակերպման լատինատառ տեքստում նշվում է ոչ թե «lex»-ի այլ «justi»-ի մասին: Սակայն, եթե այս մաքսիմն ընթերցենք հենց «justi»-ի (արդարության, արդարադատության, իրավունքի) իմաստով, ապա այն կիմաստազրկվի այն պատճառով, որ իրավունքը (արդարությունը) չի կարող ներկայացնել այնպիսի պահանջ, որի կատարումը «կկործանի աշխարհը»¹:

Այս իրավական մաքսիմը գործնական արժեք ունի, երբ խոսքն օրենքի (պոզիտիվ իրավունքի) մասին է: «Աշխարհի կործանման» վտանգ կարող է ծագել միայն պետության սահմանած օրենքի (պոզիտիվ իրավունքի) պահպանման հարցում ռիզորիզմ դրսևորելու դեպքում, երբ օրենքը (պոզիտիվ իրավունքը) ինքնին համարվում է ոչ թե միջոց, այլ նպատակ: Այս իմաստով՝ պատահական չէ, որ իրավական այս մաքսիմի մեկնաբանություններում այն ներկայացվում է առավելապես օրենքի (պոզիտիվ իրավունքի) պահանջների անշեղ կատարման համատեքստում:

Օրենքի պահանջների անշեղ կատարումը (օրինականությունը) ոչ թե *նպատակ է*, այլ իրավակարգի որոշակիության և կայունության ապահովման, հասարակական կյանքի ներդաշնակեցման *միջոց է*: Այս մասին խոսել են շատերը: Այսպես՝ Գ. Հեգելը նշում էր.

«Իրավունքի *բացակայության պայմաններում բարօրություն բարին չէ: Նույն կերպ, իրավունքը բարին չէ առանց* բարօրության. *fiat justitia* (թող

¹ «Աշխարհը կործանել» ձևակերպումն օգտագործվում է փոխաբերական իմաստով՝ նկատի ունենք պետաիրավական և հասարակական համակարգի գործունակության ճգնաժամային իրավիճակները:

արդարադատություն կատարվի) որպես դրա հետևանք չպետք է ունենա *pereat mundus* (թող աշխարհը կործանվի)»¹:

Առանձին հեղինակներ կարծում են, որ Գ. Հեգելը 1821 թ. մի փոքր շտկել է «թող աշխարհը կործանվի, բայց իրավունքը հաղթի» մաքսիմը և նշել է՝ իրավունքը հաղթում է, որպեսզի աշխարհը չկործանվի²: Իրականում Գ. Հեգելը ոչ թե պարզապես «մի փոքր շտկել», այլ շրջել է այս արտահայտությունը. մի բան է, երբ ասվում է, որ օրենքը պետք է հաղթի, եթե նույնիսկ աշխարհը կործանվի, մեկ այլ բան է՝ օրենքը պետք է հաղթի, որ աշխարհը չկործանվի:

Գ. Հեգելի այս միտքը հետագայում առավել համակողմանի ներկայացրել է գերմանացի գիտնական Ռ. Իերինգը: Նա նշում էր, որ հնարավոր են ոչ սովորական իրավիճակներ, երբ պետությունը կարող է կանգնել երկրնտրանքի առջև՝ զոհաբերել օրենքը, թե՛ հասարակության բարիքը: Նա քննադատում է «թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի» մաքսիմը, քանի որ ստացվում է, որ աշխարհը գոյություն ունի հանուն օրենքի, մինչդեռ իրականում, ընդհակառակը, օրենքը գոյություն ունի հանուն աշխարհի: Եթե օրենքն ու աշխարհը հակադրվում են միմյանց, ապա կանոնը պետք է պահանջի՝ «*pereat justitia, vivat mundus* (օրենքը կորչում է, աշխարհն ապրում է)»³:

Ռ. Իերինգը հարց է տալիս, թե պետությունն արդյոք բոլոր դեպքերում և առանց որևէ բացառության պե՞տք է պահպանի գործող օրենքը, այնուհետև՝ իր հարցին պատասխանում է. «Չեմ վարանի բացասական պատասխանել»⁴: Հեղինակի մոտեցումը հստակ է.

¹ Гегель Г. Философия права. - М.: Юрайт, 2019. - С. 111.

² Евсеев А.П. Развитие договорных форм в конституционном праве: украинский и мировой опыт // Сравнительное конституционное обозрение. 2014. №1 (98). - С. 36.

³ Рудольф фон Иеринг. Цель в праве. Том первый. - С.-Пб.: Изд. Н.В. Муравьева, 1881. - С. 308.

⁴ Рудольф фон Иеринг. Указ. соч.

«Ինչպես պետության, այնպես էլ իրավունքի վերջնական նպատակը պետք է լինի հասարակության կենսապայմանների հաստատումն ու երաշխավորումը. իրավունքը գոյություն ունի հասարակության համար, այլ ոչ թե հասարակությունն իրավունքի համար: Որտեղ, որպես բացառություն, հանգամանքները պահանջում են, որ պետական իշխանությունը զոհաբերի կա՛մ իրավունքը, կա՛մ հասարակությանը, այն ոչ միայն լիազորված է, այլև պարտավոր է զոհաբերել իրավունքը և փրկել հասարակությանը: Անհատը՝ շահերի նման բախման դեպքում, երբ պետք է ընտրություն կատարի իրավունքի և իր կյանքի միջև, կարող է զոհաբերել իր կյանքը. նա զոհաբերում է միայն իրեն, մինչդեռ հասարակությունն ու իրավունքը շարունակում են գոյություն ունենալ: Բայց նույն կերպ վարվող պետական իշխանությունը մահացու մեղք է գործում, քանի որ նրա պարտականությունն է իրականացնել իրավունք ոչ թե հանուն իրավունքի, այլ հանուն հասարակության: Այս դեպքում հասարակության պահպանման համընդհանուր և բարձրագույն օրենքը վեր է խախտված ցանկացած առանձին օրենքից»¹:

Ռ. Իերինգն ըստ էության վերահաստատում է անհերքելի ճշմարտությունները՝ ժողովրդի անվտանգությունը բարձրագույն օրենք է (salus populi summa lex esto), ինչպես նաև՝ Հին Հռոմում գործող կարգախոսը. «իրավունքի չափազանց ճշգրիտ իրականացումն առաջացնում է բարձրագույն անարդարություն» (Summum jus summa injuria):

Գերմանացի գիտնականների այս դատողությունները հետագայում վերարտադրեցին նաև ամերիկացի գիտնականները: Այսպես՝ ամերիկյան պրագմատիզմի և քաղաքական ռեալիզմի հիմնադիր Հ. Մորգենթաուն, բարոյական նորմերի անշեղորեն պահպանելու հարցի վերաբերյալ, նշում է.

¹ Рудольф фон Иеринг. Указ. соч. - С. 309.

«Անհապը կարող է ասել՝ «*Fiat justitia, pereat mundus* (թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի)», բայց պետությունը նման իրավունք չունի: Ե՛վ անհապը, և՛ ազգը պետք է քաղաքական գործողությունները գնահատեն համընդհանուր բարոյական սկզբունքների հիման վրա, ինչպիսին, օրինակ, ազատությունն է: Սակայն եթե անհապը բարոյական իրավունք ունի իրեն զոհաբերելու այս բարոյական սկզբունքներին, ապա ազգն իրավունք չունի բարոյականությունը վեր դասել հաջողված քաղաքականության պահանջներից, որն ինքնին հիմնված է ազգի գոյարևման բարոյական սկզբունքի վրա»¹:

Այսպիսով՝ մարդկային միտքը ժամանակի ընթացքում վերաձևակերպեց «թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի» մաքսիմը և անցում կատարեց «թող օրենքը հաղթի, որպեսզի աշխարհը չկործանվի» մաքսիմին:

Իսկ ի՞նչ անել այն դեպքերում, երբ օրենքի ձևական պահանջի կատարման արդյունքում «աշխարհը կարող է կործանվել»: Պատասխանը հստակ է. օրենքի ոչ մի ֆորմալ պահանջ չպետք է պահպանվի, եթե դրա հետևանքով պետական և հասարակական համակարգը կարող է «կործանվել»: Օրինականության նկատմամբ մոտեցումը պետք է արմատապես վերանայել, երբ դրա պահպանումը ոչ միայն չի ծառայում իր նպատակին, այլ դրա պահպանումը կարող է հասարակարգի համար ունենալ կործանարար նշանակություն: Օրինակ՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում դեռևս 2021 թ. քննվում է ՀՀ չորրորդ նախագահի (ընտրվել է 2018 թ., իսկ լիազորությունները դադարել են 2022 թ.), այլ պետության քաղաքացի լինելու փաստերը թաքցնելու հանգամանքները: Եթե քրեական վարույթի ընթացքում հաստատվեն, որ Նախագահն ունեցել է այլ պետության քաղաքացիություն և այն թաքցրել է, ապա կստացվի, որ 2018 թ. ՀՀ ազգային ժողովը ՀՀ նախագահ է ընտրել ՀՀ

¹ **Моргентау Г.** Политические отношения между нациями: борьба за власть и мир // Теория международных отношений: Хрестоматия / Сост.: науч. ред. и коммент. П.А. Цыганкова. - М.: Гардарики, 2002. - С. 78.

Սահմանադրության խախտմամբ, իսկ դա նշանակում է, որ այդ տարիների ընթացքում նրա կայացրած բոլոր որոշումները (ստորագրած ակտերը, նրա ստորագրած օրենքների հիման վրա ձևավորված պետական մարմինները, Նախագահի կողմից պաշտոնների նշանակումները) զուտ ձևական չափանիշների տեսանկյունից հակասահմանադրական են¹: Եթե հիմք ընդունենք, որ սահմանադրական օրինականությունն ինքնին նպատակ է, ուստի այն պետք է ցանկացած գնով «հաղթի», նույնիսկ եթե դրա հետևանքով պետաիրավական ողջ համակարգը կկործանվի: Հասկանալի է, որ ոչ մի բանական մարդ չի կարող ֆորմալ օրինականության պահպանման գնով զոհաբերի ողջ պետաիրավական համակարգի գործունակությունը, ուստի նման իրավիճակներում պետք է օրինականություն սկզբունքից կատարել բացառություն և հայտարարել՝ «թող օրենքը պարտվի, բայց աշխարհը չկործանվի»:

2. Օրինականության սկզբունքը և դրանից թույլատրվող բացառությունը

2.1. Ընդհանուր դրույթներ

Տարբեր իրավական համակարգերում օրինականության բովանդակության և արժևորման հարցում մոտեցումները կարող են տարբերվել: Օրինակ՝ կախված իրավական համակարգում «օրենք» հասկացության բովանդակությունից, օրինականության ըմբռնումը կարող է լինել տարբեր: Բոլոր դեպքերում, օրինականության էությունն այն է, որ պետության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հասցեատերերը պետք է **անշեղ** կատարեն այդ ակտերով սահմանված պահանջները:

Օրինականության վերաբերյալ բացարձակ և համակողմանի (ունիվերսալ) թվացող ճշմարտությունները տարբեր պատմական ժամանակա-

¹ **Гамбарян А.** Развитие парламентом права contra constitutionem в Республике Армения // Сравнительное конституционное обозрение. 2022. № 4 (149). - С. 134.

շրջաններում կամ տարաբնույթ իրավիճակներում կարող են փոփոխվել: Ամերիկացի իրավագետ Ս. Շապիրոն իրավացիորեն նշում է.

«Օրինականության բնույթի վերաբերյալ տեսակետները, որոնք մի քանի սերունդների ընթացքում դիմակայել են ժամանակի փորձությանը, հաճախ զրոյացվել են մի քանի լավ ձևակերպված հակաօրինակներով»¹:

Իրավունքի պատմությունը վկայում է այն մասին, որ օրինականության սկզբունքը պետության կողմից ոչ բոլոր իրավիճակներում է կարևորվել: Խոսքը ոչ թե պետական մարմինների կողմից օրենքի առանձին պահանջների խախտման մասին է, այլ՝ այն դեպքերի, երբ պետությունը, օրինակ՝ հեղափոխական իրավիճակներում, իր իսկ պաշտոնական փաստաթղթերում հնարավորություն է տվել պետական մարմիններին գործել օրենսդրական կարգադրագրերին հակառակ: Օրինակ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ խորհրդային իշխանության ձևավորման փուլում կամ խորհրդային միության փլուզման ժամանակաշրջանում պետությունը պաշտոնական փաստաթղթերով թույլատրեց համապատասխան պետական մարմիններին և պաշտոնատար անձանց որոշակի իրավիճակներում գործել օրենքին հակառակ:

2.2. Օրինականության սկզբունքի պաշտոնական բացատրումը. Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչև ԽՍՀՄ փլուզումը

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ խորհրդային իշխանության ձևավորման ժամանակաշրջանում պաշտոնապես հայտարարվեց *հեղափոխական* օրինականության մասին, որն ըստ էության ոչ թե օրինականության, այլ օրինականությունից բացառության կամ նպատակահարմարության մասին էր: Այսպես՝ Սովետների VI Համառուսաստանյան Արտակարգ համագումարի 08.11.1918 թ. «Հեղափոխական օրինականության մասին» որոշման 2-րդ կետում սահմանված էր.

¹ Шапиро С. Законность. Пер. с англ. - М., 2021. - С. 62.

«Այսուհետք հասարակել, որ Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության օրենքներից շեղվող կամ դրանց սահմաններից դուրս գործող միջոցառումները թույլատրելի են միայն այն դեպքում, երբ դրանք թելադրված են քաղաքացիական պատերազմի հրատարակ պայմաններով և հակահեղափոխության դեմ պայքարով»:

Քաղաքական իշխանությունը պաշտոնապես թույլատրեց համապատասխան իշխանական մարմիններին գործել օրենքին հակառակ: Այդ ժամանակաշրջանի պետական իրավունքի դասագրքերից մեկի հեղինակն Արտակարգ համագումարի այս որոշումը մեկնաբանում էր հետևյալ կերպ.

«Խորհրդային իշխանությունը շար լավ հասկանում է, որ պետք է գործի իրական իրադրությունում, իսկ 1918 թ. իրական իրավիճակն այնպիսին էր, որ ամեն դեպքում և ցանկացած գնով պնդել իրականացնել օրինականության սկզբունքը, ակնհայտորեն անհնար կլիներ: Նշելով այս իրական պայմանները՝ Արտակարգ համագումարը թույլ է տալիս միայն որոշ դեպքերում չկիրառել օրենքը, միայն բացառիկ դեպքերում է թույլ տալիս ազատվել օրինականության ստորադասությունից, բայց այդ բացառումը պայմանավորում է կրկին օրենքով, օրինական իրադրությամբ, այն է՝ օրենքներից բացառության համար սահմանվել էր հայտնի օրինական ձևը»¹:

Խորհրդային իշխանությունը փաստորեն իր մարմինների հակաօրինական վարքագծին տվեց օրինական ձև: Մյուս կողմից՝ դժվար էր պատկերացնել, որ իր դիրքերն ամրապնդած խորհրդային քաղաքական իշխանությունը կհանդուրժեր, եթե, օրինակ, խորհրդային դատավորը փորձեր հակադրվել քաղաքական իշխանության ընդունած աղաղակող անտրամաբանական օրենքին: Պատահական չէ, որ Խորհրդային իշխանությունն իր դիրքերն ամրապնդելուց հետո գաղափարախոսական հարթությունում

¹ Малицкий А. Советское государственное право (очерки). – Киев, 1926. – С. 11.

Ֆետիշացրեց օրինականության սկզբունքը՝ այն բարձրացնելով «սկզբունքների թագուհու» կամ «սկզբունքների սկզբունքի» աստիճանի:

Խորհրդային օրինականության պահպանման դիգորիզմը (թերևս միայն գաղափարախոսական իմաստով) տևեց մինչև ԽՍՀՄ փլուզումը: Ճգնաժամային (փլուզման) իրավիճակում հայտնված խորհրդային պետությունը կրկին պաշտոնապես սահմանեց օրենքին հակառակ գործելու հնարավորություն: Այսպես՝ Ռուսաստանի Սովետական դաշնային Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական պատգամավորների V համագումարը 01.11.1991 թ. թիվ 1831-1 որոշմամբ թույլատրեց Նախագահին տնտեսական գործունեության ոլորտում ընդունել ակտեր, որոնք հակասում էին օրենքներին: Այսպես՝ որոշման 3-րդ կետում նշված էր.

«ՌԽՖՍՀ նախագահի հրամանագրերի նախագծերը (...), փնտեսական բարեփոխումների ընթացքն օպերատիվ կարգավորելու նպատակով, որոնք հակասում են ՌԽՖՍՀ գործող օրենքներին, ՌԽՖՍՀ նախագահը ներկայացնում է ՌԽՖՍՀ Գերագույն խորհուրդ, իսկ նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում՝ ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությանը: Եթե յոթ օրվա ընթացքում ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդը (...) չի մերժում ՌԽՖՍՀ Նախագահի հրամանագրի նախագիծը, ապա հրամանագիրը մտնում է ուժի մեջ»:

Ինչպես 1918 թ., այնպես էլ 1991 թ. խորհրդային իշխանությունն օրենքով գործադիր մարմիններին հնարավորություն տվեց գործել օրենքներին հակառակ, այսինքն՝ հակադրվել այդչափ «հարգված» օրինականության սկզբունքին: Ընդ որում, ռուսական սահմանադրական իրավունքի դոկտրինում 01.11.1991 թ. որոշումն առանձնակի քննադատության չարժանացավ, գիտնականները պարզապես նկարագրում (փաստում) էին առկա իրավիճակը. «Ռուսաստանի ժողովրդական պատգամավորների V համագումարը նախագահին իրավունք է տվել մեկ տարվա ընթացքում տնտեսության ոլորտում հրամաններ արձակել, որոնք նույնիսկ չեն

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՎՈՒՄ 2(110)2023

համապատասխանում օրենքին»¹, կամ «Ժողովրդական պատգամավորների համագումարը նախագահին իրավունք է տալիս հրամանագրերով լուծել տնտեսական հարցերը՝ շեղվելով ՌՍՖՍՀ օրենքներից»²: Այս հեղինակավոր սահմանադրագետները պարզապես հաստատում են պատմական փաստերը, սակայն այս որոշումների իրավաչափության վերաբերյալ գնահատականներ չեն տալիս: Միգուցե նրանց լուրջությունը պայմանավորված է այն բանի գիտակցումով, որ ճգնաժամային այդ ժամանակահատվածում օրենքի ձևական պահանջները պահպանելու արդյունքում կարող էր երկիրը (տնտեսական կյանքը) կործանվել:

Այս պատմական համառոտ վերլուծությունից պարզ է դառնում, որ քաղաքական իշխանությունը երբեմն օրինականության սկզբունքից պաշտոնապես կատարում է բացառություններ: Հարց է ծագում, իսկ իրավունքի սկզբունքներն արդյոք կարո՞ղ են պարունակել բացառություններ, օրենսդիրն արդյո՞ք կարող է սահմանել այնպիսի կանոններ, որոնք ըստ էության հակադրվում են սկզբունքներում ամրագրված գաղափարներին:

2.3. Օրինականության սկզբունքից բացառությունը

2.3.1. Իրավունքի սկզբունքները և դրանից բացառությունները: Իրավունքի սկզբունքներից բացառություններ նախատեսելու հարցն համակողմանի քննարկվել է հետխորհրդային ժամանակաշրջանում: Օրինակ՝ Ռ. Խ. Յակուպովը 1990-ականներին նշել է.

«Սկզբունքները միշտ կարգավորում են միմյանց հետ մրցակցող երկու խումբ նորմերի հարաբերակցությունը: Դրանցից առաջինը սկզբունքի բովանդակությունը սահմանող նորմերն են, իսկ երկրորդ խումբը՝

¹ **Кутафин О.Е.** Предмет конституционного права. - М.: Юрист, 2001. - С. 202; **Кутафин О.Е.** Источники конституционного права Российской Федерации. - М.: Юрист, 2002. - С. 98-99.

² **Авакьян С.А.** Конституционное право России: учеб. пособие. В 2 т. Т. 2. 5-е изд., перераб. и доп. - М.: Норма: ИНФРА*М, 2014. - С. 331.

հիմնական կանոնից կարարված բացառություններն են: (...) Այդ պարճառով ամենաընդհանուր ձևով կարելի է ասել, որ ցանկացած սկզբունք ընդհանուր կանոն է իր բացառություններով»¹:

Այն որ իրավունքի սկզբունքները կարող են ունենալ բացառություններ, ընդունում են շատերը², սակայն բանավեճն այն հարցի շուրջ է, թե արդյոք անխտիր բոլոր սկզբունքներն ունեն բացառություններ: Բանավիճող կողմերին հատկապես հետաքրքիր է այն հարցը, թե օրինականության սկզբունքն արդյոք կարող է ունենալ բացառություն, թե դա պարզապես օրինախախտում է:

Մ.Լ. Դավիդովան նշում է, որ սկզբունքները կարող են գոյություն ունենալ պայմանական (իրենցից բացառություններ ունեցող սկզբունքներ) կամ անվերապահ (որևէ բացառություն չունեցող սկզբունքներ) նորմատիվ իրավական պահանջների տեսքով³: Նշված հեղինակը փաստորեն այն մոտեցման կողմնակիցն է, որ իրավական բացառություններն իրավունքի բոլոր սկզբունքների պարտադիր կամ էական հատկանիշը չէ, իրավունքի որոշ սկզբունքներ կարող են ունենալ բացառություններ, որոնք ըստ էության իրավաչափորեն հերքում են այդ սկզբունքը, կարող են նաև չունենալ նման բացառություններ: Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ նա նշում է.

¹ **Якупов Р.Х.** Правоприменение в уголовном процессе России. Юридические проблемы. - М.: 1993. - С. 139; **Якупов Р.Х.** Уголовный процесс: учебник для вузов. - М.: Зерцало, 1998. - С. 60-61.

² **Суменков С.Ю.** Исключения в праве: теоретико-инструментальный анализ: монография. - М.: Юрлитинформ, 2016; **Гамбарян А.С.** Внесистемные коллизии и внутрисистемные конфликты принципов права: доктрина, практика, техника // Юридическая техника. 2020. № 14. - С. 39-40; **Байдаров М.А.** Имплементация исключений в принципы законодательства: технико-юридический аспект // Юридическая техника. 2020. № 14. - С. 551-552.

³ **Давыдова М.Л.** Правовой принцип как нормативно-правовое предписание: техника закрепления и механизм действия // Принципы права: проблемы теории и практики: Материалы XI международной научно-практической конференции. В 2-х ч. — Ч. 1 (разделы I-IV). - М.: РГУП, 2017. - С. 214-215.

«Բավական հաճախ «սկզբունքի» գործողությունը ենթադրում է բացառություններ (...) այդ բացառությունները թույլատրելի են միայն օրենքով խիստ սահմանված դեպքերում և սահմաններում, սակայն դրանց առկայությունն ինքնին չի վկայում «իրավունքի սկզբունքի» թերարժեքության մասին, այլ դրված է, հավանաբար, դրա բնույթի մեջ: Իրոք, օրենսդրության մեջ կան բացարձակ՝ բացառություններ թույլ չտվող սկզբունքներ, բայց դրանց քանակն ամենևին էլ գերակշռող չէ»¹:

Սույն հոդվածի տեսանկյունից հետաքրքրական է այն, որ հեղինակը, որպես բացառություն չնախատեսող սկզբունքի օրինակ, նշում է հետևյալ քրեադատավարական դրույթը. «քրեական գործերով արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթակա են միայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը և դաշնային օրենքին» (ՌԴ քր. օր.-ի 8.1.-րդ հոդվածի 1-ին մաս): Իրականում նշված սկզբունքն ինքնին նախատեսում է բացառություն: «Դատարանն անկախ է և ենթակա է (...)» ձևակերպումն արդեն իսկ պարունակում է բացառություն. մի կողմից նշվում է, որ դատավորներն անկախ են, մյուս կողմից, որպես անկախության գաղափարից բացառություն, նախատեսում է, որ նրանք ենթակա են օրենքին:

Ի տարբերություն Մ.Լ. Դավիդովայի, Ս.Յու. Սումենկովը կարծում է, որ իրավունքի բոլոր սկզբունքներն ունեն բացառություններ, ընդ որում, նա սկզբունքների և բացառությունների հարաբերակցությունը դիտում է դիալեկտիկական միասնության մեջ.

«Սկզբունքների և բացառությունների դիալեկտիկական միասնությունն այն է, որ յուրաքանչյուր սկզբունք կանոն է. իր հերթին, ցանկացած կանոն

¹ Давыдова М.Л. Указ. соч. - С. 212-213.

ինքնաբերաբար առաջացնում է դրանից բացառություններ ունենալու առնվազն պոպոզենցիալ հնարավորություն»¹:

Իրավունքի սկզբունքները չեն կարող չունենալ բացառություններ, հակառակ դեպքում, կարգելափակվի հասարակական հարաբերությունները դիֆերենցիալ (տարբերակված) կարգավորելու հնարավորությունը: Անկասկած իրավունքի սկզբունքներից կատարված բացառություններն օբյեկտիվ անհրաժեշտություն են, քանի որ «բացառությունների միջոցով օրենքի և սոցիալական միջավայրի իրական պայմանների միջև ձեռք է բերվում համապատասխանություն (...) պահպանվում է հասարակության և պետության շահերի հավասարակշռությունը»²:

2.3.2. Օրինականության սկզբունքից բացառություն սահմանելու անհաջող փորձերը: Եթե բացառությունները ներհատուկ են իրավունքի բոլոր սկզբունքներին, ապա հարց է ծագում՝ որն է օրինականության սկզբունքից բացառությունը: Առաջին հայացքից թվում է, որ օրինականության սկզբունքից բացառության մասին պնդումն ըստ էության դատողություն է օրինախախտում թույլատրելու մասին:

Նույնիսկ այն տեսաբաններին, ովքեր կարծում են, որ իրավունքի բոլոր սկզբունքներն ունեն բացառություններ, չի հաջողվել հստակ և հասկանալի կերպով ցույց տալ, թե օրինականության սկզբունքից, վերջին հաշվով, ինչ բացառություն է հնարավոր: Այսպես՝ Ռ. Խ. Յակուպովը, ով կարծում է, որ դատավարության բոլոր սկզբունքներն ունեն բացառություններ, հստակ չի ներկայացնում, թե որոնք են օրինականության սկզբունքից բացառությունները: Նա միայն նշում է, որ նպատակահարմարությունը, այսինքն՝ օրենքով պետական մարմիններին տրված ընտրության ազատությունը,

¹ **Суменков С.Ю.** Принципы права и исключения в праве: аспекты соотношения // Государство и право. 2009. № 5. - С. 26.

² **Суменков С.Ю.** Указ. соч. - С. 23-30.

օրինականության սկզբունքի բաղկացուցիչ մաս է¹: Հեղինակն արդյոք նպատակահարմարությունը համարո՞ւմ է օրինականության սկզբունքից բացառություն: Այս հարցին դրական պատասխանել հնարավոր չէ, քանի որ նա, մեջբերված աշխատանքում, հարցի վերաբերյալ բավարար հստակությամբ դիրքորոշում չի հայտնել:

Ա.Յու. Սումենկովին նշում է.

«Օրինականության սկզբունքից բացառությունները հավանական են, բայց դրանք ապրիորի հակահրավական բնույթ ունեն, հետևաբար, նույնիսկ տերմինաբանական առումով, դրանք նշանակում են ոչ թե որպես բացառություններ, այլ որպես իրավախախտումներ: Իրավախախտումները ոչ մի դեպքում չպետք է նույնացվեն իրավական, օրինական բացառությունների հետ: Իրավախախտումն իրավական նորմերի դրույթներից օրենքով չթույլատրված շեղումն է, դրանք չպահպանելը: (...) Միննույն ժամանակ, օրինականության սկզբունքի և բացառությունների հարաբերակցության խնդիրն ունի ավելի բարդ բնույթ, քան պարզապես իրավախախտման փաստն արձանագրելը»²:

Այս հեղինակին, ով իրավական բացառությունների ուսումնասիրության ոլորտում ունի մեծ ներդրում, չի հաջողվել պատասխանել այն հարցին, թե օրինականության սկզբունքից ինչպիսի բացառություն է հնարավոր: Նա մի կողմից նշում է իրավախախտման մասին, մյուս կողմից հերքում է, որ իրավախախտումը կարող է լինել իրավական բացառություն:

Օրինականության սկզբունքից միակ թույլատրելի բացառությունն իրավունքի սկզբունքների, այդ թվում՝ աքսիոմների, մաքսիմների և օրենքի կոնկրետ կարգավորման միջև աղաղակող անհամապատասխանության պայմաններում օրենքին հակառակ գործելու մասին դոկտրինն է՝ contra legem իրավունքի զարգացման դոկտրինը:

¹ Якупов Р.Х. Уголовный процесс: учебник для вузов. - М.: Изд. "Зерцало", 1998. - С. 62.

² Суменков С.Ю. Принципы права и исключения в праве: аспекты соотношения // Государство и право. 2009. № 5. - С. 25.

2.3.3. Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը՝ որպես օրինականության սկզբունքից թույլատրելի բացառություն: Լեգիստական իրավաընկալման պայմաններում օրինականության սկզբունքը և օրենքին հակառակ իրավունքի զարգացման դոկտրինը գտնվում են անթույլատրելի հակադրության մեջ, այսինքն՝ օրինականության սկզբունքից շեղումը որակվում է ոչ թե իրավունքի զարգացում, այլ պարզ օրինախախտում: Մինչդեռ լայն իրավաընկալման դեպքում, օրինականության սկզբունքի և contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հարաբերակցությունը հնարավոր է դիտարկել դոկտրինալ ճանաչում ստացած՝ «սկզբունք-բացառություն» տեսանկյունից:

Օրինականության սկզբունքից բացառությունը (contra legem իրավունքի զարգացման դոկտրինը) պետք է տարբերակել contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա օրենքի *կոնկրետ* դրույթին հակադրվելուց: Վերջինս չի կարելի որակել *կոնկրետ* նորմից կատարված բացառություն: Օրինականության սկզբունքից բացառությունը contra legem իրավունքի զարգացման դոկտրինն է, որի հիման վրա դատարանը հակադրվում է օրենքի *կոնկրետ* նորմի կարգավորմանը: Ենթադրենք, որևիցե իրավական համակարգում օրենքին հակառակ իրավունքի զարգացման դոկտրինը՝ որպես օրինականության սկզբունքից բացառություն, ստացել է ընդհանուր ճանաչում: Եթե այդ համակարգում որևէ օրենքի «X» դրույթն աղաղակող անտրամաբանական է կամ անարդար է, ապա դատավորը, հիմք ընդունելով contra legem իրավունքի զարգացման դոկտրինը (օրինականության սկզբունքից թույլատրելի բացառությունը), հակադրվում է օրենքի «X» դրույթին և գործում է իրավունքի սկզբունքի հիման վրա (այդ սկզբունքից բխեցնում է մեկ այլ կանոն): Այս պարագայում դատավորն օրենքի «X» դրույթից բացառություն չի կատարում, այլ գործում է դրան հակառակ:

ՍԱՀՄԱՆԱՐՈՂՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ 2(110)2023

Իսկ հետխորհրդային դատավորը հոգեբանորեն պատրա՛ստ է դատական ակտում ուղիղ նշելու, որ հակադրվում է օրենքի այս կամ այն դրույթին: Նախապես նշենք, որ պատասխանը բացասական է:

3. Հետխորհրդային դատավորը՝ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հնարավոր հասցեատեր

3.1. Ընդհանուր դրույթներ

Հետխորհրդային դատավորն ամեն կերպ կխուսափի դատական ակտերում նշել, որ իրավունքը զարգացնում է օրենքի դրույթին հակառակ: Նա իրական երևույթը քողարկելու նպատակով կօգտագործի տարբեր ձևակերպումներ և հնարքներ, օրինակ՝ նա կնշի, որ մեկնաբանման միջոցով բացահայտում է օրենսդրի իրական կամքը, կամ կգրի օրենքից բացառություն կատարելու մասին, թեև օրենքով նման բացառություն նախատեսված չէ, բայց երբեք չի բարձրաձայնի իրականության մասին: Հետխորհրդային դատավորը թեև մտովի կգիտակցի, որ նա իրավունքը զարգացնում է օրենքի դրույթին հակառակ, բայց երբեք դրա մասին ուղիղ չի հիշատակի: Այդպիսին է հետխորհրդային դատավորի իրավամտա-ծողությունը, այդպիսին է հետխորհրդային իրավաբանական կրթությունը:

Նմանատիպ հոգեբանական մոտեցումը, իհարկե առավել մեղմ և չափավոր դրսևորումներով, հատուկ է նաև ռոմանագերմանական համակարգերի դատարաններին, երբ նրանք իրականացնում են *exta legem* և *contra legem* գործունեություն, որը քողարկվում է տարբեր կեղծավոր ձևակերպումներով: Ժամանակին այս հանգամանքը լավագույնս նկարագրել է Ս.Ի. Ռակիչը.

«Գերմանիայում և Ֆրանսիայում դատական պրակտիկայի օրինաստեղծ ուժը պաշտոնապես չի ճանաչվել: Դատարանների contra legem և praeter legem որոշումները կա՛մ խայտառակ կերպով քողարկված էին սովետական պատճառաբանություններով, թե իբր այդ որոշումները

համապատասխանում են օրենքին, կա՛մ համարվում էին «բացառություններ», որոնք պայմանավորված էին «զուտ գործնական» շարժառիթներով և ենթակա չէին ընդհանրացման: Անգլիայում ամեն ինչ այլ էր: Անգլիացի դատավորը, ինչպես նաև հռոմեացի դատավորը, երբեք և երբեք չի դիտարկվել որպես օրենսդրի ծրագրերի միայն կոյր կատարող¹:

Ամերիկացի հայտնի իրավագետ Ռ. Դվորկինը նշում է.

«Այն կարծիքը, որ մեր դատավորները երբեմն պետք է անտեսեն իրավունքը և փորձեն այն փոխարինել ավելի լավ իրավունքով, իրավաբանական ֆակուլտետների ուսումնական լսարաններում և նույնիսկ քաղաքական բանավեճերում ամենևին օտար չէ»²:

Դատավորն ունի օրենքի պահանջներին հակառակ վարքագիծը իրավաբանորեն արդարացնելու երկու ճանապարհ՝ իրավակիրառ ակտում օրենքով չնախատեսված «ողջամիտ բացառություն» ամրագրելը կամ օրենքին հակառակ (contra legem) իրավունքի զարգացման դոկտրինին դիմելը:

Իրավաբանական հիմնավորման՝ «ողջամիտ բացառություն» ամրագրելու եղանակն առաջին հայացքից թվում է քաղաքական առումով առավել լոյալ (կոռեկտ), քանի որ հետխորհրդային դատավորը զուտ բառօգտագործման առումով բացահայտ չի հակադրվում առաջնային մանդատով օժտված իշխանությանը: Իրականում օրենքի տեքստում չնախատեսված «ողջամիտ բացառություններ» դուրս բերելը պայմանավորված է ոչ այնքան քաղաքական լոյալություն պահելու, որքան քաղաքական իշխանությունից անվտանգ հեռավորություն պահպանելու ցանկությամբ: Դատավորի նման պատճառաբանությունները կարելի է

¹ Раевич С.И. Из вопросов учения о толковании и применении права (Основные направления в буржуазной литературе) // Советское право. - М., 1924. № 3. - С. 73.

² Дворкин Р. Империя права. Пер. с англ. - М., 2020. - С. 154.

հասկանալ, սակայն այն ընդունել չի կարելի, քանի որ այն պարզապես իրականությունը թաքցնելու միջոց է կամ պոզիտիվ պատասխանատվությունից փախուստի ճանապարհ:

Դատավորի՝ օրենքի դրույթին հակառակ դիրքորոշումը հիմնավորելու առավել ընդունելի ճանապարհը *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինն է, երբ դատավորը, հիմք ընդունելով իրավունքի սկզբունքները, գործում է իրավաչափ, իսկ դատական ակտում օրենքին հակառակ գործելու մասին գրում է ուղիղ, այսինքն՝ գործում է առավել ազնիվ և բացահայտ:

Եթե հետխորհրդային դատավորն այնուամենայնիվ կոնկրետ գործով որոշի քննարկել *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը կիրառելու/չկիրառելու հարցը, ապա նա պետք է իր համար պարզի նաև «դատավորը գործում է օրենքին համապատասխան» սահմանադրական նորմի էությունը:

3.2. Հետխորհրդային դատավորի շփումն Օրենսդրի հետ. ենթարկվածություն – համագործակցություն – հակադրություն

Ինչպես նշվեց, ՀՀ Սահմանադրությունում մի քանի անգամ նշվում է, որ դատավորը (դատարանը) արդարադատություն իրականացնում է օրենքին համապատասխան: Սահմանադրական այդ դրույթները *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի լույսի ներքո պետք է ընթերցել հետևյալ կերպ.

առաջին՝ դատավորը *ենթարկվում է* օրենսդրին, եթե նրա՝ օրենքով ձևակերպված կամքը բավարար չափով ճիշտ է (համապատասխանում է իրավունքի սկզբունքներին՝ *նվազագույն* տրամաբանությանը և արդարությանը),

երկրորդ՝ դատավորը *համագործակցում է* օրենսդրի հետ, եթե նրա կամքն արտահայտված է գնահատողական օրենսդրական հասկացություններում, կամ նա թույլ է տվել օրենսդրական բաց (մեկնաբանման

կանոններով կամ անալոգիայի հիման վրա բացահայտում է օրենսդրի կամքը),

Երրորդ՝ դատավորը *հակադրվում է* օրենսդրին, եթե նրա՝ օրենքով ձևակերպված կամքն աղաղակող (խելագարության կամ մոլագարության հասնող չափի) անտրամաբանական է կամ անարդար է: Այս հակադրության դեպքում դատավորն իրավունքը զարգացնում է օրենքին հակառակ (*contra legem* իրավունքի զարգացման դոկտրին), այսինքն՝ ընդհանուր սահմանադրական կանոնից կատարվում է բացառություն:

Նույնիսկ հետխորհրդային դատավորը չպետք է *ենթարկվի* քաղաքական իշխանության աղաղակող անտրամաբանությանը և անարդարությանը, կամ *համագործակցի* նման անտրամաբանության և անարդարության հետ: Դատավորն իր էության ուժով պարզապես չի կարող համարվել քաղաքական իշխանության ամենցիայի (խելագարության) կամ մոլագարության (կատաղախտի) շարունակողը: Դատավորը կկորցնի իր էությունը և կվերածվի խելագարի կամ մոլագարի (կատաղախտավորի), եթե անվերապահորեն ենթարկվի քաղաքական իշխանության խելագարությանը, կամ համագործակցի քաղաքական իշխանության մոլագարության հետ:

Ճիշտ է՝ դատավորը պետության մեխանիզմի մասն է և ենթարկվում է այդ մարմնի ընդհանուր օրինաչափություններին, սակայն դատավորը, իր էության ուժով, պետք է ինքնաօտարվի հրեշի վերածված «Լեվիաթանի» մարմնից: Սա ոչ այլ ինչ է, քան «անջատում՝ հանուն փրկության»: Դատարանը կկորցնի իր բնական էությունը՝ ողջամտության կամ նվազագույն արդարության հիման վրա գործողի էությունը, եթե կոնկրետ դեպքով չանջատվի խելագարի կամ մոլագարի վերածված «Լեվիաթանի» մարմնից:

«Լեվիաթանի» մարմնից դատավորի անջատումը, այսինքն՝ «Լեվիաթանի» ընդունած օրենքի կոնկրետ դրույթին հակառակ գործելը, լեգիտիմացվում է հենց իրավունքի սկզբունքներով, որոնք խտացված

արտահայտում են արդարադատության արժեքանական կողմը: Իրավացի են նրանք, ովքեր նշում են, որ «արդարությունը պետք է լինի արդարադատության մեխանիզմի ողջ օրենսդրական ապահովման իմաստաստեղծ առանցքը»¹:

Նկատի ունենալով խորհրդային և հետխորհրդային պետություններում դատական իրավունքի զարգացման առանձնահատկությունները՝ չպետք է անտեսել «Լեվիաթանի» մարմնից անջատված դատավորի անձի և ընտանիքի համար գոյաբանական (անվտանգային) նշանակություն ունեցող հարց: Հետխորհրդային դատավորի քիչ հանդիպող ակտիվությունը, որպես կանոն, առաջացրել և առաջացնում է քաղաքական իշխանության զայրույթը և բիրտ հակազդեցությունը, ինչը դատավորին կարող է կանգնեցնել էքզիստենցիալ ընտրության առջև. պահել իրավունքի սկզբունքները՝ հակադրվելով օրենքի կարգավորմանը, թե հակադրվել իրավունքի սկզբունքներին՝ պահպանելով աղաղակող հակաիրավական օրենքը և ապահովելով իր ու ընտանիքի անվտանգությունը (այդ թվում՝ դատավորի աշխատավարձի վրա հիմնված ֆինանսական անվտանգությունը):

Այս իրավիճակը մեղմելու նպատակով՝ պետք է հասկանալ, թե հետխորհրդային դատավորն ին՞չ բանաձևի հիման վրա պետք է որոշի, թե ե՞րբ կարող է հակադրվել քաղաքական իշխանությանը (օրենքով ձևակերպված քաղաքական կամքին) և իրավունքը զարգացնել օրենքին հակառակ, որպեսզի այդ հակադրությունն իր և ընտանիքի համար չունենա ճակատագրական նշանակություն: Օրենքի աղաղակող անտրամաբանության և անարդարության որոշման չափորոշիչը «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևն է:

¹ Клеандров М.И. Правосудие и справедливость: монография. - М.: Норма: ИНФРА-М, 2022. - С. 47.

3.3. «Տասնչորս տարեկան երեխայի» բանաձևը

Եթե հետխորհրդային դատավորը խիզախություն ունենա իրավունքը զարգացնել քաղաքական իշխանության կամքին հակառակ, ապա նրան պետք է առաջարկել օրենսդրական կարգավորման աղաղակող անտրամաբանության կամ անարդարության որոշման այնպիսի բանաձև, որի հիման վրա նրա կայացրած որոշումը կմեղմի կամ կչեզոքացնի քաղաքական իշխանության «զայրոյթը» և դրանից բխող վտանգները:

Դատավորը քաղաքական իշխանության՝ օրենքով ձևակերպված կամքին հակադրվում է իրավունքի սկզբունքների հիման վրա: Այս սկզբունքների բովանդակությունը կարող է գնահատվել «ողջամիտ մարդու» բանաձևով (reasonable person standard), այսինքն՝ միջին վիճակագրական մարդն արդյոք օրենքի կարգավորումը կհամարեր աղաղակող անտրամաբանական կամ անարդար, թե ոչ: Սակայն հետխորհրդային այն պետություններում, որտեղ դեռևս գերակայում է էթատիզմը, օրենքի կարգավորման աղաղակող անտրամաբանությունը կամ անարդարությունը՝ նույնիսկ «ողջամիտ մարդու» բանաձևով որոշել կարող է դատավորի համար առաջացնել ողբերգական հետևանքներ, ուստի ստիպված ենք նվազեցնել չափորոշիչը:

Այն դեպքերում, երբ օրենքին հակառակ իրավունքի զարգացումը կարող է առաջացնել քաղաքական իշխանության սուր հակազդեցությունը, ապա հետխորհրդային դատավորը, օրենսդրական կարգավորման անտրամաբանության կամ անարդարության աղաղակող լինելը կարող է գնահատել «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով: Այսինքն՝ դատավորը կարող է գործել օրենքի կարգավորմանը հակառակ, եթե վստահ է, որ իր որոշումն արտահայտում է նույնիսկ տասնչորս տարեկանը լրացած երեխային հասու պարզ ճշմարտություն, այնպիսի ճշմարտություն, որը կստանա հասարակական անվերապահ ճանաչում:

Որպեսզի դատավորը «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով որոշի, թե օրենսդրական կարգավորումն արդյոք աղաղակող անտրա-

մաբանական կամ անարդար է, նա այդ պարզ հարցը կարող է հետազոտման էմպիրիկ մեթոդաբանության հիման վրա (ոչ դատավարական ձևով) քննարկել տասնչորս տարեկանը լրացած երեխայի (երեխաների) հետ: Եթե խնդրի վերաբերյալ երեխայի լուծումները, մոտեցումները նույնպես կհակադրվեն օրենսդրական կարգավորման հիմքում դրված գաղափարին, ապա դատավորը վստահաբար կարող է տվյալ կարգավորումը որակել «աղաղակող անտրամաբանական կամ անարդար» և, օրենքին հակառակ իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա, հակադրվել քաղաքական իշխանության կամքին:

«Տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի կիրառման տեսանկյունից կարևոր են ստորև նշված հանգամանքները:

Նախ՝ խրթին իրավաբանական հարցով «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևը չի կարող կիրառվել, քանի որ նման գործերով աղաղակող կարող է լինել գործի *բարդությունը*, բայց ոչ՝ օրենսդրական դրույթի *անտրամաբանությունը կամ անարդարությունը*:

Երկրորդ՝ «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի ցածր չափորոշիչը հետխորհրդային դատավորին ազատում է օրենսդրական դրույթների բարոյափիլիսոփայական հիմնավորումների վերաբերյալ խրթին հարցերով բանավեճերից: Հետխորհրդային դատավորը չի ներթափանցում (թերևս, չի էլ կարող ներթափանցել) օրենսդրական կարգավորման բարոյափիլիսոփայական խորքերը:

«Տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի պահանջներն այն աստիճանի ցածր են, որ դրա հիման վրա գործող հետխորհրդային դատավորը չի մտածի, որ իրավունքն օրենքի կարգավորմանը հակառակ զարգացնելու դոկտրինն իր վրա դնում է չափազանց մեծ պատասխանատվություն, մինչդեռ ինքը (հետխորհրդային դատավորը) չի տիրապետում Ռ. Դվորկինի նշած՝ «փիլիսոփա-դատավոր Հերկուլեսի» նման գերունակությունների¹: Ի դեպ, հայ դատավորները երբեմն նշում են, որ

¹ Дворкин Р. Империя права / пер. с англ. - М.: 2020. - С. 450-456.

իրավաբան գիտնականները նրանցից պահանջում են հերոսություն, մինչդեռ նրանք դատավորներ են, ոչ թե՛ հերոսներ:

«Տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի պահանջներն այն աստիճանի ցածր են, որ հետխորհրդային դատավորից, ով հանդիպում է օրենքի կարգավորման աղաղակող անտրամաբանության կամ անարդարության, չի պահանջվում ո՛չ գերմարդկային ունակություններ, ո՛չ էլ հերոսություն: Երբ դատավորը գործում է jus-ի (իրավունքի սկզբունքների) հիման վրա, ապա նա իրականացնում է իր բնությամբ պայմանավորված յուստիցիոն (justitia) գործունեություն. դա գերմարդկային ունակություն չէ, առավել ևս՝ հերոսություն: Այո՛, աղաղակող անտրամաբանական կամ անարդար օրենքի կարգավորմանը հակառակ գործելը խիզախություն է: Հետխորհրդային դատավորից պահանջվում է խիզախություն, որպեսզի նա կարողանա հակադրվել քաղաքական իշխանությանը և իրավունքը զարգացնել օրենքին հակառակ, սակայն այդպիսին է արդարատության (justitia) էությունը, այդպիսին է դատավորի մասնագիտական արժանապատվության պահանջը:

Դատավորը հերոսություն չի անում, երբ հակադրվում է քաղաքական իշխանությանը և նրա ընդունած աղաղակող անտրամաբանական կամ անարդար օրենքի կարգավորմանը, երբ օրինակ՝ քաղաքական իշխանությունն օրենքով՝ հեռարձակողին արգելում է ուղիղ եթերի ժամանակ որևէ դեպքում հայիոյանք հեռարձակելը, կամ երբ տնտեսվարող կազմակերպությունից պահանջում է վճարել պետական տուրք, այնպիսի գործունեության համար, որի իրականացումը համավարակի պատճառով նույն քաղաքական իշխանությունը ժամանակավորապես արգելել է, կամ երբ տնտեսվարող կազմակերպությունից մի կողմից՝ պահանջում է կատարել հարկային պարտավորությունը, մյուս կողմից՝ արգելանք է դնում կազմակերպության բանկային հաշիվների և գույքի վրա, կամ երբ ընտրական հանձնաժողովից պահանջում է քվեաթերթիկները պահպանել չիրկիզվող

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏՄԱՆ 2(110)2023

պահարանում, սակայն քվեաթերթիկների մեծաքանակ լինելու պատճառով դրանք ֆիզիկապես չեն տեղավորվում չիրկիզվող պահարանում և այլն: Այս կարգավորումների աղաղակող անտրամաբանությունը կամ անարդարությունը կհաստատի նույնիսկ տասնչորս տարեկան երեխան:

Ենթադրենք տասնչորս տարեկան երեխաների մայրը նրանց համար սահմանում է մինչև ժամը 20.00 բակից տուն վերադառնալու մասին ընդհանուր կանոն (հին կանոն), իսկ հաջորդ օրն առավոտյան հայտնում է, որ երեխաները պետք է բակից տուն վերադառնան մինչև ժամը 19.00 (նոր կանոն): Մոր սահմանած՝ տուն վերադառնալու մասին հին և նոր կանոնների հակասության դեպքում նույնիսկ երեխան կհասկանա, որ պետք է ղեկավարվի նոր՝ առավել ուշ ընդունված կանոնով, այսինքն՝ պետք է տուն վերադառնան մինչև ժամը 19.00: Իսկ նմանատիպ իրավիճակում ինչպե՞ս վարվեց հայ դատավորը, նա ինչպե՞ս վերաբերվեց Օրենսդրի՝ հին և նոր օրենքների հակասության դեպքում հին օրենքին նախապատվություն տալու մասին աղաղակող (խելագարության աստիճանի) անտրամաբանական կարգավորմանը. հայ դատավորը պարզապես հնազանդվեց և տևական ժամանակ (2002-2021 թթ.) կիսեց Օրենսդրի այդ խելագարությունը¹:

Եթե դատավորը «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով օրենքի կարգավորումը որակի որպես աղաղակող անտրամաբանություն կամ անարդարություն, ապա նվազագույն բանականությամբ և բարոյակա-նությամբ օժտված քաղաքական իշխանությանն այլ բան չի մնա, քան ընդունել օրենսդրորեն ամրագրված իր կամքի աղաղակող սխալը:

¹ Այս մասին տե՛ս **Ղամբարյան Ա., Կուպեյանց Հ.**, Հին և նոր նորմերի հակասության լուծումը. հետևողական անտրամաբանություն կամ անտրամաբանական հետևողականություն // Դատական իշխանություն: 2018, № 05-06 (227-228), էջ 3-10, **Гамбарян А.С.** Коллизийное правило «lex posterior» в армянском праве // Вестник Российского университета дружбы народов. 2020. Т. 24. № 4. էջեր 1224-1239:

4. Եզրակացություններ

Օրենքի պահանջների անշեղ կատարումը (օրինականությունը) ոչ թե նպատակ է, այլ իրավակարգի որոշակիության և կայունության ապահովման, հասարակական կյանքի ներդաշնակեցման միջոց: Եթե օրենքի ձևական պահանջի կատարման արդյունքում «աշխարհը կարող է կործանվել», այսինքն՝ դրա հետևանքով պետական և հասարակական համակարգը կարող է կաթվածահար լինել, ապա օրինականության նկատմամբ ձևապաշտական մոտեցումը պետք է արմատապես փոխել, և նման իրավիճակներում պետք է հայտարարել՝ «թող օրենքը պարտվի, բայց աշխարհը չկործանվի»:

Իրավունքի բոլոր սկզբունքները պարունակում են բացառություններ: Օրինականության սկզբունքից և «դատավորը ենթարկվում է օրենքին» դրույթից միակ թույլատրելի բացառությունը *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինն է:

Հիմք ընդունելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը՝ հետխորհրդային դատավորի և օրենսդրի շփումները պետք է դիտարկել «ենթարկվածություն – համագործակցություն – հակադրություն» եռաշերտ հարաբերությունների տեսանկյունից:

Հետխորհրդային դատավորը, *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա օրենսդրական կարգավորման անտրամաբանության կամ անարդարության աղաղակող լինելը կարող է գնահատել «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով, որի պահանջներն այն աստիճանի ցածր են, որ հետխորհրդային դատավորի վրա չափազանց մեծ պատասխանատվություն չեն դնում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ղամբարյան Ա., Կուպեյանց Հ.**, Հին և նոր նորմերի հակասության լուծումը. հետևողական անտրամաբանություն կամ անտրամաբանական հետևողականություն // Դատական իշխանություն: 2018, № 05-06 (227-228), էջ 3–10:
2. **Авакьян С.А.** Конституционное право России: учеб. пособие. В 2 т. Т. 2. 5-е изд., перераб. и доп. - М.: Норма: «ИНФРА-М», 2014. - С. 331.
3. **Байдаров М.А.** Имплементация исключений в принципы законодательства: технико-юридический аспект // Юридическая техника. - 2020. - № 14. - С. 551-552.
4. **Гамбарян А.** Развитие парламентом права contra constitutionem в Республике Армения // Сравнительное конституционное обозрение. - 2022. - № 4 (149). - С. 134.
5. **Гамбарян А.С.** Внесистемные коллизии и внутрисистемные конфликты принципов права: доктрина, практика, техника // Юридическая техника. - 2020. - № 14. - С. 39-40,
6. **Гамбарян А.С.** Коллизионное правило «lex posterior» в армянском праве // Вестник Российского университета дружбы народов. - 2020. Т. 24. - № 4, էջեր 1224-1239:
7. **Гегель Г.** Философия права. - М.: Юрайт, 2019. - С. 111.
8. **Давыдова М.Л.** Правовой принцип как нормативно-правовое предписание: техника закрепления и механизм действия // Принципы права: проблемы теории и практики: Материалы XI международной научно-практической конференции. В 2-х ч. — Ч. 1 (разделы I–IV). - М.: РГУП, 2017. - С. 214-215.
9. **Давыдова М.Л.** Указ. соч. - С. 212-213.
10. **Дворкин Р.** Империя права / пер. с англ. - М., 2020. - С. 450-456.
11. **Дворкин Р.** Империя права. Пер. с англ. - М., 2020. - С. 154.

12. **Евсеев А. П.** Развитие договорных форм в конституционном праве: украинский и мировой опыт // Сравнительное конституционное обозрение. - 2014. - №1 (98). - С. 36.
13. **Иеринг Р. фон.** Цель в праве. Том первый. - С.-Пб.: Изд. Н.В Муравьева, 1881. - С. 308-309.
14. **Клеандров М.И.** Правосудие и справедливость: монография. - М.: “Норма: ИНФРА-М”, 2022. - С. 47.
15. **Кутафин О.Е.** Предмет конституционного права. - М.: Юристь, 2001. - С. 202.
16. **Кутафин О.Е.** Источники конституционного права Российской Федерации. - М.: Юристь, 2002. - С. 98-99.
17. **Малицкий А.** Советское государственное право (очерки). - Киев 1926. - С. 11.
18. **Моргентау Г.** Политические отношения между нациями: борьба за власть и мир // Теория международных отношений: Хрестоматия / Сост.: науч. ред. и коммент. П.А. Цыганкова. - М.: Гардарики, 2002. - С. 78.
19. **Раевич С.И.** Из вопросов учения о толковании и применении права (Основные направления в буржуазной литературе) // Советское право. - М., 1924. № 3. - С. 73.
20. **Суменков С.Ю.** Исключения в праве: теоретико-инструментальный анализ: монография. - М.: Юрлитинформ, 2016.
21. **Суменков С.Ю.** Принципы права и исключения в праве: аспекты соотношения // Государство и право. - 2009. - № 5. - С. 26.
22. **Суменков С.Ю.** Принципы права и исключения в праве: аспекты соотношения // Государство и право. - 2009. - № 5. - С. 25.
23. **Суменков С.Ю.** Указ. соч. - С. 23-30.
24. **Шапиро С.** Законность. Пер. с англ. - М., 2021. - С. 62.

25. **Якупов Р.Х.** Правоприменение в уголовном процессе России. Юридические проблемы. - М., 1993. - С. 139; **Якупов Р.Х.** Уголовный процесс: учебник для вузов. - М.: Зерцало, 1998. - С. 60-61.
26. **Якупов Р.Х.** Уголовный процесс: учебник для вузов. - М.: Изд. “Зерцало”, 1998. - С. 62.

ПРИНЦИП ЗАКОННОСТИ И ПОЛОЖЕНИЕ “СУДЬЯ ПОДЧИНЯЕТСЯ ЗАКОНУ” В КОНТЕКСТЕ ДОКТРИНЫ РАЗВИТИЯ ПРАВА CONTRA LEGEM

Аннотация

В статье рассматривается соотношение доктрины развития права *contra legem* и принципа законности, положения “судья подчиняется закону”. Анализируя принцип законности с точки зрения максимы “пусть гибнет мир, но торжествует закон”, автор приходит к выводу, что неукоснительное выполнение требований закона (законность) - это не цель, а средство. Если неукоснительное соблюдение принципа законности может иметь для общества губительное значение, то из принципа законности нужно сделать исключение и заявить: «Пусть закон проиграет, но мир не погибнет».

Все принципы права, включая принцип законности, имеют исключения. Единственным допустимым исключением из принципа законности и положения “судья подчиняется закону” является доктрина развития права *contra legem*.

Постсоветский судья, основываясь на доктрине развития права *contra legem*, может оценить вопиющую нелогичность или несправедливость законодательного регулирования по формуле “четырнадцатилетнего

ребенка”, стандарты которого настолько низки, что избавят судью от возможной «агрессии» политической власти.

Ключевые слова: принцип права, максима права, доктрина развития права contra legem, законность, судья действует в соответствии с законом, судья подчиняется закону, “Pereat mundus et, fiat justitia”.

THE PRINCIPLE OF LEGALITY AND THE PROVISION “THE JUDGE OBEYS THE LAW” IN THE CONTEXT OF THE CONTRA LEGEM LAW DEVELOPMENT DOCTRINE

Annotation

The relationships between the contra legem law development doctrine, the principle of legality, and the provision “the judge obeys the law” are discussed in this article. By analyzing the principle of legality from the point of view of the maxim “let justice be done, even if the world perish”, the author concludes that strict compliance with the requirements of the law (legality) is not *an end*, but *a means*. If strict observance of the principle of legality can be destructive for society, then an exception must be made from the principle of legality and it must be said: “Let the law lose so that the world will not perish”.

All principles of law, including the principle of legality, have exceptions. The contra legem law development doctrine is the only permissible exception to the principle of legality and the provision “the judge obeys the law”.

A post-Soviet judge may assess the blatant illogicality or injustice of legislative regulation based on the contra legem law development doctrine by the formula of a “fourteen-year-old child”, and the standards thereof are so low that the judge will be saved from possible political “aggression”.

Keywords: the principle of law, the maxim of law, contra legem law development doctrine, legality, the judge acts in accordance with the law, the judge obeys the law, “Pereat mundus et, fiat justitia”.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 09.05.2023թ., տրվել է գրախոսության 10.05.2023թ., ընդունվել է տպագրության 27.05.2023թ.:

DOI: 10.59560/18291155-2023.2-44



ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

*Հայաստանում ֆրանսիական համալսարանի
հեղափոխող-դասախոս,
Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի
իրավագիտության դոկտոր*



ԼՈՒԻԶԱ ԱՂԱԶԱՆՅԱՆ

*Հայաստանում ֆրանսիական
համալսարանի ուսանող*

**ՔՈՒՔԻՆԵՐԻ (COOKIES) ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԱՆՁՆԱԿԱՆ
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ամփոփագիր

Ժամանակակից թվային տնտեսության մոդելը հիմնված է համացանցում առկա մեծ ծավալների տվյալների օգտագործման արդյունքում որոշումներ կայացնելու վրա: Համացանցում տվյալների օգտագործման ամենատարածված միջոցներից են հանդիսանում քուքիները: Վերջիններս, բացի կայքերի բնականոն գործունեությունն ապահովելուց, հնարավորություն են ընձեռում վերլուծել օգտատերերի վարքագիծը՝ առևտրային նպատակներով որոշումներ ընդունելու համար: Հաշվի առնելով վերլուծվող տվյալների ահռելի քանակը՝ քուքիները լուրջ վտանգ են ներկայացնում անձի իրավունքների, մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի տեսանկյունից: Վերը նշված վտանգները չեզոքացնելու համար

2(110)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱԿ

աշխարհի մի շարք երկրներում ընդունվել են օրենսդրական ակտեր, որոնք կոչված են կանոնակարգելու քուբիների օգտագործումը:

Հաշվի առնելով Հայաստանյան դոկտրինայում քննարկվող հարցի վերաբերյալ ուսումնասիրությունների բացակայությունը՝ սույն հոդվածի առաջին մասը կոչված է բացահայտելու քուբիների՝ որպես տեխնոլոգիական ֆենոմենի էությունը, դրանց դերն ու նշանակությունը թվայնացման արդի դարաշրջանում: Հեղինակները ներկայացնում են քուբիների դասակարգումը՝ ընդգծելով դրանց առնչությունը օգտատերերի իրավունքներին: Դրան հաջորդում է քուբիների՝ որպես իրավական երևույթի հասկացության ուսումնասիրությունը, ինչպես նաև վերջիններիս և անձնական տվյալների հարաբերակցությունը:

Աշխատանքի երկրորդ մասը կոչված է քննարկելու այն երաշխիքները, որոնք պաշտպանում են անձանց անձնական տվյալների պաշտպանության իրավունքը համացանցում քուբիների օգտագործման պարագայում: Մասնավորապես, աշխատանքը խորապես ուսումնասիրում է քուբիների տեղադրման համար համաձայնություն ստանալու կարգը, ինչպես նաև վերհանում այն սուբյեկտներին, որոնք կրում են օգտատերերից այդպիսի համաձայնություն ստանալու պարտականությունը: Հոդվածում քննարկվում են վերոնշյալ հարցերը ՀՀ իրավունքում կարգավորվածության տեսանկյունից, ինչպես նաև հիմնվում է ԵՄ և Ֆրանսիայի իրավունքների ուսումնասիրության վրա այնքանով, որքանով դա կօգնի բացահայտել քննարկվող խնդիրները և ներկայացնել դրանց լուծումները:

Հիմնաբառեր. քուբի, անձնական տվյալ, համաձայնություն, տվյալներ մշակող, վեբ կայք:

Ներածություն

Ժամանակակից թվային տնտեսության մոդելը հիմնված է համացանցում առկա մեծ ծավալների տվյալների օգտագործման արդյունքում որոշումներ կայացնելու վրա: 4-րդ արդյունաբերական հեղափոխության ար-

դյունքում ստեղծվեցին առցանց գործիքներ, որոնց միջոցով ձեռնարկությունները վերլուծում են հաճախորդների նախընտրությունները և դրանց համապատասխան ծառայություններ առաջարկում վերջիններիս: Արդյունքում, ձեռնարկության շահութաբերությունը կախված է օգտագործված տվյալների վերլուծության ընթացքում կայացված որոշումների ճշգրիտ լինելուց: Հենց այս կոնտեքստում է, որ ժամանակակից տնտեսությունն անվանում են «տվյալահեն տնտեսություն»¹:

Համացանցում տվյալների օգտագործման ամենատարածված միջոցներից են հանդիսանում քուքիները²: Վերջիններս համարվում են օգտակար էլեկտրոնային գործիքներ վեբ կայքերի դիզայնի արդյունավետությունը բարձրացնելու, կայքերով էլեկտրոնային հաղորդակցությունը հնարավոր դարձնելու, վիճակագրական տվյալներ հավաքելու և սպառողների հետաքրքրություններին համապատասխանող ծառայություններ գովազդելու համար: Սակայն մյուս կողմից քուքիները կարող են մուտք գործել օգտատերերի տերմինալ առանց նրանց իմացության՝ վերջիններիս վերաբերյալ տեղեկատվությանը հասանելիություն ստանալու, հավաքած տեղեկատվությունը գաղտնի կերպով պահելու կամ համացանցում օգտատիրոջ գործունեությանը հետևելու համար: Հետևաբար, քուքիները լուրջ վտանգ են ներկայացնում օգտատերերի անձնական տվյալների պաշտպանության համատեքստում: Ուստի տնտեսվարողները պետք է հավաստիանան, որ քուքիների օգտագործմամբ չեն խախտում ֆիզիկական անձանց իրավունքները: Նկատի ունենալով վերոնշյալ վտանգները՝ տարբեր երկրներում ընդունվել են իրավական ակտեր, որոնք կոչված են

¹ C. Zolynski, «Un nouveau droit de propriété intellectuelle pour valoriser les données: le miroir aux alouettes?»,

Dalloz IP/IT, 2018. 94.

² Օտարալեզու այբուբենի օգտագործումը չարաշահելու և բառացի թարգմանության անհարմարություններից խուսափելու նպատակով սույն աշխատանքում կօգտագործվի հենց «քուքի» եզրույթը: Այլապես, բառացի թարգմանության դեպքում ստիպված պետք է այն անվանել «թխուկ» կամ ամեն անգամ օգտագործել օտարալեզու «cookie» եզրույթը:

կանոնակարգելու քուքիների օգտագործումը և սահմանելու իրավական երաշխիքներ օգտատերերի իրավունքների պաշտպանության համար:

Հաշվի առնելով հայրենական իրավունքում քննարկվող թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունների բացակայությունը՝ սույն աշխատանքը, *նախևառաջ*, կոչված է բացահայտելու քուքիների հասկացությունը, էությունը, ինչպես նաև վերջիններիս ֆունկցիան տվյալների հավաքագրման գործընթացում: Քանի որ քուքիները սերտորեն կապված են անձնական տվյալների օգտագործման պրոցեսի հետ, վերը նշված հարցերին պատասխանելիս անդրադարձ կկատարվի նաև «քուքի» և «անձնական տվյալ» հասկացությունների հարաբերակցությանը:

Այնուհետև, հեղինակների կողմից կներկայացվեն այն իրավական երաշխիքները, որոնք կոչված են պաշտպանելու անձի հիմնարար իրավունքները, մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը քուքիների օգտագործման համատեքստում: Այդ նպատակով, հետազոտության իրավական հիմք է հանդիսանում ինչպես ՀՀ իրավունքը, այնպես էլ՝ ԵՄ և վերջինիս անդամ Ֆրանսիայի իրավունքը¹:

Աշխատանքի տեսական հետաքրքրությունը ՀՀ դոկտրինայում «քուքի» եզրույթի բովանդակության բացահայտումն է, դրա ֆունկցիաների ուսումնասիրումը, քուքիներից բխող իրավական վտանգների վերհանումը, և դրանց կարգավորումը, ինչպես նաև ՀՀ իրավունքում կարգավորվածության քննարկումը:

Աշխատանքի գործնական հետաքրքրությունը ենթադրում է պրակտիկ տեսանկյունից ուսումնասիրել քուքիների մշակման օրինականության ապահովումը: Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնային առևտրի բնագավառում քուքիների ինտենսիվ օգտագործումը՝ հեղինակների կատարած վերլուծությունները կարող են օգտակար լինել պրակտիկ իրավաբանների համար: Բացի այդ, նկատի ունենալով այն

¹ Արտասահմանյան իրավունքին անդրադառնալու հիմնավորվածությունը ներկայացված է աշխատանքի երկրորդ պարագրաֆում:

փաստը, որ հայկական SS ընկերություններն իրենց ծառայություններն են մատուցում միջսահմանային առևտրի շրջանակներում, տվյալ աշխատանքը կարող է ուղղորդող գործառույթ իրականացնել արտերկրի որոշ իրավական համակարգերի, մասնավորապես՝ ԵՄ իրավունքին համապատասխանելու հարցում:

Վերլուծություն

Ֆ1. Քուբին՝ որպես տեխնոլոգիական և իրավական ֆենոմեն

Լինելով իրավունքի կարգավորման օբյեկտ՝ քուբին, նախևառաջ, հանդիսանում է տեխնոլոգիական երևույթ: Ուստի դրա՝ որպես իրավական ֆենոմենի վերաբերյալ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նախևառաջ բացահայտել վերջինիս տեխնոլոգիական ասպեկտները: Սույն աշխատանքի առաջին հատվածը կոչված է բացահայտելու քուբիների՝ որպես SS բնագավառում կիրառվող գործիքների հասկացությունը (1.1.), դրանց տեսակները (1.2.), ինչպես նաև վերջիններիս որակումն իրավական տեսանկյունից (1.3.):

1.1. Քուբիների հասկացությունը

Հաճախ վեբ կայքեր այցելելիս համակարգչի էկրանին հայտնվում է պատուհան, որով հայցվում է օգտատիրոջ համաձայնությունը՝ քուբիներ օգտագործելու վերաբերյալ: Քուբին համարվում է փոքր տեքստային ֆայլ, որը պահպանվում է տերմինալային սարքում: Տերմինալային սարքը համակարգիչ է, հեռախոս կամ համացանցին միացած ցանկացած այլ էլեկտրոնային գործիք, որը կարող է պահպանել տեղեկություններ: Ամեն անգամ, երբ օգտատերն այցելում է որևէ վեբ կայք, կայքը շահագործողի կողմից վերջինիս ուղարկվում է փոքր տեքստային ֆայլ, որի միջոցով այցելուի տերմինալային սարքը նույնականացվում է յուրաքանչյուր անգամ, երբ դրանից մուտք են գործում տվյալ վեբ կայք: Այսինքն, քուբին ապահովում է կապը կոնկրետ կայքի և օգտատիրոջ տերմինալային սարքի

միջև: Հետևաբար, նույն օգտատիրոջ վեբ բրաուզերում կարող է տեղադրվել մի քանի հարյուր քուֆի՝ մի քանի հարյուր կայքերի շահագործողների կողմից:

Քուֆիներն օգնում են կայքերը շահագործողներին պահպանել տեղեկություններ իրենց այցելուների մասին, այդ թվում՝ համացանցում վերջիններիս վարքագծի վերաբերյալ ինֆորմացիան: Այս հատկության շնորհիվ քուֆիներն օգնում են պատկերացում կազմել այցելուների նախասիրությունների մասին: Որպես վերջնարդյունք, տնտեսվարող սուբյեկտները կարողանում են կայքերի այցելուներին գովազդել այնպիսի ծառայություններ, որոնք հիմնված են վերջիններիս՝ համացանցում ունեցած վարքագծի վրա:

Ի սկզբանե քուֆիները չեն հետապնդել իրենց այցելուների անձնական տվյալների լայնամասշտաբ հավաքագրման նպատակ, ինչն այսօր փաստացի իրականացվում է. քուֆիները մշակվել են միայն կայքը շահագործողին օգտատիրոջ «այցելության» մասին տեղեկացնելու նպատակով: Վեբ կայքի սերվերը «ճանաչում» էր տերմինալային սարքը՝ վերջինիս առաջին այցի ընթացքում նրան ուղարկված քուֆի ֆայլի միջոցով: Վերջիններիս միջոցով կայքերում պահպանվում են այցելուների հիմնական տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են առցանց առևտրի բնականոն իրականացման համար: Մասնավորապես, այցելության ընթացքում պահպանվում է անձի անհատականացման անվանումը և գաղտնաբառը, կայքի լեզուն, գնումների զամբյուղը և պատմությունը, նախկինում պատվիրած ապրանքները, հեռախոսահամարը, անձնագրի տվյալները: Հակառակ դեպքում անձը ստիպված պետք է լիներ կայքի յուրաքանչյուր հաջորդ այցելության ընթացքում մուտքագրել վերոնշյալ տեղեկությունները: Ներկայումս քուֆիները շարունակում են օգտագործվել նաև իրենց սկզբնական գործառույթներն իրականացնելու նպատակով:

Սակայն վերջին տարիներին արհեստական բանականության զարգացման և «Big Data» կոնցեպտի առաջացման համատեքստում քուֆի-

ների կիրառելիությունը կրկնապատկվեց: Այսուհետև, դրանք ոչ միայն կոչված են ապահովելու վեբ կայքերի բնականոն շահագործումը, այլ նաև տեղեկություններ հավաքագրելու այցելուների նախընտրությունների, այլ կայքերում վերջիններիս կատարած գնումների, ընդհուպ մինչև՝ համացանցում հնչեցրած կարծիքների, ինչպես նաև նրանց վարքագծի այլ դրսևորումների մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ քուքիները համարվում են անհրաժեշտ գործիք ինչպես սպառողների, այնպես էլ վեբ կայքերի շահագործողների շահերի իրագործման համար:

1.2. Քուքիների տեսակները

Քուքիների էությունը հասկանալու, ինչպես նաև վերջիններիս կատարած գործառույթներն ու իրավական բնույթը հասկանալու նպատակով տեսական գրականության, տեխնոլոգիական գիտությունների բնագավառում, ինչպես նաև իրավունքում իրականացվել է դրանց դասակարգումը¹:

Ըստ նպատակի՝ ընդունված է կատարել քուքիների հետևյալ դասակարգումը.

- ◆ 1. *Ծայրահեղ անհրաժեշտ քուքիներ* (անգլ.՝ Strictly necessary cookies), որոնք կոչված են ապահովելու վեբ կայքի անխափան աշխատանքը: Առանց այս քուքիների անհնար է պատկերացնել վեբ կայքերի հավուր պատշաճի շահագործումը: Օրինակ, սրանք կոչված են նույնականացնելու վեբ բրաուզերը կայքի յուրաքանչյուր հաջորդ այցելության ժամանակ:

2. *Նախընտրության քուքիներ* (անգլ.՝ preferences cookies), որոնց նպատակը օգտատիրոջ շահերի ապահովմամբ կայքի շահագործման համար անհրաժեշտ նախընտրությունների պահպանումն է: Վերջինների օրինակ են կայքի այցելուի վեբ կայքի օգտագործման լեզվի կամ

¹ Տվյալ աշխատանքի մեջ քուքիների տեսակներն ուսումնասիրված են այնքանով, որքանով անհրաժեշտ է վերջիններիս ֆունկցիաներն ու իրավական բնույթը հասկանալու համար: Քուքիների դասակարգման վերաբերյալ հավելյալ և հանգամանալից տեղեկություն գտնելու համար տե՛ս Article 29 Data protection Working party, Opinion 04/2012 on Cookie Consent Exemption, 2012:

անվտանգության վերաբերյալ որոշ կարգավորումների ընտրության պահպանումը:

3. *Վիճակագրական քուքիներ* (անգլ.՝ statistics cookies), որոնք նպատակ են հետապնդում կայքը շահագործողի համար տեղեկություն հավաքել կայքի այցելուների վերաբերյալ՝ կայքի շահագործումը բարելավելու կամ այլ որոշումներ կայացնելու համար:

4. *Մարքեթինգային քուքիներ* (անգլ.՝ marketing cookies), որոնց նպատակն է հետևել այցելուի առցանց գործունեությանը և գովազդատուներին տրամադրել թիրախային տեղեկություն վերջինիս մասին: Օրինակ, մի կայքի շահագործողը կարող է հավաքել տվյալներ անձի նախկինում կատարած գնումների վերաբերյալ և այդ տեղեկությունը տրամադրել այլ կայքի շահագործողին: Ի տարբերություն նախընտրության քուքիների՝ մարքեթինգային քուքիները չեն հավաքում և պահպանում այնպիսի տվյալներ, որոնք կոչված են ապահովելու կայքի բնականոն և արդյունավետ շահագործումը:

Քուքիների տվյալ դասակարգումը կոչված է բացահայտելու այն խնդիրները, որոնք լուծվում են քուքիների տեղադրմամբ:

Քուքիներն ընդունված է դասակարգել նաև ըստ պարտադիրության.

1. *Պարտադիր* են այն քուքիները, որոնք սովորաբար տեղադրված են լինում կայքի սեփականատիրոջ կողմից, և առանց որոնց կայքը չի կարող բնականոն կերպով կատարել իր հիմնական գործառույթները: Փաստորեն, պարտադիր են համարվում ծայրահեղ անհրաժեշտ, ինչպես նաև նախընտրության քուքիները:

2. *Ոչ պարտադիր* են համարվում այն քուքիները, որոնք կոչված են հավաքագրելու տեղեկատվություն այցելուի մասին և տեղադրված են լինում կայքը շահագործողի կամ երրորդ անձի՝ գովազդատուի կամ վերլուծական ծառայություններ մատուցող սուբյեկտի կողմից: Վերջիններիս օգտագործմամբ տնտեսվարող սուբյեկտները հավաքում են օգտակար, սակայն կայքի գործունեության համար ոչ անհրաժեշտ

տվյալներ: Ոչ պարտադիր քուքիները սովորաբար օգտագործվում են վիճակագրական, գովազդային կամ մարքեթինգային նպատակներով:

Տվյալ դասակարգումը հիմք է հանդիսանում որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ստանալ կայքերի օգտատերերի համաձայնությունը քուքիների տեղադրման համար: Ի տարբերություն պարտադիր քուքիների՝ ոչ պարտադիր քուքիների տեղադրման պարագայում անհրաժեշտ է ստանալ օգտատիրոջ համաձայնությունը¹:

Ըստ սուբյեկտների, որոնք տեղադրում են քուքիներ, վերջիններս լինում են՝

1. *Առաջին անձի քուքիներ* (first party cookies), որոնք տեղադրվում են հենց վեբ կայքի շահագործողի կողմից: Քուքիների այս խմբին են պատկանում ինչպես խիստ անհրաժեշտ, այնպես էլ մարքեթինգային կամ վիճակագրական քուքիները, որոնք տեղադրվում են վեբ կայքի շահագործողի կողմից:

2. *Երրորդ անձի քուքիներ* (third party cookie), որոնք տեղադրվում են այլ դոմենին պատկանող վեբ կայքի կողմից, քան այն դոմենին պատկանող կայքը, որն այցելել է օգտատերը: Այսինքն, երկու վեբ կայքերի սեփականատերերը, որպես կանոն, տարբեր սուբյեկտներ են²:

Քուքիների վերոնշյալ տարանջատումը կոչված է բացահայտելու այն սուբյեկտին, ով հանդիսանում է քուքիների տեղադրման միջոցով հավաքվող տվյալների օգտագործման շահառուն:

1.3. Քուքին՝ որպես իրավական կատեգորիա

Թվայնացման դարաշրջանում քուքին դադարել է զուտ տեխնոլոգիական ֆենոմեն լինել: Վերջին տասնամյակներին այն հայտնվել է իրավաբանական համայնքի ուշադրության կենտրոնում: Առաջին իրավական աղբյուրը, որում այն ստացել է կարգավորում, «Էլեկտրոնային

¹ Այս մասին՝ հաջորդիվ:

² Article 29 Data Protection Working Party, Opinion 04/2012 on Cookie Consent Exemption, 2012, p. 4.

հաղորդակցության բնագավառում մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության մասին» 2002 թվականի հուլիսի 12-ի թիվ 2002/58/EC դիրեկտիվն է (այսուհետ նաև՝ Դիրեկտիվ): Վերջինս, չնայած որ չէր տալիս քուքիի սահանումը, նկարագրում էր դրա գործառույթները: Դրանց համեմատումից կարելի էր բխեցնել, որ քուքին օգտատիրոջ տերմինալային սարքի մեջ տեղադրված միջոց է, որը կոչված է հնարավոր և դյուրին դարձնելու անձին ծառայություններ մատուցելը, ստուգելու և բարելավելու վեբ կայքի դիզայնի և գովազդի արդյունավետությունը և այլն:

Այնուամենայնիվ, քուքիի էությունն ավելի խորապես բացահայտվել է Ֆրանսիայի Ինֆորմատիկայի և ազատությունների ազգային հանձնաժողովի կողմից տրված սահմանումով¹, ըստ որի՝ քուքին տեքստային ֆայլ է՝ արտահայտված անհատական նույնականացման անունով, որը տեղադրվում է վեբ կայքի կողմից օգտատիրոջ տերմինալում (համակարգիչ, բջջային հեռախոս և այլն) և որով օգտատերը փոխկապակցվում է վեբ կայքի հետ²: Ինչպես արդեն նշվեց, քուքին տեքստային ֆայլ է, ինֆորմացիա՝ բաղկացած տառանշաններից և թվանշաններից: Այսինքն, որպես իրավունքի օբյեկտ, այն դասվում է տեղեկությունների շարքին: Առանձին վերցրած, այն որևէ տեղեկություն չի հայտնում կայքն այցելող անձի մասին: Սակայն երբ գործ ունենք քուքիների հետ, որոնք բացի խիստ անհրաժեշտ ֆունկցիաներ կատարելուց նաև հավաքագրում են տվյալներ օգտատիրոջ մասին՝ գովազդային կամ մարքեթինգային նպատակներով, ապա տվյալ պարագայում խոսքը գնում է անձնական տվյալների օգտագործման մասին: Հետևաբար, առաջանում է այն հարցը, թե ինչ հարաբերակցության մեջ են գտնվում քուքիները և անձնական տվյալները:

¹ Վերջինս հանդիսանում է Ֆրանսիայում լիազոր մարմինը՝ ինֆորմատիկայի ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցում: Նրա վերահսկողության ոլորտը ներառում է ինչպես քուքիները, այնպես էլ անձնական տվյալները, ալգորիթմների ազդեցությունը մարդու հիմնարար իրավունքների վրա և այլն:

² CNIL, La définition de cookie <https://www.cnil.fr/fr/definition/cookie>

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) անձնական տվյալը սահմանում է որպես ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Այստեղ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ անձնական տվյալը չի ենթադրում սուբյեկտի քաղաքացիական ինքնության հաստատում (անուն և ազգանուն): Այն ավելի լայն կատեգորիա է և ենթադրում է, որ անձին հնարավոր է առանձնացնել (singling out) որոշակի տվյալների բազայում ներառված այլ անձանցից՝ նրա մասին տեղեկությունների և առանձնահատկությունների հաշվառմամբ որոշումներ կայացնելու նպատակով: Վերոգրյալից բխում է, որ եթե ֆիզիկական անձը լրիվ այլ անուն/ազգանունով մուտք գործի համացանց, ապա, այնուամենայնիվ, համացանցում վերջինիս տվյալները, այդ թվում՝ նրա կատարած գնումները, նախընտրությունները վերջինիս հետ կիդենտիֆիկացվեն քուբի միջոցով: Հետևաբար, քուբիների օգտագործումը վերոնշյալ նպատակներով կհամարվի անձնական տվյալների մշակում Օրենքի իմաստով, իսկ քուբին կորակվի որպես անձնական տվյալ:

Հատկապես հետաքրքրական է «երրորդ կողմի քուբիների» միջոցով օգտատերերի նույնականացումը: Մուտք գործելով այնպիսի սոցիալական ցանցեր, ինչպիսին է Ֆեյսբուքը՝ օգտատերերի տերմինալներում տեղադրվում են քուբիներ այդ սոցիալական ցանցերի կողմից: Երբ այդ նույն օգտատերերը այցելում են այլ կայքեր, դրանց շահագործողներն իրենց կայքում վիրտուալ տարածք են տրամադրում այդ սոցիալական ցանցերի շահագործողներին, որտեղ վերջիններս տեղադրում են իրենց նույնականացնող տվյալները: Արդյունքում, երբ օգտատերը մուտք է գործում այդ կայքեր, սոցիալական ցանցերը, այդ կայքերում տեղադրված նույնականացնող տվյալների միջոցով պարզում են, որ այդ օգտատերերն այն նույն դոմեններից են մուտք գործել, որոնցից որ օգտվել են իրենց կայքն

օգտագործելիս: Արդյունքում տեղի է ունենում անձանց նույնականացում: Հենց այս կոնտեքստում է, որ ԵՄ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» թիվ 2016/679 ընդհանուր կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 30-րդ կետը սահմանում է, որ ֆիզիկական անձինք կարող են նույնականացվել իրենց օգտագործած սարքերի, հավելվածների, գործիքների միջոցով, ինչպիսիք են IP հասցեները և քուբիները: Ըստ Կանոնակարգի՝ այս գործիքներն ու միջոցները կարող են թողնել հետքեր, որոնք, մասնավորապես, զուգակցվելով սերվերների կողմից ստացված այլ տեղեկատվության հետ, կարող են օգտագործվել ֆիզիկական անձանց նույնականացնելու համար:

Այլ տեղեկությունների հետ համատեղ անձնական տվյալ կազմելով՝ քուբին հանդիսանում է նաև ֆինանսական ակտիվ տնտեսվարող սուբյեկտների համար: Ուստի պրակտիկայում հանդիպում է անձնական տվյալների «վաճառքը» մեկ սուբյեկտից մյուսին: Տվյալ գործընթացը պետք է պահպանի սակայն Օրենքով նախատեսված երաշխիքները, մասնավորապես՝ պահպանի տվյալների մշակման օրինականության¹, տվյալների փոխանցման հետ կապված իմպերատիվ նորմերը²:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ քուբիները միշտ չէ, որ համարվում են անձնական տվյալներ: Երբեմն դրանց նպատակը վեբ կայքից անխափան օգտվելու հնարավորություն ստեղծելն է՝ առանց անձի նկատմամբ վերջինիս տվյալների հավաքագրման միջոցով որոշումներ ընդունելու: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, ծայրահեղ անհրաժեշտ քուբիներին:

Այսպիսով, քուբիները, լինելով թվային և տառային սիմվոլների համակցություններ, կոչված են ինչպես ապահովելու վեբ կայքերի անխափան

¹ Տվյալների մշակման օրինականության սկզբունքը՝ ամրագրված օրենքի 4-րդ հոդվածով, ենթադրում է, որ. 1. Անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով, 2. անձնական տվյալներ մշակողը պարտավոր է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ: Այսինքն, Օրենքի յուրաքանչյուր դրույթի խախտում ենթադրում է օրինականության սկզբունքի խախտում:

² Օրենքի 26-րդ հոդվածը կանոնակարգում է երրորդ անձանց, իսկ 27-րդ հոդվածը՝ երրորդ երկրներին անձնական տվյալներ փոխանցելու հետ կապված հարաբերությունները:

շահագործումը, այնպես էլ՝ նույնականացնելու այդ կայքերի այցելուներին՝ վերջիններիս վարքագծի ուսումնասիրության արդյունքում ապրանքների և ծառայությունների գովազդման միջոցով: Հետևաբար, թվային միջավայրում կարող է առաջանալ հակասություն տնտեսվարողների շահերի և անձի՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի միջև: Մտավախություններն ավելի քան տեղին են՝ հաշվի առնելով բազմաթիվ տնտեսվարողների կողմից կատարված իրավախախտումները և կարգավորող մարմինների, ինչպես նաև դատարանների կողմից նշանակված տուգանքները վերջիններիս նկատմամբ¹: Այսպիսով, մեր աշխատանքի տրամաբանական շարունակությունը ենթադրում է ուսումնասիրել այն իրավունքները, որոնք տրված են օգտատերերին քուբիների օգտագործումից բխող վտանգները չեզոքացնելու համար:

§2. Քուբիների օգտագործման իրավական երաշխիքները

Ինչպես բազմիցս նշվեց, բացի կայքի անխափան օգտագործումը և օգտատերերի կողմից հայցվող ծառայությունների մատուցումն ապահովելուց քուբիները նպատակ են հետապնդում հավաքագրելու օգտատերերի անձնական տվյալները և դրանց վերլուծության արդյունքում գովազդելու ապրանքներ և ծառայություններ: Հետևաբար, պետք է նախատեսված լինեն իրավական երաշխիքներ, որոնք կոչված կլինեն պաշտպանելու օգտատերերի իրավունքները համացանցում: Որպես այդպիսիք հանդես են գալիս քուբիների օգտագործման մասին օգտատերերին տեղեկություններ տրամադրելը և դրանք տեղադրելու համար վերջիններիս համաձայնությունն ստանալը: Աշխատանքի երկրորդ խնդիրն է պարզել այդ երաշխիքների բովանդակությունը (2.1), ինչպես նաև երաշխիքների իրականացման սուբյեկտային կազմի առանձնահատկությունները (2.2): Այդ նպատակով իրավահամեմատական

¹ Այս մասին՝ հաջորդիվ:

մեթոդի կիրառմամբ վերլուծության կենթարկվեն ՀՀ, ԵՄ, ինչպես նաև վերջինիս անդամ հանդիսացող Ֆրանսիայի իրավական համակարգերում առկա կարգավորումները:

Ֆրանսիայի և ԵՄ իրավունքների ընտրությունը պայմանավորված է մի շարք գործոններով. 1) ԵՄ և Ֆրանսիայի իրավունքներն առավել հանգամանալից են կարգավորում անձնական տվյալների մշակման և քուբիների տեղադրման հետ կապված հարաբերությունները՝ որդեգրելով սպառողամետ քաղաքականություն, 2) ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն) հաճախ հղում է կատարում ԵՄ իրավունքում առկա նորմերին՝ ՀՀ իրավունքում ամրագրված հասկացությունները մեկնաբանելու համար¹, 3) ԵՄ-ում և Ֆրանսիայում արձանագրվել են քուբիների վերաբերյալ բազմաթիվ իրավախախտումներ և դրանց վերաբերյալ վարույթներով *in concreto* մեկնաբանվել են դրանք օգտագործելու դեպքում կիրառվող իրավական երաշխիքները: Դրանք կմեկնաբանվեն սույն աշխատանքում:

1.1. Քուբիների վերաբերյալ իրավական երաշխիքների բովանդակությունը

Դիրեկտիվի 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ԵՄ անդամ երկրները պետք է ապահովեն, որ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օգտագործումը բաժանորդի կամ օգտագործողի տերմինալային սարքի մեջ պահվող տեղեկատվության կամ հասանելիություն ձեռք բերելու համար թույլատրվի միայն այն պայմանով, որ համապատասխան բաժանորդին կամ օգտագործողին տրամադրվի հստակ և համապարփակ տեղեկություն՝ 95/46/ԵՀ դիրեկտիվին համապատասխան (վերջինս փոխարինվել է Կանոնակարգով), ի թիվս այլոց՝ մշակման նպատակների

¹ Տե՛ս ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Խորհրդատվական որոշում գովազդային նպատակով անձնական հեռախոսահամարները օգտագործելու վերաբերյալ, 2016 թ., ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, վարչական վարույթ. գործ N-021/12/18:

մասին, և տվյալներ մշակողի կողմից կառաջարկվի նման մշակումից հրաժարվելու իրավունք: Նույն հոդվածով սահմանված է, որ վերոնշյալ կարգավորումը չպետք է խոչընդոտի տեղեկություններ պահպանելուն կամ դրանց հասանելիություն ստանալուն՝ բացառապես էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով հաղորդակցության փոխանցումը իրականացնելու կամ դյուրին դարձնելու նպատակով, կամ խիստ անհրաժեշտության դեպքում՝ բաժանորդի կամ օգտագործողի կողմից ակնհայտորեն պահանջվող տեղեկատվական ծառայություն մատուցելու համար:

Տվյալ նորմով ամրագրված է այն կանխավարկածը, ըստ որի՝ քուքիների տեղադրման համար անհրաժեշտ է օգտատիրոջ համաձայնությունը, եթե տեղադրվող քուքին ներառված չէ բացառությունների ցանկում: Որոշ դեպքերում օրենքը չի պարտավորեցնում ստանալ օգտատիրոջ համաձայնությունը՝ քուքիներ տեղադրելու համար: Մասնավորապես, խոսքը վերաբերում է այն քուքիներին, որոնք կոչված են ապահովելու կոմունիկացիաների իրականացումը վեբ կայքի միջոցով, ինչպես նաև այն դեպքերին, երբ քուքիներն անհրաժեշտ են օգտատիրոջ կողմից հայցվող ծառայությունը մատուցելու համար: Դրանք են խիստ անհրաժեշտ և նախընտրության քուքիները: Բացի այդ, վերոնշյալ նորմը բլանկետային է, քանի որ համաձայնություն տալու եղանակները կարգավորվում են այլ իրավական ակտով՝ Կանոնակարգով:

Դիրեկտիվի 25–րդ կետի բովանդակությունից բխում է նաև, որ կայքի օգտատերերը պետք է տեղեկացված լինեն քուքիների առկայության և վերջիններիս նպատակների մասին, անկախ այն հանգամանքից՝ դրանց օգտագործմամբ հավաքվում են անձնական տվյալներ, թե ոչ:

Ինչ վերաբերում է ՀՀ–ում հարցի կարգավորմանը, ապա քուքիներ տեղադրելուն համաձայնելու և դրանք մերժելու համար հնարավորություններ ստեղծելու պարտականություն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Եթե քուքիների տեղադրումը կոչված է հավաքելու անձնական տվյալներ, ապա անհրաժեշտ է ստանալ տվյալների սուբյեկտի համաձայնությունը՝

սահմանված Օրենքի 9-րդ հոդվածով: Սույն հոդվածի 7-րդ մասն ընդամենը պահանջում է ստանալ անձի համաձայնությունը՝ գրավոր, էլեկտրոնային եղանակով, բանավոր, կամ էլ այնպիսի հավաստի գործողությունների միջոցով, որոնք ակնհայտորեն կվկայեն տվյալների սուբյեկտի՝ անձնական տվյալները մշակելու համաձայնության մասին:

Քուքիների՝ որպես անձնական տվյալների մշակման համաձայնությունն ստանալու կարգը հանդիսանում է անձնական տվյալների պաշտպանության բնագավառում ամենաքննարկվող հարցերից մեկը: Այդ իսկ պատճառով «համաձայնության» կոնցեպտը մանրամասն ուսումնասիրվել է Անձնական տվյալների պաշտպանության եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից, որի ստեղծած «փափուկ իրավունքը» ներկայացնում է անձնական տվյալներ մշակելու համար տվյալների սուբյեկտի համաձայնությունն ստանալու վերաբերյալ լավագույն փորձի ձեռքբերումների ամփոփումը¹: Դրանք, չնայած որ կրում են խորհրդատվական բնույթ, այնուամենայնիվ հանդիսանում են քննարկվող բնագավառի անկյունաքարային դրույթները, որոնց վրա հիմնվում են ԵՄ անդամ երկրների իրավակիրառ մարմինները: Անհրաժեշտ է հիշատակել, որ ՀՀ-ում զարգացող իրավակիրառ պրակտիկան նույնպես «գաղափարապես» մասամբ հիմնվում է ԵՄ իրավունքի շրջանակներում ձևավորված «փափուկ իրավունքի» վրա²: Դատարանները և Գործակալությունը, Օրենքի դրույթները մեկնաբանելիս, անմիջական հղում են կատարել Կոմիտեի վերլուծություններին: Հիմնվելով ՀՀ և ԵՄ իրավունքների ընդհանրության վրա՝ քուքիների տեղադրման համաձայնության իրավական ասպեկտները կներկայացվեն իրավահամեմատական լույսի ներքո: Երկու իրավական համակարգերի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել խնդրո

¹ European Data protection board, Guidelines 05/2020 on consent under Regulation 2016/679, 2020.

² Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարան քաղաքացիական գործ թիվ ԵԴ/25649/02/20; ՀՀ Վճռաբեկ դատարան քաղաքացիական գործ թիվ ԵԴ/5278/02/19:

առարկա «համաձայնություն» եզրույթի հետևյալ առանձնահատկությունները:

1. Օրենքը, ինչպես Կանոնակարգը, ընդունում է, որ անձնական տվյալների մշակման համաձայնությունը կարող է տրվել միայն պոզիտիվ ակտի միջոցով: Օրենքի 9–րդ հոդվածի 7–րդ մասով սահմանված է, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունը կարող է տրվել գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև բանավոր կարգով: Ըստ Կանոնակարգի՝ համաձայնությունը կարող է արվել, մասնավորապես, նշելով վանդակը վեբ կայք այցելելիս, ընտրելով որոշակի տեխնիկական պարամետրեր տեղեկատվական ծառայություններից օգտվելու համար, ինչպես նաև հայտարարության կամ այլ վարքագծի միջոցով: Հետևաբար, ինչպես նշված է Կանոնակարգով և բխում է Օրենքի տրամաբանությունից, համաձայնությունը չի կարող լինել լռության կամ անգործության դեպքում:

Փորձը ցույց է տալիս, որ քուբիներն ընդունելը սովորաբար հայցվում է հատուկ պատուհանի (cookie banner) միջոցով: Վերջինս պարունակում է կոճակներ, որոնց միջոցով օգտատերը ընդունում կամ մերժում է քուբիների տեղադրումը: Հաշվի առնելով կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների բնույթը՝ քուբի բաները օֆերտա է, այսինքն՝ կոնկրետ օգտատիրոջը հասցեագրված առաջարկ, իսկ օգտատիրոջ կողմից քուբիներ տեղադրելու կոճակը սեղմելը՝ ակցեպտ, որը պետք է լինի լրիվ և անվերապահ:

2. Կանոնակարգը սահմանում է, որ համաձայնությունը պետք է լինի ազատորեն տրված: Չնայած որ Օրենքն ուղղակիորեն չի նախատեսում այս հատկանիշը, այնուամենայնիվ, համաձայնությունը կամային ակտ է, և պետք է տրված լինի տվյալների սուբյեկտի «իրական ընտրությամբ (ազատ, կամավոր որոշմամբ), առանց խաբեության, սպառնալիքի, հարկադրանքի կամ համաձայնություն չտալու դեպքում իր համար

բացասական հետևանքի»¹: Այսպիսով, Օրենքի և Կանոնակարգի իրավահամեմատական վելուծությունը թույլ է տալիս փաստել, որ երկու իրավական աղբյուրներն էլ որդեգրել են համաձայնության համանման կոնցեպտներ:

Այստեղ կարևոր է քննարկել «կամահայտնություն» և «համաձայնություն» եզրույթների հարաբերակցությանը քուքիներ օգտագործելու պարագայում: Ըստ արդի հայերենի բացատրական բառարանի՝ կամահայտնություն նշանակում է «համաձայնությունը, կամքը հայտնել»², իսկ համաձայնություն՝ «որևէ բանի դրական պատասխան, հավանություն»³: Թեև տերմինները, կախված դրանց կոնտեքստից, կարող են նույնանալ, քուքիների իրավակարգավորման էությունը ենթադրում է դրանց հետևյալ մեկնաբանումը. կամահայտնությունը ներքին համոզմունքի արտահայտությունն է, որը կարող է լինել թե՛ դրական, թե՛ բացասական, այսինքն՝ համաձայնության կամ անհամաձայնության տեսքով համապատասխանաբար: Հետևաբար, կամահայտնությունը հարաբերակցվում է համաձայնության հետ այնպես, ինչպես ամբողջը՝ մասի:

Դիտարկելով երկու եզրույթների կիրառումը քուքիների տեղադրման հիպոթեզում՝ խիստ անհրաժեշտ և նախընտրության քուքիների նպատակը կայքի անխափան աշխատանքն ու ծառայությունների պատշաճ մատուցումն է, որոնց դեպքում օգտատիրոջը տրված չէ վարքագծի ընտրության հնարավորություն: Մինչդեռ ոչ անհրաժեշտ քուքիների դեպքում քուքի տեղադրողի պարտականությունն է օգտատիրոջ կամահայտնությունը, այսինքն՝ «կամքի արտահայտման արտաքին ձևը, եղանակը»⁴ ստանալը, որը կարող է ավարտվել ինչպես քուքիների տեղադրմանը համաձայնելով, այնպես էլ դրանք մերժելով:

¹ Տե՛ս նույն տեղում:

² Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջ 677:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 802:

⁴ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/1463/02/16 մասին:

Վերոնշյալից միարժեքորեն բխում է, որ ոչ պարտադիր քուբիների պարագայում կայքը շահագործողը, բացի իր կայքում քուբիների համաձայնության համար հնարավորություն ստեղծելուց, պետք է նաև հնարավորություն ընձեռի օգտատիրոջը մերժելու քուբիների տեղադրումը:

3. Ե՛վ Օրենքը, և՛ Կանոնակարգը պահանջում են, որ համաձայնությունը լինի միանշանակ: «Միանշանակ» եզրույթը մեկնաբանվում է որպես այնպիսի հավաստի գործողությունների իրականացում, որոնք ակնհայտորեն կվկայեն տվյալների սուբյեկտի՝ անձնական տվյալներն օգտագործելու համաձայնության մասին: Կանոնակարգով պահանջվում է, որ տվյալների սուբյեկտի վարքագծից հստակորեն բխի, որ վերջինս համաձայն է իր անձնական տվյալների մշակմանը:

4. Ինչպես Օրենքը, այնպես էլ Կանոնակարգը պահանջում են, որ համաձայնությունը լինի տեղեկացված: Ինչպես նշել է Գործակալությունը վարչական վարույթներից մեկի առթիվ, «*համաձայնությունը միշտ ենթադրում է անձնական տվյալների մշակման վերաբերյալ անձնական տվյալների սուբյեկտների իրազեկվածություն*»¹: Օրենքի 10–րդ հոդվածը նախատեսում է այն տեղեկությունների ցանկը, որոնք պետք է ներառված լինեն ծանուցման մեջ: Մասնավորապես, տվյալներ մշակողը տվյալների սուբյեկտի համաձայնությունն ստանալու նպատակով ծանուցում է տվյալներ մշակելու մտադրության մասին՝ ծանուցման մեջ նշելով տվյալների սուբյեկտի անունը, ազգանունը, անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը և նպատակը, մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը, այդ տվյալների հետ կատարման ենթակա գործողությունների ցանկը, որոնց համար հայցվում է տվյալների սուբյեկտի համաձայնությունը, այն անձանց շրջանակը, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները և այլն:

¹ ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, վարչական վարույթ. գործ N-021/12/18:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 2(110)2023

5. Եվ վերջապես, համաձայնությունը պետք է լինի հստակ, մասնավորապես, նշված լինեն այն տվյալները, որոնք մշակվելու են, դրանց նպատակները, տվյալների մշակման իրավական հիմքերը և այլն: Կանոնակարգով նշված է, որ երբ մշակումն ունի մեկից ավելի նպատակ, պետք է համաձայնություն տրվի դրանցից յուրաքանչյուրի համար:

Քուքիների օգտագործման համար պատշաճ համաձայնության չափանիշները ձևավորվել են նաև ԵՄ և Ֆրանսիայի դատական պրակտիկայում, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների իրավակիրառ պրակտիկայում: Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ կայքերի սեփականատերերը, գովազդատուներն ու վերլուծական ծառայություն մատուցող սուբյեկտները չեն հետևում քուքիների օգտագործման հետ կապված կանոններին: Ընդհանրացնելով վերջին տարիներին առկա իրավախախտումները՝ կարելի է դրանք բաժանել հետևյալ դեպքերի.

- Օգտատիրոջ փոխարեն նախապես կատարած ընտրություն

ԵՄ արդարադատության դատարանը 2019 թվականի հոկտեմբերի 1-ին «Planet 49» գործով նշել է, որ այն փաստը, որ օգտատերն ակտիվացնում է առցանց գովազդային խաղերին մասնակցելու կոճակը, բավարար չէ հավաստելու համար, որ նա տվել է իր համաձայնությունը քուքիների տեղադրման համար: Սույն գործով ընկերությունը նախատեսել էր նախապես նշված վանդակ, որով գովազդային խաղերին մասնակցել ցանկացող ինտերնետ օգտատերերը իրենց համաձայնությունն էին հայտնում քուքիների տեղադրմանը: Քուքիների նպատակը գործընկերապարանքների գովազդային նպատակներով տեղեկատվություն հավաքելն է: «Planet 49» գործով ԵՄ արդարադատության դատարանը նշել է, որ Կանոնակարգի 32-րդ կետով նախատեսված համաձայնությունն առկա է նաև այն դեպքում, երբ օգտատերը կայքն այցելելիս հատուկ վանդակի մեջ ակտիվացնում է քուքիներն օգտագործելու հնարավորությունը: Սակայն վերոնշյալ կետի առումով համաձայնությունը չի համարվում

տրված, երբ կայքի սեփականատիրոջ կողմից նախապես, օգտատիրոջ փոխարեն, ակտիվացված է քուքիներն օգտագործելու հնարավորությունը¹:

- Քուքիները մերժելու խոչընդոտների ստեղծում

Google-ի գործով Հանձնաժողովը գտել է, որ համաձայնությունն ստանալու բաներները կամ ինտերֆեյսները, որոնք պահանջում են մեկ գործողություն քուքիների տեղադրմանը համաձայնելու համար, մինչդեռ մի քանի գործողություններ անհրաժեշտ է կատարել քուքիները մերժելու համար, շատ դեպքերում ներկայացնում են օգտատիրոջ ընտրությունը խոչընդոտելու վտանգ այն դեպքում, երբ վերջինս ցանկանում է արագ դիտել կայքը կամ օգտագործել հավելվածը: Տվյալ գործով Google ընկերությունը տուգանվել է այն բանի համար, որ քուքիներն ընդունելու համար համացանցում անհրաժեշտ էր կատարել 1 գործողություն, մինչդեռ դրանք մերժելու համար օգտատերը պետք է կատարեր 5 գործողություն²: Հանձնաժողովը սահմանել է, որ քուքիները մերժելը պետք է լինի նույնքան պարզ և հասանելի, որքան դրանց համաձայնելը:

- Կոնկյուդենտ գործողությունները որպես համաձայնություն որակելը

Համաձայնության վերաբերյալ խիստ կանոններ նախատեսելը կոչված է պաշտպանելու օգտատերերի իրավունքները: Մասնավորապես, համաձայնության «լայն կոնցեպտի» դեպքում, եթե կոնկյուդենտ գործողությունները համարվեն համաձայնություն, ապա կստացվի իրավիճակ, երբ օգտատիրոջ կողմից կայքն օգտագործելը կհամարվեր համաձայնության մասին վկայող գործողություն: Արդյունքում կառաջանար հակասություն համաձայնության կոնցեպտի և առանց ոչ անհրաժեշտ քուքիներն ընդունելու կայքն օգտագործելու հնարավորության միջև:

Ինչպես իրավագիտորեն նշել է Եվրոպայի անձնական տվյալների պաշտպանության խորհուրդը, համացանցի օգտատերը պետք է

¹ CJUE, G^{de} ch., 1^{er} oct. 2019, aff. C-673/17.

² CNIL, Délibération de la formation restreinte n°SAN-2021-023 du 31 décembre 2021 concernant les sociétés GOOGLE LLC et GOOGLE IRELAND LIMITED.

հնարավորություն ունենա ճիշտ իրականացնել իր ընտրությունը և չկրել որևէ լուրջ անհարմարություն համաձայնության բացակայության կամ հրաժարվելու դեպքում: Կայքի կամ բջջային հավելվածի մուտքն արգելափակելու պրակտիկան նրանց համար, ովքեր իրենց համաձայնությունը չեն տալիս քուբիների տեղադրմանը, չի համապատասխանում Կանոնակարգին¹:

1.2. Քուբիների վերաբերյալ երաշխիքներ տրամադրելու սուբյեկտային կազմի առանձնահատկությունները

Օգտատիրոջ համաձայնությունն ստանալու և քուբիների օգտագործման մասին տեղեկացնելու պարտականության բովանդակությունը բացահայտելուց բացի անհրաժեշտ է նաև որոշել այն սուբյեկտին, որը պետք է կրի նման պարտականությունը:

Իրավահարաբերության կազմի տեսանկյունից քուբիների տեղադրման և օգտագործման հարցում հնարավոր է առանձնացնել երկու բնույթի իրավահարաբերություն. մի դեպքում, կայքը շահագործողը տեղադրում է միայն խիստ անհրաժեշտ քուբիներ, որի պարագայում բացակայում են անձնական տվյալների մշակման հետ կապված հարաբերությունները: Այստեղ իրավահարաբերության կողմերն են կայքի օգտատերը և կայքը շահագործողը: Մեկ այլ դեպքում բացի խիստ անհրաժեշտ քուբիներից օգտագործվում են նաև մարքեթինգային կամ երրորդ կողմի քուբիներ, որի պարագայում կողմերի միջև առկա հարաբերությունները կրում են երկակի բնույթ. բացի կայքի օգտատեր – կայքի շահագործող հարաբերություններից ծագում են նաև անձնական տվյալների պաշտպանության հետ կապված իրավունքներ և պարտականություններ տվյալների սուբյեկտների և տվյալներ մշակողների միջև: Բացի այդ, տվյալներ մշակող-

¹ CEPD, avis 6/2017 sur la proposition de règlement relatif à la vie privée et aux communications électroniques (propos. règl. vie privée et communications électroniques / ePrivacy).

ները հաճախ տվյալների մշակումը դեֆագնում են այլ սուբյեկտների՝ լիազորված անձանց¹:

«Օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որևէ նորմ չի պարտավորեցնում կայքը շահագործողին օգտատերերին տեղեկացնել քուբիների առկայության մասին և ստանալ համաձայնություն դրա համար: Ուստի քուբիների հետ կապված՝ տեղեկացման և համաձայնությունը հայցելու պարտականությունները «Օրենսդրությամբ ամրագրված են այնքանով, որքանով որ վերջիններիս ենթադրում են անձնական տվյալների մշակում: Ոչ պարտադիր և առաջին կողմի քուբիների պարագայում քուբի տեղադրողը՝ տվյալներ մշակողը, պարտավոր է տեղեկացնել օգտատիրոջը՝ տվյալների սուբյեկտին քուբիների տեղադրման մասին՝ Օրենքի 10-րդ հոդվածի ուժով, ինչպես նաև ստանալ վերջինիս համաձայնությունը՝ ղեկավարվելով Օրենքի 9-րդ հոդվածով:

Բացի այդ, տվյալները մշակողների կողմից պետք է պահպանվեն նաև Օրենքով նախատեսված այլ իմպերատիվ նորմերը²: Երբեմն քուբիների տեղադրումը ենթադրում է էլ ավելի բազմակազմ և բազմատեսակ իրավահարաբերությունների առկայություն: Մասնավորապես, այն դեպքում, երբ օգտագործվում են մարքեթինգային քուբիներ, պետք է պահպանվեն նաև գովազդին վերաբերող օրենսդրության նորմերը:

Սակայն իրավահարաբերությունների բնույթը բարդանում է երրորդ անձանց քուբիների դեպքում: Այստեղ առկա են, մի կողմից կայքը շահագործողներ, որոնք, ինքնուրույն կամ լիազորված անձանց միջոցով օգտագործում են անհրաժեշտ և (կամ) ոչ անհրաժեշտ քուբիներ, մյուս կողմից, երրորդ անձինք, որոնք ոչ անհրաժեշտ քուբիների օգտագործ-

¹ «Լիազորված անձ» եզրույթը չի ենթադրում ներկայացուցչական բնույթի իրավահարաբերություններ սուբյեկտների միջև: Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի՝ լիազորված անձը իրավաբանական կամ ֆիզիկական այն անձն է, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, պետական կամ համայնքային հիմնարկը կամ կազմակերպությունը, որին տվյալների մշակողի կողմից օրենքով սահմանված դեպքերում կամ պայմանագրի հիման վրա պատվիրվել է մշակել անձնական տվյալներ:

² Մասնավորապես, խոսքը գնում է Օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված՝ տվյալների մշակման անվտանգության վերաբերյալ նորմերի մասին:

մամբ հավաքում և վերլուծում են անձնական տվյալներ: Ուստի երկրորդ իրավիճակում տրամաբանորեն առաջանում է հետևյալ հարցը. ով է հանդիսանում տվյալներ մշակողը և կրում անձնական տվյալների մշակման մասին տեղեկություններ տրամադրելու և դրա համար օգտատերերի համաձայնությունն ստանալու պարտականությունը: Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված է, որ անձնական տվյալներ մշակող է հանդիսանում այն սուբյեկտը, որը *կազմակերպում* և (կամ) *իրականացնում* է անձնական տվյալների մշակում: Այն, որ անձնական տվյալների մշակումն *իրականացվում* է երրորդ անձի, և ոչ թե կայքը շահագործողի կողմից, ակներև է: Սակայն անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք վերջինս կազմակերպում է տվյալների մշակումը:

Է անձի նկատմամբ հարուցված (իրականացվող) քրեական հետապնդման և պատգամավորի խորհրդարանական գործունեության կապի բացակայության մասին, և նման պայմաններում, ելնելով պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտն անձնական արտոնության չվերաճելու և այն կանոնակարգող նորմերը խիստ նեղ մեկնաբանելու (կիրառելու) մոտեցումից, քրեական հետապնդում հարուցելուց հետո անձի՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման շարունակության համար անհրաժեշտ չէ Ազգային ժողովի համաձայնությունը. նման պարագայում քրեական հետապնդման շարունակությունը պետք է իրականացվի ընդհանուր կարգով», տե՛ս 2021 թ. դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 4.4.-րդ կետը:

Հակառակ պարագայում, երբ հանձնաժողովը եզրակացնի վերը ներկայացված չափանիշների պահպանվածության և պատգամավորի նկատմամբ հարուցվող քրեական հետապնդման քաղաքական շարժառիթների առերևույթ բացակայության մասին, ապա նրանց եզրակացությունը հիմք կհանդիսանա հարցը պառլամենտի նստաշրջանի օրակարգում ընդգրկելու և պառլամենտի կողմից պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու/չզրկելու համար:

Կարծում ենք, որ նման մեխանիզմի առկայությունը որոշակի օբյեկտիվություն կմտցնի պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացում՝ բացառելով «մեծամասնության բռնակալության» ծայրահեղ դրսևորումները՝ քաղաքական դրդապատճառներով պատգամավորների նկատմամբ հետապնդումները:

4. Եզրակացություն

Այսպիսով, պատգամավորի անձեռնմխելիությունն ինքն իրենով հանդես է գալիս իբրև ժողովրդի անձնավորված և ապանձնավորված քաղաքական կամքի իրացման կարևոր երաշխիք: Քաղաքական մեծամասնության կողմից հանրային շահի պաշտպանությունից շեղվելու, ժողովրդի բարձր շահերը այսրոպեական և նեղ անձնային-կուսակցական շահերին ստորադասելու պայմաններում, անձեռնմխելիությունն ուղղված է ապահովելու պատգամավորի ներկայացուցչական գործառույթներն ինքնավար կերպով իրականացնելու հնարավորությունը:

Այն կարևոր երաշխիք է նաև մեծամասնության շարքերում գտնվող պատգամավորի համար՝ «մեծամասնության ներսում» ճնշումներին տուրք չտալու տեսանկյունից:

Պատգամավորի անձեռնմխելիությունը առանցքային երաշխիք է նաև ժողովրդի անձնավորված՝ իր ներկայացուցիչների կերպարանքով արտահայտված քաղաքական կամքի պաշտպանության համար, որով նաև կանխարգելվում են անձի պասիվ ընտրական իրավունքի խախտման վտանգները:

Հետևաբար, բոլոր այն պնդումները, թե ներկա ժամանակներում այն կորցրել է իր նշանակությունը, թե զարգացած ժողովրդավարության

երկրներում այդ ինստիտուտով հետաանդվող նպատակին կարելի է հասնել այլ կերպ (օրինակ կայացած դատական համակարգի միջոցով), պետք է դիտարկել իբրև ոչ հիմնավոր և որոշ չափով անգամ՝ իրականությունից կտրված:

Մյուս կողմից, սակայն, որպեսզի ինստիտուտը ծառայի իր նպատակին և որպես երաշխիք իրապես կենսագործվի, անհրաժեշտ է, որ սահմանված անձեռնմխելիությունից զրկելու որոշ օբյեկտիվ չափանիշներ և պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացը դուրս բերել միայն մեծամասնության որոշմամբ լուծվելիք հարցի տրամաբանությունից: Այդկերպ կբացառվի պատգամավորի անձեռնմխելիության զրկումը միայն մեծամասնության քաղաքական, այդ թվում՝ այսրոպետական շահերով պայմանավորված որոշման հիման վրա՝ բացառելով պատգամավորի անձեռնմխելիության զուտ ձևական բնույթ կրելը և ապահովելով ինստիտուտի՝ իր նպատակային նշանակության գործարկումը՝ որպես արդյունք չեզոքացնելով մեծամասնության կառավարումը «մեծամասնության բռնակալության» վերաճելու ռիսկերը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. **Հակոբյան Լ., Սողոմոնյան Ա., Ռաֆայելյան Վ.**, Ժողովրդավարությունը և ընտրությունները. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, 2022, Լ. Հակոբյան, Ա. Սողոմոնյան, Վ. Ռաֆայելյան: Եր., «Հայրապետ» հրատարակչություն:
2. **Ахтенберг Н., Бадура П., Бекенфёрде Е.В., Гек В.К., Глезер В.Ш., Герцог Р., Изензее Я., Киминних О., Кляин Г, Куниг Ф., Левер В., Манер Г., Рёллеке Г., Хеберле Л., Хенке В., Цахер Х.В., Цее В., Шлаих К., Шмидт-Асман Е., Шредер М.** Государственное право Германии (1994). Сокращенный

- перевод с немецкого семитомного издания. Т. 1 / Отв. ред. Топорнин Б.Н. - М.: Изд-во ИГиП РАН.
3. **Матьё Б.** Право против демократии? Монография / Б. Матьё, пер. с франц. Я.И. Лебедевой, под ред. А. И. Ковлера. - Москва: Норма: ИНФРА-М, 2021.
4. **Мельников Е.** (2017). Уголовное преследование в условиях действия системы разделения властей (досудебное производство), дисс. ...канд. юрид. наук. – Москва.
5. **Эсмен А.** (1898). Общие основания конституционного права. Пер. с фр. под ред. проф. В. Дерюжинского. - Санкт-Петербург.
6. **Barak A.** (2009). The Judge in a Democracy. Princeton University Press. Հղում՝ <https://www.perlego.com/book/734391/the-judge-in-a-democracy-pdf> (վերջին մուտքը՝ 30.05.2023 թ.).
7. **Blokker P.** (2019). Populism as a constitutional project. International Journal of Constitutional Law, 17(2), 536–553. doi: 10.1093/icon/moz028.
8. **Doyle O., Walsh R.** (2021). Deliberative Mini-Publics as a Response to Populist Democratic Backsliding. In M. Cahill, C. O'Ginneide, S. ÓConaill, & C. O'Mahony (Eds.), Constitutional change and popular sovereignty: Populism, politics and the law in Ireland. London, New York: Routledge.
9. **Hardt S.** (2013). Parliamentary immunity: a comprehensive study of the systems of parliamentary immunity of the United Kingdom, France and the Netherlands in a European context. [Doctoral dissertation, Maastricht University]. Maastricht University. <https://doi.org/10.26481/dis.20130926sh> հղում՝ <https://cris.maastrichtuniversity.nl/ws/portalfiles/portal/1439730/guid-55b44d63-b482-4e81-b66e-cfc1a4cef467-ASSET1.0.pdf> (վերջին մուտքը՝ 30.05.2023 թ.).
10. **Klatt M.** (2022). Democracy in 2030. In C. Bezemek (Ed.), Constitutionalism 2030 (pp. 14). Oxford: Hart Publishing.
11. **Rahat G.** (2022). Party Types in the Age of Personalized Politics. Perspectives on Politics, 1-16. doi:10.1017/S1537592722000366.

12. **Weyland K.** (1996). Democracy Without Equity. University of Pittsburgh Press. Retrieved from <https://www.perlego.com/book/3847269/democracy-without-equity-failures-of-reform-in-brazil-pdf>

13. Venice Commission (2014). CDL-AD(2014)011. հղում՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)011-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)011-e) (վերջին մուտքը՝ 30.05.2023 թ.).

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. 2009 թ. հունիսի 30-ի որոշումը ՍԴՈ-810:
2. 2021 թ. դեկտեմբերի 7-ի որոշումը ՍԴՈ-1619:
3. 2022 թ. ապրիլի 29-ի որոշումը ՍԴՈ- 1647:

ՄԻԵԴ Վճիռներ

1. Young, J., & Webster v. the United Kingdom, judgment of 13 August 1981, Series A no. 44, p. 25.
2. Chassagnou and Others v. France [GC], nos. 25088/94, 28331/95 and 28443/95, § 112, ECHR 1999 III).
3. United Communist Party of Turkey and Others v. Turkey, Judgment of 30 January 1998, (case number 19392/92).
4. Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey, Judgment of 13 February 2003, (case numbers 41340/98 41342/98 41343/98 41344/98).
5. Riza and Others v. Bulgaria, judgment of 13 October 2015, (case numbers 48555/10 and 48377/10).
6. Selahattin Demirtaş V. Turkey (No. 2), GC, judgment of 22 December 2020, (case number 14305/17).

ДЕПУТАТСКАЯ НЕПРИКОСНОВЕННОСТЬ - ВЫМИРАЮЩИЙ ИЛИ НЕОБХОДИМЫЙ ИНСТИТУТ В ПРОЦЕССЕ РЕАЛИЗАЦИИ ПОЛИТИЧЕСКОЙ ВОЛИ НАРОДА?

Аннотация

В статье раскрывается роль и значение института депутатской неприкосновенности. Авторы критически подходят к вопросу о том, что институт депутатской неприкосновенности теряет свою роль вместе с «демократизацией» стран.

В статье раскрывается происхождение института депутатской неприкосновенности и делается попытка представить связь между депутатской неприкосновенностью и реализацией политической воли народа.

Ключевые слова: депутатская неприкосновенность, политическая воля народа, уголовное преследование.

PARLIAMENTARY IMMUNITY: DYING OR AN INDISPENSABLE INSTITUTION IN THE PROCESS OF REALIZING THE POLITICAL WILL OF THE PEOPLE?

Annotation

The article reveals the role and significance of the institution of parliamentary immunity. The authors critically examine the question whether the institution of parliamentary immunity loses its role together with the "democratisation" of the country.

The article reveals the origin of the institution of parliamentary immunity and attempts to present the connection between parliamentary immunity and the implementation of the political will of the people.

Keywords: parliamentary immunity, political will of the people, criminal prosecution.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 28.06.2023թ., փրվել է գրախոսության 29.06.2023թ., ընդունվել է տպագրության 03.07.2023թ.:



ԱՐՓԻՆԵ ԲԻՇԱՐՅԱՆ

*Հայաստանի եվրոպական համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս*

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ**

Ամփոփագիր

Տեղական ինքնակառավարման և պետական կառավարման փոխգործակցության տարբեր ասպեկտների գիտական ըմբռնումը պայմանավորված է հասարակության արդիականացման ընթացքում տեղի ունեցող և հասունացող սոցիալական գործընթացների տեսական և գործնական ուսումնասիրությամբ և համակարգմամբ: Այդ փոխհարաբերությունները շատ դեպքերում պայմանավորում են ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց վերապահված լիազորությունների իրականացման արդյունավետությունը, այլև ազդեցություն են ունենում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ընթացքի վրա:

Տարածքային արդիականացման գործընթացների հաջողությունն ուղղակիորեն կախված է պետական որոշումների կայացման և տեղական փոխազդեցությունների աստիճանից, իսկ բնակչության մասնակցությունն այդ փոխհարաբերություններին կնպաստի ժողովրդավարության ձևերի զարգացմանը, համայնքի խորքային խնդիրների բարձրաձայնմանն ու լուծմանը:

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄՆԵՐԻ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 2(110)2023

Ուսումնասիրության առարկան տեղական ինքնակառավարման և պետական կառավարման փոխհարաբերությունների զարգացման տարբեր ասպեկտների վերլուծության, ինչպես նաև դրանց ֆունկցիոնալ փոխգործակցության առանձնահատկություններն են:

Հիմնաբառեր. տեղական ինքնակառավարում, տարածքային կառավարում, պատվիրակված լիազորություններ, ֆինանսական վերահսկողություն, փոխգործակցություն:

Իրենց գործունեության ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները փոխհարաբերվում են գործադիր իշխանության տարածքային մարմինների հետ և այդ փոխհարաբերություններն առնչվում են ինչպես պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացմանը, այնպես էլ կրում են գործընկերային և վերահսկողական բնույթ:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունների կարևորագույն ասպեկտը բնակիչների կարիքներն ու նախասիրությունները հաշվի առնելն է: Քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովման, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման և բարեկեցության ապահովման նպատակով տեղական ինքնակառավարման ոլորտում քաղաքականությունը պետք է ուղղված լինի համայնքների կայուն, համաչափ զարգացման ապահովմանը՝ պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհամաձայնեցված և արդյունավետ գործունեության, ինչպես նաև պետության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխգործակցության միջոցով:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք: Ընդհանուր խմբագրությամբ Գ. Դանիելյանի, ուսումնական ձեռնարկ, Երևանի պետական համալսարան – ԵՊՀ, հրատ., 2015, էջ 302:

Ինքնակառավարմանը տալով վարչական անկախություն, ճանաչելով դրանք՝ պետությունը մասամբ «ազատվում» է տեղական գործերի մասին մտահոգություններից և սահմանափակվում տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վերահսկողության միջոցներով:

Պետությունն ունի հետևյալ հնարավորությունը՝ ազդելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վրա. 1) ֆինանսական միջոցների նկատմամբ վերահսկողություն, 2) օրենքների կատարման նկատմամբ վերահսկողություն («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, գլուխ 8):

Տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների արդյունավետ իրականացումն անմիջականորեն պայմանավորված է ֆինանսական բավարար ռեսուրսներով: Որպես լիազորությունների կատարման ուղղությամբ համայնքների անհրաժեշտ տնտեսական և ֆինանսական հիմքերի գնահատական կարող է դիտվել Վ. Հարությունյանի հետևյալ կարծիքը. «տեղական ինքնակառավարման մարմինները ծանրաբեռնված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված հսկայածավալ լիազորություններով, որոնք ֆինանսական լիարժեք ապահովվածություն չունեն: Տեղական ինքնակառավարման մարմինների կամավոր լիազորությունների, ինչպես նաև պետության պատվիրակած մասով ֆինանսավորումները գրեթե բացակայում են, սակայն տեղական ինքնակառավարման մարմինները իրավասություններ չունեն չֆինանսավորվող լիազորությունները փոփոխելու կամ կասեցնելու համար»¹: Այնուհետև հեղինակը նշում է. «տեղական ինքնակառավարման մարմինների վրա դրված, բայց պետական բյուջեի կողմից չֆինանսավորվող լիազորությունների վերացման իրավական կարգավորման խնդիրը, մեր կարծիքով, անհրաժեշտ է տեղափոխել օրենսդրական դաշտ և դրան լուծում տալ բյուջետային

¹ Տե՛ս Հարությունյան Վ., Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2003, էջ 31:

Ֆեդերալիզմի և միջբյուջետային հարաբերությունների կարգավորման շրջանակներում»¹: Լիազորությունները լիարժեք կատարելու, համայնքների կողմից դրանք ֆինանսավորելու տեղական աղբյուրների համատեքստում անհրաժեշտ է նկատել նաև, որ «ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության անցած տարիների փորձը ցույց է տվել, որ դրա հետագա զարգացման ու կատարելագործման համար անհրաժեշտ է մշակել ապակենտրոնացման ռազմավարություն և հետևողականորեն իրականացնել այն: Ռազմավարությունը պետք է հստակ սահմանի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների փոխանցման ոլորտները, ժամկետները, փուլերը, կառուցակարգերը, գնահատման միջանկյալ ցուցանիշները և չափանիշները»²: Այնուհետև նշվում է, որ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումն անհնար է մասնավորապես առանց տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների ամրապնդման և «տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին համապատասխան ֆինանսական միջոցների տրամադրման»³: Մի կողմից՝ ընդունել տրամադրվող ֆինանսական միջոցների անբավարարության հանգամանքը, իսկ մյուս կողմից՝ ի վերջո ավելացնել պետական բյուջեից համապատասխան ֆինանսավորման ծավալները:

Հայրենական տնտեսագետների կողմից հայտնվում է նաև այն կարծիքը, որ համայնքների զարգացման կարևոր նախապայմաններից մեկը տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների ձևավորումն ու ամրապնդումն է: «Միայն օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների տրամադրումը բավարար չէ իրական ժողովրդավարության հաստատման և համայնքների զարգացման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է ձևավորել տեղական

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս Հարությունյան Վ., նույն աշխատության մեջ, էջ 95:

³ Տե՛ս նույն տեղում:

ինքնակառավարման մարմինների կարողությունները»¹: Արդյունքում, մեր դիտարկմամբ, տեղական ինքնակառավարման մարմիններին նպատակահարմար է պատվիրակել այս կամ այն լիազորությունը, եթե այն ֆինանսապես «հովանավորված» լինի գործադիր իշխանության կողմից, քանզի օրենսդրորեն նախատեսելը դեռևս չի երաշխավորում լիազորությունների պատշաճ և արդյունավետ կատարում՝ առանց ֆինանսական միջոցների ապահովման:

Մասնագիտական գրականության մեջ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման հարաբերակցության հիմքում նախանշվում են հետևյալ սկզբունքները, որոնք կարևոր նշանակություն ունեն փոխադարձ ու վստահելի հարաբերությունների ձևավորման համար: Մասնավորապես, անհրաժեշտ է կարևորել ժողովրդի իշխանության սկզբունքը, որի համաձայն՝ թե՛ պետական իշխանությունը, թե՛ տեղական ինքնակառավարումը հանդիսանում են ժողովրդի իշխանության իրականացման անմիջական ձևեր², ինչպես նաև պետության կառավարման և տեղական շահերի համադրման սկզբունքը, որը պայմանավորված է սոցիալական, մշակութային, ֆինանսական ու այլ ոլորտներում պետական և ՏԻՄ-երի լիազորությունների հստակ բաժանմամբ³:

Հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարման համակարգին վերաբերող բազմաթիվ հրապարակումների շարքում տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների փոխհարաբերություններին վերաբերող խնդիրներն առանձին ուսումնասիրության օբյեկտ որպես կանոն չեն եղել: Անգամ Սահմանադրության մեջ

¹ Տե՛ս **Օրդյան Է.Հ.**, Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Պետական ծառայություն, Երևան, 2002, էջ 97:
² Տե՛ս՝ **Ванеев О.Н., Спас М.А.** Город и самоуправление: вопросы теории. - Красноярск, 2003. - С. 69:
³ Տե՛ս՝ **Селютин Е.Н.** Взаимоотношения органов государственной власти РФ и органов местного самоуправления: правовой и политический аспекты местного самоуправления. - Орел, 2003. - С. 125:

հստակորեն չեն նկարագրվում պետական կառավարում - տեղական ինքնակառավարում փոխհարաբերությունների իրավական ասպեկտները: Ուշագրավ է նաև այն, որ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան ևս չի տալիս պետական կառավարման և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունների ընդհանուր նկարագիրը: Ինչպես արդարացիորեն նշում է Ն.Ս. Տիմոֆեևը, «հաշվի առնելով ժամանակակից իրողությունները՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի հիմնադիրները խուսափել են սահմանել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների իրավական ասպեկտները»¹:

Տեղական ինքնակառավարման մարմինների և պետական մարմինների հետ փոխգործակցությունը գրեթե «անհասանելի» է հանրությանը և շատ դեպքերում, գրեթե անհասկանալի է մնում, թե որ իրավահարաբերություններում կարող են համագործակցել վերջիններս: Տարածքային իշխանությունների հետ փոխհարաբերությունների ասպեկտների անորոշությամբ պայմանավորված (ընդհանուր շահերի համակարգում, աջակցություն և համագործակցություն, համատեղ գործունեություն և այլն)՝ «ներքևի» նախաձեռնության բացակայության, գերծանրաբեռնված պետական լիազորությունների իրականացումը՝ ամբողջությամբ ֆինանսական վերահսկողությամբ, պետությանն «ազատում» է տեղական գործերի կառավարման որոշ պարտականություններից: Իսկ տեղական ինքնակառավարումը, լուծելով սեփական գործերը տնօրինելու կարևոր հարցեր և չունենալով ֆինանսական ռեսուրսներ, ստիպված է ֆինանսական աջակցության համար դիմել պետությանը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման փոխկապակցված և արդյունավետ գործունեությունը պետք է դիտարկել դրանց օղակների կառավարման մարմինների և անձանց որոշակի

¹ Տես՝ **Тимофеев Н.С.** Реформа местного самоуправления - единство власти и демократии // Местное самоуправление в России. Сборник статей под общей редакцией д.э.н. Зотова В.Б. - М.: Осъ-89. - С. 105.

փոխհարաբերությունների համալիրում: Այդ փոխգործակցությունը չպետք է դիտարկել միայն պետության կողմից համայնքին պատվիրակված և պարտադիր լիազորությունների կատարման ընթացքի վերահսկողություն, այլ որոշակի նպատակներով կամ որոշակի խնդիրներ լուծելու, միմյանց գործունեության վրա ազդելու և վերահսկելու, ինչպես նաև աստիճանակարգային կառավարման, իրենց գործառույթների իրականացման, հաշվետվության և անհրաժեշտ այլ գործողությունների ու մեխանիզմների ամբողջություն:

Այդ փոխհարաբերությունները շատ դեպքերում պայմանավորում են ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց վերապահված լիազորությունների իրականացման արդյունավետությունը, այլև ազդեցություն են ունենում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ընթացքի վրա¹: Ի վերջո տեղական ինքնակառավարման մարմինների և գործադիր իշխանության մարմինների միջև գոյություն ունեն նաև խորհրդատվական բնույթի հարաբերություններ, որոնք իրականացվում են խորհրդակցական մարմնի միջոցով («Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 21, 2-րդ մաս): Բազմաբնակավայր համայնքի ղեկավարները կարող են բարձրացնել և քննարկման առարկա դարձնել իրենց համայնքների և մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին առնչվող ցանկացած հարց, որը հետագայում, անհրաժեշտության դեպքում, մարզպետի միջոցով քննարկման է ուղարկվում համապատասխան իրավասու մարմիններին:

Պետության կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հիմնական ձևը տեղական ինքնակառավարման նկատմամբ պետական հսկողությունն է: Եվ եթե տվյալ դեպքում համակարգում ենթադրում է հարաբերությունների երկու մասնակցի փոխհարաբերություններ, ապա պետական հսկողությունը

¹ Տես՝ **Սուվարյան Յու.Մ.**, Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների գերակայությունները արդի փուլում, Երևան, Տնտեսագետ, «Ամբեր» մատենաշար, 2015, էջ 104:

ներառում է տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ պետական կառավարման մարմինների միակողմանի գործողություններ¹:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների ամենակարևոր ուղղությունը պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումն է: Վերջիններս իրականացվում են պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին: Պատվիրակված լիազորությունները (այդ թվում՝ դրանց իրականացման ծախսերի ֆինանսավորումը) իրականացվում են օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Պատվիրակված լիազորությունների իրականացման դիմաց անհրաժեշտ ֆինանսավորում հնարավոր է իրականացնել դրանց չափորոշիչները սահմանելու և ծավալները գնահատելու դեպքում: Այս առումով համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին՝ ֆինանսական համահարթեցման սկզբունքի, համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար, անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ: Ինչպես Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 9-րդ հոդվածի 5-րդ մասում է ամրագրված՝ «ֆինանսապես առավել թույլ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտպանությունը պահանջում է ֆինանսական համահարթեցման ընթացակարգերի ներդրում կամ հավասարազոր միջոցառումներ՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորման հնարավոր աղբյուրների անհամաչափ բաշխման հետևանքների, ինչպես նաև այս մարմիններին

¹ Տես՝ **Пешин Н.Л.** Государственная власть и местное самоуправление в России: проблемы развития конституционно-правовой модели. - М., 2007. - С. 38-40:

վերապահված ծախսերի ճշգրտմանը»:

Ինքնին պարզ է, տեղական ինքնակառավարման մարմին - տարածքային կառավարման մարմին հարաբերությունները կրում են վերահսկողական բնույթ: Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովելու նպատակով օրենքով սահմանված կարգով համայնքին պատվիրակված լիազորությունների նկատմամբ իրականացվում է պետական վերահսկողություն: Այս դրույթը նախատեսված է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում: Մասնավորապես, Խարտիայի 8-րդ հոդվածի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վերահսկողություն կարող է իրականացվել միայն սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված ընթացակարգերով և դեպքերում: Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ցանկացած վարչական վերահսկողություն պետք է ծառայի միայն օրինականությանը և սահմանադրական սկզբունքների ապահովմանը:

Կարևորելով պետական կառավարման (տարածքային կառավարման) և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությունը՝ պայմանավորված սահմանադրական պահանջով և փոխհարաբերությունների մշակույթի ձևավորմամբ, փոխհարաբերությունների և քաղաքացիական մասնակցության կառուցակարգերը հիմնավորում ենք հետևյալ բաղադրիչներով՝

ա) տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառավարման մարմինների ընդհանուր խնդիրների և գործառույթների իրականացում՝ պայմանավորված «պետական գործերի» և «համայնքային նշանակության գործերի» բաշխմամբ,

բ) քաղաքացիների մասնակցային գործընթացի կազմակերպում՝ պայմանավորված համայնքային և տարածքային զարգացման ծրագրերի մշտադիտարկմամբ:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ 2(110)2023

Տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում պետությունն ունի առաջնային դեր այն առումով, որ համայնքային նշանակության հանրային հարցերի շրջանակը սահմանվում է օրենքով՝ սեփական և պատվիրակված լիազորությունների իրականացմամբ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունների խնդիրների, ինչպես նաև փոխգործակցության իրավական մեխանիզմների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական որոշումներն ազդում են տեղական նշանակության խնդիրների վրա, իսկ այդ որոշումների վրա տեղական ինքնակառավարման որևէ ազդեցության մասին, իհարկե, ավելորդ է խոսել:

Արդեն իսկ օրենսդրորեն առանձնացնելով «պետական գործերը» և «համայնքային նշանակության գործերը»՝ պետության նպատակը պետական և համայնքային շահերի ներդաշնակեցմամբ տարածքային և համայնքային համաչափ զարգացում ապահովելն է՝ պայմանավորված գործընկերային փոխհամաձայնեցված հարաբերություններով: Պետական և մունիցիպալ իշխանությունների շահերի միջև հավասարակշռության հասնելու հիմնարար նշանակությունը կայանում է պետական իշխանության այս մակարդակների փոխգործակցության որակյալ կառուցման մեջ, որի արդյունքը պետք է լինի տեղական ինքնակառավարման քաղաքական և իրավական կայունության ձեռքբերումը երկրի պետական համակարգում:

Անդրադառնալով քաղաքացիների մասնակցության հարցերին՝ գործնականում անհրաժեշտ կլինի մշակել տարածքային պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության, թափանցիկության և հանրային հաշվետվողականության ապահովման միասնական չափորոշիչներ, մասնակցային գործընթացի կազմակերպման ընթացակարգեր և ուղեցույցեր և ցույց տալ դրանց կիրառման մեխանիզմներն ու օգուտները և ապահովել դրանց ներդրումը գործնականում (մարզի խորհրդին

մասնակցելու իրավունքի ապահովում, օրինաստեղծ նախաձեռնություն, տարածքային հասարակական ինքնակառավարում, քաղաքացիների ժողովներ և համաժողովներ, հարցումներ, բնակիչների դիմումներ ՏԻՄ-երին բողոքներով, հայտարարություններով և առաջարկներով և այլն):

Տեղական ինքնակառավարումը և պետական կառավարումը հանդես են գալիս որպես սոցիալական կառավարման տարբեր մակարդակներ՝ ազդելով հասարակության վրա տարբեր մեթոդներով և առաջադրելով կառավարման տարբեր խնդիրներ՝ սոցիալական փոփոխություններն օպտիմալացնելու և ռացիոնալ ինքնակազմակերպման մակարդակին անցնելու համար: Տեղական ինքնակառավարման և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և բնակչության միջև հակասությունների վերարտադրումը կապված է «փոխադարձ իրավասության ոլորտի» ոչ հասուն վիճակի հետ: Կառավարման սուբյեկտի և օբյեկտի հավասարակշռությունը ձեռք է բերվում տեղական ինքնակառավարման նկատմամբ բնակչության բաց լինելու և տեղական համայնքի հետադարձ կապի փոփոխականության շնորհիվ, պայմանով, որ տեղական ինքնակառավարումը դառնում է «բնակչության շահերի ներկայացում», իսկ տեղական ինքնակառավարման «միջնորդությունը» նպաստելու է բնակչությանը երկխոսության հնարավորության ստեղծմանը և տարածքային կառավարման զարգացմանը:

Անհրաժեշտ է պետական կառավարման (տարածքային կառավարման)–ՏԻՄ–համայնքի բնակիչ փոխհարաբերության «եռանկյունին» կառուցել հուսալի և շահավետ գործիքակազմով՝ պետական կառավարման (տարածքային կառավարման) և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությունը հասանելի դարձնել հանրությանը, անհրաժեշտության դեպքում նաև ապահովել վերջիններիս մասնակցությունն այդ հարաբերություններին, ի վերջո համայնքային խնդիրներն ունեն հանրային բնույթ, իսկ համայնքի բնակիչների կողմից ներկայացված սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված

միջոցառումները և ծրագրերը կարող են նպաստել տարածքային համաչափ զարգացմանը:

Համայնքային և տարածքային ծրագրերի ներդաշնակ զարգացման մշտադիտարկումը պայմանավորում ենք այն հիմնավորմամբ, որ այն ոչ միայն հաշվետվողականության ապահովման գործոն է, այլև բնակիչների մասնակցության ապահովման երաշխիք՝ պայմանավորված ծրագրերի վերաբերյալ տվյալների պարբերաբար հավաքագրմամբ և վերահսկմամբ: Քաղաքացիների՝ մշտադիտարկման գործընթացին մասնակցությունը նպաստելու է ինչպես ծրագրերի նախընտրությանը և համադրմանը, իրականացվող գործողությունների հաշվետվողականությանը և ռիսկերի գնահատմանը, այնպես էլ հանրային նշանակության ռեսուրսների համաչափ բաշխմանը՝ առավել դրական արդյունք ապահովելու ակնկալիքով: Ռիսկերի գնահատման ցուցիչը ենթադրում է՝ արդյոք գործողություններն ապահովում են ծրագրային առաջընթաց՝ հանրային կարիքների ապահովման և անհրաժեշտության տեսանկյունից և ինչ փոփոխություններ կարելի է նախատեսել առաջադրված խնդիրների առավել արդյունավետ լուծման համար:

Տեղական ինքնակառավարումը, լինելով ժողովրդավարության անկախ ձև, չի կարող գոյություն ունենալ միասնական պետական տնտեսական, սոցիալական, գաղափարական և այլ քաղաքականությունից դուրս, լինել պետությունից բացարձակապես անկախ: Այդ իսկ պատճառով տեղական ինքնակառավարման հարցը պետք է դիտարկել պետական մարմինների և բնակչության հետ գործընկերության տեսանկյունից՝ տեղական ինքնակառավարումն առավել արդյունավետ իրականացնելու, քաղաքացիների կենսաապահովման խնդիրները օպտիմալ կերպով լուծելու համար:

Հասարակական կյանքի բոլոր ասպեկտների բարեփոխման դրական գործընթացները տեղի են ունենում գիտակցված փոփոխությունների պայմաններում, երբ հասարակական կյանքի կազմակերպման դեմոկրատական ձևերը բախվում են մարդու և հասարակության, քաղաքացու

հարաբերությունների պարզեցված ըմբռնման նկրտումներին, իսկ տեղական իշխանությունների և պետական իշխանությունների փոխգործակցության մեխանիզմի ճիշտ ընտրությունը թույլ է տալիս տեղական ինքնակառավարման մարմիններին արդյունավետորեն իրականացնել իրենց գործունեությունը, իսկ այդ հարաբերությունների ամենաարդյունավետ և արդարացված ձևը պետք է լինի ջանքերի համակարգումը և խնդիրների համատեղ լուծումը:

Կարևոր է նշել նաև այն փաստը, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունները երկկողմ փոխգործակցության, փոխներթափանցման գործընթաց է: Իսկ կառուցելով տեղական ինքնակառավարման և պետական իշխանության հարաբերությունների մոդել՝ պետությունը պետք է ելնի նրանից, որ վերջինս տեղում իր հիմնական «դաշնակիցն» ու գործընկերն է:

Այսպիսով, տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների փոխհարաբերությունների զարգացման կարևոր ասպեկտ դիտարկելով համայնքների բնակչության աճող ներգրավվածությունը տարածքային կառավարման գործընթացում, ինչը կարող է հասարակության մեջ ձևավորվել իրական ինքնակառավարման մշակույթ, որի արդյունքում կլինեն առավել թափանցիկ աշխատանքներ, հանրությունն ավելի մոտ կանգնած կլինի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, իսկ պետական վերահսկողության ձևերն առավել հասկանալի ու տեսանելի կլինեն բնակչության համար:

2(110)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՎ

Օգտագործված գրականության ցանկ

1. **Հարությունյան Վ.**, Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2003, 102 էջ:
2. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք: Ընդհանուր խմբագրությամբ Գ. Դանիելյանի, ուսումնական ձեռնարկ, Երևանի պետ. համալս. – ԵՊՀ. հրատ., 2015, 387 էջ:
3. **Սուվարյան Յու.Մ.**, Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների գերակայություններն արդի փուլում, Երևան, Տնտեսագետ, «Ամբերդ» մատենաշար, 2015, 138 էջ:
4. **Օրդյան Է.Հ.**, Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Պետական ծառայություն, Երևան, 2002, 150 էջ:
5. **Ванеев О.Н., Спас М.А.** Город и самоуправление: вопросы теории. - Красноярск, 2003. - 372 с.
6. **Пешин Н.Л.** Государственная власть и местное самоуправление в России: проблемы развития конституционно-правовой модели. Диссертация. - М., 2007.
7. **Селютин Е.Н.** Взаимоотношения органов государственной власти РФ и органов местного самоуправления: правовой и политический аспекты местного самоуправления. - Орел, 2003. - 183 с.
8. **Тимофеев Н.С.** Реформа местного самоуправления - единство власти и демократии // Местное самоуправление в России. Сборник статей под общей редакцией д.э.н. В.Б. Зотова. - М.: Ось-89, 2003.

ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ВЗАИМОДЕЙСТВИЯ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ И ОРГАНОВ ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ

Аннотация

Научное осмысление различных аспектов взаимодействия местного самоуправления и государственного управления обусловлено теоретическим и практическим изучением и систематизацией социальных процессов, происходящих и назревающих в ходе модернизации общества. Во многих случаях эти отношения определяют не только эффективность осуществления органами местного самоуправления возложенных на них полномочий, но и влияют на ход развития системы местного самоуправления.

Успешность территориальных модернизационных процессов напрямую зависит от степени принятия государственных решений и местных взаимодействий, а участие населения в этих взаимодействиях будет способствовать развитию форм демократии, постановке и решению глубинных общественных проблем.

Предметом исследования является анализ различных аспектов развития взаимоотношений местного самоуправления и государственного управления, а также особенностей их функционального взаимодействия.

Ключевые слова: местное самоуправление, территориальное управление, делегированные полномочия, финансовый контроль, сотрудничество.

THEORETICAL LEGAL ASPECTS OF INTERACTION OF LOCAL SELF-GOVERNMENT AND TERRITORIAL GOVERNMENT BODIES

Annotation

Scientific understanding of various aspects of the interaction of local self-government and public administration is due to the theoretical and practical study and coordination of social processes occurring and maturing in the course of the modernization of society. In many cases, these relations determine not only the effectiveness of the implementation by local governments of the powers assigned to them, but also affect the course of development of the local government system.

The success of territorial modernization processes directly depends on the degree of state decision-making and local interactions, and the participation of the population in these interactions will contribute to the development of democratic forms, the formulation and solution of deep social problems.

The subject of the study is the analysis of various aspects of the development of relations between local government and public administration, as well as the features of their functional interaction.

Keywords: local self-government, territorial administration, delegated powers, financial control, cooperation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 23.05.2023թ., փրվել է գրախոսության 23.05.2023թ., ընդունվել է փաթագրության 25.05.2023թ.:



ԼԻԼԻԹ ԶԻՐՈՅԱՆ

*Հայաստանի Եվրոպական համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս*

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Ամփոփագիր

Հաշվի առնելով համաշխարհային մասշտաբով բնապահպանական ճգնաժամերի ավելացումը, ավելի քան կարևոր է դառնում բնապահպանական նորմերի սահմանադրաիրավական ամրագրումը: Պետությունները պետք է ոչ միայն ամրագրեն, այլ նաև ստեղծեն բնապահպանական անվտանգության ապահովման համար կարևոր միջոցներ: Ուսումնասիրելով ժամանակակից մի շարք պետությունների սահմանադրություններ, տեսնում ենք, թե ինչպես են մանրակրկիտ ամրագրված ինչպես բնապահպանական անվտանգությունը՝ որպես պետության քաղաքականություն, այլ նաև մարդու էկոլոգիական իրավունքները՝ ընդգծելով դրանց առաջնային նշանակությունը: Վերլուծելով ՀՀ Սահմանադրությունը՝ տեսնում ենք բավականին լուրջ բացթողումներ, ինչպես բնապահպանական անվտանգության ամրագրման տեսանկյունից, այնպես էլ մարդու բնապահպանական իրավունքների տեսանկյունից: Ուստի, գտնում ենք, որ ՀՀ Սահմանադրությամբ հստակ պետք է սահմանվեն «բնապահպանական անվտանգությունը», ինչպես նաև անձի բնապահ-

2(110)2023
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

պանական իրավունքները և իրավական մեխանիզմներ ու պայմաններ ամրագրվեն անձանց բնապահպանական իրավունքների իրականացման համար:

Հիմնաբառեր. բնապահպանական անվտանգություն, շրջակա միջավայր, սահմանադրություն, բնապահպանական նորմ, էկոլոգիական իրավունքներ, էկոլոգիական քաղաքականություն

Ներածություն

Հետազոտության նպատակն է բնապահպանական անվտանգության սահմանադրաիրավական կարգավորման հայեցակարգային հիմքերի համակարգային հետազոտությունը, Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական անվտանգության հիմնական սկզբունքների սահմանադրաիրավական ամրագրման, ինչպես նաև բնապահպանական անվտանգության ապահովումը կարգավորող սահմանադրաիրավական նորմերի համեմատական, պատմաիրավական վերլուծության իրականացումը, իսկ հետազոտության խնդիրն է սահմանադրաիրավական կարգավորման ոլորտում հիմնական բացթողումների վերհանումն և բարեփոխմանն ուղղված առաջարկների ներկայացումը: **Հետազոտության օբյեկտ են** հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում մարդու և պետության բնապահպանական անվտանգության ապահովման ոլորտում հասարակական հարաբերությունները, իսկ **առարկան՝** Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական անվտանգության ապահովման ոլորտում իրավունքի նորմերը: Այսօր Հայաստանի Հանրապետության բնապահպանական անվտանգության սահմանադրական հիմքերի հետազոտությունը կնպաստի էկոլոգիական ճգնաժամից երկրի դուրսբերման ադեկվատ ճանապարհների որոշմանը, **ինչն էլ հիմնավորում է հողվածի արդիականությունը:**

Վերջին ժամանակաշրջանում շրջակա միջավայրի խնդիրներն սկսել են ավելի շատ անհանգստացնել մարդկությանը, գրանցվել են էկոլոգիական

ճգնաժամի տարատեսակ ցուցանիշեր ոչ միայն առանձին պետություններում, այլև ողջ երկրագնդի մասշտաբներով:

Սահմանադրական պետության հասկացությունը լցվել է նոր իմաստով, ժամանակակից սահմանադրական պետության մոդելը կարող է աստիճանաբար ընդլայնվել՝ չհանդիսանալով ընդմիշտ նախանշված և կոնսերվատիվ: Ավելին, պետությունների սահմանադրությունները պետք է հասարակության զարգացման հետ մեկտեղ փոփոխություններ կրեն՝ կապված նոր գլոբալ խնդիրների առաջացման հետ: Այսօր հասարակության և բնության փոխազդեցությունն այնքան ամուր է, որ հասարակության հասցրած վնասը, միևնույն ժամանակ վնաս է շրջակա միջավայրին: Իր հերթին վնասը, որը մարդը հասցնում է բնությանը, վերջին հաշվով հասցնում է հասարակությանը¹:

Ամենաընդհանուր ձևով անձի սահմանադրական և իրավական կարգավիճակը կարող է սահմանվել, որպես անհատի իրավաբանորեն ամրագրված դիրք պետական կազմակերպված հասարակությունում: Սա բարդ կատեգորիա է, որն արտացոլում է անհատի, հասարակության և պետության հարաբերությունները: Այս կարգավիճակը մեծապես որոշվում է երկրի սահմանադրությամբ սահմանված սկզբունքների, իրավունքների, ազատությունների, պարտականությունների, երաշխիքների համակարգով, որոնք երաշխավորվում և տրամադրվում են պետության կողմից, որոնց համաձայն անհատը՝ որպես իրավունքի սուբյեկտ, որոշում է իր վարքագիծը պետության և հասարակության մեջ²:

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից մի քանի տարի անց՝ 1995թ. հուլիսի 5 –ին, ընդունվեց ՀՀ սահմանադրությունը:

Անկախության հռչակումը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լայն հնարավորություններ էր ընձեռում երկրի ներսում լուրջ փոփոխությունների և այլ պետությունների համագործակցության արդյուն-

¹ Տե՛ս **Крассов О.И.** Экологическое право. – Москва: “Норма, Инфра-М”, 2023. – С. 13.

² Տե՛ս **Караманукян Д.Т. и др.** Отв. ред. и авт. предисл. Караманукян Д.Т. Права человека в России: история, теория и практика. – Омск: Омская юридическая академия, 2015. – С. 54.

քում շարժվել էկոլոգիական կայուն օրենսդրություն ստեղծելու, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պահպանության, կյանքի որակի բարձրացման ճանապարհով¹:

«Սահմանադրության 10-րդ հոդվածում նշված էր. «Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը եւ վերարտադրությունը, բնական պաշարների բնական օգտագործումը²»: Երկրորդ գլխում, որն ուներ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությունը, որևէ անդրադարձ չկար մարդու և քաղաքացու էկոլոգիական իրավունքներին, ինչը բավականին լուրջ բացթողում էր մարդու իրավունքների տեսանկյունից: Այնուհանդերձ, ամրագրվեց պետության էկոլոգիական գործառույթը, դրանով իսկ սահմանվեցին պետության համար պարտականություններ վերոհիշյալ բնագավառում:

«Ետագայում՝ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում, առաջին անգամ երկրի հիմնական օրենքում սահմանվեց «բնապահպանական անվտանգություն» տերմինը:

«Սահմանադրության 48-րդ հոդվածում ամրագրված էր. «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝

...

10) իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն³»: Ինչպես նաև 33.2-րդ հոդվածում ամրագրված էր. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ եւ այլոց հետ համատեղ պահպանել եւ բարելավել շրջակա միջավայրը:

¹ Տե՛ս **Իսկոյան Ա.Բ., Գեղամյան Օ.Մ., Գրիգորյան Հ.Ս.**, Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք, ընդհանուր մաս, Երևան, «Հայրապետ», 2020 թ., էջ 97:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 05.07.1995 թ):

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (27.11.2005 թ. փոփոխություններով):

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»: Իսկ ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածը սահմանում էր, որ պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը եւ վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:

Սահմանադրությամբ ամրագրվեց ինչպես մարդու կարևոր իրավունքներից մեկը, այլ նաև, որպես պետության կարևոր խնդիր էր դիտարկվում բնապահպանական անվտանգություն ապահովող քաղաքականության իրականացումը: Սահմանադրորեն ամրագրելով պատասխանատվությունը պաշտոնատար անձանց կողմից բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ մերժելու համար՝ մեծ քայլ էր կատարվում ապահովելու Օրիուսի կոնվենցիայի¹ դրույթների ավելի ինտենսիվ իրագործման, ներպետական սահմանադրական հիմքերը ապահովելու համար:

Այժմ ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածում նշված է. «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»²:

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով ամրագրվեց տեղեկություններ ստանալու իրավունքը:

Կայուն զարգացման ամրագրումը սահմանադրորեն շատ կարևոր քայլ էր՝ հաշվի առնելով կայուն զարգացման նպատակների կարևորությունը¹:

¹ Տե՛ս CONVENTION ON ACCESS TO INFORMATION, PUBLIC PARTICIPATION IN DECISION-MAKING AND ACCESS TO JUSTICE IN ENVIRONMENTAL MATTERS done at Aarhus, Denmark, on 25 June 1998:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (06.12.2015 թ. փոփոխություններով):

Սակայն պետության քաղաքականության հիմնական նպատակների շարքում լիովին բացակայում է բնապահպանական անվտանգության ապահովումը: «Խթանել» բառն ինքնին պարտավորեցնող չէ, ինչն էլ նվազեցնում է պետության ակտիվ գործունեությունը շրջակա միջավայրի պահանջության ոլորտում: Իսկ ինչ վերաբերում է տեղեկատվություն ստանալու իրավունքին, այստեղ ներառված չէ «բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ տրամադրումը մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության մասին» :

«Բնապահպանական անվտանգությունը»՝ որպես ոչ կենցաղային ծագման իրավական կատեգորիա. առաջին անգամ այս տերմինը հայտնվեց միջազգային հարաբերություններում 1980-ական թվականներին, որտեղ բնապահպանական անվտանգությունը դիտվում էր որպես խաղաղության և համաշխարհային անվտանգության ապահովման գործոն: 1984 թ.-ին UNEP-ի Կառավարման խորհրդի 12-րդ նիստում այս կազմակերպության գործադիր տնօրենն իր եզրափակիչ ելույթում մատնանշեց մի կողմից բնապահպանական խնդիրների, մյուս կողմից՝ ազգային և միջազգային անվտանգության կապը: Նա նշեց, որ համաշխարհային անվտանգությունը սննդամթերք, անդրսահմանային աղտոտվածություն և նույնիսկ զինված հակամարտություններ, ինչպես նաև ժամանակակից սոցիալական և տնտեսական զարգացման գործողություններ, որոնք կարող են հանգեցնել կարևոր բնական ռեսուրսների սակավության և աղտոտման, որն իր հերթին կարող է միջազգային բախումներ առաջացնել: 1987 թվականի դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Միջազգային խաղաղության և անվտանգության համապարփակ համակարգ» 42/93 բանաձևը, որն ընդգծում էր, որ ընդհանուր և համապարփակ անվտանգությունը պահանջում է առանց բացառության միջազգային հարաբերությունների բոլոր մասնակիցների համատեղ ջանքերը. և միջազգային անվտանգության ու հարակից ոլորտների համար կարևոր է

¹ Տե՛ս <https://www.un.org/sustainabledevelopment/development-agenda/>

նաև շրջակա միջավայրի պահպանումը: 10-րդ կետում նշվում է, որ «բնապահպանական համագործակցությունը պետք է դառնա համապարփակ միջազգային անվտանգության անբաժանելի մասը»:

Համաշխարհային, միջազգային համագործակցությունն այս դիտարկվող ոլորտում չպետք է հակադրվի տարածաշրջանային, երկկողմանի և որևէ այլ, նաև ներպետական համապատասխան ներքին միջոցառումներին: Սրանք բոլորը համակարգային հարաբերություններ են մեկ ընդհանուր առաջադրանքի շրջանակներում՝ ապահովելու ամբողջ մարդկության բնապահպանական անվտանգությունը, հետևաբար գնալով ավելի է շեշտադրվում բոլոր պետությունների կողմից վերոհիշյալ պարտականությունների ընդունումը՝ ի նպաստ աշխարհի¹:

Ուսումնասիրելով ժամանակակից մի շարք պետությունների սահմանադրություններ, թիրախավորելով բնապահպանական անվտանգության և շրջակա միջավայրի վերաբերյալ դրույթների վերլուծությունը՝ տեսնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը վերոհիշյալ ոլորտում բավականին հետընթաց է գրանցել, որը, կարծում ենք, հետագա փոփոխությունների ժամանակ պարտադիր պետք է ուշադրության արժանանա:

ՌԴ Սահմանադրությունն ուսումնասիրելիս հարկ է արձանագրել, որ այն պարունակում է շրջակա բնական միջավայրի ոլորտում հարաբերությունները կարգավորող նախկինում չգրանցված նորմեր: Այնտեղ առաջին անգամ ամրագրված են բարենպաստ շրջակա միջավայր ունենալու քաղաքացիների իրավունքները, մտցվում է «բնապահպանական անվտանգություն» տերմինը: Սակայն որոշ այլ պետությունների սահմանադրություններում «բնապահպանական անվտանգություն» հասկացությունն ավելի մանրամասն է ներկայացված, քան ռուսականում: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում բնապահ-

¹ Տե՛ս **Валеев Р.М.** Международное экологическое право: учебник. - М.: “Статут”, 2012. - С. 22.

պանական անվտանգության ապահովումն իրականացվում է սահմանադրական երաշխիքների օգնությամբ, որոնք ուղղված են բնության պահպանությանը և բնական ռեսուրսների ավելի ռացիոնալ օգտագործմանը: Ռուսաստանի Սահմանադրության մեջ ավելի մանրամասն նկարագրված են քաղաքացու էկոլոգիական իրավունքները, ուստի հարկավոր է համաձայնվել Ս.Ա. Բոգոլյովի և Օ.Ս. Կոլբասովի այն պնդման հետ, որ «...պետության էկոլոգիական գործունեության մեջ, պետության էկոլոգիական գործունեության խթանման մեխանիզմում այն հանդիսանում է յուրաքանչյուրի բնապահպանական գործունեության նպատակ և այդ գործունեության արդյունավետության չափանիշ»¹: Նշենք, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 42-րդ հոդվածը հանդիսանում է մարդու և քաղաքացու բնապահպանական անվտանգության իրավական ֆունդամենտ: Այնտեղ կարելի է ընդգծել երեք փոխկապակցված իրավունք.

- բարենպաստ շրջակա միջավայրի,
- դրա վիճակի մասին ճշգրիտ տեղեկատվության,
- էկոլոգիական իրավախախտմամբ քաղաքացու առողջությանը կամ սեփականությանը հասցված վնասի փոխհատուցման²:

Լեհաստանի Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված է. «Լեհական Հանրապետությունը պաշտպանում է իր անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ապահովում է մարդու և քաղաքացու ազատությունները և իրավունքները, ինչպես նաև քաղաքացիների անվտանգությունը, պաշտպանում է ազգային ժառանգությունը, ինչպես նաև ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը՝ առաջնորդվելով հավասարակշռված զարգացման սկզբունքով»:

¹ Տե՛ս **Боголюбов. С.А., Колбасов О.С.** Закон об охране природы в СССР. Каким ему быть. Мнения и предложения ученых. - М., 1991. - С. 26:

² Տե՛ս ՌԴ Սահմանադրություն (ընդունված 12.12.1993 թ.):

74-րդ հոդվածում ամրագրված է նաև, որ «Հանրային իշխանություններն իրականացնում են արդի և ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն:

2. Շրջակա միջավայրի պահպանությունը հանդիսանում է հանրային իշխանությունների պարտականությունը:

3. Ամեն ոք ունի շրջակա միջավայրի վիճակի և պահպանության մասին տեղեկատվություն ունենալու իրավունք:

4. Հանրային իշխանություններն աջակցում են շրջակա միջավայրի պահպանությանն ու վիճակի բարելավմանն ուղղված քաղաքացիների գործողություններին»:

86-րդ հոդվածում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի վիճակի մասին և պատասխանատվություն է կրում պատճառած վնասի համար: Այդ պատասխանատվության սկզբունքները որոշվում են օրենքով»¹: Լեհաստանի սահմանադրությունը համապարփակ անդրադառնում է ինչպես վերոհիշյալ ոլորտում մարդու իրավունքներին, այլ նաև բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությանը, տեղեկություն ստանալու իրավունքին, ինչպես նաև հասցված վնասի փոխհատուցմանը:

Ռումինիայի Սահմանադրության 134-րդ հոդվածում թվարկվում են, որ պետությունը պարտավոր է ապահովել.

- Ազգային շահերին համապատասխան բնական ռեսուրսների էքսպլուատացիա,

- Շրջակա միջավայրի վերականգնում և պահպանություն, ինչպես նաև էկոլոգիական հավասարակշռության պահպանում»²:

Հունաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, մասնավորապես 24-րդ հոդվածում նշվում է, որ «Շրջակա և մշակութային միջավայրի պահպանությունը հանդիսանում է պետության պարտականություն»:

¹ Տե՛ս Լեհաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 02.04. 1997 թ.):

² Տե՛ս Ռումինիայի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 21.11. 1991 թ.):

նությունը: Պետությունը պարտավորվում է նրա պաշտանության համար ձեռնարկել հատուկ կանխարգելիչ կամ ռեպրեսիվ միջոցներ: Օրենքը սահմանում է անտառների և անտառային տարածքների պահպանության հետ կապված հարցեր:

Արգելվում է փոփոխել պետությանը պատկանող անտառների և անտառածածկ տարածքների օգտագործման կարգը, բացառությամբ ազգային տնտեսության շահերի և պետության այլ նպատակների համար դրանց գյուղատնտեսական օգտագործման»¹:

Էկոլոգիական պահանջներ և նորմեր այս կամ այն տեսքով հաճախ կարելի է հանդիպել Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրություններում: Այսպես, օրինակ՝ Չեխիայի Հանրապետության Սահմանադրության երկրորդ գլխում «Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ» 35-րդ հոդվածում գրված է, որ.

- «Յուրաքանչյուր ոք ունի բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք:

- Յուրաքանչյուր ոք ունի շրջակա միջավայրի և բնական հարստությունների վիճակի մասին ժամանակին և ամբողջական տեղեկատվություն ստանալու իրավունք:

- Ոչ ոք իր իրավունքներն իրացնելիս չի կարող օրենքով սահմանված նորմերից գերազանցող վտանգ ստեղծել կամ վնաս պատճառել շրջակա միջավայրին, բնական ռեսուրսներին, կենդանական և բուսական տեսակների բազմազանությանը և մշակույթի հուշարձաններին»²:

Վրաստանի Սահմանադրության մեջ կարևոր նշանակություն ունի ամրագրված 37-րդ հոդվածը, որի համաձայն՝ «բոլորն իրավունք ունեն ապրելու կյանքի համար անվտանգ շրջակա միջավայրում, օգտվել բնական և մշակութային միջավայրից, բոլորը պարտավոր են պահպանել բնական և մշակութային միջավայրը: Մարդկանց առողջության համար

¹ Տե՛ս Հունաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 11.06.1975 թ.):

² Տե՛ս Չեխիայի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 16.12.1992 թ.):

անվտանգ միջավայր ստեղծելու համար՝ հասարակության բնապահպանական և տնտեսական շահերին համապատասխան, ներկա և ապագա սերունդների շահերից ելնելով, պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը: Անձն իրավունք ունի ստանալ ամբողջական, օբյեկտիվ և ժամանակին տեղեկատվություն իր միջավայրի վիճակի և աշխատանքային պայմաններ մասին»¹:

Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում շրջակա միջավայրի ոլորտում քաղաքացիների իրավունքների ամրագրումն աշխարհի հնագույն սահմանադրություններից մեկում՝ ԱՄՆ-ի Սահմանադրությունում: Ինչպես հայտնի է, այնտեղ բացակայում է քաղաքացիների նմանատիպ իրավունքների հիշատակումը, սակայն իրավունքի ամերիկյան համակարգի յուրահատկությունը կայանում է նրանում, որ դատարաններն ի հայտ են բերում այն ԱՄՆ-ի Սահմանադրության 5-րդ, 14-րդ և 9-րդ փոփոխությունների մեկնաբանման ճանապարհով, որոնցից առաջին երկուսը դնում են «քաղաքացիներին առանց դատական վարույթի կյանքից, ազատությունից և սեփականությունից (ունեցվածքից)» զրկելու արգելք: Կյանքի և ազատության իրավունքը ներառում է նաև մարդու բնական շահերի պաշտպանության իրավունքը: Պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց ոչ օրինաչափ գործողությունների հետևանքով շրջակա միջավայրի որակի վատթարացումը դատարանների կողմից ճանաչվում է է որպես քաղաքացիների այդ իրավունքի խախտում: Ուստի, դատական պրակտիկան ելնում է նրանից, որ բարենպաստ բնական պայմաններում ապրելու իրավունքի 9-րդ փոփոխությամբ ենթադրվող քաղաքացիական իրավունքների և ազատությունների ցանկում ընդգրկումը ողջամիտ է և անհրաժեշտ²:

¹ Տե՛ս Վրաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 24.08.1995 թ.):

² Տե՛ս **Краснова И.О.** Экологическое право и управление в США. - М., 1992. - С. 40-41:

Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքի իրացումն անհնար է առանց դրա վիճակի մասին ժամանակին և ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու իրավունքի ապահովման: Սակայն պաշտպանության և անվտանգության ռազմավարական շահերը թույլ չեն տալիս տրամադրել ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը:

կանությունների մասին իրազեկումը անձին հնարավորություն է տալիս Կոնվենցիայով երաշխավորված մեղադրանքի մասին իրազեկ լինելու և իր պաշտպանությունը կազմակերպելու համար, միաժամանակ վկայի կարգավիճակ ունենալը բարոյական տեսանկյունից կարևոր է, քանի որ անձը, գիտակցելով հնարավոր քրեական հետապնդման մասին, այդուհանդերձ վկայի կարգավիճակում դեռևս այդպիսի հետապնդման մեջ չէ, բացի այդ, հասարակության արձագանքն է այլ, երբ անձը դատարան է կանչվել ոչ թե մեղադրյալի, այլ վկայի կարգավիճակով, հետևաբար չի կարող բողոքել, որ իր պատիվն ու բարի համբավը նման որոշմամբ խաթարված է: Այլ կերպ՝ անձն ունի մեղադրյալ-վկայի կարգավիճակ և որպես մեղադրյալ օգտվում է մեղադրյալին բնորոշ պաշտպանության միջոցներից՝ այդ թվում հանրային պաշտպան ունենալու իրավունքից, իսկ որպես վկա ապահովված են նրա պատիվն ու բարի համբավը: Այսպիսի առաջարկի խնդրահարույց կողմն այն է, որ հետո դատարանը պետք է հանրային քրեական հետապնդում հարուցելու առանձին որոշում կայացնի: Ինչպես վերևում նշեցինք, դա կարող է հակասահմանադրական լինել, սակայն եթե առաջնորդվում ենք հեղինակների այն մեկնաբանությամբ, որ դատարանին առանձին որոշումներ կայացնելու ձևական քաջքուկից զերծ պահելու միտում ուներ անձին քրեական վարույթ սկսելու որոշման կայացմամբ մեղադրյալի կարգավիճակ տալը, ապա նման կարգավորումը խնդրահարույց չէ և դատարանն ազատորեն նախնական դատալսումների ժամանակ կարող է անձին մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալ:

Բացի մեղադրանքը հիմնավորող նյութերից, Օրենսգրքի 451-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հայցը պետք է պարունակի նաև այն անձանց անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրը, որոնց դեմ ներկայացվել է քրեական հայցը կամ որոնք պետք է կանչվեն դատական նիստին:

Գտնում ենք, որ քրեական հայցում անձի բնակության կամ հաշվառման հասցեի պարտադիր նշման նպատակը նրա պատշաճ ծանուցումն ապահովելն է: Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե անձն առաջին անգամ է ծանուցվում, ապա թղթային ծանուցագիրը հանձնվում է նրա մշտական բնակության վայրի կամ հաշվառման հասցեով, իսկ եթե այն հայտնի չէ, ապա աշխատանքի, ուսման կամ ծառայության վայրի հասցեով: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային ծանուցագիրն ուղարկվում է ծանուցվող անձի պաշտոնական կամ նրա կողմից գրավոր հայտնված էլեկտրոնային փոստի հասցեով կամ հեռախոսահամարով: Ստացվում է, որ օրենսդիրը սահմանել է ծանուցման ավելի լայն եղանակներ, սակայն քրեական հայցում այդ նպատակի իրացման համար սահմանվել են ավելի նեղ ճանապարհներ: Բացի այդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը սահմանափակվում է, եթե խախտվում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, իսկ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը, ինչը ենթադրում է, որ անձի բնակության կամ հաշվառման վայրի հասցեն անձնական տվյալների պաշտպանության տիրույթում է, և եթե տուժողն այդ մասին չունի տեղեկություն, ապա պաշտոնական որևէ եղանակով չի կարող այն ձեռք բերել: Հետևաբար, քրեական հայցում միայն բնակության կամ հաշվառման հասցեն իբրև այն վարույթ ընդունելու պարտադիր պայման նշելը նույնպես տուժողի համար ստեղծում է ոչ բարենպաստ իրավավիճակ: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Օրենսգրքի 451-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերն անհրաժեշտ է լրացնել և

վերածնակերպել հետևյալ կերպ. «Անձի պատշաճ ծանուցումն ապահովելու համար բավարար տվյալներ. բնակության կամ հաշվառման հասցե, եթե այն հայտնի չէ, աշխատավայրի, ուսման կամ ծառայության վայրի հասցե, ինչպես նաև պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցե կամ հեռախոսահամար»: Նկատենք, որ 151-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ոչ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով կամ հեռախոսահամարով ծանուցում թույլատրվում է ծանուցվողի կողմից այն գրավոր հայտնելու դեպքում, հետևաբար տուժողի տրամադրած ոչ պաշտոնական հեռախոսահամարն ու էլեկտրոնային փոստի հասցեն բավարար չեն անձի պատշաճ ծանուցումն ապահովելու համար, քանի որ ծանուցվողի կողմից չեն տրամադրվել:

Քրեական հայցին ներկայացվող պահանջները թեև ներառում են վկաների և մեղադրյալի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, սակայն օրենսդրական կարգավորման ենթարկված չէ այն հարցը, թե ով է կրելու վկաներին կամ մեղադրյալին հայտնաբերելու և դատարան ներկայացնելու պարտականությունը: Օրենքի տառացի մեկնաբանությունը ենթադրում է, որ տուժողն է ապացուցման պարտականության կրողը և նա էլ պետք է ապահովի նրանց դատարան ներկայացնելու պարտականություն, նրանց կրած վնասների փոխհատուցում այն դեպքերում, երբ դա մեղադրյալի միջոցների հաշվին չի արվում: Սակայն հաշվի առնելով հայ հասարակության անվստահությունը դեպի իրավապահ մարմինները, նրանց հետ առնչվելու ցանկության բացակայությունը, սոցիալական պատասխանատվության գիտակցության կրող չլինելը՝ շատ հաճախ թերևս հնարավոր չլինի այդ անձանց ներկայությունն ապահովել իրենց կամքով կամ տուժողի միջոցներով, ուստի այս բեռի կրողն էլ է լինելու դատարանը՝ ըստ անհրաժեշտի Օրենսգրքի 145-րդ հոդվածի ուժով դատարան հարկադրաբար ներկայացնելով:

Թեև հողվածի հիմնական առարկան քրեական հայցին ներկայացվող պահանջներն էին, սակայն մասնավոր գանգատի ինստիտուտն ունի նաև այլ խնդրահարույց կողմեր: Հպանցիկ անդրադառնանք դրանցից որոշներին:

Քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածը ներառում է այնպիսի հանցակազմեր, ինչպիսիք են գողությունը, խարդախությունը, կողոպուտը: Պարբերաբար հափշտակությամբ զբաղվողները հիմնականում կկատարեն այնպիսի հանցագործություններ, որոնք մասնավոր գանգատի տիրույթում են՝ յուրաքանչյուր անգամ հուսալով, որ չեն բռնվի, բռնվելու դեպքում էլ տուժողի հետ վնասի վերականգնման ակնկալիքով հաշտության համաձայնության կգան նախապես կամ դատարանում: Տուժողին այս իրավիճակը ձեռնտու է, քանի որ նրա խնդիրն է իրեն պատճառված վնասի վերականգնումը, այլ ոչ թե հանցագործին պատժելը, սակայն պետք է նկատել, որ պարբերաբար այդպիսի հանցանք կատարող անձինք չունեն գույք, սեփականություն, ֆինանսական միջոցներ և նրանց կողմից վնասի վերականգնումը նմանատիպ նոր հանցագործություն ծնելու նոր պատճառ է: Բացի այդ, օպերատիվ աշխատակիցները կկորցնեն այս հանցագործությունների դեմ պայքարելու շահագրգռությունը, երբ յուրաքանչյուր անգամ բացահայտված դեպքով պարզեն, որ տուժողները դատարան չեն դիմել: Այս իրավիճակի լուծում կարող է լինել պարբերաբար նույնաբնույթ հանցանք կատարող անձանց հայտնաբերելիս, անկախ տուժողի բողոքելու հանգամանքից, անձի նկատմամբ սկսել հանրային քրեական հետապնդում: Ասվածը հիմնավորենք հետևյալով. Քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածում առկա հանցակազմերը հիմնականում ներառում են նվազ վնասի հանգամանքով պայմանավորված հանցակազմերի ընտրություն, սակայն 172-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է սահմանում անզգուշությամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու, երկու կամ ավելի անձանց առողջությանն անզգուշությամբ ծանր վնաս պատճառելու հանցակազմի

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԿՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 2(110)2023

համար, վկայում է, որ օրենսդիրն առաջնորդվել է ոչ միայն վնասի նվազ լինելու, այլև վնաս պատճառողի հանրային վտանգավորության ցածր աստիճանով՝ անկախ վնասի ծանրությունից: Հակադարձ համեմատականությամբ կարևոր է նաև անձի բարձր հանրային վտանգավորությունը: Եթե նույնիսկ հափշտակության որևէ դրսևորում նվազ հետևանք ունի կոնկրետ մեկ տուժողի մասով, սակայն անձը պարբերաբար կատարում է նույնաբնույթ հանցագործություն, ապա բարձրանում է ենթադրյալ հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը: Հետևաբար, որպես բացառություն կարող է լինել նաև անձի հանրային բարձր վտանգավորությամբ պայմանավորված պարբերաբար կրկնվող նույնաբնույթ հանցագործությունների դեպքերում դատախազին հայեցողական լիազորություն վերապահել սկսելու հանրային քրեական հետապնդում՝ Օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնելով առաջարկին համապատասխան 3-րդ կետով:

Օրենսգրքի 452-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ քրեական վարույթ սկսելը մերժվում է, եթե քրեական հայցում նկարագրված փաստական հանգամանքների կապակցությամբ քրեական հետապնդումը կարող է իրականացվել միայն հանրային կարգով, իսկ 457-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հիմնական դատախազների արդյունքով պարզվում է, որ ապացուցված արարքի կապակցությամբ քրեական հետապնդումը կարող էր իրականացվել միայն հանրային կարգով, ապա դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ: Ինչպես նկատում ենք, 452-րդ հոդվածի կարգավորումը վերաբերում է քրեական հայցը ներկայացնելու սկզբնական պահին տրվող գնահատականին, իսկ 457-րդ հոդվածն առանձնացնում է ապացուցված արարքի վերաբերյալ մեղադրական դատավճիռ կայացնելու կարգավորումը: Բաց է մնում այն դեպքը, երբ մասնավոր մեղադրանքի վարույթի հիմնական դատախազների փուլում ապացուցվել է դեպքի հանրային լինելը, սակայն դեռ չի ապացուցվել անձի վերջնական

մեղավորությունը մեղադրական դատավճիռ կայացնելու համար, միաժամանակ անհրաժեշտ են կատարել այնպիսի քննչական գործողություններ, որոնց իրավասությունը դատարանը դատաքննության փուլում չունի: Գտնում ենք, որ սա օրենսդրական տեխնիկայի բաց է և դատարանները կաշկանդված պետք է չլինեն նման հանրային գործերն ուղարկել նախաքննական մարմին նախաքննություն կատարելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ մասնավոր վարույթի գործերով.

1. Քրեական հայցին չպետք է ներկայացվի ապացուցման բարձր շեմ, փոխարենը քաղաքացիական դատավարության օրինակով քրեական հայցով սկզբում պետք է առաջ քաշել ապացուցման ենթակա թեզը, ապա դատաքննության փուլում ներկայացնել մեղադրանքը հիմնավորող նյութերը: Միաժամանակ Կանադայի Օնտարիո նահանգի օրինակով անձին ճանաչել մեղադրյալ, սակայն չճանուցել այդ մասին և եթե նախնական դատալուծման ժամանակ պարզվի, որ մեղադրանքն անհիմն է, ապա գործը կարճել, իսկ մեղադրյալի մեղքը հիմնավորող տեղեկությունները համարել երբեք դատարան չտրամադրված: Ստացվում է՝ ունենալ նախնական դատական լուծման երկու փուլ: Առաջին փուլում լուծել 311-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու հարցը: Հաշվի առնելով, որ տուժողի երկու անգամ անընդմեջ դատական նիստին չներկայանալու կամ մեղադրանքից հրաժարվելու դեպքում վարույթը պետք է կարճել, ստացվում է, որ նաև նման հիմքերի առկայության դեպքում մեղադրյալն անհարկի դատարան չի կանչվի, միաժամանակ դատարանը հնարավորություն կունենա անձամբ առերեսվելու տուժողի հետ: Նախնական դատական լուծման հաջորդ փուլի ժամանակ նոր քննության առարկա դարձնել 311-րդ հոդվածի մյուս վերաբերելի կետերը:

2. Անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել ենթադրյալ հանցանք կատարած անձի անհայտ լինելու հանգամանքին: Երբ տուժողը

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ 2(110)2023

կասկածներ ունի, սակայն վստահ չէ և որևէ փաստական տվյալ չունի իր կասկածները հիմնավորելու համար, ապա այդպիսի կասկածներին պետք է վերաբերվել որպես քննչական վարկածի և նախաքննություն իրականացնել, սակայն բոլոր այն դեպքերում, երբ տուժողը կոնկրետ անձի հաստատապես մատնանշում է որպես ենթադրյալ հանցանք կատարողի, թեև մեղադրանքը հիմնավորող նյութերում կոնկրետ մեղքը հիմնավորող նյութեր առկա չեն, փոխարենն առկա են դեպքը հիմնավորող նյութեր, միաժամանակ դատարանը գտնում է, որ դատաքննության ընթացքում իր լիազորությունների մեջ մտնող ապացուցողական գործողությունները (զննում, քննում, արտաշիրմում, փորձաքննություն, ճանաչման ներկայացնել և տեղեկատվության պահանջ) բավարար են գործի պատշաճ քննության համար, ապա կարող է քրեական վարույթ սկսել՝ հիմնվելով դեպքի առկայության և տուժողի համոզմունքի վրա: Այսպիսի մոտեցման նպատակն է հնարավորինս խուսափել տուժողի անհայտ լինելու հանգամանքի ոչ ճիշտ մեկնաբանման պայմաններում մասնավոր գանգատի գործերով նախաքննական մարմիններին ավելորդ ծանրաբեռնելու վտանգից:

3. Օրենսգրքի 451-րդ հոդվածը լրացնել սույն հոդվածում առաջարկված եղանակով, որպեսզի հնարավոր լինի Օրենսգրքի 151-րդ հոդվածով սահմանված ծանուցման ավելի լայն եղանակները կիրառել մասնավոր վարույթի գործերով: Այսպիսի կարգավորումը կբացառի քրեական հայցը վարույթ չընդունելը բոլոր այն դեպքերում, երբ տուժողը չգիտի անձի հասցեն, սակայն տիրապետում է ծանուցման համար թույլատրելի այլ տեղեկատվության (ուսման, աշխատանքի, ծառայության վայրի հասցե, պաշտոնական էլեկտրոնային հասցե կամ հեռախոսահամար):

4. Պարբերաբար նույնաբնույթ հանցանք կատարած անձանց հանրային վտանգավորությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է անկախ տուժողի կամարտահայտությունից դատախազին ընձեռել հայեցողական լիազորություն հանրային քրեական հետապնդում հարուցելու համար՝

Օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնելով համապատասխան 3-րդ կետով¹:

**Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի
և գրականության ցանկ**

1. ՀՀ սահմանադրություն, ընդունման ամսաթիվը 06.12.2015, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 22.12.2015, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118:
2. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, ընդունման ամսաթիվը 04.11.1950, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.06.05/17(192), հոդ. 367:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունման ամսաթիվը 30.06.2021, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.07.2022, սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2021.07.26-2021.08.08, պաշտոնական հրապարակման օրը՝ 28.07.2021:
4. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունման ամսաթիվը 05.05.2021, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.07.2022, սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2021.05.17-2021.05.30, պաշտոնական հրապարակման օրը՝ 27.05.2021:
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունման ամսաթիվը 05.05.1998, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.01.1999, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունման ամսաթիվը 09.02.2018, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 09.04.2018, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 018.03.05/16(1374), հոդ. 208:

¹ Անձի կողմից պարբերաբար նույնաբնույթ հանցանք կատարելու հանգամանքի մասին կարող են վկայել դատվածության առկայությունը, ՕՀՄ-ների արդյունքները, քրեական վարույթի կարճման որոշումը ենթադրյալ հանցանք կատարած անձին հայտնաբերելու հիմքով, եթե տուժողը չի դիմել մասնավոր դատարան և այլն:

7. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը 23.09.2003, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 15.11.2003, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2003.11.05/55(290), հոդ. 1016:
8. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը 18.05.2015, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.07.2015, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2015.06.18/35(1124), հոդ. 462;
9. «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը 08.04.2015, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 16.05.2015, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.05.06/26(1115), հոդ. 343:
10. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը 04.12.2001, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.03.2002, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2002.01.10/2(177), հոդ. 2:
11. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու եվ դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թ.-ի նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշում:
12. Barsova v. Russia գործով 22.10.2019 թ. վճիռը, գանգատ թիվ 20289/10, կետեր 33-34: Մեջբերումն ըստ Ա. Ղազարյանի «Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելի հիմնախնդիրների մասին» հոդվածի, Պետություն և իրավունք N 3 (88) 2020:
13. **Ղազարյան Ա.Ա.**, Մասնավոր մեղադրանքը և մասնավոր մեղադրանքի գործերը մրցակցային քրեական դատավարությունում, Երևան 2022, Մագաղաթ հրատարակչություն:
14. **Ղուկասյան Հ.Հ., Մելքոնյան Դ.Մ., Նիկողոսյան Ա.Ս.**, ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս 2022 թ.:

15. **Սվանիձե Է., Հարությունյան Հ.Գ., Մատինյան Տ.Գ.,** Արդարադատության ոլորտի վերաբերյալ հանրության կարծիքները և ակնկալիքները Հայաստանում, ԵՄ «Արդարադատության մոնիթորինգ» ծրագիր Հայաստան, մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ զեկույց, 2017 թ.:

https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1057954891731_Justice_Monitoring.pdf վերջին դիտում՝ 01.05.2023 թ.

16. **Թումասյան Դ.Ա., Հովհաննիսյան Կ.Հ.,** ՀՀ քրեական իրավունք, հատուկ մաս: Երևան, 2022:

17. **Մեղրյան Ս.Գ.,** Ապացույցները և ապացուցումը ՀՀ քաղաքացիական դատավարությունում: Երևան, 2020:

18. **Ղամբարյան Ա.Ա., Հովհաննիսյան Գ., Մարգարյան Ա.,** Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարություններում: Երևան, 2017, ՎՄՎ-Պրինտ հրատարակչություն

19. **Ղազարյան Ա.Ա.,** Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելի հիմնախնդիրների մասին, Պետություն և իրավունք N 3 (88) 2020, էջեր 76-85:

http://www.yasu.am/files/Artak_Ghazaryan_76-85.pdf վերջին դիտում՝ 01.05.2023 թ.

20. **Баулин О.В.** Время доказывания при разбирательстве гражданских дел. Дисс.докт. юрид. наук. - М., 2005.

21. <https://www.ontariocourts.ca/ocj/files/guides/guide-private-prosecution-EN.pdf> վերջին դիտում՝ 01.05.2023 թ.

22. Private prosecutions, fraud advisory panel, an introduction to UK legislation |July 2020| second edition, <https://www.fraudadvisorypanel.org/wp-content/uploads/2020/07/Private-Prosecutions-2nd-ed-July2020.pdf>

соответствующих регулирований уголовного судопроизводства и гражданского судопроизводства.

Раскрыты возможности возбуждения уголовного преследования по частному обвинению в случае совершения лицом периодически аналогичных преступлений в контексте предоставления прокурору соответствующих дискреционных полномочий.

Ключевые слова: частная жалоба, потерпевший, обвиняемый, бремя доказывания, дискреционные полномочия, частный суд.

**THE NEW MODEL OF PRIVATE ACCUSATION
(PROSECUTION): A WAY TO SAVE PUBLIC RESOURCES
OR "LEGALLY" IGNORED PRIVATE COMPLAINTS
AT THE STATE LEVEL?**

Annotation

◆ The article is devoted to the study of legal norms provided in the procedure of private prosecution. Considering the actuality of the process within the legal system of the Republic of Armenia, we studied the range of crime elements that are the subject of investigation in the framework of private prosecution proceedings, their nature and compliance with the specifics of the proceedings.

◆ Since, according to the new rules, the victim has become the main responsible for the evidence in cases of private prosecution, we have introduced the limited legal possibilities of the victim while implementing the given duty taking into account various studies of legal acts. From the point of view of legislative regulation, the acquisition process of the status of the accused person within the given proceeding is also interesting, therefore, we revealed

approaches to this status in other legal acts and its impact on the materials substantiating a criminal case. Particular attention is paid to the requirements for claiming a criminal case. In particular, the formulation of materials substantiating the accusation as well as the indication of the residence or registration addresses of the persons summoned to the court being considered as requirements submitted to the criminal lawsuit have been subjects of interest.

Taking into account the strengthening of dispositive elements in the private prosecution, a comparative analysis of the relevant procedures of criminal and civil proceedings was carried out.

The possibilities of initiating a public criminal prosecution in the case of a private accusation have been revealed in the case of a person regularly committing the same type of crimes within the context of giving the prosecutor the appropriate discretionary authority.

Keywords: private complaint, victim, accused, burden of proof, discretionary authority, private court.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.05.2023թ., փրվել է գրախոսության 08.05.2023թ., ընդունվել է փպագրության 13.05.2023թ.:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ
ՕՐԵՆՔԻ 39-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԴ ԿԵՏԻ, «ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 43-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 8-ՐԴ ԿԵՏԻ,
«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ
3-ՐԴ ԿԵՏԻ, «ԱՐՇԵՍԱՆԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

2(110)2023

ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

11 ապրիլի 2023թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ.
Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպանի,
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման
և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ
հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական

դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հուլիսի 30-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հունվարի 1-ից: Նշված օրենքի՝ «Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները» վերտառությամբ 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է.

«1. Ոստիկանության ծառայողն իրավունք չունի՝

(...)

7) լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական, վեթերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել»:

Ընդունման պահից ի վեր 39-րդ հոդվածը լրացվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-131-Ն, փոփոխվել է 2006 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-169-Ն, խմբագրվել՝ 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-92-Ն, փոփոխվել է 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-116-Ն օրենքներով:

Հիշյալ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ «ոստիկանության ծառայողի համար ինքնին որևէ կրոնական կազմակերպության անդամակցելու և անդամակցության համար վարքագծի կոնկրետ դրսևորումներով չպայմանավորված բացարձակ արգելք սահմանելու մասով», **Սահմանադրական դատարանի կողմից 2020 թվականի փետրվարի 18-ի ՍԴՈ-1506 որոշմամբ ճանաչվել է Սահմանադրության 41 և 45-րդ հոդվածներին հակասող և անվավեր:**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(110)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 11-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի մայիսի 7-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հունիսի 1-ից:

Հիշյալ օրենքի՝ «Ազգային անվտանգության մարմինների ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները» վերտառությամբ 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է.

*«1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողն իրավունք չունի՝
(...)*

8) լինել որևէ կուսակցության, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ»:

Ընդունման պահից ի վեր վիճարկվող դրույթը փոփոխությունների և (կամ) լրացումների չի ենթարկվել:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի նոյեմբերի 29-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի դեկտեմբերի 16-ից:

Հիշյալ օրենքի՝ «Զինվորական ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները» վերտառությամբ 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

*«1. Զինծառայողն իրավունք չունի՝
(...)*

3) սրբեղծելու կուսակցություններ կամ կրոնական միավորումներ, անդամակցելու որևէ կուսակցության կամ արհեստակցական միության, իսկ կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն»:

Վիճարկվող դրույթը փոփոխությունների և (կամ) լրացումների չի ենթարկվել:

«Արհեստակցական միությունների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի դեկտեմբերի 31-ին և ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 15-ից:

Հիշյալ օրենքի՝ «Արհեստակցական կազմակերպության մասնակիցները (անդամները)» վերտառությամբ 6-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողները, ինչպես նաև դատավորները և Սահմանադրական դատարանի դատավորները»¹:

Ընդունման պահից ի վեր 6-րդ հոդվածը լրացվել և փոփոխվել է: 2006 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-171-Ն օրենքով «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի² «և իրավապահ մարմինների ծառայողները» բառերը փոխարինվել են «, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողները, ինչպես նաև դատավորները և սահմանադրական դատարանի անդամները» բառերով, իսկ 2018 թվականի հունվարի 17-ի ՀՕ-52-Ն օրենքով «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում «սահմանադրական դատարանի անդամները» բառերը փոխարինվել են «Սահմանադրական դատարանի դատավորները» բառերով:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2022 թվականի օգոստոսի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ Դիմող) գտնում է, որ ինչպես Սահմանադրության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական կարգավորումների մեկնաբանությունից բխում է, որ ոստիկանությունում, զինված ուժերում և այլ ռազմականացված մարմիններում (ներառյալ՝ ազգային անվտանգության մարմիններում) ծառայողների միավորումների ազատության սահմանափակումն ուղղակիորեն չի բխում այդ ազատության բուն էությունից, ուստիև՝ այդ ազատությունը սահմանափակող յուրաքանչյուր միջոցի սահմանադրականությունը պետք է

¹ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման պահին խնդր առարկա օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրված է եղել հետևյալ բովանդակությամբ. «Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և իրավապահ մարմինների ծառայողները»:

² «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի գործող խմբագրությամբ հիշյալ կարգավորումն ամրագրված է օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում:

քննարկվի իրավաչափ նպատակի առկայության և կիրառված միջոցների համաչափության գնահատման համատեքստում:

Անդրադառնալով սահմանափակման իրավաչափ նպատակի առկայության հարցին՝ Դիմողը ենթադրում է, որ ոստիկանության և ազգային անվտանգության մարմիններում ծառայողների, ինչպես նաև զինծառայողների՝ արհեստակցական միությանն անդամակցելու արգելքը նախատեսվել է՝ ելնելով պետական անվտանգության և հասարակական կարգի ապահովման իրավաչափ նպատակներից՝ հաշվի առնելով ոստիկանության՝ մարդու անվտանգությունը, հասարակական կարգի պահպանությունն ու հասարակական անվտանգությունն ապահովելու, ազգային անվտանգության մարմինների՝ անձի, հասարակության ու պետության անվտանգությունն ապահովելու գործառույթները, ինչպես նաև զինված ուժերի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու սահմանադրական առաքելությունը:

Դիմողը փաստում է, որ «(...) արհեստակցական միությունները ծառայում են որպես աշխատողների անհատական և կոլեկտիվ իրավունքների պաշտպանության, ինչպես նաև նրանց սոցիալական բարեկեցության ապահովման հիմնական և առավել արդյունավետ մեխանիզմ: Արհեստակցական միությունների ստեղծումն, այսպիսով, բոլոր աշխատողների հիմնարար իրավունքն է, որից վերջիններիս զրկումը կարող է էականորեն խաթարել գործատուի և աշխատողների միջև կայուն և բնականոն երկխոսությունը, ինչն իր հերթին կառաջացնի գործատուի կողմից աշխատողների իրավունքների խախտման և վերջիններիս նվազ պաշտպանվածության ռիսկեր:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ խնդրո առարկա արգելքը բացառում է Ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, ինչպես նաև զինծառայողների արհեստակցական միությունների ստեղծումը, հետևաբար նաև՝ գործատուի հետ իրավահարաբերություններում աշխատանքային իրավունքների պաշտպանության այդ մեխանիզմից օգտվելու հնարավորությունը: Նման պայմաններում կարծում ենք, որ քննարկվող արգելքը պետք է ունենա հատկապես հիմնավոր և ծանրակշիռ արդարացումներ»:

Դիմողը կարծում է, որ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի հիմնական նպատակն աշխատողների իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումն է, ուստի՝ նման սահմանափակումը չի կարող համահունչ լինել իրավունքի բուն էությանը և բխել դրա նպատակներից:

Դիմողը նաև արձանագրում է. «(...) արհեստակցական միություններին անդամակցությունն ինքնին որևէ կերպ չի հակադրվում ոստիկանությունում,

ազգային անվտանգության մարմիններում ծառայության կամ զինծառայության բնույթին և նպատակներին, ուստի կարծում ենք, որ իրավաչափ նպատակների ապահովումը կարող է իրականացվել նվազ սահմանափակող միջոցների կիրառմամբ, այլ կերպ ասած՝ փվյալ ծառայողների արհեստակցական միությունների գործունեությունը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, որոնք կբացառեն այդ գործունեության արդյունքում պետական անվտանգության կամ հասարակական կարգի վտանգումը՝ առանց ընդհանուր և բացարձակ արգելքների նախատեսման»:

Ըստ Դիմողի՝ ի տարբերություն ոստիկանության ծառայողների և զինծառայողների՝ դատավորների և դատախազների ծառայողական պարտականությունների և գործառույթների իրականացումը նվազ չափով է անմիջականորեն առնչվում հասարակական կարգի և, հատկապես՝ պետական անվտանգության ապահովմանը, ինչի համատեքստում Դիմողի համար հասկանալի չեն այն հիմքերն ու նախապայմանները, որոնց հաշվառմամբ օրենսդիրը որոշել է սահմանափակել դատավորների և դատախազների՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

Այս կապակցությամբ Դիմողը կարծում է. «(...) նույնիսկ դատավորին և դատախազին օրենսդրությամբ ներկայացվող՝ քաղաքական զսպվածություն և չեզոքություն, ինքնուրույնություն դրսևորելու պահանջներն այս համատեքստում չեն կարող փոխկապակցվել Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավաչափ նպատակներից որևէ մեկի հետ, քանի որ, ինչպես արդեն նշվել է, արհեստակցական միություններին անդամակցությունը հետապնդում է աշխատողների աշխատանքային իրավունքների և շահերի ներկայացման ու պաշտպանության նպատակը և չի կարող որևէ կերպ խաթարել իր լիազորությունների իրականացման շրջանակներում դատավորի կամ դատախազի ինքնուրույնությունը կամ խախտել վերջիններիս կողմից քաղաքական զսպվածություն և չեզոքություն դրսևորելու պահանջը:

Ուստի, հիմնվելով վերոգրյալի վրա՝ կարծում ենք, որ դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների և դատախազների կողմից արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու բացարձակ արգելքը չի կարող պայմանավորված լինել ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանված իրավաչափ նպատակներից որևէ մեկի՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության պահանջով, ինչից ելնելով էլ հակասում է ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածին»:

Դիմողը գտնում է, որ ազատության իրացման բացարձակ արգելքը պետք է համարվի վերջին միջոց, և դրա կիրառման հնարավորությունը դիտարկվի միայն այն դեպքերում, երբ առկա են բավարար, համոզիչ և ծանրակշիռ

ապացույցներ, որ նվազ սահմանափակող միջոցները պիտանի կամ բավարար չեն լինի Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Բացի դրանից, Դիմողի գնահատմամբ՝ իրավունքի էությունը խաթարող, դրա իրացումն անհնարին դարձնող նման բացարձակ սահմանափակումը չի կարող համարվել իրավունքի և ազատության նշանակությանը համարժեք, ուստի՝ չի բավարարում Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքի պահանջները:

Կրոնական կազմակերպություններին անդամակցելու արգելքների մասով Դիմողը փաստում է, որ կրոնական կազմակերպության անդամակցելու իրավունքը Սահմանադրությամբ երաշխավորվող կրոնի ազատության արտահայտման հիմնարար բաղադրիչն է, առանց որի էականորեն խաթարված կլինի այդ իրավունքի բուն էությունը: Դիմողի գնահատմամբ՝ *«(...) չի կարող հաստատված համարվել, որ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունն ինքնին անհամարելի է կրոնական կազմակերպությանն անդամակցության հետ, կամ որ ծառայողի կողմից ցանկացած կրոնական կազմակերպությանն անդամակցությունը կարող է ռիսկեր պարունակել պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի ապահովման տեսանկյունից»:*

Դիմողի կարծիքով այս եզրահանգումը բխում է նաև Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1506 որոշումից: Ուստի, ըստ Դիմողի՝ *«(...) ինչպես ոստիկանությունում ծառայության պարագայում, տվյալ դեպքում ևս ազգային անվտանգության ծառայողների կողմից զսպվածություն, քաղաքական չեզոքություն դրսևորելուն և պետական անվտանգության ապահովման իրավաչափ նպատակին կարելի է հասնել նվազ սահմանափակող միջոցների կիրառման միջոցով, որոնք ամբողջությամբ չեն բացառում կրոնական կազմակերպություններին անդամակցելու իրավունքի իրացման հնարավորությունը, ուղղված են ծառայողների օրինաչափ վարքագծի ապահովմանը և չեն թիրախավորում բացառապես անձի կրոնական ինքնությունը»:*

Անդրադառնալով զինծառայողների համար նախատեսված՝ կրոնական միավորում ստեղծելու արգելքին՝ Դիմողը գտնում է, որ այնքան էլ պարզ չէ՝ ինչ է պետք հասկանալ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում տեղ գտած «կրոնական միավորում ստեղծել» արտահայտության ներքո, քանի որ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի սահմանում կրոնական միավորման կամ կազմակերպության ստեղծման ընթացակարգ, հասկանալի չէ՝ արդյո՞ք խոսքն ինքնին կրոնական համայնք հիմնելու մասին է, թե՞ պարզապես կրոնական կազմակերպությունը՝ որպես իրավաբանական անձ, գրանցելու մասին: Դիմողի գնահատմամբ՝ կանխատեսելի չեն դառնում այն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 2(110)2023

գործողությունները, որոնք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով կհամարվեն «կրոնական միավորման ստեղծում»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դիմողը խնդրում է. «(...) Որոշել «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 45-րդ և 78-րդ, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ և 78-րդ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանությունն այնքանով, որքանով վիճարկվող դրույթներով սահմանվող՝ զինծառայողների, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, դատախազների, դատավորների կողմից արհեստակցական միությանն անդամակցելու, զինծառայողների կողմից նաև կրոնական կազմակերպություն ստեղծելու և ազգային անվտանգության մարմինների ծառայողների կողմից կրոնական կազմակերպությանն անդամակցելու բացարձակ արգելքի սահմանումը ուրնահարում է կրոնի ազատության արտահայտումն ու միավորումների ազատությունը, ներառյալ՝ արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքը»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող) գտնում է, որ Սահմանադրությունը, վերաբերելի միջազգային իրավական և ներպետական ակտերը, երաշխավորելով մտքի, խղճի և կրոնի ազատությունը, ինչպես նաև այլոց հետ ազատորեն միավորվելու՝ ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի հնարավոր սահմանափակումները հանրային իշխանության մարմիններին սկզբունքորեն պարտավորեցնում են այդ իրավունքի իրացումն ապահովել իրավական այնպիսի նախապայմանների շրջանակներում, համաձայն որոնց՝ հանրային իշխանությունը չպետք է միջամտի այդ ազատությունների իրականացմանը, ինչպես նաև պետք է սահմանի արդյունավետ իրավական և այլ կառուցակարգեր՝ ապահովելու համար այդ ազատություններն ամեն տեսակ ոչ իրավաչափ միջամտություններից:

Միևնույն ժամանակ, Պատասխանողը փաստում է, որ թե՛ միջազգային, թե՛ ներպետական իրավական ակտերը ռազմականացված մարմիններում

2(110)2023
 ՏԵՂԵԿՎԻԹԻ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ամրագրել են քաղաքական և կրոնական չեզոքության ապահովման անհրաժեշտությունը՝ թույլատրելով օրենսդրին սահմանել սահմանափակումներ՝ սահմանափակման սուբյեկտային կազմի հիմքով:

Ըստ Պատասխանողի՝ կրոնի ազատության արտահայտման և միավորումների ազատության՝ քննարկման առարկա սահմանափակումները «(...) պայմանավորված են կոնկրետ սուբյեկտի կարգավիճակով՝ ըստ նրանց կարգավիճակի կամ հանրային ծառայության մեջ գտնվելու հանգամանքի կամ առանձնահատկությունների: Ուստի ոստիկանությունում կամ ռազմականացված այլ մարմիններում ծառայողների քաղաքական չեզոքությունը կարող է ապահովվել օրենքով ամրագրված տարբեր ինտենսիվությամբ սահմանափակումներ սահմանելու միջոցով»:

Պատասխանողը նաև փաստում է, որ «(...) զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների՝ տարատեսակ կազմակերպություններին անդամակցելու սահմանափակումը նախատեսված է օրենքով, հետապնդում է օրինական նպատակ և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում նրանց՝ իրենց կողմից պարտականությունների պատշաճ կատարման համար»:

Անդրադառնալով դատախազների, դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների՝ արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքի սահմանափակմանը՝ Պատասխանողն արձանագրում է, որ վերոնշյալ սուբյեկտների՝ արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքը նպատակավրեպ է՝ հաշվի առնելով այդ մարմինների բնականոն գործունեության ապահովմանն ուղղված նյութական, իրավական և սոցիալական երաշխիքները:

Միևնույն ժամանակ, Պատասխանողը գտնում է, որ արհեստակցական միության՝ ներկազմակերպական իրավունքների և պարտականությունների բովանդակությունը կարող է լիովին տարբեր լինել, ուստի՝ արհեստակցական միության ստեղծման սահմանափակման հիմք կարող է ծառայել ոչ թե բուն անդամակցությունն այդ միությանը, այլ այդ անդամակցության հետևանքով այնպիսի իրավունքներ և պարտականություններ ստանձնելը, որոնք անհամատեղելի կլինեն հանրային ծառայողի կողմից հանրային իշխանության չեզոքություն դրսևորելու օրենսդրական պահանջի հետ:

Անդրադառնալով «կրոնական միավորում ստեղծել» հասկացությանը՝ Պատասխանողը փաստում է, որ կրոնական միավորում ստեղծելը ենթադրում է ակտիվ գործողություններ, այն է՝ կրոնական կազմակերպության գրանցում՝ որպես իրավաբանական անձ, կանոնադրության հաստատում և այլն, իսկ զինված ուժերի անձնակազմի անդամը, այդ համակարգին միանալով, կամավոր կերպով ընդունել է համոզմունքների դրսևորման, ինչպես նաև իր գործունեությունից բխող հնարավորությունների մասով սահմանափակումները՝ ելնելով զինվորական կյանքի թելադրած անհրաժեշտությունից:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը գտնում է, որ Դիմողի կողմից վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճը հանգում է վիճարկվող դրույթներով սահմանված երկու տեսակի արգելքների սահմանադրականության խնդրին: Առաջին՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողների նկատմամբ կրոնական կազմակերպության անդամ լինելու օրենսդրական արգելքի, ինչպես նաև զինված ուժերում և այլ զորքերում զինծառայողների կողմից կրոնական միավորումներ ստեղծելու արգելքի սահմանադրականության խնդրին: Երկրորդ՝ սույն գործով բարձրացվում է նաև զինծառայողների, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, դատախազների, դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանված արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու արգելքի սահմանադրականության հարցը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը **սույն գործով կրոնի ազատության իրավունքի հետ առնչվող մասով** քննության առարկա է համարում «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը՝ դրանք գնահատելով Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի, 41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 49-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների լույսի ներքո: Սույն գործի այս մասով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

ա) ո՞րն է Սահմանադրության 41-րդ հոդվածում ամրագրված՝ կրոնի ազատության հիմնական իրավունքի իրավական բովանդակությունը և դրա հարաբերակցությունը միավորումների ազատության հիմնական իրավունքի հետ,

բ) որո՞նք են ազգային անվտանգության ծառայության, զինված ուժերում ու այլ զորքերում ծառայության տեսակները, դրանց իրականացման կառուցակարգերի սահմանադրական հիմքերը,

գ) որո՞նք են ազգային անվտանգության մարմինների և զինված ուժերի ու այլ զորքերի ծառայողների կրոնի ազատության իրավունքի խնդրող առարկա սահմանափակումների հիմքում ընկած իրավական գործոնները՝ կրոնի

ազատության իրավունքի սահմանափակմամբ պաշտպանվող սահմանադրական արժեքների համարեքստում:

Սահմանադրական դատարանը սույն գործով **արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի հետ առնչվող մասով** քննության առարկա է դարձնում «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի և դրա հետ փոխկապված «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը՝ դրանք գնահատելով Սահմանադրության 3-րդ հոդվածի, 45-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների լույսի ներքո:

Սույն գործի՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի հետ առնչվող մասով, վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. *արդյո՞ք միավորումների ազատության, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի սահմանադրական իրավադրույթների համարեքստում վիճարկվող օրինադրույթները համապատասխանում են հիմնական իրավունքների սահմանադրական երաշխիքներին ու սահմանափակման չափանիշներին:*

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեր հանել Սահմանադրության 41-րդ հոդվածով ամրագրված՝ կրոնի ազատության իրավունքի բովանդակությունը և դրա առնչությունը միավորումների ազատության հիմնական իրավունքին:

Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրվում է մարդու մտքի, խղճի, կրոնի ազատության հիմնական իրավունքը: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը մանրամասնում է կրոնի ազատության իրավունքի բովանդակությունը՝ սահմանելով, որ այն «ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համարեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը»: Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
 ◆ 2(110)2023

դատությունն ավարտվում է «կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը» ձևակերպմամբ, ինչից հետևում է, որ 41-րդ հոդվածում ամրագրված իրավունքները, ներառյալ կրոնի ազատությունը, ունեն ներքին և արտաքին բաղադրիչներ, ինչպես նաև, բացի բուն հոդվածում թվարկված արտաքին արտահայտման ձևերից, հնարավոր են այլ, ներառյալ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված ձևեր¹:

Կրոնի ազատության իրավունքի ներքին բաղադրիչը վերաբերում է հավատքի ազատությանը, մարդու ներաշխարհին և ունի կենսագործման յուրահատուկ կառուցակարգ², իսկ արտաքին բաղադրիչը վերաբերում է կրոնական դավանանքի կամ համոզմունքների հիման վրա որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի վարքագծից ձեռնպահ մնալու իրավունքին, և իր հերթին բաժանվում է կրոնական ազատության դրական (պոզիտիվ) և բացասական (նեգատիվ) տարրերի:

Կրոնական դրական ազատությունը դասական իմաստով սեփական կրոնական հավատալիքները կամ համոզմունքներն ակտիվորեն դավանելու ազատությունն է: Սեփական կրոնը դավանելու իրավունքի կենսագործման հնարավորություններն առավել բազմազան ներկայացված են «**Կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության կամ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի 1981 թվականի Հռչակագրում**, համաձայն որի՝ մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատությունը, ի թիվս այլնի, ընդգրկում է հետևյալ ազատությունները՝ կրոնի կամ համոզմունքների հետ կապված ծեսեր կատարելը կամ հավաքվելը, այդ նպատակներով տեղեր ստեղծելը և պահելը. համապատասխան հրապարակումներ գրելը, թողարկելը և տարածելը. կրոնը կամ համոզմունքները քարոզելն այդ նպատակներին հարմար վայրերում. հանգստի օրերը պահպանելը. տոնական օրերը նշելը և արարողությունների մասնակցելը տվյալ անձի կրոնի կամ համոզմունքների պահանջներին համաձայն. կրոնի և

¹ Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի միջազգային իրավական հիմքերն ամրագրված են ՄԱԿ-ի 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (18-րդ հոդված), ՄԱԿ-ի 1966 թվականի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում (18-րդ հոդված), ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածում և 14-րդ հոդվածում, այնքանով, որքանով ուղղակի արգելում է կրոնական համոզմունքների հիմքով խտրական վերաբերմունքը, ՄԻԵԿ-ի թիվ 1 Արձանագրությունում՝ կրթության իրավունքի համատեքստում: Համաձայն դրա 2-րդ հոդվածի՝ «Ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը: Պետությունը կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը»:

² Կրոնական ազատության այս բաղադրիչն առաջ է քաշել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը՝ անվանելով այն «ներքին հարթություն» (forum intrnum) (C.V.United Kingdom, European Commission of Human Rights, 15 December 1983, Decisions and Reports, Vol. 37, 1983, pp. 142, 147):

համոզմունքների հարցերի հետ կապված այլ անհատների և համայնքների հետ հաղորդակցվելը՝ ներպետական և միջազգային մակարդակով¹:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Վիեննայի 1989 թվականի խորհրդակցության Եզրափակիչ ակտը զարգացրեց կրոնի ազատության իրավունքի տարրերի շրջանակը՝ դրանում ներառելով կրոնական հողի վրա խտրականության արգելքը, ոչ հավատացյալների պաշտպանությունը, հավաքական ժամերգությունների իրավունքի երաշխավորումը, երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակության թույլտվությունը²: Նույն կազմակերպության Կոպենհագենի 1990 թվականի խորհրդակցությունը մասնակից պետություններին առաջարկեց ճանաչել անձի՝ սեփական կրոնը փոխելու իրավունքը³:

«Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի» գործով Եվրոպական դատարանը նշել է, որ «9-րդ հողվածում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատությունը՝ կոնվենցիայի իմաստով «ժողովրդավարական հասարակության» հիմքերից է» և գրել է, որ այդ իրավունքը, «կրոնական կրթվածքով» լինելով կենսական փարր հավատացյալների համար, արժեք է նաև «աթեիստների, ազնուփիկների, սկեպտիկների և չեզոք անձանց համար: Բազմակարծությունը, որը դարավոր պայքարի արժեքավոր արդյունք համարվող ժողովրդավարական հասարակության անբաժան մասն է, կախված է դրանից»⁴:

Կրոնական բացասական (նեգատիվ) ազատությունը կրոնական համոզմունքների հիմքով գործադրվող հարկադրանքից կամ դրսևորվող խտրականությունից զերծ լինելն է: Հարկադրանքից զերծ լինելու ազատությունը ենթադրում է, որ մարդն իր կրոնական համոզմունքների

¹ Տե՛ս Declaration on the Elimination of All Forms of Intolerance and of Discrimination Based on Religion or Belief, 25 November 1981, General Assembly resolution 36/55, հասանելի է՝ [https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-elimination-all-forms-intolerance-and-discrimination#:~:text=](https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-elimination-all-forms-intolerance-and-discrimination#:~:text=Article%204-.1.,political%2C%20social%20and%20cultural%20life.)

Article%204-.1.,political%2C%20social%20and%20cultural%20life. Uhasaneli 1:

² Տե՛ս Concluding Document Of The Vienna Meeting 1986 Of Representatives Of The Participating States Of The Conference on Security and Co-operation in Europe, Held on The Basis Of The Provisions Of The Final Act Relating To The Follow-up to The Conference, Vienna 1989, par. 16.1, 16.2, 16.4, 16.6: Հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/a/7/40881.pdf>

³ Տե՛ս Document of the Copenhagen Meeting of the Conference on the Human Dimension of the CSCE, 29 June 1990, par. 9.4, հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/9/c/14304.pdf>, ԵԱՀԽ Մարդկային չափանիշի խորհրդաժողովի՝ Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթը, Կոպենհագեն, 26 հունիսի 1990 թ., պարբերություն 9.4, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18537> :

⁴ Տե՛ս «Kokkinakis v. Greece» European Court of Human Rights, 25 May, 1993, European Human Rights Reports, Vol. 17, 1993, p. 397, para. 31:

2(110)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

պատճառով չի ենթարկվում պատժամիջոցների կամ անբարենպաստ որևէ այլ վերաբերմունքի¹:

Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է «ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համարեղ» կրոնի ազատությունն արտահայտելու իրավունքը, որը ենթադրում է՝ առաջին, անձինք իրավունք ունեն խմբերով դավանելու իրենց կրոնը՝ առանց հատուկ կազմակերպական իրավական ձևով գրանցվելու, ինչը չի բացառում հավատացյալների խմբերի երկրորդ իրավունքը՝ ձեռք բերել կազմակերպական որոշակի ձևի իրավասուբյեկտություն: Կրոնի ազատության իրավունքի այս բաղադրիչը կարևորվել է միջազգային պարտադիր և խորհրդատվական մի շարք փաստաթղթերով²:

Սույն գործով կրոնի ազատության մասով վիճարկվող դրույթներով սահմանված սահմանափակումները դիտարկելով կրոնի ազատության իրավունքի բովանդակության մաս կազմող ներքին ու արտաքին բաղադրիչների, արտաքին դրսևորման բազում ձևերի ու դրանց եղանակների շրջանակում՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սահմանափակումները վերաբերում են դրա միայն մեկ բաղադրիչի ենթատարրին, այն է՝ կրոնական համոզմունքները համատեղ իրականացնելու եղանակներից մեկին՝ պաշտոնապես գրանցված կրոնական կազմակերպությանն անդամակցելուն կամ կրոնական միավորում ստեղծելուն: **Հետևաբար՝ այդ սահմանափակումը բացարձակ չէ ո՛չ բովանդակային (չի արգելում իրավունքի բոլոր կամ նույնիսկ հիմնական հնարավորությունները), ո՛չ սուբյեկտային առումներով,** որովհետև խնդրո առարկա արգելքը համընդհանուր չէ, այլ հասցեագրված է հատուկ կարգավիճակ ունեցող

¹ «Կրոնի կամ համոզմունքի հիման վրա անհանդուրժողականության կամ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի 1981 թվականի Հոշակագրի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «ոչ ոք չպետք է ենթարկվի հարկադրանքի, որը նսեմացնում է իր ընտրությամբ որևէ կրոն կամ համոզմունքներ ունենալու ազատությունը» (տե՛ս ԳԱ-ի վերը նշված Հոշակագրի թիվ 36/55 բանաձևը, 36UW 6AOR, հավելված (թիվ 51), 171): Բացասական կրոնական ազատությունն ամրագրում է նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը»՝ սահմանելով «սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու» և այդ ընտրությունը կատարելիս՝ հարկադրանքից ազատ լինելու ազատությունները (18-րդ հոդված, 1-ին և 2-րդ կետեր): Այդ Դաշնագրի 2-րդ հոդվածում առանձին ամրագրված են նաև կրոնական փոքրամասնությունների իրավունքները:

² Այդ խնդրին համապարփակ անդրադարձ է կատարվել ԵԱՀԿ-ի հետևյալ ձեռնարկներում՝ 1. Guidelines for Review of Legislation Pertaining to Religion or Belief. Prepared by the OSCE/OdihR Advisory Panel of Experts on Freedom of Religion or Belief in Consultation with the European Commission for Democracy Through Law (Venice Commission) Adopted by the Venice Commission at its 59th Plenary Session (Venice, 18-19 June 2004) Welcomed by the OSCE Parliamentary Assembly at its Annual Session (Edinburgh, 5-9 July 2004), հատկապես՝ 14 և 19 էջերը (հասանելի է՝ <https://www.osce.org/files/f/documents/d/b/13993.pdf>); 2. Freedom of Religion or Belief in the OSCE Region: Challenges to Law and Practice (հասանելի է՝ <http://www.osce.org>):

որոշակի սուբյեկտների, որոնց չի արգելվում կրոնական կազմակերպության հետ առնչությունն ընդհանրապես, այլ միայն կրոնական կազմակերպության անդամ լինելը՝ թույլատրելով դրա հետևորդ հավատացյալի կարգավիճակը:

Եվրոպական դատարանի մի շարք որոշումների հիմքում դրված է այն մոտեցումը, որ կրոնի ազատության իրավունքի կարևոր առումներից է միավորման իրավունքը, և միաժամանակ միավորման իրավունքը ենթադրում է կրոնական միավորման իրավունք¹: Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն իրողության վրա, որ Սահմանադրության 45-րդ հոդվածը համարվում է բազմաթիվ հիմնական իրավունքների և ազատությունների, հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, տեղեկատվական և այլ ոլորտներում անհատների ու կազմակերպությունների միավորումների միջոցով գործելու երաշխիքը: Այսպիսով, կրոնի ազատության բովանդակության մաս կազմող՝ այլոց հետ համատեղ այդ իրավունքն իրականացնելու իրավական հնարավորության երաշխիքներից մեկը՝ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված «այլոց հետ ազատորեն միավորելու», այսինքն՝ միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքն է: Այդ երկու իրավունքների հարաբերակցության մեջ սույն գործի համատեքստում՝ հիմնականը կրոնի ազատության իրավունքն է, որի երաշխիքներից է այլոց հետ ազատորեն միավորվելու իրավունքը: Կրոնի ազատության իրավունքի արտահայտման (արտաքին բաղադրիչի) ձևերի ու եղանակների, դրանց տարրերի հնարավոր շրջանակի համատեքստում սույն գործով վիճարկվող սահմանափակող իրավադրույթները գտնվում են ոչ թե միավորումների ազատության իրավունքի, այլ կրոնի ազատության իրավունքի գործողության տիրույթում՝ որպես դրա իրականացման երկու ձևերից մեկի եղանակ, հետևաբար՝ դրանց սահմանադրականության հարցը պետք է դիտարկվի Սահմանադրության 41-րդ հոդվածի տեսանկյունից:

Որպես կրոնի ազատության իրավունքն այլոց հետ համատեղ իրականացնելու կազմակերպական ձև՝ Սահմանադրությունը ճանաչում է կրոնական կազմակերպությունը (17-րդ հոդված, 41-րդ հոդվածի 4-րդ մաս): «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (17 հունիսի 1991թ.) սահմանում է անհատների կրոնի ազատության իրավունքի բաղադրիչ համարվող և որպես իրավաբանական անձ գրանցվող կազմակերպական-իրավական մեկ ձև՝ «կրոնական կազմակերպություն»՝ հավատի համատեղ դավանության, ինչպես

¹ Տե՛ս հետևյալ գործերով վճիռները՝ «Sidiropoulos v. Greece», app. no. 57/1997/841/1047, 10/07/1998, «United Communist Party of Turkey and Others v. Turkey», app. no. [19392/92](#), judgement 30/01/1998, «Gorzelik v. Poland», app. no. [44158/98](#), 20/12/2001, § 55, «Hasan and Chaush v. Bulgaria», app. no. [30985/96](#), 26/10/2000, § 62, «Metropolitan Church of Bessarabia v. Moldova», app. no. 45701/99, 13/12/2001, § 118:

նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված ու գրանցված միավորում (հոդված 4-րդ):

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեր հանել կրոնի ազատության իրավունքի մասով վիճարկվող դրույթներում առկա «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության իրավական իմաստը:

Կրոնական կազմակերպություն և անհատ փոխհարաբերությունների համատեքստում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի իրավադրույթների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս վեր հանել երեք հասկացություն:

ա) «կրոնական կազմակերպության հավատացյալներ» (7-րդ հոդված, 1-ին մաս, ա) կետ),

բ) «կրոնական կազմակերպության անդամներ», որոնք այդ կարգավիճակը ձեռք են բերել երկու հիմքով: **Առաջին՝** «առնվազն 200 չափահաս հավատացյալ անդամների» խումբը, որ նախաձեռնել է կրոնական կազմակերպության ստեղծումը՝ գրանցումը, և, ըստ էության, դրանից հետո խմբի անդամները վերաձվում են կրոնական կազմակերպության **«հիմնադիր անդամների»** (5-րդ հոդված, 1-ին մաս, ե) կետ): **Երկրորդ՝** կրոնական կազմակերպությունն իրավունք ունի իր շուրջը համախմբել իր հավատացյալներին, որի ձևերից է կրոնական կազմակերպության որպես իրավաբանական անձ գրանցվելուց հետո առաջացող անդամությունը՝ **«մասնակից անդամներ»**: Կրոնական կազմակերպությունների կանոնադրություններով նախատեսված է հավատացյալների անդամագրության ինստիտուտը (անդամության հիմքերը, դրա տրամադրման կարգը, դրանից զրկելու հիմքերն ու կարգը և այլն)¹,

գ) «կրոնական կազմակերպության սպասավոր» (18-րդ հոդված), այսինքն՝ անհատ, որը տվյալ կրոնական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված տարրակարգի հոգևորական է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրոնական կազմակերպության անդամ հասկացությունը ներառում է վերը նշված «հիմնադիր անդամներին», «մասնակից անդամներին», «կրոնական սպասավորներին», որովհետև անձը կանոնադրական իրավակարգավորումների առանձնահատկությունների կամ տարբեր ժամանակներում նշյալ կարգավիճակներից որևէ մեկը ձեռք բերելու հետևանքով կարող է ունենալ դրանցից միայն մեկը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրոնի ազատության հիմնական իրավունքի խնդրո առարկա սահմանափակումները համապատասխանում են Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված սահմանափակման որոշակիության սկզբունքին՝ սահմանա-

¹ Տե՛ս օրինակ՝ «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի» կրոնական կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ, հասանելի է՝ <http://www.eca.am/cat/3>

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԵՑԻ ◆ 2(110)2023

փակող իրավական դրույթի բովանդակության, սահմանափակումների ծավալի ու «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության մասով, հետևաբար՝ քննարկվող խմբերի ծառայողներն արգելքի բավարար չափով որոշակիության պայմաններում ի վիճակի են դրսևորելու համապատասխան վարքագիծ:

4.2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել ազգային անվտանգության ծառայության համակարգում, զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության տեսակները և վեր հանել դրանց կենսագործման կառուցակարգերի սահմանադրական հիմքերը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ազգային անվտանգության լիազոր պետական մարմնի համակարգում ծառայության տեսակներն են ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը և սահմանապահ զորքերում ու այլ ստորաբաժանումներում զինվորական ծառայությունը: Հանրային ծառայության դասակարգման սանդղակում ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը պետական ծառայության ինքնուրույն, միաժամանակ իր բնույթով զինվորական համարվող ծառայություն է և կարգավորվում է ոչ միայն ազգային անվտանգության ոլորտային օրենքներով, այլ նաև զինված ուժերի կանոնադրություններով, կանոնագրքերով:

Զինված ուժերում զինվորական ծառայության հարաբերությունները կարգավորվում են «Զինվորական ծառայության ու զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով, որի 1-ին, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ զինվորական ծառայության իրականացման օրենքով սահմանված ձևեր (ծառայության ներգրավման միջոցներ) են՝ **ա)** ժամկետային զինվորական ծառայության զորակոչը, **բ)** զորահավաքային զորակոչը, **գ)** զինվորական վարժական հավաքներին կանչելը, **դ)** պայմանագրային զինվորական ծառայությունը:

Ամփոփելով, Սահմանադրական դատարանն արձանագրում է. ազգային անվտանգության ծառայության համակարգում գործում է պետական ծառայության երկու տեսակ՝ ծառայությունն ազգային անվտանգության մարմիններում, զինվորական ծառայությունը՝ պարտադիր կամ պայմանագրային հիմունքներով: Զինված ուժերում և այլ զորքերում (ոստիկանության և սահմանապահ) ժամկետային զինվորական, զորահավաքային զինվորական, վարժահավաքային զինվորական ծառայություններն օրենքով սահմանված և պարտադիր ծառայություններ են, իսկ պայմանագրայինը՝ կամավոր զինվորական ծառայություն է:

Ազգային անվտանգության մարմիններում ծառայության կարգավորման կառուցակարգի հիմքում ընկած է Սահմանադրության 49-րդ հոդվածով ամրագրված՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը, որը ենթադրում է այդ ծառայությունն անցնող սուբյեկտների կամքի ազատությունը և ինքնավարությունը, որոնք, ի սկզբանե չկրելով ծառայության անցնելու

իրավական պարտականություն, կամավոր իրացնում են հանրային ծառայության անցնելու իրենց հիմնական իրավունքը և համապատասխան պահանջներին ու պայմաններին բավարարելու դեպքում ձեռք են բերում պետական ծառայողի կարգավիճակ:

Զինված ուժերում, ոստիկանական և սահմանապահ զորքերում զինվորական ծառայության առաջացման և իրականացման կառուցակարգերի հիմքում ընկած են քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականությունը (Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինը որպես սահմանադրական պարտականության կատարման իրավահարաբերություն առաջանում է օրենքով սահմանված դեպքերում և ձևերով (զորակոչ, զորահավաք, վարժական հավաք), ծառայող սուբյեկտի համար զինվորական ծառայության այդ տեսակն անցնելը պարտադիր է, կատարվում է օրենքով սահմանված ժամկետներում:

Պայմանագրային զինվորական ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում՝ պայմանագրային զինվորական ծառայության անցնելու պայմանագրի հիման վրա կամավոր հիմունքներով առաջացող ժամկետային ծառայություն է: Պայմանագրային զինվորական ծառայության հիմքում ընկած են պայմանագիր կնքելու ազատության և դրա կողմերի կամքի ինքնավարության սկզբունքները: Պայմանագրային զինվորական ծառայության անցնելու պայմանագրի կողմ հանդիսացող զինծառայողը, իր կամքի համաձայն, կամավոր ստանձնում է պարտականություն՝ անցնել զինվորական ծառայության՝ օրենքի պահանջների հիման վրա և պայմանագրով սահմանված պայմաններով: Օրենքը նրան հնարավորություն է տալիս մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելու, ինչը պայմանագրային զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու հիմք է, եթե չունի պարտադիր զինվորական ծառայության չճանաչված ժամկետ:

Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ վերոբերյալ իրավիճակների համար նախատեսված սահմանափակումները դիտարկվում են «որպես անձի կողմից սեփական կրոնը դավանելու իրավունքից կամովին հրաժարում»: «Կալաչն ընդդեմ Թուրքիայի» գործով այդ դատարանը նշել է, որ զինված ուժերի պաշտոնյային ծառայությունից ազատելը մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատությունը պաշտպանող 9-րդ հոդվածի խախտում չէ¹: Նա հետապնդվել է «հակաօրինական արմատական հայացքներ» ունենալու համար: Կառավարությունը պնդել է, որ դիմողը դրսևորել է անհավատարմություն պետության աշխարհիկ սկզբունքների նկատմամբ: Դատարանի

¹ St'u «Kalaç v. Turkey», European Court of Human Rights, 2 July, 1997, European Human Rights Reports, Vol. 27, 1999, p. 552:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՆԵԿԱԳԻԿ 2(110)2023

դիրքորոշմամբ՝ **դիմողը կամովին ընդունել է իր համոզմունքները դավանելու սահմանափակումները զինվորական կարգապահության համակարգում ընդգրկվելու միջոցով**, հետևաբար՝ ծառայությունից հեռացումը ճանաչվել է որպես նրա վարքի և վերաբերմունքի, ոչ թե իր կրոնը դավանելու եղանակի հետևանք: Դատարանի տեսանկյունից դիմողն «**իր իրավունքների սահմանափակումներն ինքն է ընտրել**»¹ և իր կրոնի ազատությունն իրացնելիս անձն ստիպված է հաշվի առնել այն հատուկ իրավիճակը, որում գտնվում է²:

Այսպիսով, ըստ ծառայության անցնելու սահմանադրական հիմքերի՝ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, զինվորական պայմանագրային ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի իրականացման հետևանքով կամավոր հիմունքներով ստանձնած ծառայություններ են: Զինվորական պարտադիր ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության կատարման հետևանքով առաջացող և օրենքով սահմանված ձևերով ու ժամկետներում իրականացվող ծառայություն է:

4.3. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում գնահատել կրոնի ազատությունը սահմանափակող վիճարկվող դրույթները՝ համապատասխան ծառայությունների սահմանադրական հիմքերի համատեքստում:

Սույն գործի շրջանակներում կրոնի ազատության իրավունքին առնչվող վիճարկվող դրույթներից մեկի՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ծառայողներն իրավունք չունեն լինելու կրոնական կազմակերպության անդամ: Սահմանադրական դատարանի գնահատմամբ արգելքը վերաբերում է կրոնական կազմակերպության անդամության ցանկացած ձևի (հիմնադիր անդամ, մասնակից անդամ, կրոնական կազմակերպության սպասավոր):

Սահմանադրական դատարանը հատուկ շեշտում է «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության՝ սույն որոշման 4.1. ենթակետում բացահայտված իմաստի կարևոր իրավական նշանակությունը, քանի որ այն, **առաջին՝** հնարավորություն է տալիս սահմանազատելու «կրոնական կազմակերպության անդամներին» «կրոնական կազմակերպության հավատացյալներից», այսինքն՝ անձանցից, որոնք մասնակցում են տվյալ կրոնական կազմակերպության համատեղ կատարվող կրոնական ծեսերին և այլ միջոցառումներին, և որոնց հոգևոր-կրոնական կարիքներն ու պահանջ-

¹ Տե՛ս նույն տեղում, պարբերություն 28:

² Տե՛ս նույն տեղում, պարբերություն 27:

մունքները բավարարվում են այդ կրոնական կազմակերպության գործունեության արդյունքում, **երկրորդ՝** հիմք է տալիս եզրակացնելու, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի վիճարկվող դրույթով սահմանված արգելքը՝ «լինել կրոնական կազմակերպության անդամ» նշանակում է, որ համապատասխան ծառայողը ծառայության անցնելու պահից չի կարող լինել, իսկ նշանակվելու պահից սկսած չի կարող դառնալ որևէ կրոնական կազմակերպության անդամ՝ վերը նշված իմաստով, **երրորդ՝** նշված ծառայողները, եթե ունեն «կրոնական կազմակերպության հավատացյալի» կարգավիճակ, ապա պահպանում են այն, հետևաբար՝ չեն զրկվում այլոց հետ կրոնական համոզմունքները համատեղ իրականացնելու իրենց սահմանադրական իրավունքից, նման կարգավիճակով ծառայողներն իրավունք չունեն իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել կրոնական միավորումների շահերի համար, քարոզել վերաբերմունք կրոնական միավորումների նկատմամբ, իսկ ծառայողական պարտականությունները կատարելիս՝ կրոնական գործունեություն իրականացնել: **Այսպիսով՝ ազգային անվտանգության մարմիններում ծառայողներին ներկայացվող սահմանափակումները նախապես հայտնի, օրենքով սահմանված իրավադրույթներ են:**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը զինվորական ծառայության մեջ գտնվող անձին արգելում է *«ստեղծելու (...) կրոնական միավորումներ (...), իսկ կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն»:* Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս իրավադրույթը, նախ, զինծառայողին արգելում է կրոնական միավորումների ստեղծումը, իսկ նրա կրոնական միավորման անդամ լինելու դեպքում (վերաբերում է անցյալին) արգելում է կրոնական քարոզչությունը: Զինվորական ծառայության անցնելու կամավոր և պարտադիր տեսակները հիմք են տալիս ծառայողին ներկայացվող սահմանափակումների շրջանակը և բովանդակությունն օրենքով սահմանելիս ցուցաբերելու տարբերակված մոտեցում: Դրա օրինակն է նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, որը զինծառայողին արգելում է *«պաշտոնեական դիրքն օգտագործելու ի շահ (...) կրոնական (...) կազմակերպությունների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության»:* Այս արգելքը վերաբերում է միայն զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց:

Պայմանագրային զինվորական ծառայողը, ըստ վիճարկվող նորմի, որպես կամավոր ծառայության անցած անձ չի կարող ստեղծել և դրանով իսկ դառնալ կրոնական միավորման անդամ, իրավունք չունի զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնել քարոզչական գործունեություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պարտադիր զինվորական ծառայության ներգրավված զինվորական ծառայողների իրավական կարգավիճակը՝ ներառյալ նրանց նկատմամբ կիրառվող սահմանափակումների մասով, էական առանձնահատկություն ունի: Այդ հիմքով զինվորական ծառայություն կրող անձի անհատական իրավական կարգավիճակը ներառում է մինչև ծառայությունը ձեռք բերված իրավունքներն ու ստանձնած պարտականությունները: Պարտադիր զինվորական ծառայության անցնելը չի վերացնում կամ սահմանափակում նրա անհատական իրավական կարգավիճակի բոլոր տարրերը: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը զինվորական ծառայողներին արգելում է ստեղծել կրոնական միավորում: «Արգելում է ստեղծել» արտահայտությունն ունի ներկա իմաստ և նշանակում է ծառայության ընթացքում: Զինվորական ծառայության սուբյեկտները կարող են լինել կրոնական միավորման (կազմակերպության) անդամ՝ մինչև ծառայության անցնելը: Այս իրավիճակի համար վիճարկվող դրույթը սահմանում է, որ նրանք իրավունք չունեն «զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն»:

Կրոնական միավորումներ ստեղծելու արգելքը և կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում ծառայակիցների շրջանում քարոզչական գործունեություն իրականացնելու արգելքը կիրառվում են ծառայության սուբյեկտների նկատմամբ, սահմանափակում են նրանց մինչծառայական իրավասուբյեկտությունը, սակայն իրենց բովանդակությամբ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների տեսանկյունից համապատասխանում են Սահմանադրությանը, որովհետև սահմանված են օրենքով, բխում են զինված ուժերի և այլ զորքերի, հետևաբար՝ զինծառայողների հատուկ առաքելությունից, դրանց չեզոքության սկզբունքից, համապատասխանում են զինվորական ծառայության հիմքում դրված սկզբունքներին, չեն խախտում կրոնի ազատության հիմնական իրավունքի էությունը՝ դրա արտահայտման արտաքին բազում ձևերից արգելելով միայն երկու տարր՝ կրոնական միավորման ստեղծումը և այդ միավորման անդամ լինելու դեպքում ծառայության ընթացքում ու ծառայակիցների շրջանում՝ կրոնական քարոզչությունը:

4.4. Ազգային անվտանգության մարմինների և զինվորական ծառայողների կրոնի ազատության իրավունքի խնդրո առարկա սահմանափակումների սահմանադրականության գնահատման համար կարևոր նշանակություն ունեն սահմանափակումների հիմքում ընկած իրավական գործոնները:

Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանափակման հիմքում դրված արժեքներ է համարում պետական անվտանգությունը, հասարակական կարգը, առողջությունը և բարոյականությունը, այլոց հիմնական

իրավունքները և ազատությունները: Ելնելով դրանց կարևորությունից՝ սահմանադիրն օրենսդրին հնարավորություն է տվել միայն օրենքով նախատեսել կրոնի ազատության արտահայտման սահմանափակումները, որոնցով հետապնդվող նպատակն այդ արժեքների պաշտպանությունն է: Խնդրո առարկա սահմանափակումներն ամրագրված են պետական ծառայության առանձին ոլորտները կարգավորող օրենքներով:

ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածը ճանաչում է պետության իրավունքը՝ սահմանափակել նույն հոդվածով նախատեսված կրոնական համոզմունքը դավանելու իրավունքը, եթե սահմանափակումները նախատեսված են օրենքով և «անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության ու բարոյականության կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների»: Բացի դրանից, Եվրոպական դատարանի պրակտիկայով որդեգրած մոտեցումների համաձայն՝ զինված ուժերում իրավաչափորեն կարող են սահմանափակվել կրոնի ազատության իրավունքը զինվորական կարգապահությունն արտացոլող այնպիսի միջոցառումներով, որոնց նպատակն է հասարակական կարգի կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Սակայն յուրաքանչյուր այդպիսի սահմանափակում պետք է լինի նախատեսված օրենքով և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ մինչ այժմ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ խնդրո առարկա օրենսդրական կարգավորումները համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքին: Դիմողի կողմից քննարկվող օրենքներին վերագրվող բացերը թվացյալ են, իսկ դրանց որոշ իրավադրոյթների՝ ընդհանրացվածությամբ պայմանավորված անորոշության տարրերը հաղթահարելի են դատական մեկնաբանությամբ:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում ազգային անվտանգության ծառայության, զինված ուժերի և այլ զորքերի որոշակի առանձնահատկությունների վրա, որոնք ելակետային են դրանցում ինչպես խնդրո առարկա, այնպես էլ մի շարք այլ սահմանափակումների նախատեսման համար:

Ազգային անվտանգության մարմինները կազմում են միասնական համակարգ և օրենքով նախատեսված գործունեության յուրահատուկ ուղղություններով իրականացնում են հատուկ բնույթի խնդիրներ, օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և սահմաններում ունեն հարկադրանք կիրառելու իրավունք, ներառյալ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն, մարտական տեխնիկայի գործադրման իրավազորություն: Այս ընդհանուր առանձնահատկությամբ պայմանավորված՝ ազգային անվտանգության մարմինների համակարգը կազմակերպվում ու գործում է իր առջև դրված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ◆ 2(110)2023

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(110)2023

խնդիրների արդյունավետ իրականացումն ապահովող յուրահատուկ սկզբունքների հիման վրա, մասնավորապես՝ հասարակական միավորումների գործունեությունից անկախության, միանձնյա և կենտրոնացված ղեկավարման, օրենսդրությամբ չարգելված բացահայտ և զաղտնի մեթոդների ու միջոցների համակցված կիրառման, համաչափության և այլն:

Ազգային անվտանգության մարմիններում ծառայության սկզբունքները և դրանց վրա կառուցված անձնակազմի համալրման, ներառյալ համապատասխան ծառայությունների կազմակերպման կարգը, ծառայության նշանակման պայմանները, դրանց ներկայացվող պահանջները, ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները (ներառյալ կրոնական կազմակերպության անդամ լինելու արգելքը), ծառայության կարգը, երբեմն նաև հետծառայողական շրջանում՝ նախկին ծառայողին ներկայացվող պահանջներն ու սահմանափակումները բխում են այդ կառույցի առջև դրված յուրահատուկ խնդիրներից և, դրանով պայմանավորված՝ երաշխիք են այդ մարմնի և դրա ծառայողների հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ գործընթացներում չեզոքության, անաչառության, անկողմնակալության, ծառայությանը նվիրվածության, զսպվածության, ծառայության ոլորտում շահերի, ներառյալ կրոնական հողի վրա, բախման իրավիճակի առաջացման կանխման ապահովման համար:

Ձինված ուժերի սահմանադրական առաքելության, դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և չեզոքության սկզբունքների, զինվորական ծառայության իրավական ինստիտուտի հայեցակարգային հիմքերի ու առանձնահատկությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներն արտահայտել է 2021 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴԴ-1616 որոշմամբ՝ արձանագրելով, որ՝ «*Ձինվորական ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որն ունի վառ արտահայտված բացառիկ առանձնահատկություններ՝ ծառայության նշանակվելու, ծառայության անցնելու և դադարելու կարգերով, և դրանցով իսկ արմատականորեն տարբերվում է «պետական ծառայություն» ընդհանուր հասկացությունից:*

(...)

(...) Ձինվորական ծառայությունը՝ որպես գործունեության հատուկ տեսակ, աչքի է ընկնում իր առանձնահատուկ հատկանիշով, մասնավորապես՝ այն իրականացվում է պետության կողմից հիմնադրված ռազմական կազմակերպությունում (զինված ուժերում և այլ զորքերում), որը կոչված է մասնակցելու ռազմական գործողություններին՝ ռազմական մեթոդների և զինված պայքարի միջոցների կիրառմամբ»:

Ձինված ուժերի և այլ զորքերի՝ որպես պետության զինված կազմակերպության յուրահատկություններով պայմանավորված՝ զինվորական ծառայությանը բնորոշ են էական առանձնահատկություններ, որոնք բացահայտված են Սահմանադրական դատարանի վերոնշյալ ՍԴԴ-1616

որոշմամբ. «Ինչպես և ռազմական կառավարման դեպքում՝ կառավարման ընդհանուր սկզբունքներից, այնպես էլ զինվորական ծառայության ոլորտում հանրային ծառայության ընդհանուր իրավական սկզբունքներից բխող կանոններից արվում են իրավաբանական և փաստական բացառություններ՝ պայմանավորված զինվորական ծառայության յուրահատկություններով: Զինվորական ծառայության հատուկ սկզբունքները բնութագրում են զինվորական ծառայությունը՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակ, և ենթակա են կիրառման դրա բոլոր ոլորտների նկատմամբ: Այդ սկզբունքներն են՝ զինվորական ծառայության կարգավորման հրամայական (հմպերապիվ) բնույթը, զինվորական ծառայության և զինծառայողների կենտրոնացված կառավարումը, լրիվ ու հետևողական միանձնյա կառավարումը, խստագույն զինվորական կարգապահությունը, զինծառայողների միջև փոխհարաբերությունների ենթակայությունը (սուբորդինացիա), անընդհատությունը, առավել օպերատիվությունն ու շարժունությունը, զինծառայողների խստացված իրավական պատասխանատվությունը»:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև սույն գործով կարևոր նշանակություն ունեցող հետևություն. զինվորական ծառայության ոլորտում գործում է զինվորական ծառայողների իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության սկզբունքը՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջնային խնդրով:

Ազգային անվտանգության ծառայության, զինված ուժերի և այլ զորքերի որոշակի առանձնահատկությունների համատեքստում Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ սույն գործով վեճի հիմքում ընկած դիմող և պատասխանող կողմերի հակադիր մոտեցումների հիմքում ընկած են օբյեկտիվ հիմքերով պայմանավորված շահերի տարբերությունները՝ մի կողմից, հատուկ բնույթ ունեցող պետական կառույցների գործունեության արդյունավետությունը, մյուս կողմից, անհատի կրոնի ազատության իրավունքը՝ մասնավորապես՝ դրա մեկ տարրը՝ անդամությունը կրոնական կազմակերպությանը կամ այդպիսի միավորման ստեղծումը: Այդ արգելքների պատճառն ընդհանրապես կազմակերպության, իսկ տվյալ դեպքում կրոնական կազմակերպության բնույթն է՝ կազմակերպական միասնությունը, դրանով պայմանավորված անդամների որոշակի իրավունքների ու պարտականությունների համակցությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրոնական կազմակերպության հետևորդ հավատացյալի կարգավիճակն էականորեն տարբերվում է ցանկացած ձևով անդամի (հիմնադիր, մասնակից, հոգևոր սպասավոր) կարգավիճակից: Կրոնական կազմակերպությունների հավատացյալների այդ երկու տարրակարգերի միջև, բացի իրավական տարբերություններից, գոյություն ունեն նաև հավատքի հիմքով անհատական դիրքորոշումների

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԵԿԻ ◆ 2(110)2023

տարբերություններ. ենթադրվում է, որ կրոնական կազմակերպության անդամը կամ այդպիսին հիմնադրելու ցանկություն ունեցող հավատացյալն ավելի ակտիվ ու նախանձախնդիր է, քան դրա սովորական հավատացյալը կամ հետևորդը: Այն իրավիճակում, երբ նույն անձն ունի և՛ կրոնական կազմակերպության անդամի, և՛ հատուկ բնույթ ունեցող պետական կառույցի ծառայողի հասարակական-իրավական կարգավիճակ, բախումն այդ երկու կարգավիճակներից բխող գործառույթների միջև առավել հնարավոր է, քան սովորական հետևորդ հավատացյալի դեպքում, չնայած վերջինի համար ևս օրենքը սահմանել է սահմանափակումներ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ազգային անվտանգության մարմինների ծառայողների կրոնական կազմակերպության անդամ լինելու, ինչպես նաև զինծառայողի կողմից այդպիսին ստեղծելու արգելքները բխում են այդ ծառայությունների առջև դրված խնդիրների յուրահատկություններից և հետապնդում են այդ կառույցների, դրանց ծառայողների ներծառայական հարաբերություններում, ինչպես նաև հասարակական-կրոնական գործընթացներում առավել չեզոքության, անաչառության, անկողմնակալության, զսպվածության, ծառայությանը նվիրվածության ապահովման, կրոնական հողի վրա շահերի բախման կանխման նպատակներ: Քննարկվող սահմանափակումները միջոց են **կանխելու** կրոնական կազմակերպությունների իրավահավասարության խախտման, կրոնական հողի վրա խտրականության ու պաշտոնետական լիազորությունների չարաշահումների, ծառայողական պարտքի կատարմանը խոչընդոտելու և վնասելու, պետական ծառայողի չեզոքության ու անաչառության խախտման, ծառայողական ստորադասության հարաբերություններում սեփական համոզմունքները ենթակա-ներին պարտադրելու, ինչպես նաև այլ բացասական սոցիալ-իրավական հետևանքների հնարավորությունը: Ընդ որում՝ թվարկված բացասական հետևանքներն առնչվում են Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված, պաշտպանության ենթակա գրեթե բոլոր արժեքների հետ:

Սահմանադրական դատարանը, ամփոփելով Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի, 41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 45-րդ, 49-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների լույսի ներքո կրոնի ազատության իրավունքը սահմանափակող վիճարկվող օրենսդրական դրույթները գնահատելու վերլուծությունները, գտնում է, որ՝

1) վիճարկվող դրույթներով սահմանված արգելքները կրոնի ազատության ներքին և արտաքին բաղադրիչների, դրսևորման բազմազան ձևերի, եղանակների լայն շրջանակում վերաբերում են արտաքին արտահայտման մեկ ձևի առանձին եղանակի մեկ տարրին՝ «լինել կրոնական կազմակերպության անդամ» կամ «ստեղծել կրոնական միավորում», ուստի՝ այդ հիմնական իրավունքի բովանդակությանը, և ծառայության սուբյեկտների կրոնական կազմակերպության հետ առնչության արգելքի առումներով

բացարձակ չեն, սահմանափակող իրավադրույթները բավարար չափով որոշակի են, սահմանափակման ծավալով՝ նվազագույն և չեն խախտում հիմնական իրավունքի դրույթների էությունը, հետևաբար՝ բավարարում են Սահմանադրության 80-րդ հոդվածի հիմնական իրավունքների և ազատությունների դրույթների էության անխախտելիության պահանջներին, ինչպես նաև Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված սահմանափակման որոշակիության սկզբունքին,

2) ազգային անվտանգության մարմիններում, ինչպես նաև զինված ուժերում ու այլ զորքերում պայմանագրային ծառայությունները հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի հիմքով առաջացող կամավոր հիմունքներով ստանձնած պարտականություններ են, և կրոնի ազատության մասով ծառայողին ներկայացվող սահմանափակումները նախապես հայտնի, օրենքով սահմանված իրավադրույթներ են, հետևաբար՝ համապատասխանում են Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասին, 49-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածներին,

3) զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված հիմքերով պարտադիր ծառայության սուբյեկտների՝ կրոնի ազատության իրավունքի սահմանափակումները բխում են հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու պարտականությունից, կրում են ժամանակավոր բնույթ, սահմանված են օրենքով, բավարարում են իրավունքների սահմանափակման որոշակիության սկզբունքի պահանջները, իրենց ծավալային բովանդակությամբ չեն խախտում կրոնի ազատության հիմնական իրավունքի էությունը՝ դրա արտահայտման արտաքին բազում ձևերի համատեքստում, հետևաբար՝ համապատասխանում են Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասին, 41-րդ հոդվածի 1-ին մասին, 79-րդ և 80-րդ հոդվածներին,

4) վիճարկվող դրույթներով նախատեսված սահմանափակումներն ամրագրված են «միայն օրենքով» և կրոնի ազատության հիմնական իրավունքի սահմանափակման սահմանադրական հիմքերի (արժեքների), դրանց համակցության պաշտպանության անհրաժեշտության առումով հետապնդում են իրավաչափ նպատակներ, հաշվի են առնում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, չեն գերազանցում հիմնական իրավունքների ու ազատությունների Հայաստանի Հանրապետության՝ միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունները, հետևաբար՝ նշյալ դրույթները համապատասխանում են Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչպես նաև 81-րդ հոդվածին:

4.5. Սահմանադրական դատարանը, վերլուծելով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքին վերաբերող սույն գործով վիճարկվող օրինադրույթները, ուշադրություն է հրավիրում այն իրողության վրա, որ միությունների ազատության իրավունքը

կարգավորող Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասը, ամրագրելով՝ ճանաչելով այդ հիմնական իրավունքը, սահմանում է դրա սահմանադրական բովանդակությունը, ինչի տրամաբանական շարունակությունն է 2-րդ մասում արձանագրված պահանջը, որ միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով: Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, իսկ 4-րդ մասում ամրագրված է միավորումների ազատությանը միջամտության երկու եղանակ՝ միավորումների գործունեության կասեցում կամ արգելում, որը կարող է կիրառվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Սահմանադրության 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով»: Հիմնական իրավունքների ու ազատությունների օրենսդրական կարգավորման համար չափորոշիչ է Սահմանադրության 75-րդ հոդվածը, համաձայն որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Օրենսդրական կարգավորումը կոչված է նորմատիվ նախադրյալներ ստեղծելու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրմամբ հետապնդվող նպատակների կենսագործման համար՝ ներառելով կարգավորման առարկայի մեջ մտնող բոլոր էական հարաբերությունները:

Սահմանադրության 75-րդ հոդվածն օրգանապես փոխկապված է դրա 3 և 80-րդ հոդվածներին: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող սահմանադրական դրույթներն իրենց կարգավորիչ նպատակներին հասնում են օրենսդրության ու դրա կիրառման միջոցով, սակայն իրավական կարգավորման տվյալ գործընթացում անհրաժեշտ է կանխել հիմնական իրավունքներին սպառնացող վտանգները, ի դեմս՝ սահմանադրական դրույթների բացառումների, դրանցից շեղումների, դրանց հետ օրենսդրական հակասությունների ու դրանց խախտումների: Այդ վտանգները կանխելու կարևոր երաշխիքներից են Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, դրանով պայմանավորված՝ Սահմանադրության դրույթների հիմնարար իրավական նշանակությունը, ինչպես նաև Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ «*Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք*» սահմանադրական կարգի հիմունքը:

Հիմնական իրավունքներին ու ազատություններին սպառնացող վտանգները կանխելու կարևոր երաշխիք է Սահմանադրության 80-րդ հոդվածը, համաձայն որի՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էությունն անխախտելի է»: Այս իրավադրույթը հանրային իշխանությանը և դրա մարմիններին ուղղված արգելող պարտականություն է. հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանադրական դրույթներն իրավական կարգավորման կառուցակարգում (օրենքներ, ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր, անհատական իրավական ակտեր) մանրամասնելիս չխախտել, չխեղաթյուրել, բովանդակային առումով չվերացնել դրանց դրույթների էությունը, ամբողջովին կամ բացարձակ չարգելել դրա իրականացումը:

Սահմանադրության 46-րդ հոդվածը 45-րդ հոդվածի ընդհանուր համատեքստում սահմանում է հատուկ իրավակարգավորում՝ նախատեսված առանձնահատկություն ունեցող քաղաքական միավորման՝ կուսակցության համար՝ մանրամասնելով այդ միավորման անդամության և գործունեության որոշ կողմեր: Հատուկ իրավակարգավորում առկա է նաև 45-րդ հոդվածի 1-ին մասում, ի դեմս՝ միության հատուկ տեսակ համարվող արհեստակցական միությունների վերաբերյալ իրավադրույթի, որի հիմքում ընկած է արհեստակցական միությունների առանձնահատկությունը, այն է՝ դրանց ստեղծումը և դրանց անդամագրվելը հետապնդում է աշխատողների աշխատանքային շահերի պաշտպանության նպատակ: Այսպիսով **Սահմանադրությունը բոլոր տեսակի միությունների զանգվածում առանձնացնում է արհեստակցական միություններին և դրանց վերագրում է հատուկ՝ իրավապաշտպան առաքելություն՝ աշխատանքային իրավունքների ոլորտում:**

Սահմանադրական կարգավորման այս տեսլականին համապատասխան՝ արհեստակցական միությունները ստեղծվում են աշխատանքային հարաբերությունների ոլորտում և կոչված են իրականացնելու աշխատողների շահերի պաշտպանությունը: Սահմանադրական այս հիմնադրույթների համաձայն՝ «Արհեստակցական միությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ արհեստակցական միությունն արհեստակցական կազմակերպություն կամ արհեստակցական կազմակերպության միություն է, իսկ արհեստակցական կազմակերպությունը հասարակական միավորում է, որն օրենքով սահմանված կարգով և ազատ կամքի դրսևորմամբ միավորում է տվյալ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին՝ իրենց աշխատանքային ու դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական, սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու նպատակով: Սահմանադրական առաքելությունից բխող այս կարգավիճակին համապատասխան՝ արհեստակցական միությունները գործատու և (կամ) երրորդ անձի ու աշխատողների աշխատանքային

հարաբերությունների ոլորտում իրականացնում են **աշխատողների իրավունքների պաշտպանության, շահերի ներկայացուցչության, սոցիալական գործընկերության ապահովման, խորհրդատվական և այլ գործառույթներ, օժտված են դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավունքներով:**

Այսպիսով՝ Սահմանադրությունը սահմանում է միավորումների ազատության հիմնական իրավունքի դրսևորման հատուկ իրավակարգավորում՝ դրանով ճանաչելով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքը: Այդ իրավունքը, թղթակցելով անհատների աշխատանքային իրավունքներին և հատկապես դրանց պաշտպանության իրավունքին, չի կորցնում իր՝ որպես հիմնական իրավունքի ինքնուրույն նշանակությունը, որովհետև համարվում է աշխատողների աշխատանքային շահերի և աշխատանքային իրավունքների պաշտպանության անհատական (մինչդատական և դատական) ձևին զուգահեռ գործող, վերջինին չկրկնող՝ **կոլեկտիվ և անհատական աշխատանքային իրավունքների կոլեկտիվ պաշտպանության ինքնուրույն ձև:**

Վերոգրյալ մոտեցումների համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությունն արհեստակցական միություններին վերագրում է հատուկ՝ իրավապաշտպան առաքելություն, հետևաբար՝ այդ իրավունքի իրականացումն աշխատանքային իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք է: Աշխատանքային իրավունքների պաշտպանությունն ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտում կարևոր է նաև յուրաքանչյուր աշխատողի կողմից կատարվող գործունեության արդյունավետության ապահովման նկատառումներով: Այլ կերպ ասած՝ որքան երաշխավորված ու պաշտպանված են աշխատանքային իրավունքներն ու օրինական շահերը, այնքան բարձր է կատարվող աշխատանքի արդյունավետությունը: Այս համատեքստում Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՄԻԵԿ-ը տարբերություն չի դնում Պայմանավորվող պետության՝ որպես պետական իշխանության կրողի գործառույթների և որպես գործատուի պարտականությունների միջև, հետևաբար՝ ըստ Եվրոպական դատարանի՝ դրա 11-րդ հոդվածը պարտադիր է «Պետության՝ որպես գործատուի» համար, անկախ նրանից, թե վերջինիս հարաբերություններն իր աշխատողների հետ կարգավորվում են հանրային թե մասնավոր իրավունքով¹:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ համակարգային այս տրամաբանության մեջ «Արհեստակցական միությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված իրավադրույթը, որ «Արհեստակցական

¹ Տե՛ս «Schmidt and Dahlström v. Sweden», 06.02.1976, app. no. 5589/72, § 33; «Tüm Haber Sen and Çinar v. Turkey», FINAL 21.05.2006, app. no. 28602/95, § 29:

կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողները, ինչպես նաև դատավորները և Սահմանադրական դատարանի դատավորները», զրկում է նշյալ խմբերի ծառայողներին իրենց շահերի և իրավունքների պաշտպանության կարևոր ձևից՝ չնախատեսելով կոլեկտիվ իրավունքների պաշտպանության որևէ այլ փոխլրացնող ընթացակարգ կամ ինստիտուտ: Սահմանադրական դատարանի տեսանկյունից այս գնահատականը տարածվում է նաև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերում սահմանված համանման արգելքների վրա:

Սահմանադրական դատարանը, արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքին վերաբերող սույն գործով վիճարկվող օրինադրույթները դիտարկելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրավական կարգավորման սահմանադրական կառուցակարգում, գտնում է, որ այլոց հետ ազատորեն միավորվելու միջոցով աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը Սահմանադրությամբ ճանաչված և անմիջականորեն գործող իրավունք է: Օրենքներով այդ հիմնական իրավունքի կազմակերպական կառուցակարգերում և ընթացակարգերում ներդրված խնդրո առարկա արգելքները բացարձակ են, հետևաբար՝ չեն կարող ստեղծել հիմնական այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, այլ ընդհակառակը՝ խախտում ու խաթարում են այդ հիմնական իրավունքի բովանդակությունն ամրագրող սահմանադրական դրույթների էությունը, վերացնում դրանք: Սահմանադրական դատարանի այս եզրակացությունը համապատասխանում է Եվրոպական դատարանի այն դիրքորոշմանը, ըստ որի՝ ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածում նշված երեք խմբերի՝ զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումները պետք է խստորեն մեկնաբանվեն և, հետևաբար՝ պետք է սահմանափակվեն խնդրո առարկա իրավունքների «իրականացմամբ»: Այս սահմանափակումները չպետք է խաթարեն միավորվելու իրավունքի բուն էությունը:¹

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոբերյալ հիմնավորումների համատեքստում «Արհեստակցական միությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված օրինադրույթն իր բնույթով

¹ Տե՛ս «Demir and Baykara v. Turkey», 12.11.2008, app.no. 34503/97, § 97:

չի կարող համարվել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքը կամ ազատությունը Սահմանադրության իմաստով սահմանափակող իրավադրույթ, որովհետև սահմանափակումը ենթադրում է օրենքով, սահմանադրական նպատակներին համահունչ՝ Սահմանադրությամբ ամրագրված կոնկրետ հիմնական իրավունքի կամ ազատության բովանդակության նեղացում, նվազեցում, բովանդակային որևէ բաղադրամասի բացառում, այլ ոչ թե հիմնական իրավունքի խսպառ արգելում¹: **Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների նկատմամբ պետության կողմից օրենքով իրականացված միջամտությունը բացարձակ արգելքի ձևով իրավաբանական ուժ կարող է ունենալ միայն Սահմանադրությամբ ուղղակիորեն այդ արգելքի ամրագրման դեպքում:** Դրա օրինակն է Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանված դրույթը, համաձայն որի՝ դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ:

4.6. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մաս): Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Ելնելով սույն որոշման նախորդ ենթակետում առաջ քաշված իրավական այն դիրքորոշումից, որ սույն գործի շրջանակներում միավորումների ազատության, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի մասով բարձրացված սահմանադրաիրավական խնդիրը վերաբերում է ոչ թե դրա իրականացման կամ դրա սահմանափակման առանձնահատկություններին, այլ Սահմանադրության 80-րդ հոդվածի իմաստով միավորվելու ազատության իրավունքի սահմանադրական դրույթների էության անխախտելիությանը՝ առանց սահմանադրական հիմքեր ունենալու բացարձակ արգելքի սահմանման միջոցով, Սահմանադրական դատարանը հարկ է համարում թվարկման ձևով անդրադառնալ միջազգային իրավական կարգավորումների միայն այն պարտադիր և խորհրդատվական դրույթներին ու նախադեպային դիրքորոշումներին, որոնք առնչվում են ոչ թե

¹ Սահմանափակման խնդրի հարցում մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերն օգտագործում են «սահմանափակում», «նահանջ կամ շեղում իրենց պարտավորություններից», երբեմն «միջամտություն» եզրույթները՝ դիտարկելով դրանք համարժեք հասկացություններ:

միավորվելու իրավունքի սահմանափակման հիմնախնդրին, այլ այդ իրավունքի բուն էության խաթարման իրավական հարցին:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ այս «իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»: Այս հոդվածի վերջին իրավադրույթից ուղղակիորեն բխում է, որ **պետության միջամտությունն իրավունքին կարող է լինել իրավունքների իրականացման նկատմամբ, այսինքն՝ ճանաչելով իրավունքը՝ այն ենթարկել որոշակի սահմանափակումների, այլ ոչ թե իսպառ մերժել նշված սուբյեկտների այդ հնարավորությունը¹:**

Միավորումների ազատության վերաբերյալ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) համատեղ ուղեցույցի 24-րդ կետում նույնպես նշվում է, որ միավորումների ազատության սահմանափակումները պետք է համապատասխանեն համաչափության թեստին, այսինքն՝ սահմանափակումների շրջանակը պետք է ներառի իրավունքի իրականացմանը նվազ միջամտող միջոցները: **Ավելին, սահմանափակումները երբեք չպետք է վերացնեն իրավունքը կամ զրկեն այն իր էությունից²:**

¹ Այդ մոտեցման շրջանակներում Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումները կրկնում են, որ սահմանափակումներ կարող են կիրառվել զինված ուժերի, ոստիկանության կամ պետության վարչակազմի անդամների կողմից միավորումների ազատության իրավունքի իրականացման համար: Բացի դրանից, դատարանը շեշտում է, որ այնուամենայնիվ, պետք է նաև նկատի ունենալ, որ 11-րդ հոդվածում նշված բացառությունները պետք է խստորեն մեկնաբանվեն. միայն համոզիչ և անհաղթահարելի պատճառները կարող են արդարացնել միավորվելու ազատության սահմանափակումները («Tüm Haber Sen and Çinar v. Turkey», FINAL 21.05.2006, app. no. 28602/95, §§ 35):

² Հասանելի է հետևյալ հղումով՝

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)046-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)046-e) :

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (այսուհետ՝ ԵԽԽՎ) «Ոստիկանության մասին հայտարարություն» թիվ 690 (1979) բանաձևի 6-րդ կետում նշվում է, որ ոստիկանության ծառայողները պետք է ունենան մասնագիտական կազմակերպությունների ստեղծման, դրանց անդամագրվելու և դրանցում ակտիվ դեր ունենալու ընտրություն, իսկ նույն հայտարարության հավելվածի «Կարգավիճակը» բաժնի 6-րդ կետի համաձայն՝ ոստիկանական մասնագիտական կազմակերպությանն անդամագրվելը և դրանում ակտիվ դերակատարում ունենալը չպետք է որևէ ոստիկանի համար բացասական հետևանքների հանգեցնեն¹:

ԵԽԽՎ «Ձինված ուժերի մասնագիտական աշխատակազմի անդամների միավորումների իրավունքը» թիվ 903 (1988) բանաձևի 8-րդ կետով ԵԽԽՎ-ն կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին զինված ուժերի պրոֆեսիոնալ անդամներին օժտել նորմալ պայմաններում ժողովրդավարական ինստիտուտների շրջանակներում իրենց մասնագիտական շահերը պաշտպանելու նպատակով միավորումներ ստեղծելու, ինչպես նաև դրանց անդամագրվելու և դրանց գործունեությանն ակտիվ մասնակցություն դրսևորելու իրավունքով²:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Դատավորների մասին. Անկախություն, արդյունավետություն և պարտականություններ» թիվ CM/Rec (2010)12 հանձնարարականի 25-րդ կետի համաձայն՝ դատավորները պետք է ազատ լինեն ստեղծելու մասնագիտական կազմակերպություններ, ինչպես նաև անդամագրվելու կազմակերպությունների, որոնց նպատակն է երաշխավորել նրանց անկախությունը, պաշտպանել նրանց շահերը և խթանել օրենքի գերակայությունը³:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 3 կարծիքի 34-րդ կետի համաձայն՝ միավորումների ազատության իրավունքի իրականացման շրջանակներում դատավորները կարող են ստեղծել արհեստակցական միություններ և անդամագրվել դրանց⁴:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում խնդրո առարկայի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումներից մի քանիսը Սահմանադրական դատարանը ներկայացրել է վերևում: Սակայն Եվրոպական դատարանը միավորումների ազատության, ինչպես նաև դրա բաղադրատարր հանդիսացող արհեստակցական միություններին անդամագրվելու իրավունքների վերաբերյալ սույն գործի պարզաբանման ենթակա

¹Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.assembly.coe.int/nw/xml/xref/xref-xml2html-en.asp?fileid=16101&lang=en>:

²Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://pace.coe.int/en/files/16314/html>:

³Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilities-of-judges/16809f007d>:

⁴Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/16807475bb>:

հանգամանքների առումով արտահայտել է իրավական դիրքորոշումներ նաև այլ գործերով: Մասնավորապես՝

1) Եվրոպական դատարանը նշում է, որ թեև 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունը արհմիությունների ազատությունը ներկայացնում է որպես միավորումների ազատության մեկ բաղադրատարր կամ հատուկ դրսևորում, հոդվածը չի երաշխավորում արհմիությունների կամ նրանց անդամների նկատմամբ որևէ հատուկ վերաբերմունք պետության կողմից («National Union of Belgian Police v. Belgium», 27.10.1975, app. no. 4464/70, § 38),

2) Կոնվենցիան երաշխավորում է արհմիության անդամների մասնագիտական շահերը պաշտպանելու ազատությունն արհմիության գործողությունների միջոցով, որի կառավարումն ու զարգացումը Պայմանավորվող պետությունները պետք է թույլ տան և հնարավոր դարձնեն («Swedish Engine Drivers' Union v. Sweden», 06.02.1976, app. no. 5614/72, § 40):

3) Դատարանը կրկնում է, որ թեև 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունը արհմիությունների ազատությունը ներկայացնում է որպես միավորումների ազատության մեկ բաղադրատարր կամ դրա հատուկ դրսևորում, այն ինքնին չի բացառում որևէ մասնագիտական խումբ հոդվածի գործողության շրջանակից: Առավելագույնը, որ կարող են ազգային իշխանությունները նախատեսել, «օրինական սահմանափակումներն» են իրենց որոշ աշխատողների նկատմամբ՝ 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն («Sindicatul "Păstorul cel Bun" v. Romania», 09.07.2013, app. no. 2330/09, § 145):

Միջազգային իրավական կարգավորումների ու նախադեպային դիրքորոշումների մոտեցումների ամփոփումը հնարավորություն է ընձեռում Սահմանադրական դատարանին փաստելու, որ միավորումների ազատության, այդ թվում՝ արհեստակցական միությունների ստեղծման և անդամագրման իրավունքի իրականացման վերաբերյալ միջազգային իրավական կարգավորումներն առաջին հերթին կարևորում են այդ իրավունքների՝ պետության կողմից ճանաչումը կամ «իրականացման իրավական հնարավորությունների ամրագրումը»՝ իհարկե, միևնույն ժամանակ չբացառելով կոնկրետ անձանց կոնկրետ խմբերի կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված այդ իրավունքների իրականացման որոշ սահմանափակումների նախատեսումը:

Սահմանադրական դատարանը վերն արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում պետական ծառայության սույն գործով խնդրո առարկա համարվող ոլորտներում ծառայողների համար արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի՝ որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության ձևի, բացարձակ արգելքի նախատեսումը համարում է Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 2(110)2023

Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է ընդհանրապես միավորումների ազատությունը, ներառյալ նաև խնդրո առարկա իրավունքը միայն օրենքով սահմանափակելու հնարավորությունը՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Միավորումների ազատության սահմանափակման այս չափանիշները միջազգայնորեն հանրաճանաչ և Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները չգերազանցող իրավադրույթներ են, սակայն արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքին վերաբերող սահմանափակումները սահմանելիս պետք է նկատի ունենալ, որ դրանք գործելու են կոլեկտիվ ու անհատական աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակ հետապնդող միության նկատմամբ, ինչը պահանջում է նկատի ունենալ, թե որքանով է իրավունքների կամ շահերի պաշտպանության ձևի օրենսդրական սահմանափակումը համահունչ սահմանափակման նպատակներին, կամ արդյո՞ք նպատակահարմար է սահմանափակել իրավունքների կամ շահերի պաշտպանության առաքելություն ունեցող հիմնական իրավունքը: Արհեստակցական միությունների վերը բերված սահմանադրական առաքելությունից, դրանց գործունեության դերից ու նշանակությունից ելնելով՝ այդ իրավունքի ամեն մի սահմանափակում կատարելիս պետք է ելնել, նախ, այն հանգամանքից, որ այն ի վերջո իրավունքների պաշտպանության ձև է, հետևաբար՝ սահմանափակումը պետք է գնահատել դրա նպատակների նեղ մեկնաբանման համատեքստում, որպեսզի թույլ չտրվի արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի էության խաթարում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սահմանադիրը միավորումների ազատության, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի իրականացման սահմանափակումների հիմք հանդիսացող նպատակներն ամրագրելով հանդերձ՝ սահմանափակումների մանրամասների նախատեսումը վերապահել է օրենսդրին: Հիմնական իրավունքի բացարձակ արգելք չնախատեսելով հանդերձ, օրենսդիրն ունի հնարավորություն՝ ամրագրելու միավորումների ազատության, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի իրականացման այնպիսի սահմանափակումներ, որոնք, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, զինծառայողների, դատախազների, դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների կարգավիճակով և գործունեության առանձնահատկություններով պայմանավորված, կարող են ապահովել վերջիններիս կողմից իրենց ծառայական (աշխատանքային) իրավունքների ու շահերի պաշտպանության իրականացման այնպիսի իրավական հնարավորությունները, որոնք խոչընդոտներ չեն հարուցի

համապատասխան ոլորտներում խնդիրների, իրավասության արդյունավետ իրականացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ կրոնական կազմակերպության անդամ լինելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ կրոնական միավորումներ ստեղծելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

3. «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանում է արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելք, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

4. «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ոստիկանության ծառայողի՝ արհեստակցական կազմակերպության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

5. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ արհեստակցական կազմակերպության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

6. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ արհեստակցական

միության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

7. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին և 19-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի նոյեմբերի 11-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշմանը:

8. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

11 ապրիլի 2023 թվականի
ՍԴՈ- 1683

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի
ՍԴՈ-1683 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Վ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ Ս. Ս.
ՍԱՖԱՐՅԱՆԻ (ՄԱՍՆԱԿԻ) ՀԱԿԱՍՈՂ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ**

I. ՆԱԽԱԲԱՆ

1. 2023 թվականի ապրիլի 4-11-ը Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զին-ծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1683 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) որոշել է.

«1.«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ կրոնական կազմակերպության անդամ լինելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

2.«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ կրոնական միավորումներ ստեղծելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

3.«Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանում է արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելք, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների հակասող:

4.«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ոստիկանության ծառայողի՝ արհեստակցական կազմակերպության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԻՎԱԿ 2(110)2023
281

5.«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ արհեստակցական կազմակերպության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

6.«Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ արհեստակցական միության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող:

(...)»:

2.Սույն հատուկ կարծիքը հեղինակած դատավորներս առաջին հերթին անհրաժեշտ ենք համարում հստակեցնել մեր անհամաձայնության սահմանները Որոշմանը և դրա ամփոփ պատճառաբանությունը, որի մանրամասները ներկայացված են ստորև համանուն բաժիններում: **Նախ**՝ լիովին համակարծիք ենք Որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետի և դրա հիմքում ընկած պատճառաբանություններին, մասնավորապես, որ «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ կրոնական միավորումներ ստեղծելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը: **Երկրորդ**, թեպետ համաձայն ենք մեծամասնության այն դիրքորոշմանը, որ կրոնի ազատության սահմանափակման առումով «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով օրենսդրի կողմից հետապնդվող նպատակը սահմանադրական է, իսկ սահմանափակող ակտը բավարարում է դրան առաջադրվող սահմանադրական պահանջները, մենք, այդուհանդերձ, չենք կարող համաձայնել, որ այս նորմը համապատասխանում է Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, մասնավորապես, դրանով նախատեսված «պիտանիության» որակին: Եվ, **երրորդ**՝ մենք կարծում ենք, որ միավորումների ազատության սահմանափակումների վերաբերյալ վիճարկվող նորմերի սահմանադրականության ստուգումն իրականացվել է հիմնական իրավունքների սահմանափակումների ստուգման համար անհրաժեշտ և վերաբերելի մեթոդաբանությունից շեղվող տրամաբանությամբ՝ Սահմանադրական դատարանին բերելով մի եզրակացության, որն օրենսդրին չի առաջարկում Որոշումից բխող ուղղումներ կատարելու սահմանադրական ուղենիշներ:

3. Հետևաբար՝ մեր կարծիքով, նման սկզբունքային անհամաձայնությունը Որոշմանը կողմ քվեարկելու հնարավորություն չի ընձեռել:

II. ԿՐՈՆԻ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

4. Ինչպես արդեն նշվեց սույն կարծիքի 2-րդ կետում, սույն հատուկ կարծիքը հեղինակած դատավորներս լիովին համակարծիք ենք Որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետի և դրա հիմքում ընկած պատճառաբանությունների հետ: Մասնավորապես՝ որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ կրոնական միավորումներ ստեղծելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

5. Կրոնի ազատության սահմանափակումներին առնչվող վիճարկվող նորմերի մասով մեր անհամաձայնությունը վերաբերում է նրան, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը չի հաղթահարում հետապնդվող նպատակի համար նույն նորմի՝ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքի «պիտանելիության» թեստը:

6. Կրոնի ազատության հիմնական իրավունքի առնչությամբ վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ Որոշմամբ, մասնավորապես, նախատեսված է, որ՝

(...) ազգային անվտանգության մարմինների ծառայողների կրոնական կազմակերպության անդամ լինելու, ինչպես նաև զինծառայողի կողմից այդպիսին ստեղծելու արգելքները բխում են այդ ծառայությունների առջև դրված խնդիրների յուրահատկություններից և հետապնդում են այդ կառույցների, դրանց ծառայողների ներծառայական հարաբերություններում, ինչպես նաև հասարակական-կրոնական գործընթացներում առավել չեզոքության, անաչառության, անկողմնակալության, զսպվածության, ծառայությանը նվիրվածության ապահովման, կրոնական հողի վրա շահերի բախման կանխման նպատակներ: Քննարկվող սահմանափակումները միջոց են կանխելու կրոնական կազմակերպությունների իրավահավասարության խախտման, կրոնական հողի վրա խտրականության ու պաշտոնեական լիազորությունների չարաշահումների, ծառայողական պարտքի կատարմանը խոչընդոտելու և վնասելու, պետական ծառայողի չեզոքության ու անաչառության խախտման, ծառայողական ստորադասության հարաբերություններում սեփական համոզմունքները ենթականերին պարտադրելու, ինչպես նաև այլ բացասական սոցիալ-իրավական հետևանքների հնարավորությունը: Ընդ որում՝ թվարկված բացասական հետևանքներն առնչվում են Սահմա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԿԵԻ 2(110)2023
283

ՍԱԳՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(110)2023

նադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված, պաշտպանության ենթակա գրեթե բոլոր արժեքների հետ»¹:

7. Որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, մասնավորապես, որ՝

«Կրոնական կազմակերպություն և անհատ փոխհարաբերությունների համատեքստում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի իրավադրույթների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս վեր հանել երեք հասկացություն.

ա) «կրոնական կազմակերպության հավատացյալներ» (7-րդ հոդված, 1-ին մաս, ա) կետ),

բ) «կրոնական կազմակերպության անդամներ», որոնք այդ կարգավիճակը ձեռք են բերել երկու հիմքով: **Առաջին՝** «առնվազն 200 չափահաս հավատացյալ անդամների» խումբը, որ նախաձեռնել է կրոնական կազմակերպության ստեղծումը՝ գրանցումը, և, ըստ էության, դրանից հետո խմբի անդամները վերածվում են կրոնական կազմակերպության «**հիմնադիր անդամների**» (5-րդ հոդված, 1-ին մաս, ե) կետ): **Երկրորդ՝** կրոնական կազմակերպությունն իրավունք ունի իր շուրջը համախմբել իր հավատացյալներին, որի ձևերից է կրոնական կազմակերպության որպես իրավաբանական անձ գրանցվելուց հետո առաջացող անդամությունը՝ «**մասնակից անդամներ**»: Կրոնական կազմակերպությունների կանոնադրություններով նախատեսված է հավատացյալների անդամագրության ինստիտուտը (անդամության հիմքերը, դրա տրամադրման կարգը, դրանից զրկելու հիմքերն ու կարգը և այլն)²,

գ) «կրոնական կազմակերպության սպասավոր» (18-րդ հոդված), այսինքն՝ անհատ, որը տվյալ կրոնական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված փարրակարգի հոգևորական է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրոնական կազմակերպության անդամ հասկացությունը ներառում է վերը նշված «հիմնադիր անդամներին», «մասնակից անդամներին», «կրոնական սպասավորներին», (...):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրոնի ազատության հիմնական իրավունքի խնդրո առարկա սահմանափակումները համապատասխանում են Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված սահմանափակման որոշակիության սկզբունքին՝ սահմանափակող իրավական դրույթի բովանդակության, սահմանափակումների ծավալի ու «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության մասով,

¹ Որոշում, էջեր 28-29:

² Տե՛ս օրինակ՝ «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի» կրոնական կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ, հասանելի է՝ <http://www.eca.am/cat/3>

հետևաբար՝ քննարկվող խմբերի ծառայողներն արգելքի բավարար չսփռվ որոշակիության պայմաններում ի վիճակի են դրսևորելու համապատասխան վարքագիծ:

(...)

Սահմանադրական դատարանը հատուկ շեշտում է «կրոնական կազմակերպության անդամ» հասկացության՝ սույն որոշման 4.1. ենթակետում բացահայտված իմաստի կարևոր իրավական նշանակությունը, քանի որ այն, **ստաջին՝** հնարավորություն է տալիս սահմանազատելու «կրոնական կազմակերպության անդամներին» «կրոնական կազմակերպության հավատացյալներից», այսինքն՝ անձանցից, որոնք մասնակցում են տվյալ կրոնական կազմակերպության համարել կատարվող կրոնական ծեսերին և այլ միջոցառումներին, և որոնց հոգևոր-կրոնական կարիքներն ու պահանջմունքները բավարարվում են այդ կրոնական կազմակերպության գործունեության արդյունքում, **երկրորդ՝** հիմք է տալիս եզրակացնելու, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի վիճարկվող դրույթով սահմանված արգելքը՝ «լինել կրոնական կազմակերպության անդամ» նշանակում է, որ համապատասխան ծառայողը ծառայության անցնելու պահից չի կարող լինել, իսկ նշանակվելու պահից սկսած չի կարող դառնալ որևէ կրոնական կազմակերպության անդամ՝ վերը նշված իմաստով, **երրորդ՝** նշված ծառայողները, եթե ունեն «կրոնական կազմակերպության հավատացյալի» կարգավիճակ, ապա պահպանում են այն, հետևաբար՝ չեն զրկվում այլոց հետ կրոնական համոզմունքները համարել իրականացնելու իրենց սահմանադրական իրավունքից, նման կարգավիճակով ծառայողներն իրավունք չունեն իրենց պաշտոնական դիրքն օգտագործել կրոնական միավորումների շահերի համար, քարոզել վերաբերմունք կրոնական միավորումների նկատմամբ, իսկ ծառայողական պարտականությունները կատարելիս՝ կրոնական գործունեություն իրականացնել»¹:

8. Այսինքն՝ Սահմանադրական դատարանը կրոնի ազատության սահմանափակման իմաստով «կրոնական կազմակերպության անդամ» է դիտարկել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կրոնական կազմակերպության՝ դրա գրանցումը նախաձեռնած հավատացյալ անդամներին (որպես հիմնադիր անդամ), որպես իրավաբանական անձ գրանցվելուց հետո կրոնական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով դրան անդամագրված անձանց (որպես մասնակից անդամ), կրոնական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված համակարգի հոգևորական ծառայողին: Միաժամանակ «կրոնական կազմակերպության հավատացյալ» են դիտարկվել անձինք, որոնք «մասնակցում են տվյալ

¹ Որոշում, էջեր 18-19, 22:

կրոնական կազմակերպության համարեղ կատարվող կրոնական ծեսերին և այլ միջոցառումներին, և որոնց հոգևոր-կրոնական կարիքներն ու պահանջունքները բավարարվում են այդ կրոնական կազմակերպության գործունեության արդյունքում»:

9. Այսպիսով, Սահմանադրական դատարանը, Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, որպես կրոնի ազատության սահմանափակման նորմատիվ հիմք համարել է անձի՝ «կրոնական կազմակերպության անդամի» կարգավիճակը, որի իրավական բովանդակությունը բացահայտված չէ ո՛չ Որոշմամբ, ո՛չ էլ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք):

10. Օրենքում միաժամանակ օգտագործվում են «կրոնական կազմակերպության հավատացյալ»¹, «կրոնական կազմակերպության հավատացյալ անդամ»², «կրոնական կազմակերպության անդամ»³ հասկացությունները՝ առանց որևէ կերպ որոշակիացնելու դրանց իրավական բովանդակությունը՝ ներառյալ դրանցով նկատի ունեցած իրավահարաբերությունների բնույթը և շրջանակը, ինչպես նաև թվարկված տարբեր բնութագրիչներով իրավական հասկացությունների հնարավոր տարբերությունները:

11. Որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ «Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է «ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համարեղ» կրոնի ազատությունն արտահայտելու իրավունքը, որը ենթադրում է՝ առաջին, անձինք իրավունք ունեն խմբերով դավանելու իրենց կրոնը՝ առանց հատուկ կազմակերպական իրավական ձևով գրանցվելու, ինչը չի բացառում հավատացյալների խմբերի երկրորդ իրավունքը՝ ձեռք բերել կազմակերպական որոշակի ձևի իրավասությունները»⁴:

12. Կարծում ենք, որ Օրենքով «կրոնական կազմակերպության հավատացյալ», «կրոնական կազմակերպության հավատացյալ անդամ», «կրոնական կազմակերպության անդամ» հասկացությունների իրավական բովանդակությունը բացահայտված չլինելու պարագայում Սահմանադրական դատարանի կողմից ազգային անվտանգության ծառայության համակարգում պաշտոնատար անձանց կրոնի ազատության սահմանափակման հիմքում «կրոնական կազմակերպության անդամի» զուտ ձևական կարգավիճակը դնելը, չի կարող պիտանի լինել Սահմանադրական դատարանի որոշմամբ նկարագրված նպատակների համար՝ երկուստեք խնդրահարույց լինելով, թե՛ մարդու սահմանադրական հիմնական իրավունքի սահմանափակման

¹ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենք, հոդված 7, ա)-բ) և թ) կետեր:

² Նույնը, հոդված 5, կետ ե):

³ Նույնը, հոդված 7 կետեր գ) և դ), հոդված 18:

⁴ Որոշում, էջ 16:

համաչափության, թե՛ օրենսդրի կողմից հետապնդվող սահմանադրական նպատակների արդյունավետ ապահովման տեսանկյունից:

13. Մասնավորապես՝ անհատի կրոնական ազատության սահմանադրական հիմնական իրավունքի դիտանկյունից՝ իր վարքագծի սահմանափակումների նկարագրության (օրինակ՝ կրոնական քարոզչության արգելք, կրոնական այնպիսի ծեսերին հրապարակային մասնակցությունը, որը հանրության աչքում հատուկ ծառայությանը կոնկրետ կրոնական կազմակերպության հետ փոխկապակցվածության տպավորություն կարող է թողնել, կրոնական կազմակերպության հետ փոխհարաբերություններում կրոնական բովանդակության այնպիսի պարտավորությունների և հանձնառությունների ստանձնումը, որոնք կյարող են վտանգել կամ խոչընդոտել իր ծառայողական պարտականությունների պատշաճ կատարումը, և այլն) փոխարեն վերջինիս սահմանադրական իրավունքն ընդամենը ձևական կարգավիճակով («կրոնական կազմակերպության անդամ») պայմանավորելը հղի է նման միջամտության անհրաժեշտության բացակայության պատճառով սահմանադրական իրավունքի սահմանափակման համաչափության սահմանը հատելու վտանգով: Նման դիրքորոշման համար հիմք է ծառայում այն նկատառումը, որ ազգային անվտանգության ծառայողի կողմից զուտ ձևականորեն «կրոնական կազմակերպության անդամի» կարգավիճակ ունենալն արգելելն այն պայմաններում, երբ նշված կարգավիճակի իրավական բովանդակությունը չի պարունակում իր ծառայողական պարտականությունների և ողջ ծառայության նպատակներին դեմ կամ խոչընդոտող որևէ գործողություն կամ անգործության դրսևում կամ նման իրավական պարտականություն, խախտում է Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված՝ սահմանադրական իրավունքի սահմանափակման համաչափության սկզբունքը՝ «անհրաժեշտության» թեստը չհաղթահարելու իմաստով:

14. Մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության աշխատակցի կողմից *կրոնական կազմակերպությունների իրավահավասարության խախտման, կրոնական հողի վրա խտրականության ու պաշտոնեական լիազորությունների չարաշահումների, ծառայողական պարտքի կատարմանը խոչընդոտելու և վնասելու, պետական ծառայողի չեզոքության ու անաչառության խախտման, ծառայողական ստորադասության հարաբերություններում սեփական համոզմունքները ենթականերին պարտադրելու, ինչպես նաև այլ բացասական սոցիալ-իրավական հետևանքների հնարավորությունը կանխելու* նպատակների համար սահմանափակման այս միջոցն ակնհայտորեն «պիտանի» չէ, քանի որ անհատի վարքագծի սահմանափակումների նկարագրության (տես՝ 13-րդ կետում մասնակիորեն թվարկված վարքագծային դրսևորումները) փոխարեն նրա սահմանադրական իրավունքն ընդամենը ձևական կարգավիճակով («կրոնական կազմակերպության անդամ») պայմանավորելու արդյունքում

նման կարգավիճակ ունեցող, սակայն ազգային անվտանգության մարմինների նպատակների և իր ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման դեմ որևէ խոչընդոտ կամ մտադրություն չունեցող ծառայողի կրոնի ազատությանը միջամտելու իրավական հնարավորության առկայության պայմաններում, այս միջոցն առհասարակ պիտանի չի լինելու ազգային անվտանգության մարմիններին այն ծառայողներից «մաքրագտելու» համար, որոնք, թեպետ ձևականորեն որևէ «կրոնական կազմակերպության անդամ» չեն, սակայն հետևում և մասնակցում են այնպիսի կրոնական կազմակերպությունների և կրոնական ուղղությունների արարողությունների, որոնց հավատացյալ հետևորդը լինելու բերումով՝ Սահմանադրական դատարանի կողմից Որոշմամբ շարադրված նպատակներին կամ դրանցից որևէ մեկին հակադրվող կամ խոչընդոտող կրոնական հավատի կայունության աստիճանի համոզմունքներ ունեն կամ հանրությանը կարող են այդ կրոնական կազմակերպության կամ ուղղության հետ ազգային անվտանգության մարմինների փոխկապակցվածության տպավորություն ներշնչել՝ պայմանավորված կոնկրետ ծառայողի՝ անվտանգության մարմիններում զբաղեցրած պաշտոնով կամ այլ ծառայողական դիրքով:

15. Այս առնչությամբ կարծում ենք, որ Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական հիմնական իրավունքի սահմանափակման որոշակիացման հիմքում դրվել է բացառապես ձևական-իրավական բնույթի չափանիշ՝ առաջնային կարևորություն չտալով կրոնական կազմակերպությանն ու դրա գործունեությանն անձի՝ փաստացի ներգրավվածությանը կամ անձի և կրոնական կազմակերպության միջև ձևավորված իրական կապերի բովանդակությունը, և այդ բովանդակության և ազգային անվտանգության մարմինների նպատակների և գործառույթների միջև հնարավոր հակասության վերհանմանը:

16. Հիմք ընդունելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ կրոնական կազմակերպության անդամ լինելու արգելքի մասով՝ այնքանով, որքանով «կրոնական կազմակերպության անդամ» հասկացությունը չի բացահայտում դրա հիմքում ընկած՝ անհատի և այդ կազմակերպության հարաբերությունների բովանդակությունը, Սահմանադրության 41-րդ հոդվածի 3-րդ մասի և 78-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել անձի՝ կրոնի ազատության իրավունքին համաչափ միջամտություն:

III. ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

17. Անդրադառնալով Որոշման եզրափակիչ մասի 3-6-րդ կետերին՝ դրանցով՝ զինված ուժերի, ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների, դատախազության ծառայողների, դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանված՝ արհեստակցական կազմակերպություններին կամ դրանց միություններին անդամակցելու արգելքը հակասահմանադրական ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի մեծամասնության եզրահանգմանը, ապա սպառիչ նկարագրելու համար դրա հետ մեր անհամաձայնության պատճառները, հարկ է առաջնահերթությամբ անդրադառնալ սահմանադրական իրավունքի սահմանափակման և նման իրավունքի բացառման հասկացությունների հարաբերակցությանը, ինչը, մեր գնահատմամբ, կատարվել է միավորումների ազատության սահմանափակման՝ Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությանը հակասող մոտեցմամբ:

18. Որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է.

Սահմանադրական դատարանը, արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքին վերաբերող սույն գործով վիճարկվող օրինադրույթները դիտարկելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրավական կարգավորման սահմանադրական կառուցակարգում, գտնում է, որ այլոց հետ ազատորեն միավորվելու միջոցով աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը Սահմանադրությամբ ճանաչված և անմիջականորեն գործող իրավունք է: Օրենքներով այդ հիմնական իրավունքի կազմակերպական կառուցակարգերում և ընթացակարգերում ներդրված խնդրո առարկա արգելքները բացարձակ են, հետևաբար՝ չեն կարող ստեղծել հիմնական այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, այլ ընդհակառակը՝ խախտում ու խաթարում են այդ հիմնական իրավունքի բովանդակությունն ամրագրող սահմանադրական դրույթների էությունը, վերացնում դրանք:

(...)

Հիմնական իրավունքի բացարձակ արգելք չնախատեսելով հանդերձ, օրենսդիրն ունի հնարավորություն՝ ամրագրելու միավորումների ազատության, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի իրականացման այնպիսի սահմանափակումներ, որոնք, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, զինծառայողների, դատախազների, դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների կարգավիճակով և գործունեության առանձնահատկություններով պայմանավորված, կարող են ապահովել վերջիններիս կողմից իրենց ծառայական (աշխատանքային) իրավունքների ու շահերի

պաշտպանության իրականացման այնպիսի իրավական հնարավորությունները, որոնք խոչընդոտներ չեն հարուցի համապատասխան ոլորտներում խնդիրների, իրավասության արդյունավետ իրականացման համար¹:

19. Մինչդեռ գտնում ենք, որ քննարկվող երկու հասկացությունների բովանդակային տարբերությունն այն է, որ սահմանադրական հիմնական իրավունքի սահմանափակումը կարող է հասնել իրավունքի կոնկրետ մեկ բաղադրիչի կամ ամբողջ իրավունքի իրականացման հնարավորության սահմանափակման: Սակայն իրավունքի բացառման դեպքում, ինչպես օրինակ՝ Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությամբ, որով սահմանադիրը բացառել է դատավորների, դատախազների և քննիչների՝ կուսակցության անդամակցության իրավունքը, Սահմանադրությամբ նշված սուբյեկտներն առհասարակ չունեն սահմանադրական նշյալ իրավունքը, և, հետևաբար, նրանց գոյություն չունեցող իրավունքի սահմանափակման մասին խոսք լինել չի կարող:

20. Սահմանադրական դատարանը Որոշմամբ եզրահանգել է, որ սահմանադրական իրավունքի ամենախիստ սահմանափակման դեպքում, երբ այդ իրավունքի իրացումը բացառվում է որոշակի խումբ սուբյեկտների համար օրենսդրի կողմից սահմանված սահմանափակումների հետևանքային ազդեցությամբ, նույնն է՝ ինչ իրավունքի բացառումը սահմանադրի կողմից: Այնուհետև առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որն օրենսդիրն ամեն դեպքում իրավասու չէ նախատեսելու այնպիսի սահմանափակումներ, որոնք կոնկրետ շրջանակի անձանց սահմանադրական հիմնական իրավունքի իրականացումը սահմանափակում են ողջ ծավալով, Սահմանադրական դատարանը գտել է, որ նման սահմանափակումը հակասահմանադրական է, քանի որ «խնդրո առարկա արգելքները բացարձակ են, հետևաբար՝ չեն կարող սպեղծել հիմնական այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, այլ ընդհակառակը՝ խախտում ու խաթարում են այդ հիմնական իրավունքի բովանդակությունն ամրագրող սահմանադրական դրույթների էությունը, վերացնում դրանք²»:

21. Այս եզրահանգումը Սահմանադրական դատարանին թույլ է տվել չշարունակել, իսկ ըստ էության՝ նույնիսկ չսկսել միավորումների ազատությունը սահմանափակող նորմերի սահմանադրականության ստուգումը՝ դրանց Սահմանադրությամբ նախատեսված նպատակին (Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մաս), սահմանափակման միջոցին առաջադրվող որակական պահանջներին (Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մաս և 79-րդ հոդված) և համաչափության սկզբունքին (Սահմանադրության 78-րդ հոդված) համապատասխանությամբ:

¹ Որոշում, էջեր 34 և 40:

² Որոշում էջ 34:

22. Սահմանադրական դատարանն այլ սահմանադրական իրավունքների իրացման պայմաններն ու կարգը ստուգելիս անդրադարձել է իրավունքի սահմանափակման շրջանակներին և, ըստ էության, որդեգրել է սույն հատուկ կարծիքում արտահայտված դիրքորոշմանը համանման դիրքորոշում: Այսպես՝ անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման հիմքերին, ի թիվս այլնի, Սահմանադրական դատարանը սահմանափակում է համարել նաև հողի նկատմամբ օտարերկրյա քաղաքացիների սեփականության իրավունքի արգելքը, որը նախատեսված էր 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 31-րդ հոդվածի 4-րդ մասով: Հիմք ընդունելով սույն ելակետը՝ Սահմանադրական դատարանը նշյալ որոշմամբ քննության առարկա փաստական հանգամանքները վերլուծել է սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության բանաձևով (սահմանադրական նպատակ, իրավունքին միջամտության նախատեսվածություն օրենքով, միջամտության համաչափություն)¹: Այսպիսով, Սահմանադրական դատարանը, քննարկելով սեփականության հիմնական իրավունքի բնույթն ու բովանդակությունը, ղեկավարվել է իրավունքի սահմանափակման ինտենսիվության ուղենիշային մոտեցմամբ:

23. Վերոնշյալի լույսի ներքո գտնում ենք, որ իրավունքի սահմանափակման և իրավունքի բացառման կամ արգելքի հասկացությունների մեկնաբանման հարցում անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել իրավունքի սահմանափակման հասկացությունը, որի ամենախիստ դրսևորումը կոնկրետ դեպքում և կոնկրետ սահմանադրական հիմքերով իրավունքի իրացման արգելքն է: Այսինքն՝ իրավունքի արգելքը՝ որպես մասնավոր դրսևորում, ածանցվում է իրավունքի սահմանափակումից:

24. Քննարկվող, մեր կարծիքով, խնդրահարույց մեթոդաբանության կիրառման արդյունքում արհեստակցական միություններին որոշակի կատեգորիայի պաշտոնատար անձանց անդամակցության օրենսդրական արգելքը չի գնահատվել վերոնշյալ նորմատիվ չափանիշների համատեքստում, որի պատճառով, մեր կարծիքով օրենքի վիճարկվող նորմերի սահմանադրականությունը մնացել է չստուգված:

25. Գտնում ենք, որ արհեստակցական միություններին զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների, անդամակցության արգելքը Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ արհեստակցական միություններին անդամակցելու իրավունքի բարձր ինտենսիվության սահմանափակում է, որի սահմանադրականությունը ենթակա է ստուգման՝ այդ նորմերի Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նպատակներին, նորմերի՝ «օրենքին»

¹ 2013 թվականի հունվարի 30-ի ՍԴՈ-1073 որոշում:

առաջադրվող որակական պահանջները բավարարելու մասին Սահմանադրության 79-րդ հոդվածով և սահմանափակման համաչափությանը՝ Սահմանադրության 78-րդ հոդվածով առաջադրվող պահանջներին համապատասխանության որոշման միջոցով:

IV. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

26. Սույն հատուկ կարծիքը ներկայացնող դատավորներս կարծում ենք, որ, մի կողմից՝ կրոնի ազատության սահմանադրական հիմնական իրավունքի առավելագույն պաշտպանության, մյուս կողմից՝ Որոշմամբ Սահմանադրական դատարանի կողմից թվարկված և Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանադրական նպատակների կամ շահերի արդյունավետ պաշտպանության նկատառումներից ելնելով՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված «կրոնական կազմակերպության անդամ» հասկացությունը պետք է մեկնաբանվի և կիրառվի՝ հաշվի առնելով կրոնական կազմակերպության հետ անձի ունեցած իրական կապերը և գնահատելով դրանց ազդեցությունը ծառայության շահերի վրա: Ամեն դեպքում, Սահմանադրական դատարանը կրոնական կազմակերպության հետ հարաբերություններում ֆորմալ կարգավիճակի վրա շեշտադրում կատարելու փոխարեն ստուգման կենտրոնացումը պետք է ուղղեր այս սահմանադրական իրավունքի սահմանափակումը որոշելիս անհատի վարքագծի սահմանափակում բանաձևելու անհրաժեշտության վրա՝ սահմանափակելով այն վարքագիծը, որն անհամատեղելի է ծառայության շահերի հետ՝ ներառյալ կրոնական կազմակերպության հետ կապերի բնույթը:


27. Հաշվի առնելով, որ միավորումների ազատությունը սահմանափակող նորմերի սահմանադրականության ստուգում Սահմանադրական դատարանի կողմից չի իրականացվել վերը նշված հիմնավորումներով, մենք չենք կարող միանալ մեծամասնության այն եզրահանգմանը, որ վիճարկվող նորմերով Սահմանադրական դատարանի դատավորների, եռաստիճան դատական համակարգի դատավորների, զինված ուժերի, ոստիկանության, դատախազության և ազգային անվտանգության մարմինների ծառայողների՝ արհեստակցական միություններին անդամակցելու մասին օրենսդրի սահմանած սահմանափակումները հակասում են Սահմանադրությանը:

**Սահմանադրական դատարանի
դատավորներ**

**Վ. Մ. Գրիգորյան
Ս. Ս. Սաֆարյան**

«21» ապրիլի 2023թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(110)2023



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՎՃԱՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԲԱԺՆԻ ՄԱՍԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 ապրիլի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է.
Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Է.
Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվա-
ծի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմա-
նադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՏ 2(110)2023 293

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(110)2023

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի մարտի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2023 թվականի ապրիլի 6-ի N 481-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի մարտի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2023 թվականի ապրիլի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի մարտի 24-ին՝ երկու երկրների միջև հավասարության և փոխադարձ շահի հիման վրա, ավանդական բարեկամական հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման նպատակով:

2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ Կողմեր) կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից և գործում է մինչև Կողմերի կողմից Համաձայնագրից բխող բոլոր պարտավորություններն ամբողջությամբ կատարելը կամ Համաձայնագրի 4-րդ

հողվածին համապատասխան մասնակցության մասնաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը Ռուսաստանի Դաշնությանը հետ փոխանցվելը:

3. Համաձայնագիրն ունի Հավելված, որով սահմանված է վճարումների ժամանակացույցը (այսուհետ՝ ժամանակացույց):

Համաձայնագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության պատասխանատու լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն է:

Համաձայնագրի դրույթները կիրառվում են Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում բացառապես Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի նկատմամբ, որը Համաձայնագրի ստորագրման օրվա դրությամբ կազմում է 64.000.000 ԱՄՆ դոլար նոմինալ արժեքով՝ Եվրասիական զարգացման բանկի 64 000 բաժնետոմս (այսուհետ՝ մասնակցության մասնաբաժին):

Համաձայնագրի իրականացման նպատակով ռուսական կողմը պարտավորվում է ապահովել մասնակցության մասնաբաժնի փոխանցումը Հայաստանի Հանրապետության սեփականությանը:

Մասնակցության մասնաբաժնի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը ծագում է Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- դիվանագիտական ուղիներով՝ ռուսական կողմին անհապաղ գրավոր ծանուցում ուղարկել Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի անվանման փոփոխման և (կամ) նրա գործառույթների՝ այլ մարմիններին փոխանցման մասին (հողված 2, պարբերություն 2),

- ապահովել Հայաստանի Հանրապետության կողմից մասնակցության մասնաբաժնի ընդունումը և յուրաքանչյուր տարի՝ սկսած 2024 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև 2027 թվականի սեպտեմբերի 2-ը ներառյալ, տարեկան 16.000.000 ԱՄՆ դոլար (25%) մասնաբաժնով, վճարել մասնակցության մասնաբաժնի նոմինալ արժեքը (հողված 1, կետ 2, պարբերություն 1, հողված 3, կետ 1, Հավելված),

- Դաշնային գանձապետարանի միջտարածաշրջանային գործառնությունների վարչության՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկում բացված հաշվին ռուսական ռուբլով իրականացել Համաձայնագրով վճարումներն՝ վճարման ամսաթվից 2 աշխատանքային օր առաջ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի կողմից սահմանված ռուսական ռուբլու

նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքով՝ հաշվարկված վճարման գումարը կլորացնելով ստորակետից հետո մինչև 2 նիշ (հոդված 3, կետեր 2 և 3):

5. Համաձայնագրի 4-րդ հոդվածով սահմանված են հատուկ պայմաններ, որոնց համաձայն՝ եթե ժամանակացույցին համապատասխան հայկական կողմի վճարումը չի կատարվել կամ կատարվել է ոչ լրիվ ծավալով, ապա Համաձայնագրով հայկական կողմի պարտավորությունը համարվում է չկատարված, և ժամանակացույցի շրջանակներում հայկական կողմի կողմից փաստացի վճարված գումարը հանած՝ Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանված չափով մասնակցության մասնաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը հետ է փոխանցվում Ռուսաստանի Դաշնությանը՝ հայկական կողմի կողմից վճարումը չկատարելու օրվան հաջորդող օրվանից, իսկ այն դեպքում, երբ հայկական կողմի վճարումն ամբողջ ծավալով չի իրականացվել, ապա իրականացված վճարի վերադարձման կարգը Կողմերը սահմանում են Համաձայնագրին կից լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Համաձայնագրի գործողությունը դադարում է վերոնշյալին համապատասխան մասնակցության մասնաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը Ռուսաստանի Դաշնությանը հետ փոխանցվելու օրվանից:

2(110)2023

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

1. 2023 թվականի մարտի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

14 ապրիլի 2023 թվականի
ՍԴՈ-1684

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՎՃԱՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԲԱԺՆԻ ՄԱՍԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1684 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼԸ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի մարտի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի ապրիլի 14-ի ՍԴՈ-1684 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի մարտի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի ապրիլի 14-ի ՍԴՈ-1684 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՏ ◆ 2(110)2023

քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում,

եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1684 որոշմամբ 2023 թվականի մարտի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի

համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանն ղիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնն ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանն ղիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ղիմումը Սահմանադրական դատարանն է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** ղիմումները Սահմանադրական դատարանն կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանն ղիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարանն ներկայացվող ղիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով ղիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն առանց նախապայմանների.

- այդ հարցով ղիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում են, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով ղիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն ղիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանն ղիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական

դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին,

հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար

ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.
- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ,

որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվելու դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սրանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա

թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«14» ապրիլի 2023թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ «ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ
ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 ապրիլի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԵԿԻ ◆ 2(110)2023
307

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(110)2023

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1996 թվականի մարտի 4-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1996 թվականի ապրիլի 4-ին և ուժի մեջ է մտել 1996 թվականի մայիսի 16-ից:

Օրենքի՝ «Ախտաբանաանատոմիական գործունեությունը» վերտառությամբ 41-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է.

«3. Ախտաբանաանատոմիական դիախերձումներն իրականացվում են հիվանդությունների հետմահու ախտորոշման և մահվան պատճառը որոշելու նպատակով, միայն հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպություններում:

Ախտաբանաանատոմիական դիախերձումների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը»:

Ընդունումից ի վեր Օրենքի 41-րդ հոդվածում կատարվել են փոփոխություններ և լրացումներ (փոփ. 04.06.21 ՀՕ-262-Ն, փոփ., լրաց., խմբ. 04.03.22 ՀՕ-45-Ն):

Օրենքի վերոնշյալ դրույթը սույն խմբագրությամբ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում շարադրվել է ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-45-Ն օրենքով (ընդունվել է 2022 թվականի մարտի 4-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2022 թվականի մարտի 11-ին և ուժի մեջ է մտել 2022 թվականի մարտի 21-ից. սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից վեց ամիս հետո):

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Դիմող)՝ 2022 թվականի նոյեմբերի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով սույն դիմումով վիճարկվող և դրանց առնչվող իրավադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Ըստ Դիմողի՝ ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի մարտի 4-ի թիվ ՀՕ-45-Ն օրենքով ոչ իրավաչափ միջամտություն է տեղի ունեցել համապատասխան իրավահարաբերությունների մասնակիցների տնտեսական գործունեության և սեփականության իրավունքներին. վիճարկվող կարգավորումը զուրկ է իրավական որոշակիությունից և դրա

կիրառումը գործնականում հանգեցրել է համապատասխան իրավահարաբերությունների մասնակիցների իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտի հետադարձ ուժով կիրառման արգելքի, ինչպես նաև պատշաճ վարչարարության իրավունքի խախտման:

Դիմողը, մասնավորապես, նշում է. «(...) կատարված փոփոխությունների արդյունքում որոշակի գործունեության իրականացման համար լիցենզիա ստացած տնտեսվարող սուբյեկտներ փաստացի զրկվում են այդ գործունեությամբ զբաղվելու իրավունքից, ինչի արդյունքում սահմանափակվում է վերջիններիս տնտեսական գործունեությամբ զբաղվելու և սեփականության իրավունքը:

(...)

(...) հարկ է արձանագրել, որ կատարված փոփոխությունները, որոնց արդյունքում սահմանափակվում է անձանց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, ինչն իր հերթին հանգեցնում է սեփականության իրավունքի խախտման, խախտվում է պատշաճ վարչարարության իրավունքը, տարածվում են նաև մինչև փոփոխության կատարումը ձեռք բերված իրավունքների նկատմամբ, այդպիսով վատթարացնելով ախտաբանաանատոմիական դիախերձումների իրականացման համար անհրաժեշտ համապատասխան լիցենզիա ստացած սուբյեկտների որոշակի խմբի իրավական կարգավիճակը»:

Դիմողը հանգամանորեն ներկայացնում է վիճարկվող դրույթի ընդունմանն ուղղված նախապատրաստական գործընթացը՝ նշելով, որ ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի մարտի 4-ի թիվ ՀՕ-45-Ն օրենքի ընդունմանն ուղղված նախապատրաստական գործընթացում «**որևէ կերպ անդրադարձ կատարված չէ տնտեսական գործունեության ազատության և սեփականության իրավունքի սահմանափակմանը, դրա նպատակին և համաչափությանը, միաժամանակ, առնվազն հիմնավորումների մեջ վկայակոչված նպատակներին հասնելու համար հնարավոր է նախատեսել իրավական այնպիսի գործիքակազմ, որը չի սահմանափակի անձանց իրավունքները և վերահսկելիության դաշտ կրթի համապատասխան իրավաբանական անձանց գործունեությունը**»:

Դիմողը նշում է. «(...) կատարված փոփոխության արդյունքում խտրական մոտեցում է ցուցաբերվել միատեսակ գործունեություն իրականացնող սուբյեկտների նկատմամբ, ընդ որում առանց դրա նպատակի և օբյեկտիվ տարբերակման հիմքի առնչությամբ որևէ հիմնավորման: Միաժամանակ, նման խտրական կարգավորման արդյունքում փաստացի պետական կառավարման համակարգի մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների դեպքում սահմանվել է պետական մենաշնորհ,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ 2(110)2023

առանց անդրադառնալու նման մենաշնորհի սահմանման նպատակին, տեսակներին և դրա թույլատրելի չափերին»:

Բացի դրանից, Դիմողը գտնում է, որ տնտեսական գործունեությամբ զբաղվելու և սեփականության իրավունքների սահմանափակում ենթադրող կարգավորումների տարածումը մինչև համապատասխան փոփոխությունների ընդունումը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ հանգեցնում է անձի իրավական վիճակի վատթարացման՝ մասնավորապես, նշելով. «(...) **պետական իշխանության նկատմամբ վստահության վրա հիմնված տնտեսական գործունեություն մեկնարկած սուբյեկտներն ունեցել են լեգիտիմ ակնկալիք այդ առնչությամբ, ուստի հետադարձ ուժի նման կարգով կիրառումը խաթարում է վերջիններիս սեփականության, տնտեսական գործունեության իրավունքները, ինչպես նաև փոփոխությունները տարածելով վերջիններիս նկատմամբ խախտվում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժ չունենալու վերաբերյալ սահմանադրական բացարձակ արգելքը»:**

Ըստ Դիմողի՝ անձին տրամադրված որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի սահմանափակումը ենթադրում է վարչարարական գործընթացների իրականացում, որոնց ընթացքում պետք է ապահովվի վարչական ակտի հասցեատիրոջ լաված լինելու իրավունքը: Մինչդեռ տվյալ պարագայում որևէ վարչարարական գործընթաց տեղի չի ունեցել՝ անձանց իրավունքների սահմանափակումը, բարենպաստ վարչական ակտի գործողության փաստացի դադարեցումը կատարվել է օրենսդրական փոփոխության արդյունքում, ինչն ուղղակիորեն հակասում է պատշաճ վարչարարության սահմանադրական սկզբունքն արտացոլող իրավական ակտերին այն պարագայում, երբ փոփոխություն նախատեսող իրավական ակտում անդրադարձ կատարված չէ դրա ընդունման արդյունքում վարչական ակտերի ուժը կորցրած ճանաչելուն: Դիմողը գտնում է, որ վերոնշյալի արդյունքում խախտվում են Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը և անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտի հետադարձ ուժի արգելքը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Անդրադառնալով Դիմողի պնդմանն առ այն, որ ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի մարտի 4-ի թիվ ՀՕ-45-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում սահմանափակվում է անձանց՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, ինչն, իր հերթին, հանգեցնում է սեփականության իրավունքի խախտման՝ Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող), վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի մի շարք

որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, նշում է. «(...) սույն գործով վիճարկվող իրավակարգավորմամբ ապահովված է պետական վերահսկելիության և իրավական տրամաբանության միասնականությունը, քանզի վիճարկվող դրույթով ամրագրված սեփականության իրավունքի սահմանափակման հիմքը բխում է պետության և հասարակության բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունից և հանդիսանում է հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռվածության ապահովման միջոց, որը ոչ միայն չի զիջում, այլ նաև գերակայում է Դիմողի կողմից մատնանշված տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության ամրագրված դրույթների հետապնդած նպատակին»:

««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի մարտի 4-ի թիվ ՀՕ-45-Ն օրենքով կատարված փոփոխությունների ու լրացման արդյունքում պատշաճ վարչարարության իրավունքի խախտման վերաբերյալ Դիմողի պնդման առնչությամբ Պատասխանողը նշում է. «(...) օրենքի ուժով միևնույն տեսակի լիցենզիա ստացած լիցենզավորված անձանց համար պետք է նախատեսվեն միանման պահանջներ և պայմաններ, ինչը նշանակում է նաև, որ եթե միևնույն տեսակի գործունեությամբ զբաղվող անձանց համար օրենքով նախատեսված են լինում որոշակի պահանջներ և պայմաններ, ապա օրենքի փոփոխության դեպքում նախկին պահանջների և պայմանների փոփոխումը վերաբերում է փոփոխությունից հետո տվյալ գործունեությամբ զբաղվող բոլոր անձանց, այդ թվում՝ մինչև փոփոխությունը լիցենզիա ստացած անձանց, ինչով էլ երաշխավորվում է նրանց իրավահավասարության սահմանադրական կանոնը, քանի որ հակառակ դեպքում կստեղծվի մի իրավիճակ, երբ մինչև փոփոխությունն անժամկետ լիցենզիա ստացած անձը կշարունակի գործել նախկին պահանջներով և պայմաններով, ինչը փոփոխությունից հետո լիցենզիա ստացած անձի համար կառաջացնի անորոշ ու անհավասար դրություն, որպիսի ոչ իրավաչափ վիճակից խուսափելու համար էլ օրենքով նախատեսվել են նշված հավասար պայմանները:

(...) լիցենզիայի պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է լիցենզավորված անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում միայն համապատասխան փոփոխությունը հրապարակելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո, ավելին՝ սահմանվել է, որ լիցենզավորման պայմանների ու պահանջների փոփոխության դեպքում նախկինում տրված լիցենզիաները պահպանում են իրենց իրավական ուժը, իսկ այդպիսի երաշխիքն էլ հնարավորություն է տալիս անձին իր լիցենզավորված գործունեությունն ըստ էության համապատասխանեցնել նոր պահանջներին և պայմաններին:

Այսպիսիով, հանգում ենք այն եզրակացությանը, որ վերոնշյալ իրավակարգավորումների դեպքում **անձի լաված լինելու իրավունքը չի խախտվում,**

և օրենքով սահմանված 6 ամիս ժամկետում անձի համար երաշխավորվում է վարչական մարմնի միջամտող անհատական ակտի դեմ արդյունավետ պաշտպանության ապահովման հնարավորությունը»:

Վիճարկվող իրավադրույթի հետադարձության հարցի առնչությամբ Պատասխանողը նշում է. «(...) հատկանշական է հիշատակել ՎԴ/6363/05/22 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, որտեղ Դատարանն անդրադարձել է այն հարցին, որ ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի մարտի 4-ի թիվ ՀՕ-45-Ն օրենքով **սահմանվել են նոր պահանջներ և պայմաններ**, որոնց էլ պետք է համապատասխանեն տվյալ տեսակի գործունեությունն իրականացնող բոլոր սուբյեկտները, և նաև նոր պահանջների և պայմանների ներդրման համար օրենքով երաշխավորվել է **անցումային փուլ**, այլ ոչ թե նոր պահանջներին և պայմաններին տրվել է հետադարձ ուժ»:

Վիճարկվող դրույթի որոշակիության հարցի առնչությամբ Պատասխանողը նշում է. «(...) կարծում ենք, որ վիճարկվող դրույթը որոշակի է, անձի համար կանխատեսելի է դարձնում իր իրավաչափ սպասելիքները (...):»

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթի սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ ներքոնշյալ հարցադրմանը՝

- արդյոք վիճարկվող իրավակարգավորմամբ ախտաբանաանատոմիական դիախերոմներ իրականացնելու համար լիցենզիա ստացած անձանց Սահմանադրությամբ երաշխավորված տնտեսական գործունեության ազատության, ինչպես նաև սեփականության իրավունքի սահմանափակումը համապատասխանում է հիմնական իրավունքին /ազատությանն իրավաչափ միջամտության սահմանադրաիրավական չափանիշներին:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող օրինադրույթի սահմանադրականությունը գնահատել, մասնավորապես, Սահմանադրության 59-60-րդ հոդվածներին, ինչպես նաև 78-րդ հոդվածին համապատասխանության առումով:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման սահմանադրաիրավական հիմքերն ամրագրված են ինչպես Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին, այնպես էլ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլուխներում:

Սահմանադրության՝ «Տնտեսական կարգը» վերտառությամբ 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Սահմանադրության՝ «Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը» վերտառությամբ 59-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են»:

Տնտեսական կարգը յուրաքանչյուր պետության զարգացման երաշխիքն է, ինչպես նաև հասարակության և անձի կայուն ու արդյունավետ գործունեության նախադրյալը:

Սահմանադրության 59-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցությունը դիտարկվում են միասնության մեջ, այսինքն՝ հնարավորություն ընձեռելով իրականացնելու տնտեսական գործունեություն՝ պետությունը, միևնույն ժամանակ, պետք է երաշխավորի տնտեսական մրցակցությունը: Պետության տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի բոլոր տնտեսավարողների համար ոչ միայն անհրաժեշտ և հավասար պայմաններ ապահովելուն, որպեսզի յուրաքանչյուրն ազատորեն, առանց խոչընդոտների իրականացնի տնտեսական գործունեություն, այլև տնտեսական գործունեությանը բնորոշ առողջ մրցակցություն երաշխավորելուն՝ բացառելով շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնությունները:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է տնտեսական գործունեության ազատությանը:

Սահմանադրական դատարանի՝ 1999 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-152 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Ազատ տնտեսական մրցակցության սկզբունքն իր հերթին բխում է տնտեսական ազատության և հավասարության սկզբունքներից և նշանակում է շուկայական տնտեսության

ներսում բոլոր տնտեսավարող սուբյեկտների հավասարություն, պետության կողմից նրանց համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության դրույթների, սահմանադրականության միջազգային սկզբունքների վերլուծությունը վկայում է, որ ազատ տնտեսական մրցակցությունը չի բացառում պետության ու հասարակության անվտանգության և օրինական շահերի, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով պետության կողմից արգելված, պետական լիցենզավորման ենթակա, բնական կամ պետական մենաշնորհ հանդիսացող կամ բացառիկ իրավունքներով կարգավորվող գործունեության տեսակների առկայությունը:

Նման ոլորտների հստակեցումը, տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները սակայն կանոնակարգվում են Սահմանադրությամբ և օրենքներով՝ ապահովելու համար նաև հակամենաշնորհային այնպիսի քաղաքականության իրականացում, որը երաշխավորում է բարեխիղճ մրցակցություն և տնտեսական ու սոցիալական առաջընթաց»:

Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցությունը պետության զարգացման կարևոր նախապայմաններն ու անկյունաքարերն են՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուրին՝ ազատ, բարեխիղճ, հավասար և մրցակցային պայմաններում իրականացնելու տնտեսական գործունեություն:

4.2. Տնտեսական գործունեության ազատությունը սերտորեն փոխկապակցված է սեփականության իրավունքի հետ և ուղղակիորեն առնչվում է յուրաքանչյուրի սեփականության սահմանադրական իրավունքին:

Տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման ու սեփականության իրավունքի փոխկապակցվածությունը դրսևորվում է նրանում, որ ազատ տնտեսական գործունեության և տնտեսական մրցակցության արդյունքում սեփականության ծավալն ավելացնելու նոր նախադրյալներ են ստեղծվում, ինչն, իր հերթին, իրական հնարավորություն է ընձեռում նաև ազատ տնտեսական գործունեության շրջանակն ընդլայնելու համար:

Սահմանադրության՝ «Սեփականության երաշխավորումը» վերտառությամբ 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության՝ «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

(...)»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է սեփականության իրավունքին, մասնավորապես՝ նշելով.

- «(...) սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը**: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն**:

(...)

(...) ՀՀ Սահմանադրությունը թույլատրում է բացառապես երկու դեպք, այն է՝ 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերը, երբ սեփականատիրոջ կամքն առաջնային չէ, և սեփականության իրավունքի իրացումը չի բխում սեփականատիրոջ հայեցողությունից: Հետևաբար, ցանկացած այլ դեպքում սեփականության իրավունքի իրացման գործընթացում միջամտությունը սեփականատիրոջ հայեցողությանը, սեփականատիրոջ գույքի տնօրինումն առանց այդ հայեցողության հստակ արտահայտման և դրսևորման չի կարող համարվել իրավաչափ և կհանդիսանա սեփականության իրավունքի խախտում» (2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշում),

- «(...) Սեփականության իրավունքը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև՝

որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն: Այն միջազգային իրավական ամրագրում է ստացել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 17-րդ), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունում, որի 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով (...)) (2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշում),

- «(...) ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք» (2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշում):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (“Trgo v. Croatia”, Application no. 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, § 44):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «գույքը» կարող է լինել «գոյություն ունեցող սեփականությունը» կամ «ակտիվները», ներառյալ՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է վիճարկել, որ առնվազն ունի սեփականության իրավունքից անարգել օգտվելուց «իրավաչափ ակնկալիք» (“J. A. Pye (Oxford) Ltd and J. A. Pye (Oxford) Land Ltd v. United Kingdom”, Application no. 44302/02, 30.08.2007, § 61):

«Ակնկալիքը» համարվում է իրավաչափ, եթե այն հիմնված է օրենսդրական դրույթի կամ քննարկվող գույքի վերաբերյալ իրավական ակտի վրա (“Saghinadze and others v. Georgia”, Application no. 18768/05, 27.05.2010, Final 27.08.2010, § 103):

Գործարարական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզիան թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք է. այն ուժը կորցրած ճանաչելը ենթադրում է նշված հոդվածով երաշխավորված իրավունքին միջամտություն (“Bimer S. A. v. Moldova”, Application no. 15084/03, 10.07.2007, Final 10.10.2007, § 49):

Միաժամանակ, հարկ է նշել, որ սեփականության իրավունքը ենթակա է սահմանափակման, և այդ առնչությամբ նախանշված են այն նպատակները, որոնց առկայության պարագայում նշված իրավունքին միջամտությունը կարող է լինել իրավաչափ:

4.3. Սահմանադրական դատարանը սույն սահմանադրաիրավական վեճի լուծման համար կարևոր է համարում անդրադառնալ ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու նպատակով լիցենզիա ստացած անձանց համապատասխան գործունեության իրականացմանը միջամտության հիմնախնդրին՝ տնտեսական գործունեության ազատության, ինչպես նաև սեփականության իրավունքի համատեքստում:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» օրենքով:

«Լիցենզավորման մասին» օրենքի 3-րդ հոդվածը բացահայտում է այդ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների բովանդակությունը. ըստ այդմ՝ լիցենզիան լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվությունն է, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթը:

Տնտեսական գործունեության առանձին տեսակների համար պետությունը, ելնելով **անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիք պարունակող գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակից**, սահմանել է տվյալ գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն: Այլ կերպ՝ պետության կողմից որոշակի տեսակի գործունեության լիցենզավորումն ինքնանպատակ չէ, այլ իրականացվում է ի պաշտպանություն հանրային շահերի, որոնք կարող են վտանգվել տնտեսվարողների գործունեության արդյունքում:

«Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածին համապատասխան՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակում ներառված է առողջապահության բնագավառը, որում, ի թիվս այլնի, նշված է **բժշկական օգնության և սպասարկման իրականացումը**:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման ոլորտն ուղղված է յուրաքանչյուրի կյանքի և առողջության պահպանմանն ու բարելավմանը: Այլ կերպ՝ տվյալ ոլորտում ցանկացած գործունեություն իր բնույթով առանձնակի կարևոր և պատասխանատու է՝ ապահովելու ինչպես հանրության, այնպես էլ յուրաքանչյուրի առողջության պահպանությունը՝ որպես Սահմանադրության 85-րդ հոդվածով ամրագրված երաշխիք, ինչն էլ բխում է սոցիալական պետության բովանդակությունից:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՆԵԿՆԻԿԻ ◆ 2(110)2023

Մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, կանխարգելման, իրավական, տնտեսական և ֆինանսական հարցերը, ինչպես նաև բժշկական արտադրատեսակների շրջանառության հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենքով: Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ախտաբանաանատոմիական գործունեությունը բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որն իրականացվում է ձևաբանական հետազոտությունների և ախտաբանաանատոմիական դիախերծումների միջոցով: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները մատուցում են համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, և դրանք դասակարգվում են ըստ բժշկական օգնության և սպասարկման տեսակների, պայմանների և ձևերի:

Կառավարության՝ 2008 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» N-276-Ն որոշմամբ բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկում, ի թիվս այլնի, սահմանվել է ախտաբանաանատոմիական գործունեությունը:

Կառավարության՝ 2021 թվականի ապրիլի 8-ի «Ախտաբանաանատոմիական դիախերծումների անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1082-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 1212-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 519-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ ախտաբանաանատոմիական դիախերծումները կատարվում են բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի լիցենզիա ունեցող հաստատությունում՝ «ախտաբանական անատոմիա և կլինիկական մորֆոլոգիա» մասնագիտությամբ համապատասխան մասնագետի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և հավելվածով սահմանված ախտաբանաանատոմիական դիախերծումների անցկացման կարգին համապատասխան:

Այսպիսով, ախտաբանաանատոմիական դիախերծումն ախտաբանաանատոմիական գործունեության իրականացման ձևերից է, իսկ այդ գործունեությունը բժշկական օգնության և սպասարկման տեսակ է: Ախտաբանաանատոմիական դիախերծումը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է, այսինքն՝ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդիրը նախատեսել է իրավասու մարմնի կողմից տրված պաշտոնական թույլտվություն ունենալու պարտադիր պահանջ:

Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի նախկին խմբագրության բովանդակային վերլուծությունից բխում էր, որ այն սահմանում էր միայն ախտաբանաանատոմիական դիախերծումների նպատակը, այն է՝ դրանք

իրականացվում են հիվանդությունների հետմահու ախտորոշման և մահվան պատճառը որոշելու նպատակով: Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի գործող (վիճարկվող) խմբագրությամբ սահմանված են ոչ միայն ախտաբանաանատոմիական դիախերձումների նպատակը, այլև *ախտաբանաանատոմիական դիախերձումներ* իրականացնելու պայմանները, այն է՝ դրանք *կարող են իրականացվել միայն հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպություններում:*

Սույն սահմանադրաիրավական վեճը քննելիս Սահմանադրական դատարանը կարևորում է «հիվանդանոցային» և «արտահիվանդանոցային» պայմանների առանձնահատկությունների բացահայտումը:

Այսպես, Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում են հետևյալ պայմաններում.

1) բժշկական կազմակերպությունից դուրս (շտապօգնության կանչի վայրում, ներառյալ՝ մասնագիտացված շտապօգնությունը, ինչպես նաև բժշկական տարհանման ժամանակ՝ տրանսպորտում),

2) արտահիվանդանոցային պայմաններում՝ շուրջօրյա բժշկական հսկողություն և բուժում չպահանջող դեպքերում (ներառյալ՝ տնային կանչը),

3) ցերեկային ստացիոնարի պայմաններում (ցերեկային ժամերին բժշկական հսկողություն և բուժում ապահովելու պայմաններով, որոնք չեն պահանջում շուրջօրյա բժշկական հսկողություն և բուժում),

4) հիվանդանոցային, երբ անհրաժեշտ են շուրջօրյա բժշկական հսկողություն և բուժում:

Օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը, ինչպես նաև հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մակարդակների սահմանման և տրամադրման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

Առողջապահության նախարարի՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ի «Արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մակարդակների սահմանման և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 93-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետով սահմանված է, որ *արտահիվանդանոցային պայմաններում* բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է բժշկական օգնության այն տեսակները, որոնց իրականացումը չի պահանջում շուրջօրյա բժշկական հսկողություն և բուժում (այդ թվում՝ տնային կանչը) և ընդգրկում է կանխարգելիչ, ախտորոշիչ, բուժական և վերականգնողական միջոցառումներ, իսկ հիշյալ հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ *հիվանդանոցային պայմաններում*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ 2(110)2023

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունները բժշկական հաստատություններն են, որտեղ բնակչությանը տրամադրվում է մասնագիտացված բժշկական օգնություն՝ կիրառելով համալիր բժշկական միջոցառումներ, մասնավորապես, ախտորոշում, բուժում, շտրջօրյա բժշկական հսկողություն և հատուկ խնամք:

Վերոնշյալ իրավակարգավորումների համատեքստում, հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում բնակչության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելուն ներկայացվող օրենսդրական պահանջները տարբեր են, և դրանցից յուրաքանչյուրն ունի որոշակի առանձնահատկություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ախտաբանաանատոմիական դիա- հերծումներն իրականացվում են հիվանդությունների **հետմահու ախտորոշման և մահվան պատճառը որոշելու նպատակով**՝ նշված գործունեության իրականացման որակական չափանիշի համապատասխանության դեպքում միայն հնարավոր կլինի հասնել հիվանդությունների **հետմահու ախտորոշմանը և մահվան պատճառի որոշմանը**, ինչն էլ, իր հերթին, կնպաստի հիվանդությունների կանխարգելմանն ուղղված առողջապահական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Ընդ որում՝ այդ գործունեության իրականացումն առանձնակի կարևորվում է քրեական գործերով վարույթի ընթացքում՝ նպաստելով հանցագործությունների բացահայտմանը:

Ախտաբանաանատոմիական դիախերծումներ իրականացնելու ոլորտում արդյունավետ վերահսկողական գործիքակազմի առկայությունը վերոնշյալ նպատակի լիարժեք իրացման երաշխիք է:

Գործող իրավակարգավորումներով սահմանված պահանջի լույսի ներքո ախտաբանաանատոմիական դիախերծումներ իրականացնելու համար լիցենզավորված անձինք, որոնք տվյալ տեսակի գործունեությունը մինչև Օրենքի վիճարկվող իրավակարգավորման ուժի մեջ մտնելն իրականացրել են հիվանդանոցային պայմաններից դուրս, այսինքն՝ արտահիվանդանոցային պայմաններում, Օրենքի վիճարկվող իրավակարգավորման ուժի մեջ մտնելուց հետո իրենց գործունեությունը պետք է համապատասխանեցնեն գործող իրավակարգավորումներին. հակառակ դեպքում՝ համապատասխան գործունեություն իրականացնելու համար լիցենզավորված անձինք չեն կարողանա իրականացնել ախտաբանաանատոմիական դիախերծումներ՝ արտահիվանդանոցային պայմաններում:

Վերոնշյալից բխում է, որ առկա է միջամտություն ախտաբանաանատոմիական դիախերծումներ իրականացնելու համար լիցենզիա ստացած անձանց տնտեսական գործունեության ազատությանը, ինչպես նաև սեփականության իրավունքին:

Ի պատասխան սույն գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավորի՝ Առողջապահության նախարարին հասցեագրված 2023 թվականի փետրվարի 8-ի ՍԴԴ-14 և մարտի 27-ի ՍԴԴ-23 գրությունների՝ 2023 թվականի փետրվարի 15-ին և ապրիլի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված գրություններում նշված է. «(...) ախտաբանաանատոմիական տեսակով գործունեություն կարող է իրականացվել այն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից, որոնք այլ տեսակով (և կամ տեսակներով) իրականացնում են բժշկական օգնություն և սպասարկում հիվանդանոցային պայմաններում»:

4.4. Ախտաբանաանատոմիական դիախեռծումներ իրականացնելու համար լիցենզիա ստացած անձանց տնտեսական գործունեության ազատությանը, ինչպես նաև սեփականության իրավունքին միջամտության սահմանադրականության հարցը ենթակա է բացահայտման և գնահատման՝ իրավունքին միջամտության իրավաչափության ստուգման թեստի շրջանակներում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Սահմանադրական դատարանն իրենց ակտերում զարգացրել և բազմիցս կիրառել են **իրավունքին/ազատությանը միջամտության իրավաչափության ստուգման** թեստը: Այն պահանջում է ցանկացած միջամտություն գնահատել հետևյալ չափանիշների համատեքստում.

- 1) արդյո՞ք միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) արդյո՞ք այն հետապնդում է իրավաչափ նպատակ,
- 3) արդյո՞ք ընտրված միջոցը բավարար և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար:

4.4.1. Միջամտությունն օրենքով նախատեսված լինելու հանգամանքի գնահատման առումով հիմնական իրավունքին/ազատությանը միջամտությունը նախատեսված է ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի մարտի 4-ի թիվ ՀՕ-45-Ն օրենքով, այսինքն՝ միջամտությունը **նախատեսված է օրենքով:**

4.4.1.1. Այդ համատեքստում կարևորվում է վիճարկվող իրավակարգավորման՝ **իրավական որոշակիության** սահմանադրաիրավական սկզբունքին համապատասխանության գնահատման հարցը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողներն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է **իրավական որոշակիության** սկզբունքին՝ մասնավորապես, նշելով.

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը» (2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ-753 որոշում),

- «(...) իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները» (2014 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1148 որոշում),

- «(...) իրավական որոշակիության սկզբունքի ապահովման առումով ընդհանուր տրամաբանությունն հանգում է այն գաղափարին, որ թեև իրավական որոշակիությունն անհրաժեշտ է, այնուամենայնիվ, այդ սկզբունքը չի բացառում իրավական ակտերում այնպիսի ձևակերպումների կամ եզրույթների առկայությունը, որոնք գնահատողական բնույթ ունեն և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առավել հստակեցվում են իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում» (2021 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-1592 որոշում):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի» գործով վճռում, մասնավորապես, նշել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն ընձեռի կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամտորեն կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունն առավել ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար՝ բազմաթիվ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է (“Case of Busuio v. Moldova”, Application no. 61513/00, 21.12.2004, Final 21.03.2005, § 52):

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է. վիճարկվող կարգավորումը բավարար չափով որոշակի է, և համապատասխան իրավահարաբերության սուբյեկտը լիարժեք կարող է կանխատեսել վիճարկվող կարգավորման պահանջները չկատարելու իրավական հետևանքները, ըմբռնել իրենից ակնկալվող վարքագծի բնույթը և, ըստ այդմ՝ իր վարքագիծը համապատասխանեցնել օրենսդրական գործող (նոր) պահանջներին: Լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացնելիս լիցենզավորված անձինք պարտավոր են պահպանել տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պայմանները և պահանջները: Օրենքի գործող (նոր) իրավակարգավորմամբ սահմանված են ախտաբանաանատոմիական դիախերճումներ իրականացնելու նոր պայմաններ և պահանջներ, ինչից բխում է, որ ախտաբանաանատոմիական դիախերճումներ իրականացնելու համար նախկին իրավակարգավորումներով սահմանված պայմաններին և պահանջներին համապատասխան լիցենզիա ստացած անձինք իրենց վարքագիծը պետք է համապատասխանեցնեն գործող (նոր) կարգավորումներին:

4.4.1.2. Սահմանադրության՝ «Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը» վերտառությամբ 73-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:»

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի՝ «Նորմատիվ իրավական ակտերի գործողությունը ժամանակի մեջ» վերտառությամբ 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի **հետադարձ ուժի արգելքի** սահմանադրաիրավական խնդրի առնչությամբ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1437 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000, ՍԴՈ-1061, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1224, ՍԴՈ-1326), անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սահմանադրաիրավական խնդրին, արտահայտել է իրավական դիրքորոշումներ, համաձայն որոնց՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը.

- պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է,
- իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեզիտիմ ակնկալիքների հանդեպ,
- ընդհանուր կանոն է, իսկ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից, ինչը բխում է մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից,
- իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է, միաժամանակ, այդ սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա, ինչը կհակասեր նաև մի շարք միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին»:

Վերոնշյալի լույսի ներքո, անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքն իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ և երաշխիք է, ինչպես նաև իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման, հանրային իշխանության նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված պահանջ:

«Լիցենզավորման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լիցենզիայի պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է լիցենզավորված անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում համապատասխան փոփոխությունը հրապարակելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո: Նույն օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ լիցենզավորման պայմանների ու պահանջների փոփոխության դեպքում նախկինում տրված լիցենզիաները պահպանում են իրենց իրավական ուժը՝ նշված օրենքով նախատեսված ժամկետներով:

««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի մարտի 4-ի թիվ ՀՕ-45-Ն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու նոր պայմանները և պահանջներն ուժի մեջ են մտել նշված օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից վեց ամիս հետո:

Վերոնշյալ, ինչպես նաև Օրենքի համապատասխան իրավակարգավորումների (նախկին և գործող խմբագրություններով) համեմատական վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանը փաստում է, որ պետությունը, ելնելով ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողություն

ապահովելու անհրաժեշտությունից, նոր իրավակարգավորումներով փոփոխել է ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու պայմանները և պահանջները (սահմանել նոր պայմաններ և պահանջներ): Տնտեսվարող սուբյեկտներին համապատասխան գործունեություն իրականացնելու համար նախկին իրավակարգավորման գործողության պայմաններում տրված լիցենզիաները շարունակել են գործել: Օրենսդիրն առանձին (ըստ էության՝ անցումային) կարգավորման միջոցով արդեն իսկ լիցենզիա ունեցող անձանց համար նախատեսել է նոր իրավակարգավորումների ուժի մեջ մտնելու վեցամսյա ժամկետ, որպեսզի տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն ունենան իրենց վարքագիծը համապատասխանեցնել նոր պայմաններին և պահանջներին:

Ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու համար լիցենզիա ստացած անձինք նոր իրավակարգավորումներով առաջադրված նոր պայմաններն ու պահանջները՝ դրանք իրենց համար վատթարացնող լինելու փաստարկով պայմանավորված, իրենց նկատմամբ չկիրառելու ակնկալիք ունենալ չեն կարող, քանզի օրենսդիրը խնդրո առարկա իրավահարաբերությունների բովանդակությանը ներկայացվող նոր պայմաններ ու պահանջներ է առաջադրել, որոնք տարածվում են նաև բոլոր այն անձանց վրա, որոնք մինչ այդ արդեն իսկ հանդիսացել են տվյալ իրավահարաբերության սուբյեկտներ: Դա նշանակում է, որ օրենսդրական նոր կարգավորումները հավասարապես վերաբերում են ինչպես ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու մտադրություն ունեցող, այնպես էլ մինչ այդ կարգավորումներն այդպիսի գործունեություն ծավալած և այն շարունակելու ցանկություն ունեցող սուբյեկտներին:

Այս համատեքստում անդրադառնալով Դիմողի այն դիրքորոշմանը, որ վիճարկվող իրավակարգավորումը կարող է դիտարկվել որպես Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված խտրականության արգելքի սկզբունքի խախտում՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ միևնույն տեսակի լիցենզիա ստացած լիցենզավորված անձանց համար պետք է նախատեսվեն միանման պահանջներ և պայմաններ: Տվյալ դեպքում Օրենքի 41-րդ հոդվածում կատարված փոփոխության արդյունքում ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու համար սահմանվել են նոր պայմաններ և պահանջներ, որոնք պետք է հավասարապես վերաբերելի լինեն ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնող բոլոր սուբյեկտներին:

Առողջապահության նախարարի 2012 թվականի հուլիսի 31-ի N 11-Ն հրամանով հաստատվել են «Ախտաբանաանատոմիական բաժանմունքների, հյուսվածքաբանական լաբորատորիաների տեղակայմանը, կառուցվածքին, ներքին հարդարմանը, գույքի և սարքավորումների շահագործմանը,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԵԿԻ ◆ 2(110)2023

միկրոկլիմային, օդափոխանակությանը, ջրամատակարարմանը և ջրահեռացմանը, սանիտարահակահամաճարակային ռեժիմին ներկայացվող պահանջներ» N 2-III-3.3.1.-026-12 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը:

Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշման 12-րդ հավելվածով սահմանված են ախտաբանաանատոմիական բժշկական օգնության և սպասարկման տեսակի գործունեության համար արտահիվանդանոցային պայմաններում անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները, իսկ 13-րդ հավելվածով՝ հիվանդանոցային պայմանների համար:

Այդ առնչությամբ Առողջապահության նախարարությունից 2023 թվականի ապրիլի 4-ին մուտքագրված պատասխան գրության մեջ նշված է. «(...) բժշկական օգնության և սպասարկման հիվանդանոցային և արտահիվանդանոցային ախտաբանաանատոմիական տեսակով գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքային, տեխնիկական և մասնագիտական որակավորման պայման-պահանջները սահմանված են ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման, համապատասխանաբար, 12-րդ հավելվածի 13-րդ և 13-րդ հավելվածի 84-րդ կետերով, որոնց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քննարկվող պայմաններում ախտաբանաանատոմիական տեսակով գործունեության իրականացման համար գույքային և տեխնիկական հագեցվածության պահանջների տարբերություններ առկա չեն: Ինչ վերաբերում է մասնագիտական որակավորման պահանջներին, ապա արտահիվանդանոցային պայմաններում նշված տեսակով գործունեության իրականացման համար անհրաժեշտ է մեկ ավագ բուժաշխատող համապատասխան հետբուհական մասնագիտացմամբ՝ ախտաբանական անատոմիա և կլինիկական մորֆոլոգիա և միջին բուժաշխատող, իսկ հիվանդանոցային պայմանի դեպքում՝ 4 ավագ բուժաշխատող և 4 միջին բուժաշխատող՝ հերթապահության սկզբունքի պահպանման համար»:

Սահմանադրության՝ «Խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ

սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Սահմանադրության 29-րդ հոդվածում թվարկված են խտրականության սահմանադրական արգելքով պաշտպանված հիմքերը, որոնք ունեն հստակ և որոշակի բովանդակություն, բացառությամբ նույն հոդվածում պաշտպանվող հիմքերի թվարկման համար օգտագործված «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպման, որոնք, ի տարբերություն պաշտպանվող հիմքերի մնացած մասի, բաց ցանկ են նախատեսում:

Այնուամենայնիվ, թեպետ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպումը խտրականության արգելքով պաշտպանվող բաց ցանկ է նախատեսում, այն խիստ որոշակիորեն սահմանում է այդ ցանկով հնարավոր հիմքերի բնույթը, որոնցից որևէ մեկը Սահմանադրության 29-րդ հոդվածով պաշտպանվող հիմք հանդիսանալու համար պետք է լինի «անձնական» կամ «սոցիալական» բնույթի:

Վերոնշյալի համատեքստում Դիմողի կողմից սույն գործով ներկայացված չէ որևէ հիմնավորում առ այն, որ համապատասխան սուբյեկտների նկատմամբ տարբերակված վերաբերմունքը դրսևորվել է Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկով կամ պայմանավորված է «անձնական» կամ «սոցիալական» բնույթի որևէ հանգամանքով: Սահմանադրական դատարանը նույնպես չի նկատում սույն գործով Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված՝ խտրականության սահմանադրական արգելքով պաշտպանված որևէ հիմք. հետևաբար՝ առանց անդրադառնալու խտրականության արգելքի մյուս պայմանների առկայությանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող նորմերի՝ Սահմանադրության 29-րդ հոդվածին հակասության հատկանիշներ առկա չեն:

4.4.2. Անդրադառնալով հիմնական իրավունքին/ազատությանը միջամտության իրավաչափության գնահատման հաջորդ տարրի՝ **իրավաչափ նպատակի** առկայության հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետության պարտականությունն է պահպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, որի լիարժեք կենսագործման համար անհրաժեշտ է ապահովել ազատ տնտեսական մրցակցություն, բարեխիղճ մրցակցության երաշխավորման համար անհրաժեշտ միջավայր, ինչպես նաև նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և ապահովել սպառողների շահերի պաշտպանությունը:

Սահմանադրության 59-րդ հոդվածով երաշխավորված տնտեսական գործունեության ազատության սահմանադրաիրավական նորմով ամրագրված է, որ յուրաքանչյուրի՝ տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Յուրաքանչյուր դեպքում սահմանադիրն օրենսդիրին է վերապահել համապատասխան իրավունքի իրականացման պայմանները

սահմանելը, որոնց շարքում, ի թիվս այլնի, կարելի է առանձնացնել առանձին տեսակի գործունեությամբ զբաղվելու լիցենզիաների տրամադրման կարգը, պայմաններն ու պահանջները:

Տնտեսական գործունեության ազատությունը **բացարձակ չէ**, քանզի Սահմանադրության 59-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ **հանրային շահերի** պաշտպանության նպատակով:

Նկատի առնելով տնտեսական գործունեության ազատության և սեփականության իրավունքի՝ բովանդակային առումով փոխկապակցված լինելու հանգամանքը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատության և սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակները:

Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 12-ի ՍԴԴ-1530 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանը համապատասխան՝ «(...) տնտեսական գործունեության ազատության հատուկ սահմանափակումները ամրագրված են Սահմանադրության 59-րդ հոդվածում, և այդ ազատության այլ սահմանափակումներ Սահմանադրությամբ ուղղակիորեն ամրագրված չեն, մինչդեռ տնտեսական գործունեության ազատությունը խարսխվում է սեփականության հիմնական իրավունքի վրա՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրա երեք իրավազորություններով հանդերձ, որը Սահմանադրության ուժով ենթակա է սահմանափակումների: Տնտեսական գործունեության ազատությունը սեփականության իրավունքի իրավազորություններից առնվազն որևէ մեկի իրականացման եղանակ է, ուստի այդ ազատությունը և սեփականության իրավունքը բովանդակային առումով փոխկապակցված են: Հետևապես՝ սեփականության իրավունքի՝ օրենքով նախատեսվող սահմանափակումները ներգործում են տնտեսական գործունեության ազատության վրա՝ *mutatis mutandis* հնարավոր դարձնելով այդ ազատության սահմանափակումները նաև Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված հիմքերով»:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ **հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով**:

Օրենսդիրը, սահմանելով համապատասխան իրավակարգավորումները, իրավաչափ նպատակ է ունեցել պաշտպանելու սահմանադրական այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են **անձի արժանապատվությունը, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը**: Այդ առնչությամբ, Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետու-

թյունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու *անօտարելի* արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Սահմանադրության 23-րդ հոդվածով ամրագրված է, որ մարդու արժանապատվությունն *անխախտելի է*:

Սահմանադրական դատարանը, իր մի շարք որոշումներում անդրադառնալով «արժանապատվություն» եզրույթին, մասնավորապես, նշել է.

- «Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Սահմանադրության 3 հոդվածի 1-ին մասում նշված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել» (2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշում),

- «Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն» (2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-913 որոշում),

- «Անձի արժանապատվության անխախտելիությունը, նրա պատվի և բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը վերաբերում են ոչ միայն մարդկային կյանքի ողջ ժամանակահատվածին, այլ պետությունը պարտավոր է ստեղծել նաև մահացած անձի պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտ իրավական երաշխիքներ» (2017 թվականի մարտի 21-ի ՍԴՈ-1358 որոշում):

Մարդու արժանապատվությունը բացարձակ պաշտպանության ենթակա սահմանադրական արժեք է, որից բխում է նաև յուրաքանչյուրի՝ Սահմանադրության 25-րդ հոդվածով ամրագրված ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, որի պաշտպանությունն այս համատեքստում

և իրավաչափ նպատակ է՝ այն հաշվառմամբ, որ Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:

Վերոնշյալի համատեքստում, Սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-913 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրված է. «Սահմանադրոեն երաշխավորված է նաև մարդու անձնական անձեռնմխելիության իրավունքը (ՀՀ Սահմ. 16-րդ հոդված), որի իրավական բովանդակությունից է բխում անձի նկատմամբ անօրինական ամեն տեսակ (...) ներգործության արգելքը՝ ինչպես մարդու կենդանության օրոք, այնպես էլ մահից հետո՝ նրա դիակի նկատմամբ, այդ արգելքին համարժեք իրավական պաշտպանություն ապահովելու առումով, որպես նաև մարդու արժանապատվության իրավունքի առանձնահատուկ դրսևորում: Այդ իրավունքն օրենքով ենթակա է երաշխավորված պաշտպանության նաև ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի» [համանման դրույթներ են բովանդակվում 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասում, 25-րդ հոդվածի 4-րդ մասում]:

Խնդրո առարկա հարցի համատեքստում տնտեսական գործունեության ազատության և սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներից է **հանրային շահը, մասնավորապես՝ հանցագործությունների բացահայտումը**, քանի որ ավտաբանասանատոմիական դիահերձումներն իրականացվում են հիվանդությունների հետմահու ավտորոշման և **մահվան պատճառը** որոշելու նպատակով, որը կարող է հանցագործության հետևանք լինել:

Ավտաբանասանատոմիական դիահերձումների՝ միայն հիվանդանոցային պայմաններում, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպություններում իրականացումը (լայն առումով՝ դիահերձարանների կենտրոնացումը) հետապնդում է **մահվան վրա հասնելու հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունավետ երաշխավորման նպատակ**: Նշյալ նպատակից ածանցվում է նաև հանգուցյալների իրավահաջորդների գույքային և ոչ գույքային իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, որոնց պատշաճ իրացումը պայմանավորված է իրավանախորդի մահվան հետևանքով համապատասխան իրավական հետևանքների առա-

ջացմամբ: Վերջիններիս իրավական և փաստացի բովանդակությունն ուղղակիորեն կախված է մահվան հանգամանքների ճշգրիտ և օբյեկտիվ որոշումից:

Վերոգրյալի լույսի ներքո օրենսդիրը, սահմանափակելով նախկին իրավակարգավորումների գործողության պայմաններում ախտաբանաատմական դիախերձումներ իրականացնելու համար լիցենզիա ստացած անձանց տնտեսական գործունեության ազատությունը և սեփականության իրավունքը, նպատակ է ունեցել նոր իրավակարգավորումներ սահմանելով՝ առավել վերահսկելի դարձնել նշված գործունեությունը՝ պայմանավորված ոլորտի առանձնահատկությամբ՝ հանրային շահի, մարդու արժանապատվության՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքի, մի շարք հիմնական իրավունքների պաշտպանությամբ:

4.4.3. Հիմնական իրավունքին/ազատությանը միջամտության իրավաչափության գնահատման հաջորդ տարրը՝ ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրված **միջոցի բավարարության և անհրաժեշտության** գնահատումն է՝ **համաչափության** սահմանադրաիրավական սկզբունքի համատեքստում:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է **համաչափության** սահմանադրաիրավական սկզբունքին՝ մասնավորապես, նշելով.

- «(...) օրենսդիրը, իրացնելով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու իր իրավասությունը, պետք է այնպիսի համամասնությամբ դա կատարի, որ ընտրված սահմանափակումը համահունչ լինի ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար» (2016 թվականի հուլիսի 12-ի ՍԴԴ-1293 որոշում),

- «Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների **սահմանափակումների սահմանափակումն է** մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական

պահանջների շարքում այն ունի *առանձնահատուկ կարևորություն*» (2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշում):

Ախտաբանաանատոմիական դիախերծումների՝ միայն հիվանդանոցային պայմաններում, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպություններում իրականացումն օրենսդրի կողմից ընտրված **պիտանի միջոց է**, քանի որ պետությանը հնարավորություն է ընձեռում ունենալ վերահսկողական գործիքակազմ իր համար առանձնահատուկ և վերահսկողություն պահանջող գործունեության իրականացման նկատմամբ՝ հնարավոր դարձնելով Սահմանադրությամբ նշված իրավաչափ նպատակների պաշտպանությանը հասնելը: Դրանով դյուրին է դառնում վերահսկողությունը պաթոլոգոանատոմիական ողջ գործընթացի նկատմամբ, այդ ոլորտում վարչարարությունը դառնում է միասնական՝ ձևավորելով առավել կանխատեսելի և թափանցիկ պրակտիկա:

Անդրադառնալով համաչափության սկզբունքի մյուս տարրին, այն է՝ սահմանադրորեն առկա իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրված միջոցի **անհրաժեշտության հարցին**՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարչապետի՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման հավելվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող՝ Կառավարությանը ենթակա մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ առողջապահության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից: Հիշյալ որոշման հավելվածի 11-րդ կետով սահմանված են տեսչական մարմնի լիազորությունները, այդ թվում՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքով նախատեսված՝ իր իրավասության սահմաններում վերահսկողության իրականացումը՝ բժշկական փաստաթղթերի լրացման, դրանց պահպանման, շրջանառության, *ինչպես նաև առողջապահության բնագավառում լիցենզիայի պայմանների և պահանջների նկատմամբ* (3-րդ ենթակետ): Այդ առնչությամբ 2023 թվականի փետրվարի 14-ին ՍԴԴ-16 գրությամբ սույն գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավորի կողմից հարցում է արվել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին՝ խնդրելով բացահայտել նշված տեսչական մարմնի կողմից առողջապահության բնագավառում լիցենզիայի պայմանների և պահանջների նկատմամբ վերահսկողության շրջանակներում իրականացվող միջոցառումների բնույթը և բովանդակությունը: Նշված գրությանն ի պատասխան՝ տեսչական մարմնից

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

հայտնել են, որ տեսչական մարմինը բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ուսումնասիրում է միայն բժշկական փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից ընտրված միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար նաև **անհրաժեշտ է**, քանի որ **տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողությունը սահմանափակվում է միայն լիցենզիայի պայմանների և պահանջների նկատմամբ վերահսկողությամբ, այսինքն՝ ըստ էության, որակական առումով վերահսկողություն չի իրականացվում, ինչը խնդրո առարկա գործունեության դեպքում պետք է ապահովված լինի պետության կողմից՝ որակապես պատշաճ վերահսկողական գործիքակազմով:**

Կառավարության՝ 2021 թվականի ապրիլի 8-ի «Ախտաբանաանատոմիական դիախերձումների անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1082-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 1212-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 519-Ն որոշմամբ ամրագրված են մի շարք կարգավորումներ, որոնք կոչված են նպաստելու մահվան պատճառ(ներ)ի ճշգրիտ որոշմանը: Մասնավորապես, Կառավարության հիշյալ որոշման հավելվածի 12-րդ կետին համապատասխան՝ դիախերձմանը կարող են մասնակցել մահացած պացիենտի բուժող բժիշկները, համապատասխան բաժնի վարիչը: Նույն որոշման հավելվածի 13-րդ կետով սահմանված է, որ ախտաբանաանատոմն անհրաժեշտության դեպքում կարող է բուժող բժիշկների հետ քննարկել դիախերձման և հյուսվածքաբանական (հիստոլոգիական) հետազոտության արդյունքները: Որոշման հավելվածի 18-րդ կետին համապատասխան՝ վերջնական ախտաբանաանատոմիական ախտորոշումը գրանցվում է հիվանդության (ծննդաբերության) պատմագրի մեջ: Որոշման հավելվածի 20-րդ կետով սահմանված է, որ վերջնական ախտաբանաանատոմիական ախտորոշման ձևակերպման համար, ըստ անհրաժեշտության, կարող են կատարվել այլ ձևաբանական հետազոտություններ: Որոշման հավելվածի 24-րդ կետի համաձայն՝ դիախերձումից հետո դիակի օրգաններից վերցված թաց արխիվը պահպանվում է դիախերձարանին կից լաբորատորիայում, համապատասխան պայմաններում, մեկ տարի ժամկետով:

Վերոնշյալը գործնականում հնարավոր է ապահովել առավելապես հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում:

Համաչափության սկզբունքի **համարժեքության** տարրի առնչությամբ, հարկ է նշել, որ ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու համար լիցենզիա ստացած անձանց տնտեսական գործունեության ազատությունը և սեփականության իրավունքը սահմանափակելն առավել

նվազ նշանակություն ունի, քան Սահմանադրությամբ ամրագրված այն հիմնարար արժեքները, որոնց պաշտպանության նպատակով իրականացվել են նշված սահմանափակումները:

Փոփոխելով ախտաբանաանատոմիական դիախերձումների գործունեության պայմաններն ու պահանջները և նման գործունեությունը պայմանավորելով, մասնավորապես, միայն հիվանդանոցային պայմաններում իրականացնելու հետ՝ օրենսդիրը նպատակ է ունեցել պաշտպանելու հանրային շահերը, այլոց իրավունքները և ազատությունները, մասնավորապես՝ յուրաքանչյուրի արժանապատվությունը, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիությունը: Այլ կերպ՝ օրենսդիրը լեզվատիմ նպատակի՝ հանրության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև ապահովել է արդարացի հավասարակշռություն:

Համաչափության սկզբունքի համարժեքության տարրի առումով, Սահմանադրական դատարանը, անդրադառնալով ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու օրենսդրական նոր կարգավորումների՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից վեց ամիս հետո ուժի մեջ մտնելու հարցին, գտնում է, որ այդ առնչությամբ օրենսդրի այսպիսի մոտեցումը բխել է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման՝ պետության պոզիտիվ պարտականությունից, որի նպատակն է եղել վեցամսյա ժամկետ սահմանելու միջոցով, մի կողմից՝ հնարավորինս մեղմել ախտաբանաանատոմիական դիախերձումներ իրականացնելու լիցենզիա ունեցողների համար առաջացող բացասական հետևանքները, մյուս կողմից՝ վերջիններիս հնարավորություն ընձեռել իրենց գործունեությունն համապատասխանեցնելու օրենսդրական նոր կարգավորումներին: Այդ համատեքստում, հաշվի առնելով նաև համապատասխան գործունեության տեսակը, դրա՝ լիցենզավորման ենթակա գործունեություն հանդիսանալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանված վեցամսյա ժամկետը բավարարում է համաչափության սկզբունքի համարժեքության տարրը:

Անդրադառնալով Դիմողի՝ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի իրացման առնչությամբ ներկայացրած փաստարկներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք իրենց ընդհանուր համակցության մեջ առավելապես վերաբերելի են ոչ թե Օրենքի վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությանը, այլ վարչարարության գործընթացի շրջանակներում անձի՝ լսված լինելու իրավունքի ենթադրյալ խախտմանը, որի գնահատումը դուրս է Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակից:

Միաժամանակ, ելնելով տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման հրամայականից՝ օրենսդրի խնդիրն է տնտեսական քաղաքականությանը վերաբերող օրենսդրական

կարգավորումներ նախատեսելիս կամ առկա կարգավորումներում այնպիսի փոփոխություններ կատարելիս, որոնք առնչվում են տնտեսվարողներին առաջադրվող պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությանը, որը միջամտում է անձի իրավունքներին /ազատություններին, որպես ուղենիշ ընդունել տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման այնպիսի գործիքակազմ նախատեսելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ օրենսդրական ժամկետների մասով, որոնք, փարատելով տնտեսական գործունեություն ծավալող անձանց համար իրենց կատարած ներդրումների արդարացման վերաբերյալ հնարավոր մտահոգությունները և ապահովելով որոշակի կանխատեսելիություն վերջիններիս համար, կլինեն հնարավորինս կշռադատված, իրավական առումով՝ հիմնավորված, տնտեսական առումով՝ արդյունավետ՝ ապահովելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը:


Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:
2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 ապրիլի 2023 թվականի
ՍԴՈ-1685



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 մայիսի 2023թ.

2(110)2023

ՏԵՂԵԿՎՈՐ ՎԵՐԱԿՐԻՍՏԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում ստորագրված «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2023 թվականի մարտի 9-ի N 298-Ա որոշմամբ հավանություն է տվել «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի մարտի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում՝ տնտեսական աճի աջակցման և Կողմերի փոխադարձ ու արտաքին առևտրատնտեսական կապերի ընդլայնման համար Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման նպատակով:

Համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև (այսուհետ՝ Կողմեր):

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից:

2. Համաձայնագրով հիմնադրվում է Եվրասիական վերաապահովագրական ընկերություն (ԵՎԸ) (այսուհետ՝ Ընկերություն), որը կոչված է աջակցելու Կողմերի միջև փոխադարձ առևտրի, ներդրումների ծավալների մեծացմանը, տնտեսական ինտեգրման զարգացմանը, ներդրումային գրավչության բարձրացմանը և երրորդ երկրների հետ Կողմերի առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը՝ Կողմերում ու երրորդ երկրներում ձեռնարկատիրական և (կամ) քաղաքական ռիսկերից արտահանման վարկերի (ներառյալ արտահանման աջակցության բոլոր ֆինանսական գործիքները), արտահանմանն ուղղված ֆինանսավորման և ներդրումների վերաապահովագրման ոլորտում գործունեության իրականացման միջոցով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ 2(110)2023

3. Համաձայնագրի անբաժանելի մաս է կազմում Ընկերության կանոնադրությունը, որով սահմանվում են վերջինիս՝ որպես միջազգային կազմակերպության, խնդիրները, գործառույթները, իրավական կարգավիճակի և ֆինանսական ապահովման առանձնահատկությունները, կառավարման մարմինների իրավասությունը, որոշումների ընդունման ընթացակարգը, ընկերության կանոնադրական կապիտալում հիմնադիր պետությունների մասնակցության մասնաբաժինները. ամրագրված է երրորդ երկրների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների անդամակցության, ինչպես նաև անդամակցության դադարեցման կարգը:

4. Ընկերությունը միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող միջազգային ֆինանսական կազմակերպություն է, ունի միջազգային իրավունակություն և իր իրավասության շրջանակներում իրավունք ունի կնքելու միջազգային պայմանագրեր:

Ընկերության մասնակիցներ կարող են լինել պետությունները և միջազգային ֆինանսական կազմակերպությունները՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

5.1. սեփական շահերի պաշտպանության համար Ընկերությանը վերապահել այն նույն դատավարական իրավունքները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված են իրավաբանական անձանց համար (կանոնադրության հոդված 3, կետ 1, ենթակետ «գ»),

5.2. որպես Ընկերության մասնակից՝ կրել Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկերը Հայաստանի Հանրապետությանը պատկանող մասնաբաժնի արժեքի սահմաններում (կանոնադրության հոդված 3, կետ 2),

5.3. երաշխավորել Ընկերության կառավարիչների խորհրդի (այսուհետ՝ կառավարիչների խորհուրդ) որոշմամբ՝ Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան մասնաճյուղեր և ներկայացուցչություններ բացելու իրավունքը՝ հաշվի առնելով Ընկերության՝ որպես միջազգային ֆինանսական կազմակերպության, կարգավիճակի առանձնահատկությունները, ինչպես նաև դուստր ընկերություններ և կազմակերպություններ հիմնադրելու իրավունքը (կանոնադրության հոդված 3, կետ 5),

5.4. որպես Ընկերության հիմնադիր՝ դրա մասնակից դառնալու համար, Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած 30 օրացուցային օրվանից ոչ ուշ իրականացնել Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության Հայաստանի Հանրապետության մասնաբաժնի սկզբնական վճարումը՝ մասնակցության մասնաբաժնի առնվազն 25 տոկոսի չափով, որը

Հայաստանի Հանրապետության համար սահմանված է կանոնադրության հավելվածին համապատասխան (կանոնադրության հոդված 4, կետ 2 և հոդված 6, կետ 1),

5.5. Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության մասնաբաժնի մնացած մասերը մարել ամեն տարի՝ 2 տարվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով, որոնցից առաջինը ենթակա է վճարման կանոնադրության 6-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան կատարված վճարումից հետո 12 ամսվանից ոչ ուշ (կանոնադրության հոդված 6, կետ 3),

5.6. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմնի կամ կազմակերպության կողմից մասնակցության մասնաբաժնի վճարումը կատարել անվանական արժեքով՝ ռուսական ռուբլով (կանոնադրության հոդված 6, կետեր 5 և 6),

5.7. կառավարիչների խորհրդում նշանակել կառավարության ղեկավարի տեղակալի մակարդակով 1 անդամ և դրա մասին պաշտոնական կարգով տեղեկացնել մյուս մասնակիցներին և Ընկերությանը (կանոնադրության հոդված 11, կետ 2, պարբերություն 1),

5.8. ձեռնպահ մնալ Ընկերության վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալների (եթե այդպիսիք կան), վարչության անդամների և աշխատակիցների կողմից իրենց պարտականությունների կատարման ժամանակ նրանցից որևէ մեկի վրա ճնշում գործադրելու ցանկացած փորձից (կանոնադրության հոդված 19, կետ 1, պարբերություններ 2 և 3),

5.9. Ընկերության կազմից դուրս գալու՝ Հայաստանի Հանրապետության մտադրության մասին կառավարիչների խորհրդին ծանուցման դեպքում Ընկերության գործունեությանը Հայաստանի Հանրապետության մասնակցությունը դադարեցնել Հայաստանի Հանրապետության և Ընկերության միջև հարաբերությունների կարգավորման ժամկետի և կարգի մասին համաձայնագրի կնքման օրվանից, սակայն կառավարիչների խորհրդի կողմից գրավոր ծանուցումն ստանալու օրվանից սկսած 6 ամսվանից ոչ ուշ (կանոնադրության հոդված 25, կետ 4),

5.10. իր նպատակների իրագործման և իր գործառույթների կատարման համար Ընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածքում շնորհել այնպիսի անձեռնմխելիություններ, առանձնաշնորհումներ և արտոնություններ, որոնք նախատեսված են կանոնադրության VI բաժնով և սահմանված են Ընկերության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրերին համապատասխան (կանոնադրության հոդված 30, կետ 1),

5.11. Ընկերությանը տալ անձեռնմխելիություն դատական հետապնդման ցանկացած ձևի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, որոնք Ընկերության լիազորությունների իրականացման հետևանք չեն կամ կապված չեն այդ լիազորությունների իրականացման հետ (կանոնադրության հոդված 30, կետ 2),

5.12. անկախ կանոնադրության 30-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ ոչ մի գործողություն չձեռնարկել և որևէ հայց չներկայացել Ընկերության դեմ, ինչպես նաև երաշխավորել այլ անձի, մարմնի և հաստատության կողմից այդպիսի գործողություններ չկատարելը, որոնք գործում կամ պահանջներ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության անունից (կանոնադրության հոդված 30, կետ 3),

5.13. երաշխավորել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ Ընկերության գույքի և ակտիվների անձեռնմխելիությունները խուզարկության, բռնագրավման, արգելանքի, ազգրավման, ունեզրկման կամ ազգրավման, կամ օտարման ցանկացած այլ ձևի նկատմամբ՝ նախքան Ընկերության առնչությամբ վերջնական դատական որոշում կայացնելը (կանոնադրության հոդված 30, կետ 4),

5.14. Ընկերության ամբողջ գույքը և ակտիվներն ազատել ցանկացած սահմանափակումից, կարգադրագրից և մորատորիումից (կանոնադրության հոդված 30, կետ 5),

5.15. երաշխավորել Ընկերությանը պատկանող կամ Ընկերության կողմից տիրապետվող արխիվների, գույքի, փաստաթղթերի, ինչպես նաև ցանկացած տեղեկատվության Հայաստանի Հանրապետության տարածքում անձեռնմխելիությունը (կանոնադրության հոդված 30, կետ 6),

5.16. Ընկերության պաշտոնական կապի համար Ընկերությանը տրամադրել այնպիսի բարենպաստ պայմաններ, որոնք չեն զիջում այն պայմաններին, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարությունը տրամադրում է ցանկացած այլ պետության, այդ թվում՝ դրա դիվանագիտական ներկայացուցչություններին, փոստային առաքումների, մալուխային հեռագրերի, հեռագրերի, ռադիոգրերի, հեռախոսից և կապի այլ միջոցներից օգտվելու առաջնահերթության, սակագների և դրույքաչափերի մասով, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների համար տեղեկությունների փոխանցման նպատակներով նվազեցված դրույքաչափերի կիրառման մասով (կանոնադրության հոդված 30, կետ 7),

5.17. Ընկերության կառավարիչների խորհրդի նախագահին և կառավարիչների խորհրդի անդամներին, տնօրենների խորհրդի նախագահին և տնօրենների խորհրդի անդամներին, վարչության նախագահին, վարչության նախագահի տեղակալներին (եթե այդպիսիք կան), վարչության անդամներին և աշխատակիցներին տալ ցանկացած ձևի անձեռնմխելիություններ, ծառայողական պարտականությունները կատարելիս, իրենց կողմից կատարված գործողությունների առնչությամբ դատական և վարչական հետապնդման նկատմամբ. վերոհիշյալը չի կիրառվում այդ անձանց գործողությունների, այդ թվում՝ ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով քաղաքացիների կյանքին և առողջությանը վնաս

պատճառելու համար քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման դեպքերում (կանոնադրության հոդված 30, կետ 8),

5.18. Ընկերությունը, դրա եկամուտները, գույքը և այլ ակտիվները, ինչպես նաև այն գործառնություններն ու գործարքները, որոնք Ընկերության կողմից Համաձայնագրին և կանոնադրությանը համապատասխան իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, ազատել հարկերից, վճարներից, տուրքերից և այլ վճարումներից՝ բացառությամբ այն վճարների, որոնք վճարներ են սպասարկման կոնկրետ տեսակների դիմաց (կանոնադրության հոդված 31, կետ 1),

5.19. հարկումից ազատել Ընկերության վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալների (եթե այդպիսիք կան), վարչության անդամների և աշխատակիցների աշխատավարձն ու վարձատրությունը (կանոնադրության հոդված 31, կետ 2, պարբերություն 1),

5.20. կանոնադրության 31-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետությունում որևէ հարկով չհարկել ոչ մի պարտավորություն կամ Ընկերության կողմից թողարկված ոչ մի արժեթուղթ, ինչպես նաև դրանց մասով շահաբաժինները կամ տոկոսները՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դրանց իրավատերը (կանոնադրության հոդված 31, կետ 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2022 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում ստորագրված «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

16 մայիսի 2023 թվականի
ՍԴՈ-1686

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1686 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2022 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում ստորագրված «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի մայիսի 16-ի ՍԴՈ-1686 որոշմամբ որոշել է, որ 2022 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում ստորագրված «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի մայիսի 16-ի ՍԴՈ-1686 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

◆ 2(110)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1686 որոշմամբ 2022 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում ստորագրված «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ

անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնն ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

դատարան կարող են ներկայացվել Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝

Էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է

Էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ պարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և

2(110)2023
 ՍԵՆԵԿԱԿԵԻ
 ՍՄՅՄՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության

մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված

Էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«16» մայիսի 2023թ.

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 2(110)2023



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱԶ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ
ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԿ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

30 մայիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ.
Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաս-
տանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Է. Հակոբյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի ապրի-
լի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու
զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական
զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրում

2(110)2023
ՏԵՂԵԿՎԵՐ
ՊԱՏԱՐԱՆ

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2023 թվականի մայիսի 11-ի N 696-Ա որոշմամբ հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի ապրիլի 4-ին՝ Համաձայնագրին կից Հավելվածում սահմանված ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր) աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

Ընդհանուր պայմանները («Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի՝ ՎԶԲ ֆինանսավորման, զարգացման քաղաքականության ֆինանսավորման ընդհանուր պայմանները») թվագրված 2018 թ. դեկտեմբերի 14-ով (վերանայվել է 2020 թ. օգոստոսի 1-ին, 2020 թ. դեկտեմբերի 21-ին, 2021 թ. ապրիլի 1-ին և 2022 թ. հունվարի 1-ին), ինչպես սահմանված է Համաձայնագրին կից հավելվածում, տարածվում են Համաձայնագրի նկատմամբ և դրա բաղկացուցիչ մասն են կազմում:

2. Ըստ Համաձայնագրի՝ Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկը համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը՝ մեկ առհանման տրանշով, տրամադրել ինսուսներկու միլիոն երեք հարյուր հազար եվրո (€92,300,000) գումար, որը ժամանակ առ ժամանակ կարող է փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (այսուհետ՝ Վարկ): Վարկի փակման ամսաթիվը 2024 թվականի մարտի 29-ն է:

Համաձայնագրին ունի երկու առդիր և մեկ հավելված, որոնք դրա անբաժան մասն են կազմում. Առդիր 1՝ «Ծրագրի գործողությունները, վարկային մի-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(110)2023 ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

ջոցների առկայությունը», Առդիր 2՝ «Պարտավորության մասով պարբերական մարումների ժամանակացույց», Հավելված՝ «Հիմնական հասկացությունները»:

3. Հաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

3.1. վճարել Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար սկզբնավճար (բաժին 2.02),

3.2. վճարել Վարկի չառհանված մնացորդի տարեկան մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար պարտավճար (բաժին 2.03),

3.3. յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին և դեկտեմբերի 15-ին վճարել տոկոսադրույքը, որը հավասար է Բազային դրույքաչափի և Փոփոխական սպրեդի գումարին կամ Փոխարկումից հետո կիրառելի հավանական այն դրույքաչափին, որը հաշվարկվում է Ընդհանուր պայմանների Բաժին 3.02-ի (ե) կետով նախատեսված կարգով (բաժիններ 2.04 և 2.06),

3.4. ընտրել Վարկի նկատմամբ դրույքաչափի ավտոմատ ֆիքսման փոխարկման կիրառումը. համապատասխանաբար, չսահմանափակելով Ընդհանուր պայմանների IV հոդվածի դրույթները, և եթե այլ բան չի ծանուցվել Բանկին Փոխարկման ուղեցույցի դրույթներին համապատասխան, Վարկի գումարի հաջորդական առհանումների նկատմամբ կիրառվող բազային տոկոսադրույքը, որն ընդհանուր վերցրած հավասար է կամ գերազանցում է իննսուն միլիոն եվրոն, փոխարկել նախնական Փոփոխական դրույքաչափը, որը հիմնված է Բազային դրույքաչափի և Փոփոխական սպրեդի վրա, որը փոխարկել Փոփոխական դրույքաչափի՝ հիմնված Ֆիքսված բազային դրույքաչափի և Փոփոխական սպրեդի վրա Ընդհանուր պայմանների IV հոդվածով և Փոխարկման ուղեցույցով նախատեսված կարգով՝ այդ գումարների լիարժեք մարման նպատակով (բաժին 2.05),

3.5. սկսած 2028 թվականի հունիսի 15-ից մինչև 2041 թվականի հունիսի 15-ը, յուրաքանչյուր տարի՝ հունիսի 15-ին և դեկտեմբերի 15-ին, մարել Վարկի մայր գումարը 3.57% հավասարաչափ չափաբաժիններով, իսկ վերջին մարումը՝ 2041 թվականի դեկտեմբերի 15-ին՝ վարկի 3.61%-ի չափով (բաժիններ 2.06 և 2.07, Առդիր 2),

3.6. չսահմանափակելով Ընդհանուր պայմանների Բաժին 5.05-ի դրույթները՝ անհապաղ Բանկ ներկայացնել Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ ողջամտության սահմաններում պահանջվող տեղեկություններ, որոնք վերաբերում են Համաձայնագրի II հոդվածի դրույթներին (բաժին 2.08),

3.7. հայտարարել Ծրագրի և դրա իրականացման մասով ՀՀ հանձնառության մասին և այդ նպատակով ու Ընդհանուր պայմանների Բաժին 5.05-ին համապատասխան՝ Բանկի պահանջով տեսակետներ փոխանակել ՀՀ մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի և Ծրագրի

իրականացման մասով գրանցած առաջընթացի վերաբերյալ (բաժին 3.01, կետ (ա)),

3.8. նախքան տեսակետների փոխանակումը Բանկի դիտարկմանն ու մեկնաբանմանը ներկայացնել Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն՝ Բանկի կողմից ողջամտության սահմաններում պահանջվող մանրամասնությամբ (բաժին 3.01, կետ (բ)),

3.9. չսահմանափակելով Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3.01 Բաժնի (ա) և (բ) կետերը՝ անհապաղ Բանկին տեղյակ պահել ցանկացած այնպիսի իրավիճակի մասին, որը կարող է էական անբարենպաստ ազդեցություն ունենալ Ծրագրի նպատակների վրա, կամ տեղյակ պահել Ծրագրի շրջանակներում ձեռնարկված ցանկացած գործողության, այդ թվում՝ Համաձայնագրի Առդիր 1-ի Բաժին 1-ում նշված գործողության մասին (բաժին 3.01, կետ (գ)),

3.10. Ծրագրի շրջանակներում իրականացնել կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության խթանում, շրջակա միջավայրի կառավարման համար կարգավորող շրջանակի բարելավում, հավասարության ամրապնդում և մարդկային կապիտալի զարգացման խթանում, հակակոռուպցիոն շրջանակի և արդարադատության ոլորտի արդյունավետության հզորացում (Առդիր 1, Բաժին I),

3.11. չկատարել առհանում Մեկ առհանման տրանշից, եթե Բանկին չբավարարեն Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող Ծրագիրը և Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի համարժեքությունը (Առդիր 1, Բաժին II, կետ (գ)),

3.12. վարկային հաշվից Վարկի առհանումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում Բանկին հաղորդել Ընդհանուր պայմանների Բաժին 2.03-ի (ա) կետում հիշատակված հաշվին ստացված կոնկրետ գումարը, այն հաշվի մանրամասները, որին փոխանցվելու է Վարկային միջոցներին համարժեք գումարը դրամով, ինչպես նաև արձանագրություն առ այն, որ համարժեք գումարը հաշվառվել է Վարկառուի բյուջետային կառավարման համակարգերում, և Ընդհանուր պայմանների Բաժին 2.03-ի (ա) կետում նշված հաշվին ստացականների և մասհանումների անդորրագրերը (Առդիր 1, Բաժին II, կետ (դ)):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Յ Ց**.

1. 2023 թվականի ապրիլի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջև

«Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

30 մայիսի 2023 թվականի
ՍԴՈ-1689

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱԶ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1689 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի ապրիլի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի մայիսի 30-ի ՍԴՈ-1689 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի ապրիլի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի մայիսի 30-ի ՍԴՈ-1689 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԾ ԴԱՏԱՐԱՆ 2(110)2023 ՏԵՂԵԿՎՈՐ

կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1689 որոշմամբ 2023 թվականի ապրիլի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապե-

տության և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում

կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում

ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և

2(110)2023
 ՍԵՆԵԿԻՍԿԻ ՊԱՏԱՐԱՆ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
 ◆ 2(110)2023

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սրահնալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շարկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«30» մայիսի 2023թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 2(110)2023 ՏԵՂԵԿՎԱԳԻՐ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ԱՅՆՔԱՆՈՎ,
ՈՐՔԱՆՈՎ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՉՀԵՌԱՆԱԼՈՒ
ՄԱՍԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ՝ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ԱՌԱՐԿԱ ԼԻՆԵԼԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

30 մայիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող)
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի,
Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,*

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Հայկ Մամիջանյանի ներկայացուցիչներ Ս. Պողոսյանի, Ա. Նավա-
սարդյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման
և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդ-
վածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայկ Մամիջանյանի
դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական

2(110)2023
ՏԵՂԵԿՎՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ այնքանով, որքանով չի նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

1998 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ նույն թվականի սեպտեմբերի 1-ին, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին՝ բացառությամբ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված (ՀՕ-306-Ն) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Օրենսգրքի 54-54.4-րդ գլուխների դրույթներն ուժը կորցրած չեն ճանաչվել:

Օրենսգրքի՝ «Շտաբնության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան» վերտառությամբ 290-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է.

«Շտաբնության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթը չի փոփոխվել և/կամ լրացվել:

Գործի քննության առիթը Հայկ Մամիջանյանի (այսուհետ՝ նաև դիմող) 2023 թվականի մարտի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2023 թվականի մայիսի 30-ի թիվ ՍԴԱՌ-52 աշխատակարգային որոշմամբ «Հայկ Մամիջանյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ այնքանով, որքանով չեն նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, կարճվել է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված դատական ակտերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Գործի համառոտ պատմությունը

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ թիվ 15971020 քրեական գործով մեղադրյալ Հ. Մամիջանյանի նկատմամբ կիրառված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժվել է:

Նշված որոշման դեմ Հ. Մամիջանյանի պաշտպանի բողոքը Երևան քաղաքի դատախազության դատախազի՝ 2021 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ մերժվել է:

2021 թվականի սեպտեմբերի 9-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է վերոնշյալ որոշումների դեմ Հ. Մամիջանյանի պաշտպանի բողոքը, որով խնդրել է որոշում կայացնել Հ. Մամիջանյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ բողոքը մերժվել է: Դատարանի որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Դատարանը փաստում է, որ չնայած չհեռանալու մասին ստորագրություն խափանման միջոցի կիրառման դեպքում մեղադրյալի այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու հնարավորությունը, այնուամենայնիվ գտնում է, որ վարույթն իրականացնող մարմինն է լիազորված ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ապահովել նախաքննության խնդիրների իրականացումը, այն է՝ բացահայտել քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած անձին, պարզել հանցանքի կատարման մեջ նրա մեղավորությունը, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի պատշաճ վարքագիծը, անհրաժեշտության դեպքում նաև նրա նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Մինչդեռ, դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողություն իրականացնելիս նման խնդիրներ չի հետապնդում:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողության առարկա դարձնելով Հայկ Մամիջանյանի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց ընտրելու մասին որոշումը, դուրս կգա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի շրջանակներից և փաստացի հսկողություն կիրականացնի նախնական քննության նկատմամբ:

Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած կարգավորման համաձայն, այսպես կոչված, հետագա դատական վերահսկողությունը քրեական դատավարության մինչդատական փուլերում չի սահմանափակվում, այսինքն՝ հետագա դատական «միջամտությունը» նախնական քննության, դատախազության, օպերատիվ-հետախուզական մարմինների գործունեությանը ոչնչով սահմանափակված չէ, այնուամենայնիվ, դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը փաստացի չի կարող վերածվել դատախազական հսկողությանը զուգահեռ մեկ այլ գործիքակազմի»:

Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ Հ. Մամիջանյանի պաշտպանի կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժվել է. թիվ ԵԴ/0753/11/21 գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 21-ի որոշման դեմ դիմող Հ. Մամիջանյանի ներկայացուցչի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է: Վճռաբեկ դատարանի որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Բողոքաբերի փաստարկների, սույն գործի նյութերի և Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշման պատճառաբանությունների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից չեն բերվել բավարար հիմնավորումներ, որ առերևույթ քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տալու հետևանքով կայացված դատական ակտը կարող էր խաթարել արդարադատության բուն էությունը»:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, այնքանով, որքանով չեն նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, հակասում են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75 և 80-րդ հոդվածներին, 81-րդ հոդվածի 1-ին մասին:

Մեջբերելով Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դիրքորոշումներ՝ դիմողը, մասնավորապես, գտնում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումն ինքնին հանգեցնում է վերջիններիս ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման, իսկ խափանման միջոցի կիրառումից անմիջապես հետո

դրանից բխող՝ վարույթն իրականացնող մարմինների պարտադիր կատարման ենթակա գործողությունների արդյունքում գործնականում սահմանափակվում է նաև այդ իրավունքի իրականացման փաստացի հնարավորությունը:

Դիմողի կարծիքով՝ անձը, որի նկատմամբ կիրառվել է որպես խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին, որը, իր կարծիքով, ապօրինի է, և ոչ իրավաչափորեն սահմանափակվում է իր ազատ տեղաշարժվելու իրավունքը, իրավունք ունի դիմելու դատարան՝ խնդրելով պարզել այդ խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը, իսկ դատարանի պարտականությունն է քննել համապատասխան բողոքը և այն հիմնավոր համարելու դեպքում որոշում կայացնել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Անդրադառնալով մինչդատական վարույթի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի որոշումների, գործողությունների և անգործության՝ հետաձգված բողոքարկման հնարավորության հարցին՝ դիմողը նշել է. «(...) քրեական դատավարության փուլային կառուցվածքն այնպիսին է, որ գործն առհասարակ կարող է չտեղափոխվել դատական քննության փուլ, այլ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ կարճվել, որպիսի պարագայում անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման դատական վերանայման հարցը կմնա առկախված: Միևնույն ժամանակ, եթե անգամ հետաձգված բողոքարկման հնարավորություն առկա լինի, ապա այդպիսի բողոքարկումն արդյունավետ չի կարող համարվել, քանի որ նույնիսկ բողոքի բավարարման դեպքում անձի խախտված իրավունքները և ազատությունները չեն կարող վերականգնվել ամբողջ ծավալով այն պատճառով, որ դատարանի որոշմամբ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացվելու է այդ պահի դրությամբ, այլ ոչ թե այդ որոշման կայացմանը նախորդող տևական ժամանակահատվածի համար: Ուստի, դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, մինչդատական վարույթն իրականացնող մարմինների՝ անձի իրավունքները սահմանափակող որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման նախատեսումը կհանգեցնի անձի դատական պաշտպանության իրավունքի անհամարժեք սահմանափակման:

Հետևաբար, մինչդատական վարույթում վարույթն իրականացնող մարմինների որոշումների, գործողությունների և անգործության հետևանքով անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման իրավաչափությունը դատական կարգով ստուգման կարող է ենթարկվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի շրջանակում»:

Դիմողը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԿԴ2/0009/11/19 գործով կայացրած որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, նշում է, որ Վճռաբեկ դատարանը

ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը չի դիտարկում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա՝ գտնելով, որ այդ խափանման միջոցի կիրառմամբ ինքնին չի սահմանափակվում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը: Մինչդեռ, ըստ Դիմողի՝ նման եզրահանգումը հակասում է ինչպես Սահմանադրական դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սույն դիմումով ներկայացված դիրքորոշումներին:

Դիմողը եզրահանգում է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությամբ և, ըստ այդմ, հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրենքների և այլ նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնությամբ օժտված լինելը, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ այնքանով, որքանով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա է դիտարկվում միայն այն պարագայում, երբ մեղադրյալն ունի իրական շահագրգռվածություն լքելու իր մշտական բնակության վայրը երկիրը կամ իրականում ձգտում է հեռանալ, սակայն վարույթն իրականացնող մարմնից չի ստանում թույլտվություն, հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 80-րդ հոդվածներին, 81-րդ հոդվածի 1-ին մասին»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև պատասխանող), մասնավորապես, նշում է. «(...) միայն նախաքննության մարմինն է լիազորված ինքնուրույն որոշելու քննության ընթացքն ու ուղղությունը, բացահայտելու քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած անձին, պարզելու հանցանքի կատարման մեջ նրա մեղավորությունը և ապահովելու վերջինիս պատշաճ վարքագիծը, անհրաժեշտության դեպքում նաև նրա նկատմամբ կիրառելու դատավարական հարկադրանքի միջոց: Մինչդեռ դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողություն իրականացնելիս նման խնդիրներ չի հետապնդում: (...) այն դեպքում, երբ դատարանը դատական վերահսկողության առարկա դարձնի կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց /տվյալ դեպքում՝ ստորագրություն չհեռանալու մասին/ կիրառելու մասին որոշումը, ապա այն դուրս կգա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի շրջանակից և փաստացի կմիջամտի մինչդատական վարույթում նախաքննական մարմնի լիազորությունների կատարմանը:

(...)

(...) ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումն ինքնին ուղղակիորեն չի հանդիսանում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտում և այդ սահմանափակումը բացարձակ բնույթ չի կրում: Մասնավորապես, օրենսդրի կողմից սահմանվել է՝ վարույթն իրականացնող մարմնի համապատասխան թույլտվության պայմաններում կիրառված սահմանափակման (արգելքի) ժամանակավոր վերացման հնարավորություն:

Ստացվում է, որ վարույթն իրականացնող մարմինը ընդհանուր կանոնով նախատեսում է սահմանափակում, սակայն այդ սահմանափակումը փաստացի գործում է յուրաքանչյուր դեպքում, այն էլ այն պայմաններով, երբ անձը հնարավորություն ունի յուրաքանչյուր դեպքում թույլտվություն ստանալ և ժամանակավորապես սահմանափակման արգելքը վերացնել: Այսինքն, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման արդյունքում իրավական հետևանքը առաջանում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Եվ հատկանշական է, որ օրենսդիրը նախատեսել է ընթացակարգ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ժամանակավորապես վերացնել կիրառված արգելքը:

Նման պայմաններում իրավաչափ է չհեռանալու մասին խափանման միջոցը մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկել միայն այն պարագայում, երբ մեղադրյալն ունի իրական շահագրգռվածություն լքելու իր մշտական բնակության վայրը, երկիրը կամ իրականում ձգտում է հեռանալ, սակայն վարույթն իրականացնող մարմնից չի ստանում թույլտվություն: Նշված դեպքում առկա է իրավական հետևանքը և կարող է առկա լինել իրավունքի խախտման ենթադրյալ փաստը: Մինչդեռ, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի վերացական կիրառումը ինքնին ուղղակիորեն չի հանգեցնում որևէ իրավունքի խախտման կամ սահմանափակման: Այն պայմաններում, երբ անձը հնարավորություն ունի յուրաքանչյուր դեպքում թույլտվություն ստանալ և ժամանակավորապես սահմանափակման արգելքը վերացնել:

Նշվածը քննարկելով նաև այն սկզբունքներից ելնելով, որ ազատ տեղաշարժվելու իրավունքը բացարձակ չէ և հետևաբար այն կարող է ենթարկվել նաև իրավաչափ սահմանափակումների, որոնք ուղղված են **ի շահ պետության անվտանգությանը, հասարակական կարգի պահպանմանը և հանցագործությունների կանխմանը, ինչպես նաև** մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան, հակառակ դեպքում **կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, ինչպես նաև քրեադատավարական գործառույթների տարանջատման և դատարանի անկախության սկզբունքները**, գալիս ենք այն հետևության, որ բացակայում է վիճարկվող դրույթի իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ այնքանով, որքանով չեն նախատեսում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ◆ 2(110)2023

ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, հակասահմանադրական ճանաչելու օբյեկտիվ հիմքերը և հիմնավորումները»:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթի, այդ թվում՝ վերջինիս իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- արդյոք ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու հիմնական իրավունքին միջամտության պայմաններում վիճարկվող իրավակարգավորմանն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ մինչդատական վարույթի փուլում ապահովվում է անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության և վերջինիս բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումը:

Սահմանադրական դատարանը վիճարկվող օրինադրույթի, այդ թվում՝ վերջինիս իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը գնահատում է Սահմանադրության 40-րդ հոդվածին և 61-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության առումով:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Վիճարկվող օրինադրույթի, այդ թվում՝ վերջինիս իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը կարևորում է խափանման միջոցների քրեադատավարական բովանդակության բացահայտման հարցը: Օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *խափանման միջոցները* հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Օրենսգրքի հիշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *խափանման միջոցներն են* կալանավորումը, գրավը, ստորագրությունը՝ չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, հսկողության հանձնելը, հրամանատարության հսկողության հանձնելը: Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է, որ վերոնշյալ խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված, բացառությամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի, որը կարող է կիրառվել գրավի, անձնական երաշխավորության և կազմակերպության երաշխավորության հետ կապակցված:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(110)2023

Օրենսդրական վերաբերելի կարգավորումների վերլուծությունից բխում է, որ խափանման միջոցների կիրառումը, ի թիվս այլնի, միտված է քրեական վարույթի շրջանակներում մեղադրյալի կամ կասկածյալի իրավաչափ վարքագիծն ապահովելուն և հանգեցնում է այդ միջոցների հասցեատիրոջ որոշ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման:

Օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ քրեական դատավարության փուլերով և դրանց ներհատուկ խնդիրներով պայմանավորված՝ նախնական քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում, հաշվի առնելով գործի քննության օպերատիվ-քննչական իրադրությունը, դրանից բխող դատավարական գործողություններ կատարելու նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը, ինքն է գնահատում կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու ռիսկը և, ըստ այդմ՝ որոշում է կայացնում խափանման միջոց ընտրելու, խափանման միջոցին ներհատուկ սահմանափակումները վերացնելու (օրինակ՝ պայմանների փոփոխություն) կամ, առհասարակ, կիրառված խափանման միջոցը վերացնելու մասին:

Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ամրագրված՝ ստորագրություն՝ չհեռանալու մասին խափանման միջոցի քրեադատավարական բովանդակությունը բացահայտված է Օրենսգրքի 144-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ չհեռանալու մասին ստորագրություն տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը: Նա պարտավոր է ներկայանալ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին:

Վերոնշյալը թույլ է տալիս փաստել, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը ենթադրում է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից *առանց* հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի *թույլտվության այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու ուղղակի արգելք*: Ավելին, մինչդատական վարույթի շրջանակներում նշված խափանման միջոցի ընտրությանը/կիրառմանը անձը *զրկվում է* առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության՝ *Հայաստանի Հանրապետության փրաժծքը լքելու հնարավորությունից, քանզի այդ խափանման միջոցի ընտրությանը/կիրառմանը և, ի ապահովումն դրա, սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՄԷԿՏ) համակարգ կասկածյալի կամ մեղադրյալի անձնական տվյալների մուտքագրմամբ՝ անհնարին է դառնում նրա ելքը Հայաստանի Հանրապետության փրաժծքից*: Կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» 2006 թվականի

հունիսի 22-ի N 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետին համապատասխան՝ Ոստիկանության բաժանորդային կետերից համակարգչային կապով ստացվող տվյալների ցանկում ներառված են իրավասու մարմնի կողմից «բացակայելու արգելք» («ստորագրություն չհեռանալու մասին») (մինչև 2022 թվականի հունիսի 30-ի N 996-Ն որոշումը գործող խմբագրությամբ) խափանման միջոցը կիրառելու մասին տվյալները՝ խափանման միջոց կիրառելուց հետո՝ անհապաղ:

Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետին համապատասխան՝ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է նախաքննության մարմինը: Մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո՝ անմիջապես: Սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշմամբ արձանագրել է, որ անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի կիրառման դեպքում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին որոշման հետևանքով վրա հասնող քրեադատավարական ներգործության էությունը բացահայտել անձի՝ Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման լույսի ներքո: Սահմանադրության հիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: Սահմանադրության նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք: Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է, որ ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

Ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքը ներառում է Հայաստանի Հանրապետության տարածքում ազատորեն տեղաշարժվելու, անխոչընդոտ բնակության և/կամ գտնվելու վայր ընտրելու և/կամ այն փոփոխելու իրավունքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 2(110)2023

դուրս գալու՝ անձի հայեցողությունը, այն ազատորեն իրացնելու հնարավորությունը: Միաժամանակ, նշված իրավունքը բացարձակ չէ. այն կարող է սահմանափակվել Սահմանադրությամբ սահմանված նպատակներով: Քրեական վարույթի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը՝ խափանման միջոցի (այդ թվում՝ ստորագրությունը՝ չհեռանալու մասին) կիրառմամբ, ունի սահմանադրաիրավական հիմքեր, քանզի նպատակ է հետապնդում կանխելու կամ բացահայտելու հանցագործությունները, ինչպես նաև պաշտպանելու այլոց հիմնական իրավունքները և ազատությունները:

Վերոշարադրյալի լույսի ներքո բացահայտելով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման հետևանքով համապատասխան անձի համար առաջացող սահմանափակումները՝ հարկ է արձանագրել, որ նշված խափանման միջոցի կիրառումն ուղղակիորեն սահմանափակում է անձի՝ Սահմանադրության 40-րդ հոդվածով երաշխավորված ազատ տեղաշարժվելու իրավունքը, քանզի՝

- դրանով սահմանվում է այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու ուղղակի արգելք և/կամ

- այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու, որոշ դեպքերում նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու համար անձը, որի նկատմամբ կիրառված է նշված խափանման միջոցը, անհրաժեշտաբար ձեռք է բերում իր այդ իրավունքի իրացման համար վարույթն իրականացնող մարմնի թույլտվությունը հայցելու և ստանալու պարտականություն: Ընդ որում՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը չվերականգնվող իրավունք է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) իր վճիռներում (որոշումներում) արձանագրել է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումն այն դեպքում, երբ անձի վրա դրվում է որոշակի տեղանքը հատելու արգելք: ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ անձի կողմից յուրաքանչյուր անգամ թույլտվություն ստանալու պահանջը, որպեսզի վերջինս կարողանա լքել որոշակի տեղանքը, ինքնին, անձի ազատ տեղաշարժվելու իրավունքին միջամտություն է՝ անկախ նրանից, թե այդպիսի թույլտվություն տրվել է, թե ոչ: Դատարանը համաձայնել է դիմումատուի հետ, որ վիճարկվող միջոցը սահմանափակում է նրա ազատ տեղաշարժվելու իրավունքն այնպես, որ այն միջամտություն է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածի իմաստով (*“Raimondo v. Italy”, Judgment of 22 February 1994, Series A no. 281-A, p. p. 19, § 39*): Դատարանը մերժել է Կառավարության այն փաստարկը, որի համաձայն՝ դիմումատուի ազատ տեղաշարժը չի սահմանափակվել, քանի որ նրան հեռանալու թույլտվություն է տրվել, և նրա նկատմամբ սանկցիա չի կիրառվել չարտոնված ելքի համար: Դատարանը նշել է, որ իշխա-

նույնություններից յուրաքանչյուր անգամ հեռանալու թույլտվություն հայցելու պարտավորությունը չի համապատասխանում «տեղաշարժի ազատություն» հասկացության իմաստին (“Ivanov v. Ukraine”, Application no. 15007/02, 07.12.2006, FINAL 07.03.2007, § 85):

Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ կարող են սահմանափակվել անձի նաև այլ հիմնական իրավունքներ/ազատություններ (սեփականության իրավունքը, ամուսնանալու ազատությունը, կրթության իրավունքը, հավաքների ազատությունը և այլն): Այդ առնչությամբ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ կիրառված սահմանափակումը դիմումատուին թույլ չի տվել զբաղվել մասնագիտական գործունեությամբ, դիմումատուն չի շփվել իր հարազատների, ընտանիքի անդամների հետ, ինչը բացասաբար է ազդել վերջինիս մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության վրա (“Niemietz v. Germany”, Application no. 13710/88, 16.12.1992, § 29՝ ըստ Kotiy v. Ukraine, Application no. 28718/09, 05.03.2015, Final 05.06.2015, § 63):

Ելնելով վերոնշյալից՝ Օրենսգրքով նախատեսված խափանման միջոցների համակարգում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն անձի ոչ պարզաճ վարքագիծը կանխելու ենթադրաբար ամենամեղմ միջոցից, կախված հանգամանքներից (ուս նկատմամբ է կիրառվում նշված խափանման միջոցը՝ հաշվի առնելով անձի մասնագիտական գործունեությունը, զբաղմունքը, ընտանեկան դրությունը, առողջական վիճակը և այլն), կարող է վերաճել սահմանափակման առավել ինտենսիվ միջոցի՝ մարդու ազատ տեղաշարժելու իրավունքից զատ՝ սահմանափակելով նաև այլ հիմնական իրավունքներ և ազատություններ:

Այդ առնչությամբ իրավակիրառ պրակտիկան որպես ուղենիշ պետք է ընդունի այն մոտեցումը, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումն ուղղակիորեն միջամտում է անձի ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքին, դրա կիրառումը ենթադրում է անձի՝ այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու, նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակում. հետևաբար՝ ցանկացած խափանման միջոց, մասնավորապես՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը, պետք է կիրառվի Օրենսգրքով դրա պայմանների և հիմք(եր)ի առկայության պայմաններում միայն՝ երաշխավորելով հիմնական իրավունքին/ազատությանը միջամտության իրավաչափությունը և դրանով իսկ բացառելով հիմնական իրավունքի/ազատության խախտումները:

Նկատի առնելով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մարդու առանձին հիմնական իրավունքներին և ազատություններին ներգործության բնույթն ու բովանդակությունը, դրանից ծագող հետևանքները՝ հարկ է արձանագրել, որ վարույթն իրականացնող մարմնի՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կիրառելու հայեցողությունը բացարձակ չէ: Յուրաքանչյուր դեպքում հիշյալ խափանման միջոցն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(110)2023

ընտրելիս/կիրառելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է կայացնի պատճառաբանված որոշում՝ վերջինիս շրջանակներում հստակ անդրադառնալով խափանման միջոցի կիրառման պայմանների և հիմքերի առկայությանը և դրա կիրառման անհրաժեշտությանը՝ հիմք ընդունելով քրեական գործում առկա համապատասխան նյութերը: Միայն այդպիսի մոտեցման պայմաններում կապահովվի հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, կբացառվի, մասնավորապես, անձի ազատ տեղաշարժվելու իրավունքին նշված խափանման միջոցի կիրառմամբ ոչ իրավաչափ միջամտությունը:

Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման համար նախատեսված են որոշակի պայմաններ և հստակ հիմքեր՝ այն կարող է կիրառվել *միայն մեղադրյալի (կասկածյալի) դատավարական կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ և միայն* Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ *խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության պայմաններում:*

Այդ համատեքստում, խափանման միջոցները, առաջին հերթին, միտված են մեղադրյալի (կասկածյալի) պարտականությունները պատշաճ կատարելուն, նրա կողմից իրավաչափ վարքագիծ ապահովելուն: Այդուհանդերձ, յուրաքանչյուր դեպքում անթույլատրելի է խափանման միջոցի կիրառումը բացառապես ստանձնած դատավարական պարտականությունների կատարումը երաշխավորելու նպատակով, եթե առկա չէ գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրություն առ այն, որ դրանք չեն կատարվի: Եվ հակառակը՝ քրեական հետապնդման (ձևական առումով քրեական հետապնդման հարուցման) հարուցմամբ ծագած դատավարական կարգավիճակով պայմանավորված և ըստ այդմ՝ միայն մեղադրյալի (կասկածյալի) դատավարական պարտականությունների, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատավորի իրավաչափ կարգադրություններին ենթարկվելու պարտականությունների առկայության փաստով պայմանավորված՝ անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառումն անթույլատրելի է, քանի որ նման մոտեցումը կհանգեցնի միայն մեղադրյալի (կասկածյալի) դատավարական կարգավիճակի ձեռքբերմամբ պայմանավորված՝ անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ինքնաշխատ սահմանափակման, ինչն անհարիր է իրավական պետության սահմանադրական սկզբունքի և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի (նշված խափանման միջոցի կիրառման հետևանքով սահմանափակվող այլ հիմնական իրավունքների/ազատությունների) երաշխավորման համատեքստում:

5.2. Նկատի ունենալով, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումը ենթադրում է ուղղակի միջամտություն անձի ազատ

տեղաշարժվելու իրավունքին (նաև այլ հիմնական իրավունքներին և ազատություններին միջամտության հնարավորությամբ), նման պայմաններում պետք է երաշխավորվի անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի պատշաճ իրացումը: Այդ առնչությամբ առանցքային կարևորություն է ձեռք բերում վիճարկվող նորմին՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատումը՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համարեքսպում՝ սպորազորություն չհեռանալու մասին խափանման միջոցը կիրառելու որոշման անմիջական դատական բողոքարկումը բացառող մոտեցման պայմաններում: Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է դատական պաշտպանության իրավունքի բովանդակությանը՝ այդ առնչությամբ, մասնավորապես, արտահայտելով ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719).

- «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249).

- «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257)»:

Օրենսգրքի 290-րդ հոդվածը վերաբերում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկմանը դատարան, սակայն չի հստակեցնում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկան:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթների, առանձնահատկությունների, խնդիրների և նպատակների վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, հանգում են հետևյալին. «(...) հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում **պարզել անձի** (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) **իրավունքների և ազատությունների խախտման փաստը** և կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինչպես դատախազը, այնպես էլ դատարանն իրավասու են քննելու վերոհիշյալ մարմինների, այդ թվում՝ նաև դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր լինելու դեմ բերված բողոքները: Սակայն տարբեր են այդ բողոքների քննության արդյունքում խախտված իրավունքի վերականգնման եղանակները, ձևերը և իրավական հետևանքները, մասնավորապես, դատական վերահսկողությունն իրականացվում է **անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականության մասին որոշման կայացմամբ**: Հետևաբար, դրանով է պայմանավորված նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ մասի նորմատիվ պահանջը, որին համապատասխան բողոք քննելու արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե հետաքննության մարմնին, քննիչին և օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես տեղի ունի դատախազական հսկողության դեպքում, այլ այդ մարմինների ու պաշտոնատար անձի կողմից թույլ տրված օրինախախտումը վերացնելը և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը **պարտավորեցնելով**, որը բխում է

դատական իշխանության սահմանադրաիրավական բովանդակությունից և դրան համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատարանի լիազորություններից»:

Որպես ելակետ ընդունելով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության գերակայությունը՝ օրենսդիրը սահմանել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործիքակազմը: Մինչդատական վարույթի փուլում, ի թիվս այլնի, դատարանի առաջնահերթ խնդիրներից է ապահովել դատավարության մասնավոր մասնակիցների հիմնական իրավունքների կենսագործումը և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը՝ պետական մարմինների անօրինական (ոչ իրավաչափ) որոշումներից և գործողություններից (անգործությունից), իսկ վարույթի հանրային մասնակիցների անօրինական գործողությունների/անգործության կամ որոշումների հետևանքով հիմնական իրավունքների խախտման պարագայում՝ ապահովել խախտված իրավունքների վերականգնումը:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը ենթադրում է նաև Օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված մարմինների՝ օրենքով նախատեսված որոշումների ու գործողությունների/անգործության դեմ բերված բողոքների շրջանակներում դրանց օրինականության և հիմնավորվածության ստուգում: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը զսպող միջոց է՝ քրեական հետապնդման մարմինների հնարավոր կամայական մոտեցումների կանխարգելման համատեքստում, ապահովում է խախտված իրավունքների արագ և արդյունավետ վերականգնման հնարավորությունը:

Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 21-ի որոշման (Հ. Մամիջանյանի պաշտպանի կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժվել է. թիվ ԵԴ/0753/11/21 գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ) մեջ, մասնավորապես, նշված է. «Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը, փաստում է, որ վարույթն իրականացնող մարմնի վերոնշյալ որոշումը չի հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով իրականացվող դատական վերահսկողության առարկա: Վերոնշյալ իրավական վերլուծությունների հիման վրա պետք է արձանագրել, որ քննարկվող որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը հնարավոր է գործն ըստ էության քննության ժամանակ: Քննարկվող որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում չի կարող հանգեցնել անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման, հետևաբար՝ սույն պարագայում, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց

ընտրելու մասին որոշումը չի կարող հանդիսանալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա»:

Սույն գործով քննության առարկա հարցի առնչությամբ, թիվ ԿԴ2/0009/11/19 գործով Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «(...) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկելու հարցի կապակցությամբ առկա է հակասական իրավակիրառ պրակտիկա:

(...)

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով օրենսդրի կողմից սահմանված խափանման միջոցների համակարգում՝ չհեռանալու մասին ստորագրությունն ունի անձի իրավունքների նկատմամբ նվազ միջամտություն: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ չհեռանալու մասին ստորագրությունն ըստ էության արտահայտում է գրավոր եղանակով ամրագրված անձի «խոստումն» առ այն, որ նա պարտավորվում է իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամանակահատվածում գտնվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ: Այն հոգեբանական հարկադրանքի միջոց է, որը գրավոր եղանակով տրված՝ չբացակայելու «խոստման» ուժով կաշկանդում է մեղադրյալին **մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը՝ առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության:** Ուստի, ի տարբերություն ֆիզիկական հարկադրանքի միջոցների, օրինակ՝ անձի ազատության իրավունքը սահմանափակող՝ կալանավորում խափանման միջոցի, չհեռանալու մասին ստորագրությունը, որպես խափանման միջոց, ինքնին չի հանգեցնում անձի հիմնարար իրավունքի խախտման:

Նման պայմաններում, նկատի ունենալով, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը գործադրվում է անձի առերևույթ խախտված իրավունքների առկայության դեպքում՝ խախտումը վերացնելու նպատակով, իսկ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կամ անձի՝ չհեռանալու մասին «խոստումը» ինքնին չի վկայում այդպիսի խախտման առերևույթ առկայության մասին, այն չի կարող դառնալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա:

(...)

(...) Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում անդրադառնալ կոնկրետ վերահսկողության այն դեպքերին, երբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ սահմանափակվում է անձի՝ այլ տեղանք մեկնելու, մշտական բնակության վայրը փոխելու կամ ՍԷԿՏ համակարգում համապատասխան տվյալների մուտքագրմամբ անձի՝ ՀՀ պետական

սահմանը հատելու հնարավորությունը՝ հանգեցնելով անձի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման: Այս դեպքերում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (...) վկայակոչված իրավական դիրքորոշումներին համապատասխան, առաջ է գալիս անկախ, անաչառ և օրինական երաշխիքների ապահովմամբ՝ կոնկրետ վերահսկողության համատեքստում կիրառված սահմանափակման իրավաչափությունը դատական ստուգման ենթարկելու և իրավական պաշտպանություն հայցելու անհրաժեշտություն: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ պարագայում անձն իրավասու է բարձրացնել իր նկատմամբ կիրառված արգելքի իրավաչափության հարցը՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի գործադրման համար անհրաժեշտ պայմանի՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի առերևույթ խախտման առկայության ուժով:

(...)

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ինչպես կալանավորումը, այնպես էլ չհեռանալու մասին ստորագրությունը ներառված են քրեադատավարական խափանման միջոցների նույն համակարգում և միտված են միևնույն նպատակին՝ անձի ոչ պատշաճ վարքագծի կանխմանը, սակայն, ելնելով դրանց ներգործության բնույթից, աստիճանից և վրա հասնող հետևանքներից, դրանց կիրառմանը ներկայացվող պահանջներն անհամեմատելիորեն տարբեր են: Այսպես, եթե կալանքի դեպքում՝ ելնելով անձի ազատության հիմնարար իրավունքի պաշտպանությունից ու ազատության իրավունքի կանխավարկածից, պահանջվում են ծանրակշիռ հիմնավորումներ դրա կիրառումն արդարացնելու համար, ապա չհեռանալու մասին ստորագրության կիրառումն այդպիսի հիմնավորումներ չի պահանջում: Դրա կիրառման անհրաժեշտությունը ծագում է քրեական հետապնդման ներքո գտնվելու ուժով՝ կատարման ենթակա քննչական և դատավարական գործողություններին մասնակցելու, վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվելու նպատակով: Այլ կերպ, այն վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու պարտավորության իրականացման երաշխիք է»:

Անդրադառնալով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը ընտրելու մասին որոշման՝ դատական վերահսկողության առարկա լինելու հարցի շրջանակներում *ձևավորված իրավակիրառ պրակտիկային՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն խնդրահարույց է, քանզի կարող է ուղղորդել դեպի իրավական պետության և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից վրանգավոր և բացառելի այն հունը, թե անձի՝ մեղադրյալի (կասկածյալի) դատավարական կարգավիճակը, ինքնին, բավարար հիմք է անձի նկատմամբ նշված խափանման միջոցն ընտրելու/կիրառելու համար, քանի որ այդ կարգավիճակով պայմանավորված՝*

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 2(110)2023

անձի համար առաջ է գալիս կատարման ենթակա քննչական և դատավարական գործողություններին մասնակցելու, վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու պարտավորություն:

Դատարանների կողմից սույն գործով վիճարկվող նորմին տրված մեկնաբանության պայմաններում, ըստ էության, բացառվում է համապատասխան որոշման դատական անմիջական բողոքարկման հնարավորությունը (առաջարկվում է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին որոշման իրավաչափությունը քննության առարկա դարձնել հետաձգված բողոքարկման գործիքակազմով):

Այդ համատեքստում կարևորվում են նաև դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ-936 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (...),

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը, (...):»:

Սահմանադրական դատարանը 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշմամբ անդրադարձել է դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի իրացման հարցին՝ անմիջական և հետաձգված բողոքարկման շրջանակներում՝ մասնավորապես արձանագրելով. «(...) օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 2(110)2023

բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»:

Վերոնշյալի լույսի ներքո, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշման՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա լինելու հարցի առնչությամբ *Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված որոշումը պեղք է հանդիսանա անմիջական բողոքարկման առարկա՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի ընտրության/կիրառման հետևանքով սահմանափակվող՝ անձի ազատ արտահայտվելու սահմանադրական իրավունքի (նաև այլ հիմնական իրավունքների/ազատությունների սահմանափակման հնարավորությամբ) դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար:*

Վերոնշյալ մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ պայմանավորված քրեական դատավարության փուլային այն տրամաբանությամբ, որի համաձայն՝ քրեական վարույթի փուլից փուլ անցման պայմաններում վարույթն իրականացնող մարմինը կրկին որոշում է խափանման միջոց կիրառելու, փոփոխելու, վերացնելու, այն պահպանելու հարցերը, այսինքն՝ քրեական վարույթի փուլից փուլ անցմամբ պայմանավորված՝ նշված հարցերի լուծումը ենթադրում է, ըստ էության, նոր որոշում՝ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ, մինչդատական վարույթի շրջանակներում անձի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի հետաձգված բողոքարկումը, ըստ էության, հանգեցնելու է նրան, որ դատական ակտով ստուգվելու է նախորդ փուլում կիրառված և տվյալ պահին իրավական հետևանքներ չառաջացնող որոշման իրավաչափությունը:

Քրեական վարույթի տևողությունը սահմանափակված չէ ժամկետներով, որպիսի պարագայում հետաձգված բողոքարկման գործիքակազմի կիրառումը կարող է խիստ անարդյունավետ լինել՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ սահմանափակվող հիմնական իրավունքների/ազատությունների պաշտպանության առումով: Նման պայմաններում չի բացառվում, որ անձին մինչդատական վարույթի շրջանակներում ոչ իրավաչափորեն սահմանափակված իր, մասնավորապես, ազատ արտահայտվելու իրավունքի դատական պաշտպանության իրական հնարավորություն ընձեռվի նշված իրավունքի ենթադրյալ խախտման պահից տևական ժամանակ անց:

Բացի դրանից, նշված խափանման միջոցի կիրառման անմիջական բողոքարկման հնարավորությունը բացառող մեկնաբանությունն այն պայմաններում, երբ մեղադրյալի (կասկածյալի) նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի և քրեական գործի վարույթը կարճվի, այլ կերպ՝ վարույթն ավարտվի մինչդարական փուլում՝ չթևակոխելով դատական քննության փուլ, գործնականում կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ անձն ընդհանրապես կզրկվի իր խախտված իրավունքների/ազատությունների դատական պաշտպանության հնարավորությունից: Հիշյալ մոտեցմանը հարող դիրքորոշում է ձևավորել ՄԻԵԴ-ը՝ նշելով, որ դատական քննության փուլում կամ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու արդյունքում քննիչի [ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց կիրառելու] որոշման իրավաչափությունը քննարկելը հանգեցնում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման, քանի որ նման պայմաններում ներպետական օրենսդրությունը չի ապահովում բավարար երաշխիքներ կամայական խափանման միջոցներ կիրառելու դեմ բողոք ներկայացնելու համար (...): Քննության նման ընթացքում [դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել, իսկ քրեական գործի վարույթը կարճվել է] դատական վերահսկողությունն անհասանելի է եղել, ուստի՝ բողոքը դատարան ներկայացնելու հնարավորություն դիմումատուն չի ունեցել: Ավելին՝ ամբողջ նախաքննության ընթացքում դիմումատուն հնարավորություն չի ունեցել այլ եղանակներով իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, ինչի արդյունքում չի կարողացել դատարանից պահանջել, որ որոշում կայացվի քննիչի որոշման իրավաչափության, համաչափության, ինչպես նաև խափանման միջոցը վերացնելու մասին (“Kotiy v. Ukraine”, Application no. 28718/09, 05.03.2015, Final 05.06.2015, § 69-70):

Համաձայն սույն դիմումին կից ներկայացված նյութերի՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ մերժվել է թիվ 15971020 քրեական գործով մեղադրյալ Հ. Մամիջանյանի պաշտպանի միջնորդությունը, որը վերաբերում էր Հ. Մամիջանյանին նույն թվականի նոյեմբերի 11-ից 15-ը արտերկիր մեկնելը թույլատրելուն («(...) նախաքննության ներկա փուլում վարույթն իրականացնող մարմինը չի կարող թույլատրել մեղադրյալ Հայկ Մամիջանյանին մեկնել այլ տեղանք (...)»):

Վերոշարադրյալը հիմք է փայխա եզրահանգելու, որ հիշատակված սահմանադրաիրավական արժեքների հետ անհամապետելի է իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մեկնաբանությունը՝ հետաձգված բողոքարկման հնարավորության մատնանշմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշման անմիջական բողոքարկման բացառումը. անձի համար

պետք է երաշխավորվի ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի ընտրության/կիրառման արդյունքում իր ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքի (այդ որոշմամբ սահմանափակվող այլ իրավունքների և ազատությունների) սահմանափակման իրավաչափությունը գնահատելու հարցով մինչդարական վարույթի փուլում դատարան դիմելու իրավունքը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդիրը, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածով սահմանելով **մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքների շրջանակը**, դատական բողոքարկման ենթակա մինչդատական ակտերի շարքում նախատեսել է նաև **խափանման միջոց կիրառելու մասին որոշումը** (հիշյալ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ)՝ այդպիսով օրենսդրական զարգացումներն ուղղորդելով վերը ուրվագծված տրամաբանությամբ:

Ողջ վերոնշյալի հաշվառմամբ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշման անմիջական բողոքարկումը չպետք է բացառվի**. դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումները ենթակա են դատական կարգով անմիջական բողոքարկման մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում՝ առաջնորդվելով անձի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքին (համապատասխան որոշմամբ սահմանափակվող նաև այլ իրավունքներին և ազատություններին) միջամտության իրավաչափությունը վիճարկելու, դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու հրամայականով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումն օրենքով սահմանված կարգով ենթակա է բողոքարկման դատարան:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

30 մայիսի 2023 թվականի
ՍԴՈ-1690

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 2(110)2023 ՏԵՂԵԿՎՈՐ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

«ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 290-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՉՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ՝ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ ԼԻՆԵԼԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ԿԱՅԱՑՐԱԾ ՍԴՈ-1690 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայկ Մամիջանյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ այնքանով, որքանով չի նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը, 2023 թվականի մայիսի 30-ին կայացրել է ՍԴՈ-1690 որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում), որի եզրափակիչ մասի 1-ին կետի համաձայն՝ որոշել է հետևյալը.

«1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումն օրենքով սահմանված կարգով ենթակա է բողոքարկման դատարան»:

Համաձայն չլինելով Որոշման հետ՝ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանն ստորև ներկայացնում են հատուկ կարծիք:

1. Գտնում եմ, որ դիմումը ենթակա էր կարճման:

Անհատական դիմումների ընդունելիության հիմնարար սահմանադրական չափանիշները նախատեսված են **Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ի մասի 8-րդ կետում**, որի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող [է] դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ*

իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ սահմանադրական դրույթը՝ Սահմանադրական դատարանին ուղղված անհատական դիմումի բովանդակային և ձևական պահանջները մանրամասնված և զարգացված են համապատասխան սահմանադրական օրենքում:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի» մասին սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև ՍԴՕ) 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:

ՍԴՕ 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Ըստ այդմ, անձի՝ որպես անհատական դիմումներով դիմողի կարգավիճակն ընդգրկում է երեք փոխկապակցված բաղադրիչներ՝ ա) դիմումում բարձրացված հարցով իրավունքի դատական պաշտպանության ներպետական համակարգի բոլոր միջոցների սպառած լինելը, բ) վերջնական դատական ակտի կայացման պահից վեցամսյա ժամկետում Սահմանադրական դատարան դիմելը և գ) Սահմանադրական դատարանում վիճարկվող իրավանորմի՝ վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված լինելը:

Վերոնշյալ երեք տարրից յուրաքանչյուրի բացակայությունը սահմանադրական դիմումը դարձնում է անընդունելի, իսկ դիմողին՝ տվյալ հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն չունեցող անձ:

Խնդրո առարկա գործին վերաբերելի է դիմումով վկայակոչված նորմի՝ դիմողի նկատմամբ կիրառված չլինելու հանգամանքը, որը բացառում է գործի ըստ էության քննությունը: Ընդ որում՝ նորմի կիրառվածության պահանջը չի հանգում նորմի ձևական կիրառմանը, այլ նորմի կիրառմանը՝ դիմողի կողմից վկայակոչված մեկնաբանությամբ: Հակառակ պարագայում կբացակայի իրավանորմի և դիմողի սահմանադրական որևէ իրավունքի ենթադրյալ խախտման միջև պատճառահետևանքային կապը, իսկ նման դիմումի ըստ

էության քննության դեպքում Սահմանադրական դատարանը կիրականացնի անհատական դիմումի քննություն ոչ թե կոնկրետ, այլ վերացական սահմանադրական վերահսկողության կարգով, ինչը դուրս է անհատական դիմումների քննության ընթացքում Սահմանադրական դատարանի գործառնության լիազորություններից:

Սահմանադրական դատարանն իր՝ **2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ** անդրադարձել է կոնկրետ և վերացական սահմանադրական վերահսկողության հարաբերակցությանը և այդ համատեքստում անհատական դիմումների քննության ընթացքում Սահմանադրական դատարանի դատական սահմանադրական վերահսկողության իրացման կարգին: Մասնավորապես, ըստ նշյալ որոշման՝ «(...) *անձի՝ անհատական դիմումով սահմանադրական դատարան դիմելու իրավունքի բովանդակությունն ու իրացման վերոհիշյալ շրջանակները պայմանավորված են սահմանադրական կոնկրետ վերահսկողության այն հիմնական տրամաբանությամբ, նպատակներով ու առանձնահատկություններով, որոնք ձևավորվել են սահմանադրական-արդարադատական պրակտիկայում (այդ թվում՝ միջազգային) և ամրագրվել օրենքով: Մասնավորապես, սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ի թիվս ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման, անձը.*

- *պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները,*

- *փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում (...):*

(...)

(...) ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետում և 7-րդ կետում ամրագրված դրույթների, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասի համադրված վերլուծությունը վկայում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղաքացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաև քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի և համապատասխանաբար՝ նշված վեճերի և քրեական մեղադրանքի հարցի լուծման իրավազորությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցներն սպառելու արդյունքում: Այն երկրներում, որտեղ առկա է անհատական դիմումների ինստիտուտը, անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի նման բովանդակությունն ու շրջանակները պայմա-

նավորված են կոնկրետ սահմանադրական վերահսկողության տրամաբանությամբ, նպատակով և առանձնահատկություններով: Սահմանադրական «կոնկրետ վերահսկողության» նպատակն է ապահովել սահմանադրական արդարադատություն իրականացնելու իրավագորու-թյամբ չօժտված՝ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից կոնկրետ գործերի լուծումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա և իրականացնել անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, երբ նրա իրավունքները խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում հակասահմանադրական օրենսդրական նորմի կիրառման արդյունքում: Ըստ այդմ, այդ դատարաններում դատավարության հիմնական սուբյեկտներին՝ դատարաններին և դատավարության կողմերին է հնարավորություն ընձեռվում սահմանադրական դատարան դիմելու միջոցով ապահովել այդ նպատակի իրացումը: Նման կերպով ապահովվում է նաև արդարադատության ողջ համակարգի գործառնական դինամիկ հավասարակշռությունը:

Բացի դրանից, կոնկրետ սահմանադրական վերահսկողության բնորոշ գծերին համահունչ՝ «< ներպետական օրենսդրությունը նախատեսել է շահագրգիռ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը, ինչը լիարժեքություն և արդյունավետություն է հաղորդում սահմանադրական դատարանում անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների, պաշտպանությանը (...):»:

Սահմանադրական դատարանն իր՝ **2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշմամբ** անդրադարձել է վիճարկվող իրավական նորմն անձի նկատմամբ կիրառված լինելու հանգամանքին՝ բացահայտելով «կիրառում» հասկացության իրավաբանական էությունը: Մասնավորապես՝ նշյալ որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում» (...):»:

Սահմանադրական դատարանի նշյալ որոշումից հետևում է, որ վերջնական դատական ակտով դիմողի նկատմամբ իրավանորմի կիրառված լինելը՝ որպես Սահմանադրական դատարանին ուղղված դիմումի ընդունելիության հիմք, պետք է գնահատվի՝ ելնելով գործնականում այդ

ՍԱԴՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԻՑԻՍ ◆ 2(110)2023

նորմով՝ վեճի լուծման համար և անձամբ դիմողի համար իրավական հետևանքներ առաջացնելու չափանիշից: Իրավանորմի վկայակոչումը դատական ակտում կամ դիմումում ինքնին բավական չէ, որպեսզի դիմումի ընդունելիության սույն հիմքը համարվի բավարար:

Հատկանշական է, որ ընդունելիության խոչընդոտ պարունակող դիմումը քննության հետագա փուլում պետք է կարճվեր, սակայն դա չի արվել: Մասնավորապես **ՄԴՕ 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի** համաձայն՝ *Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր:*

Հարկ է ընդգծել, որ նշյալ հիմքով գործի կարճման իրավական կառուցակարգը ոչ միայն գործի վարույթի կարճման դատավարական ինստիտուտի նորմատիվ բաղադրիչ է, գործով պատշաճ սահմանադրական արդարադատության իրականացման իրավա-կազմակերպական երաշխիք, այլև Սահմանադրական դատարանի լիազորություն, որը Սահմանադրական դատարանը պարտավոր է իրացնել համապատասխան հիմքի ի հայտ գալու դեպքում: Միևնույն ժամանակ, օրենսդիրը Սահմանադրական դատարանին օժտել է գործն ի պաշտոնե քննելու իրավասությամբ, ինչը թույլ է տալիս Սահմանադրական դատարանին ազատորեն, սահմանափակված չլինելով դիմողի և դատավարության այլ մասնակիցների դատավարական գործողություններով, համապարփակ քննության առնել դիմումը և վերջինիս հիմքում ընկած իրավական հանգամանքները: Ի մասնավորի՝ **ՄԴՕ 32-րդ հոդվածի համաձայն՝**

«1. *Գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե:*

2. *Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացառություներով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար»:*

Տիրապետելով գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության համար անհրաժեշտ լիազորությունների և կառուցակարգային գործիքակազմի՝ Սահմանադրական դատարանը չպետք է անվերապահ հիմք ընդունի դիմումում տեղ գտած փաստական և իրավական հիմքերն ու հիմնավորումները և դրանք հաստատված համարի դիմումին կից փաստաթղթերն ուսումնասիրելու և դիմումի շարադրանքի հետ համադրելու արդյունքում: Եթե մնում են չպարզաբանված հարցեր, գործը զեկուցող դատավորը պարտավոր է կատարել անհրաժեշտ հարցումներ և պարզաբանումներ պահանջել իրավասու մարմիններից ու պաշտոնատար անձանցից:

Դիմումի ընդունելիության վերաբերյալ վերոնշյալ վերաբերելի իրավական դատողությունները կիրառելով Որոշման հիմքում ընկած դիմումի նկատմամբ՝ պարզ է դառնում, որ առկա է եղել գործի վարույթը կարճելու իրավական հիմք. դիմողն իր դիմումում վկայակոչել է 1998 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՔԴՕ) իրավադրույթ, որը դիմողի նշած մեկնաբանությամբ իր գործով կայացված վերջնական դատական ակտով իր նկատմամբ չի կիրառվել:

Մասնավորապես՝ հակառակ դիմումի բովանդակության, համաձայն որի՝ դիմողի նկատմամբ կիրառվել է **ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին մասը**, կից ներկայացված դատական ակտերը փաստում են, որ քննիչի, հսկող դատախազի և ապա դատարանների առաջ բարձրացվել է բոլորովին այլ հարց: Մասնավորապես՝ դիմողն ի սկզբանե դիմել է վարույթն իրականացնող մարմնին իր նկատմամբ կիրառված «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնելու պահանջով՝ այն հիմքով, որ վերջինիս կիրառման անհրաժեշտությունը վերացել է: Երբ քննիչի կողմից նշյալ դիմումը մերժվել է, նույն պահանջը ներկայացվել է հսկող դատախազին, և վերջինիս կողմից մերժման որոշում ստանալուց հետո դիմողը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Դատարան), սակայն որպես պահանջ նշել է իր իրավունքների խախտման փաստը վերացնելը, որից հասկանալի չէ, թե դատարանն ի՞նչ որոշում պետք է կայացներ: Ավելին՝ բողոքի ուսումնասիրությունը և նախորդիվ վարույթն իրականացնող մարմնին ու դատախազին ուղղված դիմումների բովանդակությունը ցույց են տալիս, որ դիմողը վիճարկել է իր նկատմամբ նշանակված խափանման միջոցի հետագա կիրառումը, և այս կապակցությամբ կայացված դատական ակտերը՝ ի սկզբանե չանդրադառնալով խափանման միջոցի ընտրության որոշմանը և այն բողոքարկելու հնարավորության հարցին: Մասնավորապես՝ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Լ. Քաջազնունուն հասցեագրված **2021 թվականի օգոստոսի 3-ի միջնորդությամբ** դիմողի ներկայացուցիչը խնդրել է. «Հայկ Մամիջանյանի նկատմամբ ընդրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնել»: Քննիչը **2021 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ** դիմողի ներկայացուցչի միջնորդությունը մերժել է՝ իր դիրքորոշումը, այդ թվում, պատճառաբանելով նրանով, որ *դիմողի պնդումն առ այն, թե իր նկատմամբ ընդրված «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը ժամանակի ընթացքում դարձել է անհամաչափ, անհիմն է, քանի որ քրեական գործով դեռևս կատարվում են անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ, և պահպանվում է դիմողի կողմից Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք կատարելու վրանգր:*

Դիմողի ներկայացուցիչը 2021 թվականի օգոստոսի 19-ին համանման պահանջով բողոք է ներկայացրել հսկող դատախազ Ա. Բեգլարյանին, որը 2021 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ բողոքը մերժել է:

Դիմողի ներկայացուցչի կողմից **2021 թվականի սեպտեմբերի 3-ին** Դատարան ներկայացված բողոքի առարկան ձևակերպված է այնքան անորոշ, որ պարզ չէ, թե բողոքով դատարանին ի՞նչ պահանջ է առաջադրվել: Այսպես՝ բողոքի եզրափակիչ մասում դիմողի խնդրանքը ձևակերպված է հետևյալ կերպ. «*Խնդրում եմ որոշում կայացնել Հայկ Մամիջանյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին*»: Ընդ որում՝ բողոքի պատճառաբանական մասում դիմողի ներկայացուցչի կողմից, ըստ էության, կրկին բարձրացվել է դիմողի նկատմամբ կիրառված «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի պահպանման նպատակահարմարության և անհրաժեշտության հարցը:

2021 թվականի հոկտեմբերի 14-ին Դատարանի կողմից կայացված որոշմամբ բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով նախաքննության մարմնի ոչ բոլոր որոշումներն են ենթակա դատական վերանայման: Դատարանի որոշման ողջ պատճառաբանական մասի ուսումնասիրությունից հետևում է, որ **դիմողը բողոքում չի բարձրացրել Սահմանադրական դատարանի քննությանը ներկայացված հարցը, և, համապատասխանաբար, Դատարանն իր որոշման մեջ չի անդրադարձել ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակում դիմողի նկատմամբ նշանակված խափանման միջոցով նրա իրավունքները խախտված լինելու հիմքով այդ խափանման միջոցի ընտրությանը, դրա հնարավոր բողոքարկման հարցերին, այլ քննարկել է խափանման միջոցի հետագա կիրառման նպատակահարմարությունը:**

2021 թվականի դեկտեմբերի 7-ին բերվել է վերաքննիչ բողոք, որի պատճառաբանական մասում որպես էական հանգամանք նշվել են հետևյալ հարցադրումները. «**1) Արդյո՞ք հնարավոր է բողոքարկել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին քննիչի որոշումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանի կողմից գործն ըստ էության քննելիս. 2) Եթե այո, ապա արդյո՞ք այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման**»:

Վերաքննիչ դատարանի **2022 թվականի հուլիսի 21-ին** կայացրած որոշմամբ դիմողի պաշտպանի բողոքը մերժվել է:

Դիմողի ներկայացուցչի կողմից բերված հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի կողմից մերժվել է 2022 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ:

Ամբողջ վերոնշյալից հետևում է, որ դիմողը եռաստիճան դատական համակարգի առջև բարձրացրել է լիովին այլ հարց, որը ենթարկվել է համապատասխան քննության և լուծման: Ըստ էության, դիմողը բարձրացրել է հետևյալ հարցերը՝ 1. *խափանման միջոցի հետագա պահպանման անհրաժեշտության վերացմամբ պայմանավորված՝ դրա վերացման խնդիրը*, 2. *խափանման միջոցը վերացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշման անմիջական դատական բողոքարկման հնարավորության բացակայության հերևանքով դիմողի իրավունքների խախտման խնդիրը*:

Մինչդեռ Սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումում դիմողը բարձրացրել է հետևյալ հարցը՝ *նախկին ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության խնդիրը՝ դատական պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, որ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի համար նախատեսված չէ անմիջական դատական մեկնաբանության հնարավորություն*:

Դիմումի շարադրանքից հետևում է, որ դիմողը «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի անմիջական բողոքարկման կառուցակարգի ենթադրյալ բացակայությունն առնչել է նշված խափանման միջոցի իրավասահմանափակող բնույթի բացահայտման և դրա ընտրության իրավաչափության հետ, որպիսի հարցերը դիմողի կողմից դատարաններում չեն բարձրացվել: Մասնավորապես՝ դիմողը Սահմանադրական դատարանում բարձրացրել է այն հարցը, թե արդյոք «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը՝ որպես այդպիսին, խախտում է անձի ազատ տեղաշարժման իրավունքը, և ներկայացրել է նշված խափանման միջոցով անձի ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման տեսակներն ու գործնական դրսևորումները, որոնք երբևէ նախորդիվ չեն դարձել դատական քննության առարկա:

Սահմանադրական դատարանը, ըստ էության, քննության է առել ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին մասն այնպիսի մեկնաբանությամբ, որը դիմողի նկատմամբ վերջնական դատական ակտով նրա նկատմամբ չի կիրառվել, և հետևաբար՝ չէր կարող դառնալ Սահմանադրական դատարանի քննության առարկա: Ավելին՝ Սահմանադրական դատարանը, ըստ էության քննության առնելով սույն դիմումը, փաստացի իրականացրել է ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան մեկնաբանության սահմանադրականության նկատմամբ **վերացական վերահսկողություն**, որպիսի գործառույթը դուրս է Սահմանադրությամբ և ՄԴՕ-ով նախատեսված՝ անհատական դիմումների քննության իրավական ռեժիմից: Համապատասխանաբար, Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-5-րդ և 10-րդ կետերի բովանդակությունից հետևում է, որ խնդրո առարկա դիմումով Սահմանադրական դատարան կարող էին դիմել միայն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը և Մարդու իրավունքների պաշտպանը: Փաստորեն՝

Սահմանադրական դատարանի կողմից խնդրահարույց մոտեցում է դրսևորվել տվյալ սուբյեկտի՝ դիմում ներկայացնելու իրավազորություն ունենալու փաստի գնահատման և, ըստ այդմ, դիմումի քննության նորմատիվ մեթոդաբանության հարցերում: Սույն պնդումը որոշակիորեն հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ Որոշման մեջ դիմողի գործի դատավարական նախապատմությունը համարժեք արտացոլված չէ:

Նշյալ համատեքստում խնդրահարույց է թվում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիրքորոշումը, որով արձանագրվել է քննարկվող խափանման միջոցի կիրառմամբ դիմողի իրավունքների խախտում: Մինչդեռ Մարդու իրավունքների պաշտպանը վերացական սահմանադրական վերահսկողության դիմումով պատշաճ սուբյեկտ է, եթե գտնում է, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ **ինքնին** խախտվում է Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված որևէ հիմնական իրավունք:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում են, որ Սահմանադրական դատարանը հաշվի չի առել նշված հիմնահարցերը և գործի ըստ էության քննության փուլում չի կարճել գործի վարույթը:

2. Գտնում են, որ «սպորազորություն չհեռանալու մասին» խափանման միջոցը՝ որպես այդպիսին, չի խախտում Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով անձի ազատ տեղաշարժման սահմանադրական իրավունքը, այն է՝ չի հանդիսանում այդ իրավունքի անիրավաչափ սահմանափակում:

Սահմանադրության 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

Ինչպես հետևում է Սահմանադրության մեջբերված հոդվածի դրույթներից, ազատ տեղաշարժման իրավունքը սահմանադրական իրավունք է, այն բացարձակ բնույթ չունի և կարող է սահմանափակվել, եթե առկա են որոշակի սահմանադրական հիմքեր: Սահմանադրի այդպիսի մոտեցումը համահունչ է միջազգային իրավական չափանիշներին:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:

Այսպես՝ «**Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին**» միջազգային դաշնագրի (այսուհետ՝ նաև **ՔՔԻՄԴ**) 12-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝

«1. Որևէ պետության փարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք այդ փարածքի սահմաններում ունի ազատ երթևեկության իրավունք և բնակության վայրի ընտրության ազատություն:

2. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի լքել ցանկացած երկիր, ներառյալ իր սեփականը:

3. Վերը նշված իրավունքները չեն կարող դառնալ որևէ սահմանափակման օբյեկտ, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսված են օրենքով, անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ ուրիշների և սույն դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ համատեղելի իրավունքների ու ազատությունների պահպանման համար»:

ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների կոմիտեի՝ ՔՔԻՄԴ-ի նշյալ հոդվածի 1999 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 27 ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ ազատ տեղաշարժի իրավունքը պետության կողմից կարող է սահմանափակվել ՔՔԻՄԴ-ի 12-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերով, և եթե սահմանափակումը նախատեսված է օրենքով, անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում նշյալ նպատակների պաշտպանության համար և համատեղելի է ՔՔԻՄԴ-ով սահմանված մյուս իրավունքների հետ:

«**Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին**» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև **ՄԻԵԿ**) 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն՝

«1. Որևէ պետության փարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ փարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և իր բնակության վայրն ազատորեն ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկրից, ներառյալ իր սեփական երկիրը, հեռանալու իրավունք:

3. Այդ իրավունքների իրականացման նկատմամբ չպետք է կիրառվի որևէ սահմանափակում, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների

կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով»:

ՄԻԵԿ-ով ևս տեղաշարժի ազատության իրավունքը ճանաչվում է որպես ոչ բացարձակ, այն է՝ սահմանափակվող իրավունք, և դրանում ամրագրված են այն հիմքերը, որոնց առկայության պարագայում նշյալ իրավունքը պետության կողմից կարող է սահմանափակվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ), զարգացնելով ՄԻԵԿ-ի նշյալ իրավադրույթները, սահմանել է տեղաշարժման ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության որոշման չափանիշների համակարգ, որը թույլ է տալիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշել՝ արդյո՞ք ազատ տեղաշարժի իրավունքին պետության միջամտությունը եղել է իրավաչափ, թե՞ ոչ: Դրանք են՝ միջամտության՝ օրենքով ամրագրված լինելը, լեգիտիմ նպատակը և անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում (միջամտության համաչափություն):

Այսպես՝ ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում սահմանել է, որ քրեական վարույթի արդյունավետության և դատաքննությանը մեղադրյալի ներկայության ապահովման նպատակով պետությունների կողմից մեղադրյալի ազատությունը սահմանափակող տարաբնույթ կանխարգելիչ միջոցների կիրառումը խնդրահարույց չէ (ՄԻԵԴ-ի վճիռներ հետևյալ գործերով՝ **Հաջիբեյլին ընդդեմ Ադրբեջանի, 2008; Պոպ Բլազան ընդդեմ Ռումինիայի, 2012; Հրիստովն ընդդեմ Բուլղարիայի, 2006; Ռոսենգերնն ընդդեմ Ռումինիայի, 2008; Իվանովն ընդդեմ Ուկրաինայի, 2006; Ֆյոդորովը և Ֆյոդորովան ընդդեմ Ռուսաստանի 2005; Անտոնենկովը և այլք ընդդեմ Ուկրաինայի 2005; Պոպովիչիուն ընդդեմ Ռումինիայի, 2016**):

Ըստ ՄԻԵԴ-ի՝ օրենքով սահմանված և իրավաչափ նպատակին ուղղված՝ տեղաշարժի ազատության իրավունքի սահմանափակումը լեգիտիմ է, եթե առկա է համաչափություն կամ հավասարակշռություն կիրառված միջոցի և հոշակված նպատակի միջև: Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ը տվյալ համատեքստում ուշադրության արժանի հանգամանք է համարում մեղադրյալի վարքագիծը և նրա փախչելու հավանականությունը (ՄԻԵԴ-ի վճիռներ հետևյալ գործերով՝ **Պոպ Բլազան ընդդեմ Ռումինիայի, 2012; Բուլեան ընդդեմ Ռումինիայի, 2013; Ֆոլնեգովիչն ընդդեմ Խորվաթիայի, 2017; Պրեսչերն ընդդեմ Բուլղարիայի, 2011; Պֆայֆերն ընդդեմ Բուլղարիայի 2011; Կիպրիանին ընդդեմ Իտալիայի, 2010; Քերիմլին ընդդեմ Ադրբեջանի 2015; Մանանիկովն ընդդեմ Ռուսաստանի, 2018**), առանց տվյալ իրավասահմանափակման՝ քրեական վարույթի պարզաճ իրականացման հնարավորությունը (ՄԻԵԴ-ի վճիռ հետևյալ գործով՝ **Միազձիկն ընդդեմ Լեհաստանի, 2012**), մեղադրյալին մեղսագրվող հանցագործության բնույթն ու ծանրության աստիճանը (ՄԻԵԴ-ի վճիռներ

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
 ◆ 2(110)2023

հետևյալ գործերով՝ Վիլյան ընդդեմ Իտալիայի, 2010; Սարկիզովը և այլք ընդդեմ Բուլղարիայի, 2012):

Ազատ տեղաշարժի ազատության իրավունքին պետության միջամտության վերոնշյալ համադրելի թեստերի կիրառման համար հարկ է մեջբերել Սահմանադրության վերաբերելի կարգավորումները, որոնք թույլ են տալիս միջազգային իրավական փորձը կիրարկել ներպետական տիրույթում:

Այսպես՝ **Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:** Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է համաչափության սահմանադրական սկզբունքի բովանդակությանը և դրսևորումներին:

Մասնավորապես՝ **2010 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-917, 2010 թվականի հոկտեմբերի 2-ի ՍԴՈ-920, 2010 թվականի նոյեմբերի 16-ի ՍԴՈ-924, 2016 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-1293, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշումներից** հետևում է, որ՝ որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.

1) սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) համարժեքությունը՝ սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Միաժամանակ, **ՍԴՈ-920 որոշման** մեջ ընդգծվում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանման իր լիազորությունն իրականացնելիս օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, օրենսդրության դրույթների բովանդակությունը:

Տվյալ պարագայում **ՔԴՕ 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *շիեռանալու մասին ստորագրություն տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը: Նա պարտավոր է ներկայանալ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին:*

Նշյալ խափանման միջոցը դատավարական հարկադրանքի միջոց է և գետեղված է **ՔԴՕ 18-րդ գլխում:**

Ըստ ՔԴՕ մեջբերված իրավադրույթի՝ մեղադրյալը, որի նկատմամբ կիրառվել է խնդրո առարկա խափանման միջոցը, պարտավոր է վարույթն իրականացնող մարմնի թույլտվությունն ստանալ այլ տեղանք, ներառյալ՝ արտերկիր մեկնելու կամ բնակության վայրը փոխելու համար, ինչպես նաև պարտավոր է ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով, որը նաև կասկածյալի կամ մեղադրյալի ընդհանուր դատավարական պարտականությունն է, որը նախատեսված է **ՔԴՕ 65-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով:**

«Ստորագրություն չիեռանալու մասին» խափանման միջոցով սահմանափակվում է մեղադրյալի ազատ տեղաշարժի իրավունքը: Սահմանափակման լեգիտիմ սահմանադրական նպատակը Սահմանադրության 40-րդ հոդվածով նախատեսված՝ հանցագործությունների կանխումն ու բացահայտումն է:

Վերոնշյալ սահմանադրական նպատակի շրջանակում է գետեղված **ՔԴՕ 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում** ամրագրված՝ *քրեական դատարանի կողմից օրենսդրության խնդիրը՝ ապահովել անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից*, ինչպես նաև վերջինից ածանցվող բուն խափանման միջոցի կիրառման նպատակը, որն ամրագրված է **ՔԴՕ 134-րդ հոդվածի 1-ին մասում**, այն է՝ *խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պաշտան վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:*

Հիշյալ լեգիտիմ սահմանադրական նպատակի իրացման նպատակով և հաշվի առնելով մեղադրյալի անձով պայմանավորված՝ նրա կողմից քրեական վարույթի ընթացքը խոչընդոտելու, ոչ պատշաճ դատավարական վարքագիծ դրսևորելու հավանականությունը՝ վարույթն իրականացնող մարմինն ընտրում է խափանման համապատասխան միջոց՝ տվյալ դեպքում՝ ստորագրությունը չիեռանալու մասին կամ կարող է չընտրել խափանման ոչ մի միջոց:

Սույն համատեքստում հատկանշական է նաև **ՔԴՕ 98³-րդ հոդվածը**, որը վերաբերում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պիտանի և անհրաժեշտ խափանման միջոց ընտրելու՝ վարույթն իրականացնող մարմնի հայեցողության շրջանակին: Ըստ այդ հոդվածի՝ *քրեական վարույթն իրականացնող մարմինը օրենքով սահմանված կարգով կասկածյալի կամ մեղադրյալի*

նկատմամբ ընտրում է խափանման այնպիսի միջոց, որը կբացառի բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը, ինչի մասին կայացվում է պարճառաբանված որոշում:

«Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի դատավարական-իրավական բնույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալը. սույն խափանման միջոցը դասվում է համեմատաբար մեղմ խափանման միջոցների թվին, քանի որ ուղիղ, այն է՝ ֆիզիկական կամ անձի վրա անընդհատ ներգործություն ունեցող իրավասահմանափակում կամ ֆինանսական բեռ չի նախատեսում, ինչպես, օրինակ, համապատասխանաբար, կալանքը կամ գրավը: Վարույթն իրականացնող մարմինը պարզապես հնարավորություն է ստանում մեղադրյալին պահել իր «տեսադաշտում» և ապահովել քրեական դատավարության և, մասնավորապես, վերջինիս նախաքննության փուլի առջև դրված խնդիրների կատարումը: Քննարկվող խափանման միջոցի շրջանակում մեղադրյալի ազատ տեղաշարժն ամենօրյա ռեժիմով Հանրապետության տարածքում գործնականում որևէ պետաիշխանական ներգործության չի ենթարկվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մեղադրյալը ցանկանում է փոխել իր մշտական բնակության վայրը կամ մեկնել արտերկիր: Ընդ որում՝ վարույթն իրականացնող մարմնի թույլտվությունն ստանալու պահանջն այն համաչափ սահմանափակումն է, որը նշյալ խափանման միջոցով դրվում է մեղադրյալի վրա վերջինիս դատավարական կարգավիճակից բխող և ՔԴՕ 65-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով:

Այլ կերպ ասած՝ մեղադրյալի ազատ տեղաշարժման իրավունքի ոչ լիարժեք իրացումը պայմանավորված է պետության քրեաիրավական քաղաքականության պատշաճ իրացման հանրային շահով, որը հավասարակշռում է անձի ազատ տեղաշարժման սահմանադրական իրավունքն այն բոլոր դեպքերում, երբ իրավատերն օրենքով սահմանված կարգով մեղադրվում է հանրորեն վտանգավոր արարք՝ հանցագործություն կատարելու համար:

Հետևաբար՝ երբ անձը հայտնվում է մեղադրյալի կարգավիճակում, վերջինս ստանձնում է համապատասխան պարտականություններ, որոնց կատարումը բոլոր դեպքերում պարտադիր է, մասնավորապես, վարույթն իրականացնող մարմնի կանչով անվերապահորեն ներկայանալու պարտականությունը, իսկ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցն ընդամենը ապահովում է որոշակի կառուցակարգ մեղադրյալին վարույթն իրականացնող մարմնին հասանելու պահելու համար:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ ակնհայտ է, որ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը համապատասխանում է համաչափության սահմանադրական չափանիշին: Ընդամին՝ հարկ է նշել նաև, որ **իրավունքի լեգիտիմ և համաչափ սահմանափակումը որևէ դեպքում չի կարող իրավունքի խախտում համարվել**, հետևաբար՝ ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 2(110)2023

մասով սահմանված պահանջներին բողոքը չի համապատասխանում, քանի որ a priori մեղադրյալը չի կարող պնդել, որ այնքանով, որքանով իր նկատմամբ կիրառվել է «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը, իր ազատ տեղաշարժի իրավունքը խախտվել է:

Որոշակի անհամաձայնություն ունեն նաև Սահմանադրական դատարանի կողմից Որոշման մեջ արձանագրված այն դիրքորոշման հետ, որի համատեքստում վկայակոչվել է Վճռաբեկ դատարանի **27.12.2022 թ. նախադեպային որոշումը**, և սույն համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ մեղադրյալի ազատ տեղաշարժման իրավունքի քննարկվող սահմանափակումն անվերապահ չէ, քանի որ ուղղակիորեն պայմանավորված է վարույթն իրականացնող մարմնի և մեղադրյալի փոխհարաբերություններով՝ այն իմաստով, որ եթե մեղադրյալը դրսևորում է իրավահարգ վարքագիծ և ներկայացնում է, օրինակ, արտերկիր որոշակի ժամկետով և որոշակի նպասկով մեկնելու իրավաչափ անհրաժեշտությունը հիմնավորող ապացույցներ, վարույթն իրականացնող մարմինը թույլատրում է մեղադրյալին ժամանակավորապես լքել երկիրը, ինչն իրագործվել է դիմողի պարագայում: Վերջինս, հանդիսանալով Ազգային ժողովի պատգամավոր, քննիչի թույլտվությամբ հաճախակի մեկնել է արտերկիր գործուղումների: Սրանից հետևում է, որ ըստ էության, մեղադրյալի վրա դրված միակ մշտական պարտականությունը քննարկվող խափանման միջոցի պարագայում բնակության վայրը փոխելու և արտերկիր մեկնելու վերաբերյալ քննիչի թույլտվությունն ստանալն է: Միաժամանակ հարկ է նաև նշել, որ խափանման միջոցը կարող է վերացվել հենց վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ՝ վերջինիս կողմից ընդունվող որոշմամբ: Սույն դատողությունը բխում է **ՔԴՕ 151-րդ հոդվածի 1-ին մասի** իրավա-կարգավորումից, որի համաձայն՝ *անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից խափանման միջոցը կարող է փոխվել:*

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ քննարկվող խափանման միջոցը՝ որպես այդպիսին, հանցավորության դեմ պայքարի և հանցագործությունների բացահայտման իրավաչափ գործիք է, որը թույլ է տալիս արդյունավետորեն իրացնել իրավունքի գերակայության վրա հիմնված և հանցագործություններից պաշտպանված հասարակությունում ապրելու հանրային շահը:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել նաև, որ Որոշման ընդհանուր նորմատիվ տրամաբանությունն այնպիսին է, որ միտված է բարձրացնելու «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման հիմնավորվածության շեմը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելու յուրաքանչյուր դեպքում ձևավորել ապացուցողական բազա առ այն, որ մեղադրյալը ողջամիտ հավանականությամբ չի կատարի քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պարտականությունները:

Կատարված իրավավերլուծությամբ փաստվում է, որ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը պիտանի խափանման միջոց է և

Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով հանդիսանում է ազատ տեղաշարժման իրավունքի իրավաչափ սահմանափակում: Մինչդեռ Որոշմամբ արտահայտվել է հակառակ իրավական դիրքորոշում, և փաստացի նշված խափանման միջոցի կիրառումը դիտարկվել է որպես ազատ տեղաշարժման իրավունքի նկատմամբ պետական միջամտության բարձր ինտենսիվություն: Կայացված Որոշման ուղենշային դերը կհանգեցնի իրարամերժ երկու բացասական հետևանքների՝ կա՛մ կընտրվի բացառապես խիստ խափանման միջոց, կա՛մ որևէ խափանման միջոց չընտրվելու պարագայում կվտանգվի վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական խնդիրների իրագործումը:

Միաժամանակ, վարույթն իրականացնող մարմնի կողմից ազատ տեղաշարժման իրավունքի անհամաչափ սահմանափակումը երաշխավորված է բողոքարկման հնարավորությամբ, ինչի կապակցությամբ սույն հատուկ կարծիքի 3-րդ կետում կներկայացվեն համապատասխան իրավական փաստարկներ:

3. Խափանման միջոցի բողոքարկման կառուցակարգերի վերաբերյալ Որոշման մեջ արտահայտված դիրքորոշման հետ իմ անհամաձայնությունը հետևյալն է.

ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հեղափոխության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հեղափոխական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փոժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:*

Վերոնշյալ իրավադրույթը նախատեսում է մի շարք պայմաններ քրեական վարույթի մասնակցի կողմից բողոքարկման իր իրավունքն իրացնելիս: Ինչպես և ցանկացած բողոքարկման վարույթի դեպքում, առաջին հերթին պահանջվում է հանդիսանալ շահագրգիռ անձ, այսինքն՝ առերևույթ առկա լինեն վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքաբերի իրավունքի կամ օրինական շահի խախտման հատկանիշներ:

Հատուկ կարծիքի 2-րդ հարցադրման առնչությամբ կատարված իրավավերլուծությամբ հիմնավորվեց, որ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցով՝ որպես այդպիսին, մեղադրյալի ազատ տեղաշարժի իրավունքը սահմանափակվում, սակայն չի խախտվում: Մինչդեռ իրավասահմանափակումը որակվում է որպես իրավունքի խախտում, եթե վերջինս օրինական և/կամ հիմնավոր չի կիրառվել, որն անձի համար առաջացրել է բացասական հետևանքներ: Ըստ այդմ՝ ակնհայտ է, որ դիմողի կողմից

վիճարկվող հողվածի մասով վարույթն իրականացնող մարմնի կողմից կիրառված խնդրո առարկա խափանման միջոցը կիրառելու մասին որոշումը չի կարող բողոքարկվել, քանի որ դրանով շոշափվում, սահմանափակվում, սակայն չի խախտվում դիմողի ազատ տեղաշարժի իրավունքը: Այս վավերապայմանները ուղղակիորեն նախատեսված են ՔԴՕ 290-րդ հոդվածով:

Վերոնշյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ դիմողի կողմից վիճարկվող իրավակարգավորման դիսպոզիցիան ունի կիրառման հստակ պայմաններ, որոնցից առանցքայինն՝ բողոք ներկայացնելու համար շահագրգիռ անձ լինելուն դիմողը պարզապես չի համապատասխանում:

Հետևապես՝ նշյալի համատեքստում հարկ է նաև անդրադառնալ այն հարցին, թե արդյոք դիմողի կողմից վկայակոչված իրավադրույթը տվյալ խափանման միջոցի բողոքարկման համար օրենսդրի կողմից նախատեսված քրեադատավարական կառուցակարգ է:

Ինչպես հետևում է ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից, նշված հոդվածը սահմանում է մինչդատական վարույթի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի ակտերի կամ գործողությունների բողոքարկման կառուցակարգը, որը կիրառելի է, եթե նշյալ ակտերով կամ գործողություններով խախտվել է բողոքաբերի իրավունքը: Միննույն ժամանակ, ՔԴՕ 150-րդ հոդվածով սահմանվում է բողոքարկման առանձին ընթացակարգ վարույթն իրականացնող մարմնի կողմից կիրառված խափանման միջոցների համար:

Այսպես՝ ՔԴՕ 150-րդ հոդվածի համաձայն՝

«1. *Խափանման միջոց կիրառելու, փոփոխելու մասին քննիչի և հետաքննության մարմնի որոշումը կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, դատավարության այլ շահագրգիռ մասնակիցները կարող են բողոքարկել համապատասխան դատախազին, իսկ դատախազի որոշումը՝ վերադաս դատախազին*»:

Փաստորեն, օրենսդիրը միմյանցից տարանջատել է մինչդատական վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, օպերատիվ աշխատակցի, քննիչի և դատախազի ակտերն ու գործողությունները՝ որպես բողոքարկման օբյեկտներ, վարույթն իրականացնող մարմնի կողմից կիրառված խափանման միջոցի բողոքարկումից, որը կրկին մինչդատական վարույթի ընթացքում ընդունված ակտի հիման վրա կիրառված դատավարական հարկադրանքի միջոց է, բայց որի իրավական և կառուցակարգային առանձնահատկությունները և, մասնավորապես, անձի հիմնական իրավունքների վրա դրանց ազդեցությունը հաշվի առնելով՝ օրենսդրի կողմից դրա բողոքարկումը նախատեսվել է առանձին նորմով:

Ընդ որում՝ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության կանոնի համաձայն՝ տվյալ պարագայում գործում է հատուկ նորմը՝ ՔԴՕ 150-րդ հոդվածը, որը նախատեսում է մինչդատական վարույթի առանձին ինստիտուտի համար բողոքարկման հատուկ ընթացակարգ՝ թե՛ բողոքարկման հիմքերի և թե՛

բողոքարկման ատյանի տեսանկյունից: Նման մեկնաբանման իրավաչափության մասին է վկայում նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որի համաձայն՝ ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմ:

ՔԴՕ 150-րդ հոդվածով խափանման միջոցի բողոքարկման համար նախատեսված չէ բողոքաբերի իրավունքը խախտված լինելու ուղղակի պահանջ, և հնարավոր է խափանման միջոցը բողոքարկել վերջինիս կիրառման նպատակահարմարության տեսանկյունից՝ հիմք ընդունելով ՔԴՕ 134-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ խափանման միջոցի կիրառման ընդհանուր պայմանները, ինչպես նաև խափանման միջոցի առանձին տեսակների համար նախատեսված հատուկ պահանջները:

Այսպիսով, օրենսդրի կողմից մինչդատական վարույթի ընթացքում ընդունված ակտերի և կատարված գործողությունների բողոքարկման ընթացակարգի վերոհիշյալ տարանջատումը թույլ է տալիս առանձնացնել խափանման միջոցի հետ կապված բողոքարկման երկու հիմք՝ բուն խափանման միջոցի բողոքարկումը ՔԴՕ 150-րդ հոդվածով սահմանված կարգով և խափանման միջոցի կատարման կարգի խախտմամբ կամ խափանման միջոցի կատարման ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքի խախտման պարագայում այդ փաստով վարույթն իրականացնող մարմնի գործողության կամ ակտի բողոքարկումը: Մասնավորապես՝ դիմողի պարագայում նման հիմք կարող է լինել վարույթն իրականացնող մարմնին արտերկիր մեկնելու կամ բնակության վայրը փոխելու թույլտվություն ստանալու խնդրանքի մերժումը, որը կարող է բողոքարկվել արդեն ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, քանի որ առերևույթ առկա կլինի «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից առերևույթ անհիմն որոշման հետևանքով մեղադրյալի ազատ տեղաշարժման իրավունքի առերևույթ խախտում:


Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ գտնում եմ, որ սույն դիմումի հիման վրա հարուցված գործը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա էր կարճման, իսկ ըստ էության որոշում կայացնելու պարագայում 1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը պետք է ճանաչվեր Սահմանադրությանը համապատասխանող:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**

Ս. ՍԱՖԱՐՅԱՆ

9 հունիսի 2023 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԻՆԵՐ ◆ 2(110)2023
431



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ
ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳԻՐՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝
ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 175-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-4-ՐԴ ԿԵՏԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՄԲ ԿԱՅԱՑՎԱԾ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 հունիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ.
Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Հանրապետության նախագահի ներկայացուցիչներ՝ Հանրապե-
տության նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության ներման
և քաղաքացիության բաժնի պետ Ա. Մուրադյանի, մոնիթորինգի և վերլուծու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(110)2023

թյան բաժնի պետ Ա. Ռաշիդյանի, նույն բաժնի գլխավոր մասնագետ Լ. Մելքոնյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ այնքանով, որքանով նախատեսում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների՝ վարչական դատարան բողոքարկելու հնարավորություն, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 10-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի՝ «Դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունների դադարումը» վերտառությամբ 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝

«Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները դադարում են նաև համապատասխան պալատի վերացման դեպքում»:

Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը վերոնշյալ նախադասությամբ լրացվել է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածով:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ ՎԴՕ) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՎԴՕ՝ «Վարչական դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան,

եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.»:՝

ՎԴՕ վերոնշյալ դրույթը չի փոփոխվել/լրացվել:

Գործի քննության առիթը՝ Հանրապետության նախագահի՝ 2023 թվականի մարտի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Վկայակոչելով Սահմանադրության և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի վերաբերելի դրույթները՝ Հանրապետության նախագահը (այսուհետ՝ Դիմող), մասնավորապես, նշում է. «(...) Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի ձևակերպումից և տառացի մեկնաբանությունից հետևում է, որ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնում մեկ անգամ նշանակված անձը չի կարող նշանակվել նույն կամ այլ պալատի նախագահի պաշտոնում անկախ նրանից, թե իր լիազորությունները Դատական օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված որ հիմքով են դադարել (նույնիսկ այն դեպքերում, երբ Դատական օրենսգրքով նախատեսված հիմքերով լիազորությունները դադարել են նախքան Սահմանադրությամբ նախատեսված ժամկետը՝ վեց տարին լրանալը):

(...) Ի տարբերություն դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերի, որոնք սպառիչ սահմանվել են Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ մասում, սահմանադիրը դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահների լիազորությունների դադարման հիմքերի սահմանումը վերապահել է օրենսդրի հայեցողությանը, որը վերջինիս կողմից իրացվել է Դատական օրենսգրքի 35-րդ հոդվածում: Ընդ որում, օրենսդրի կողմից խնդրո առարկա հիմքը բովանդակային առումով մյուսներից որևէ կերպ չի առանձնացվել, և դրա մասով որևէ հատուկ կարգավորումներ չեն նախատեսվել):»:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 2(110)2023

Դիմողը նշում է, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունն իրավակիրառ պրակտիկայում կիրառվել է այն տրամաբանությամբ, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի վերացումից հետո այդ պալատի նախագահի պաշտոնը նախկինում զբաղեցրած անձը կարող է կրկին հավակնել օրենքով ստեղծվելիք նոր պալատի նախագահի պաշտոնին:

Դիմողը, նշելով, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության դրույթներն իրավակիրառ պրակտիկայում միատեսակ չեն ընկալվում և իրացվում, գտնում է, որ Օրենսգրքի հիշյալ դրույթը հակասում է Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությամբ նախատեսված արգելքին, քանի որ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ նախատեսվում է նույն անձի կողմից Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ նշանակվելու հնարավորություն:

Սույն գործով վիճարկվող մյուս դրույթի՝ ՎԴՕ 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (այնքանով, որքանով (...)) առնչությամբ Դիմողը նշում է, որ այն իրավակիրառ պրակտիկայում ստացել է այն բովանդակությունը, որ կիրառելի է նաև Խորհրդի կողմից Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1–4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումները վարչական դատավարության կարգով բողոքարկելիս՝ միաժամանակ, նշելով. «(...) վարչական դատարաններն այս դրույթը համատարած կիրառում են դատավորների կամ դատավորների թեկնածուների կողմից Բարձրագույն դատական խորհրդի՝ Սահմանադրության 166-րդ հոդվածի 3–4-րդ մասերով և 6–9-րդ մասերով նախատեսված սահմանադրական լիազորությունների իրականացման արդյունքում կայացված որոշումների նկատմամբ, որը հակասում է Սահմանադրության 4-րդ հոդվածին, քանի որ Հայաստանի Հանրապետությունում դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման և դատավորների առաջխաղացման վերաբերյալ լիազորությունները, որոնք բացառապես վերապահված են Բարձրագույն դատական խորհրդին և ենթակա են իրականացման միայն այդ մարմնի կողմից, վարչական վերահսկողության դասական մոտեցման պայմաններում սկսում են վերահսկվել միայն և բացառապես դատական իշխանության կողմից, ինչը խաթարում է իշխանությունների հավասարակշռության սկզբունքը»:

Ըստ Դիմողի՝ ՎԴՕ 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն այնքանով, որքանով նախատեսում է Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ նաև Խորհուրդ) կողմից Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1–4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների նկատմամբ դատական անսահմանափակ վերահսկողություն, հակասում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին, քանի որ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԹԻ 2(110)2023

վիճարկվող դրույթով նախատեսված «վարչական ակտ» եզրույթը չի կարող ներառել Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների թեկնածուների ցուցակների կազմման և հաստատման, դատավորների, դատարանների նախագահների նշանակման առաջարկությունների վերաբերյալ կայացված ակտերը, քանզի դրանք չեն կարող դասվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (վարչական իրավունքով) նախատեսված «վարչական ակտերի» շարքին՝ հաշվի առնելով, որ դրանք ընդունող մարմնի՝ դատական իշխանության ձևավորման հարցում ունեցած լիազորությունների առանձնահատուկ բնույթը տարբերվում է գործադիր բնույթ ունեցող վարչարարությունից:

Ըստ Դիմողի՝ ՎԴՕ 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն այնքանով, որքանով նախատեսում է Խորհրդի կողմից Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1–4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների նկատմամբ դատական անսահմանափակ վերահսկողություն, «(...) հակասում է Բարձրագույն դատական խորհրդի՝ Սահմանադրության 173-րդ հոդվածով նախատեսված սահմանադրական դերին և առաքելությանը, քանի որ նշյալ սահմանադրական մարմինն ուղղակիորեն մասնակցում է դատարանների կազմավորմանը և, միաժամանակ, իր սահմանադրական լիազորությունների նշանակալի մասի նկատմամբ իրականացնում է իր իսկ կողմից կազմավորված համակարգի նկատմամբ վերահսկողություն»: Ըստ Դիմողի՝ ՎԴՕ վիճարկվող դրույթը հակասում է նաև Սահմանադրության 166-րդ հոդվածի 3–4-րդ և 6–9-րդ մասերին, ինչպես նաև 175-րդ հոդվածի 1-ին մասի 1–4-րդ կետերին, քանի որ «(...) այս դրույթներով նախատեսված սահմանադրական լիազորությունները վերապահված են բացառապես Բարձրագույն դատական խորհրդին, մինչդեռ վարչական դատարանների կողմից այս լիազորությունների իրականացման նկատմամբ ամբողջ ծավալով և անսահմանափակ վերահսկողությունը կարող է հանգեցնել Վարչական դատարանի կողմից այս լիազորությունների անուղղակի իրականացմանը»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումից հետևում է, որ սահմանվում է Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների **լիազորությունների իրականացման առավելագույն ժամկետը և ոչ թե՛ պարտադիր ժամկետը**: Սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանվում է **Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները դադարման հիմքը՝ համապատասխան պալատի վերացման դեպքում**:

Այսինքն՝ լիազորությունների իրականացման առավելագույն ժամկետի փաստը չի սահմանափակում այդ ժամկետից շուտ այլ հիմքով լիազորու-

թյունների դադարման հնարավորության սահմանումը: Հետևաբար նման հիմքի սահմանումը չի հակասում առավելագույն ժամկետ սահմանված լինելու փաստին»:

Պատասխանողը նշում է, որ կիրառելով Սահմանադրությամբ նախատեսված «Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների» ձևակերպումը՝ օրենսդիրը նպատակ է ունեցել վիճարկվող դրույթը վերաբերելի դարձնել Վճռաբեկ դատարանի պալատներին ընդհանրապես՝ չմասնավորեցնելով պալատը: Ըստ Պատասխանողի՝ «(...) Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արգելքը նշանակում է, որ նույն անձը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ, անկախ Վճռաբեկ դատարանի պալատի մասնագիտացումից, կարող է նշանակվել միայն մեկ անգամ:

(...) պալատի վերացման դեպքում, անկախ այն հանգամանքից պալատը ինչ մասնագիտացման է, եթե տվյալ պալատի նախագահի լիազորությունները դադարում են, ապա նույն անձն այլևս չի կարող զբաղեցնել Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոն:

Քաղաքացիական-վարչական որպես մեկ պալատի նախագահի պաշտոնի և առանձին վարչական պալատի նախագահի պաշտոնի տարբերակման դեպքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ Վճռաբեկ դատարանի վարչական մասնագիտացման պալատի նախագահի պաշտոնում նշանակվում է այն նույն անձը, որը նախկինում զբաղեցրել է այնպիսի մասնագիտացման պալատ, որը, ի թիվս այլնի, կրել է նաև վարչական մասնագիտացում, ինչի արդյունքում էլ ստացվում է, որ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահի պաշտոնում նշանակված անձի գործառույթները և լիազորություններն ամբողջությամբ նույնանում են նախկինում իր ունեցած այն գործառույթներին և լիազորություններին, որոնք անձն ունեցել է քաղաքացիական-վարչական որպես մեկ պալատի նախագահի պաշտոնում պաշտոնավարելիս:

(...) ՀՀ վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունների իրականացման առավելագույն և ոչ թե պարտադիր ժամկետ սահմանված լինելու կարգավորման առկայության պայմաններում, Սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը չի առաջացնում սահմանադրականության հարց»:

Սույն գործով վիճարկվող մյուս դրույթի՝ ՎԴՕ 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (այնքանով, որքանով (...)) առնչությամբ Պատասխանողը, մասնավորապես, նշում է. «**Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 6-9-րդ մասերով, 173-րդ հոդվածով, 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով սահմանված կարգավորումների համատեքստում Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականության հարց առկա չէ, այլ առկա է նշված նորմի Դիմողի դիմումում նշված փաստական հանգամանքների պայմաններում կիրառելիության հարց, մասնավորա-**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԹԻ ◆ 2(110)2023

պես՝ ՀՀ վճարել դատարանի պալատի նախագահի նշանակման վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որպես անկախ պետական մարմնի որոշումը վիճարկվող նորմի շրջանակներում բողոքարկման ենթակա լինելը:

(...)

«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ կերպով սահմանված են սահմանադրական մարմինները, որոնց թվին է դասվում նաև Բարձրագույն դատական խորհուրդը: Այսինքն՝ Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է սահմանադրական մարմին՝ օժտված սահմանադրական լիազորություններով, ունենալով սահմանադրական կարևոր դեր և առաքելություն, որի նույնացումը վարչական մարմիններին և վերջիններիս կողմից իրականացվող վարչարարությանը դուրս է Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես սահմանադրական մարմնի դերի և նշանակության գաղափարից:

Օրենսգրքի 3-րդ հոդվածը ուղղակի կերպով չի սահմանում՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, մասնավորապես՝ դատարանի նախագահ/պալատի նախագահ նշանակելու վերաբերյալ, որպես վարչական ակտ դիտարկելու և այդպիսով դրանք վիճարկելու որևէ դրույթ և վերաբերում է միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված վարչական մարմինների կողմից կայացրած վարչական ակտերին:

(...) Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կարգավորումը Սահմանադրությանը համապատասխանող կարգավորում է»:

3. Բարձրագույն դատական խորհրդի դիրքորոշումները

Ի պատասխան սույն գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավորի՝ Խորհրդին հասցեագրված 2023 թվականի մարտի 23-ի ՍԴԴ-22 գրության՝ 2023 թվականի ապրիլի 4-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Դատական դեպարտամենտի ղեկավարի պարտականությունները կատարողի ստորագրությամբ (N ԴԴ-1 ԴԴ/490-23, 4 ապրիլի 2023 թ.) գրությունը, որին կից ներկայացվել է Խորհրդի դիրքորոշումը՝ սույն գործով վիճարկվող դրույթների համատեքստում առանձին հարցերի վերաբերյալ:

Խորհրդի գրավոր դիրքորոշման մեջ, մասնավորապես, նշված է. «(...) գտնում ենք, որ Վճարել դատարանի պալատի նախագահ նշանակելու հարցը լուծելիս պետք է կարևորվի այն հարցը, թե արդյոք թեկնածուն մեկ անգամ արդեն որպես պալատի նախագահ **համապատասխան պալատի կազմից, վեց տարի ժամկետով** նշանակված եղել է, թե ոչ: Նշվածի տրամաբանությունն ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ (...) ժամկետում Դատական դեպարտամենտը

կազմում և Բարձրագույն դատական խորհրդին է ներկայացնում **տվյալ պալատի բոլոր այն դատավորների ցուցակը, որոնք ունեն ոչ պակաս, քան երեք տարվա դատավորի փորձառություն, չունեն կարգապահական տույժ, չեն պաշտոնավարել տվյալ պալատի նախագահի պաշտոնում և Բարձրագույն դատական խորհրդի անդամ չեն:**

Այստեղ էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի երկու նախադասությունների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումներով սահմանադիրն ու օրենսդիրը նպատակ են հետապնդել բացառելու միևնույն պալատում մեկ անձի գերիշխող դիրք ունենալու հնարավորությունը: Նշվածը, սակայն, չի կարող վերաբերել այն դեպքերին, երբ օրենքով սահմանված կարգով նշանակված Պալատի նախագահի պաշտոնավարումը վաղաժամկետ ընդհատվել է պաշտոնավարողի կամքից անկախ պատճառներով:

Ելնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության սկզբունքից՝ պալատի նախագահի համար պետք է երաշխավորված լինի կա՛մ իր պաշտոնավարման սահմանադրական ժամկետը, որի ընթացքում չեն կարող դադարեցվել նրա՝ որպես պալատի նախագահի լիազորությունները (բացառությամբ օրենքով սահմանված սպառիչ հիմքերի առկայության), կա՛մ պալատի վերացման դեպքում պալատի նախագահի բոլոր թեկնածուների հետ հավասար պայմաններ:

(...)

ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի երկու նախադասությունների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Վճռաբեկ դատարանի **կոնկրետ պալատի** նախագահ չի կարող նշանակվել միայն այն անձը, ով Վճռաբեկ դատարանի **նույն պալատում** որպես նախագահ պաշտոնավարել է 6 տարի և նրա լիազորությունները դադարել են այդ ժամկետը լրանալու հիմքով:

(...)

(...) Հանրապետության նախագահի առարկությունն չընդունելու մասին որոշում չի կայացվել ոչ թե այն պատճառով, որ Բարձրագույն դատական խորհուրդը համաձայնել է (...) առաջադրված՝ Վարչական պալատի նախագահի պաշտոնում նշանակելու համար Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանված արգելքի առկայության մասին Հանրապետության նախագահի առարկության հետ, այլ այն պատճառով, որ Հանրապետության նախագահի առարկությունը չընդունելու հարցը չի ստացել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածով պահանջվող անհրաժեշտ թվով կողմ ձայներ: (...) քննարկմանը մասնակցել է Բարձրագույն դատական խորհրդի 6 անդամ, որոնցից երեքը հարցին դեմ են քվեարկել, ինչի

պատճառով չի ապահովվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածով պահանջվող անհրաժեշտ թվով կողմ ձայներ և միայն այդ երեք ձայնով, ըստ էության, փաստվել է Հանրապետության նախագահի առարկությունն ընդունելը:

(...)

(...) Բարձրագույն դատական խորհրդի կողմից Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1–4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների նկատմամբ դատական վերահսկողությունը երաշխավորված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային բազմաթիվ փաստաթղթերով, այդ թվում՝ Կոնվենցիայով: Օրենսդրորեն ամրագրված չէ որևէ կառուցակարգ, որը կբացառի Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1–4-րդ կետերով նախատեսված լիազորություններն իրացնելիս կայացված որոշումների նկատմամբ դատական վերահսկողությունը: Ավելին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով օրենսդիրն ապահովել է Սահմանադրության 61-րդ, 63-րդ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի իրացումը (...):

Հետևաբար, եթե որևէ անձ կգտնի, որ ինչպես Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1–4-րդ կետերով նախատեսված լիազորություններն իրացնելիս Բարձրագույն դատական խորհրդի կայացրած որոշումներով խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել իր (...) իրավունքները և ազատությունները, (...) ապա այդ անձն իրավունք ունի վարչադատավարական կարգով պաշտպանել իր իրավունքները: Ընդ որում, նշված իրավակարգավորումն ուղղակի բխում է Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածների պահանջներից»:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն դիմումով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրումներին՝

- Օրենսգրքի վիճարկվող դրույթի (Օրենսգրքի 117 և 134-րդ հոդվածների դրույթների հետ համակցության մեջ) գործողության պայմաններում նույն անձին մեկից ավելի անգամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ նշանակելու իրավական հնարավորությունը համահունչ է արդյոք Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման կարգին ու պայմաններին:

- նկատի առնելով, որ դիմումում ներկայացված հիմնավորումներն առավելապես վերաբերում են ՎԴՕ վիճարկվող դրույթի՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2–4-րդ

կետերով ամրագրված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների՝ վարչադատավարական կարգով բողոքարկման հնարավորություն նախատեսելու մասով, սահմանադրականության հարցին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դրա սահմանադրականությունը գնահատել Բարձրագույն դատական խորհրդի հենց նշյալ լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների՝ դատական կարգով բողոքարկման հարցի շրջանակներում. այդ առնչությամբ՝ վիճարկվող դրույթը համահո՞ւնչ է արդյոք Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակին, առաքելությանը, ինչպես նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի կենսագործումն ապահովելուն ուղղված սահմանադրական կարգավորումների/կառուցակարգերին՝ հաշվի առնելով Սահմանադրության 166-րդ հոդվածի 3–7-րդ կետերին (175-րդ հոդվածի 1-ին մասի 2–4-րդ կետերի հետ փոխկապակցվածության մեջ) համապատասխան՝ դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման/ընտրության (Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ընտրության) գործընթացներին սահմանադրական երեք մարմինների՝ Բարձրագույն դատական խորհրդի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի մասնակցության հանգամանքը:

Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող օրինադրույթների սահմանադրականությունը գնահատել, մասնավորապես, Սահմանադրության 4-րդ հոդվածին, 166-րդ հոդվածի 3–7-րդ մասերին՝ 175-րդ հոդվածի 1-ին մասի 2–4-րդ կետերի հետ փոխկապակցվածության մեջ, 139-րդ հոդվածի 2-րդ մասին և 173-րդ հոդվածին համապատասխանության առումով:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է. «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»:
Պետական իշխանությունը, առաջնորդվելով սահմանադրի՝ ժողովրդավարական և իրավական պետության կերտման և շարունակական զարգացման աներկբա պատվիրանով, մարդու հիմնական իրավունքները և ազատությունները դիտարկելով որպես իրավունքի գերակայության ապահովման անսասան հենասյուներ, սահմանադրական պարտավորություն ունի ձևավորել սահմանադրական արժեքանությանը համահունչ արդարադատության համակարգ: Այս առումով սահմանադիրը հստակ ուրվագծել է արդարադատության համակարգի կառուցվածքն ու ձևավորման սկզբունքները՝ օրենսդրին վերապահելով սուսկ մանրամասները սահմանելու հնարավորություն, որոնց հիմքերը պետք է խարսխված լինեն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՆԵՐ ♦ 2(110)2023
 441

սահմանադրաիրավական կարգավորումների վրա՝ բխելով սահմանադրի կողմից դրանց հիմքում ներդրած արժեքներից և տրամաբանությունից:

Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, *Վճռաբեկ դատարանը*, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

Սահմանադրության 166-րդ հոդվածն ամրագրում է դատավորների, դատարանների նախագահների ընտրության և նշանակման, ինչպես նաև *Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների* նշանակման վերաբերյալ մի շարք կարգավորումներ: Այդ առնչությամբ, Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասին համապատասխան՝ եռաստիճան դատական համակարգի դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանված են Օրենսգրքով:

Սահմանադրության՝ «Դատավորի կարգավիճակը» վերտառությամբ 164-րդ հոդվածի 8-րդ մասում թվարկված են *դատավորի լիազորությունների դադարման հիմքերը* (լիազորությունների ժամկետն ավարտվելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելը, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, հրաժարականը, մահը), իսկ նույն հոդվածի 9-րդ մասում՝ *դատավորի լիազորությունների դադարեցման հիմքերը* (անհամատեղելիության պահանջները խախտելը, քաղաքական գործունեությամբ զբաղվելը, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարի-նությունը, էական կարգապահական խախտում կատարելը):

Դատական իշխանության սահմանադրաիրավական առաքելությունից անմիջականորեն սերող անկախությունն ու ինստիտուցիոնալ կայունությունը երաշխավորելու գաղափարը նկատի ունենալով՝ սահմանադիրն ամրագրել է դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերի սպառիչ ցանկը՝ դրանք դիտարկելով որպես դատավորի կարգավիճակի բաղկացուցիչ տարրեր՝ հաշվի առնելով, որ դատավորների պաշտոնավարման ապահովումը նրանց անկախության էական երաշխիքն է:

Այդ համատեքստում, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունների դադարման հիմքերն իրենց ամրագրումն են ստացել Օրենսգրքի 35-րդ հոդվածում: Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդրական մակարդակում համապատասխան կանոնակարգումը *բխում է ոչ թե՛ դատավորի՝ Սահմա-*

նադրության 164-րդ հոդվածով ամրագրված սահմանադրական կարգավիճակից (սահմանադրական մակարդակում դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերի սպառիչ ցանկի սահմանմամբ), դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները Օրենսգրքով սահմանելու սահմանադրական պահանջից, այլ Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասի (դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են Օրենսգրքով) տրամաբանությանը համապատասխան՝ դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունների դադարման հիմքերի իրավական կանոնակարգման անհրաժեշտությունից: Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերում թվարկված որևէ հիմքով դատավորի լիազորությունների դադարումը/դադարեցումը, բնականաբար, դատարանի նախագահի, Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունների դադարման հիմք է, որպիսի մոտեցումն իրացված է Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ թվարկված են դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունների դադարման հիմքերը՝ պաշտոնավարման ժամկետը լրանալը, դատարանի վերացումը, նրանց՝ որպես դատավորի լիազորությունները դադարելը, դադարեցնելը, Խորհրդի անդամ ընտրվելը, նրանց նկատմամբ Օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 3.2-րդ կետով սահմանված կարգապահական տույժը կիրառելը, ինչպես նաև Օրենսգրքի նշված հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերը (հրաժարական):

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ սահմանված է, որ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները դադարում են նաև համապատասխան պալատի վերացման դեպքում: Այդ առնչությամբ, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածը, որով Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է հիշյալ նախադասությամբ, փոխկապակցված է, մասնավորապես, նույն սահմանադրական օրենքի՝ 3-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, որին համապատասխան՝ Վճռաբեկ դատարանում գործում են նաև քաղաքացիական և վարչական առանձին պալատները, ինչպես նաև «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 18-րդ հոդվածի 8-9-րդ մասերի հետ. նշված սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 8-րդ մասին համապատասխան՝ Քաղաքացիական և վարչական պալատը վերացված համարվելու պահից պալատի նախագահի լիազորությունները դադարում են: Համապատասխանաբար

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ◆ 2(110)2023

Քաղաքացիական, Վարչական և Հակակոռուպցիոն պալատները գործելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 134-րդ հոդվածով սահմանված կարգով լուծում է համապատասխան պալատի նախագահի նշանակման համար առաջարկություն ներկայացնելու հարցը»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում մեկնաբանել Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման կարգն ու պայմանները՝ Օրենսգրքի վիճարկվող դրույթի (Օրենսգրքի 117 և 134-րդ հոդվածների դրույթների հետ համակցության մեջ) գործողության պայմաններում նույն անձին մեկից ավելի անգամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ նշանակելու իրավական հնարավորության հարցի համատեքստում:

Այդ առնչությամբ, Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությամբ, մասնավորապես, սահմանված է, որ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահը նշանակվում է համապատասխան պալատի կազմից, և նրա պաշտոնավարման ժամկետն է վեց տարին, իսկ երկրորդ նախադասությամբ նախատեսված է նույն անձի կողմից Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ միայն մեկ անգամ նշանակվելու պահանջը: Սահմանադրական դատարանը կարևորում է Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասության՝ «(...) համապատասխան պալատի կազմից, վեց տարի ժամկետով» ձևակերպման բովանդակության բացահայտումը: Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի նշանակման կարգը մանրամասնված է Օրենսգրքի 134-րդ հոդվածով: Մասնավորապես, Օրենսգրքի հիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Դատական դեպարտամենտը կազմում և Բարձրագույն դատական խորհրդին է ներկայացնում տվյալ պալատի բոլոր այն դատավորների ցուցակը, որոնք ունեն ոչ պակաս, քան երեք տարվա դատավորի փորձառություն, չունեն կարգապահական տույժ, չեն պաշտոնավարել տվյալ պալատի նախագահի պաշտոնում և Բարձրագույն դատական խորհրդի անդամ չեն»: Օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ կազմվում և ներկայացվում է Վճռաբեկ դատարանի տվյալ պալատի բոլոր այն դատավորների ցուցակը, որոնք բավարարում են Օրենսգրքի նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները (դատավորի ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն ունեցող դատավորների թիվը երեքից պակաս լինելու դեպքում ցուցակը կազմելիս դատավորի առնվազն երեք տարվա փորձառություն ունենալու պահանջը չի կիրառվում (2-րդ մաս)):

Օրենսգրքի 134-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ քվեարկության արդյունքներով Հանրապետության նախագահին է առաջարկվում Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնության «կողմ» ձայներ ստացած թեկնածուն: Օրենսգրքի նշված հոդվածի 12-րդ մասին համապատասխան՝

նշանակման ենթակա Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի թեկնածուի՝ Հանրապետության նախագահին առաջարկումն ու նշանակումն իրականացվում են Օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի նշանակման, ըստ այդմ՝ պաշտոնավարման վեցամյա ժամկետը, բնականաբար, վերաբերելի է պալատի նախագահին, այլ ոչ դատավորին. այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները (պաշտոնավարման ժամկետը լրանալու, ինչպես նաև Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված որոշ այլ հիմքերով, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատի վերացումը) դադարելն ինքնաբերաբար չի հանգեցնում նրա՝ որպես Վճռաբեկ դատարանի դատավորի լիազորությունների դադարմանը: *Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունների դադարման՝ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված մի շարք հիմքեր, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատի վերացումը, չեն կարող դիտարկվել նույն հարթությունում, ինչ դատավորի լիազորությունները դադարելու՝ Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ մասում թվարկված հիմքերը՝ սահմանադրաիրավական համապատասխան երաշխիքներով: Նման պայմաններում Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված վեցամյա ժամկետը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնավարման առավելագույն ժամկետն է:*

Սահմանադրական դատարանը փաստում է, որ սահմանադրական մակարդակում Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնավարման ժամկետի ամրագրումն ինքնանպատակ չէ և հնարավորություն է ընձեռում համապատասխան պալատի այլ դատավորներին հավակնել/նշանակվել պալատի նախագահի պաշտոնին՝ Սահմանադրությամբ և Օրենսգրքով ամրագրված համապատասխան պահանջների պահպանմամբ: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ նման սահմանափակ ժամկետը թույլ է տալիս կանոնավոր կերպով համարել պալատի նախագահի պաշտոնը՝ ապահովելով տարասեռության և բազմակարծության աստիճանը, ներկայացուցչականության ավելի բարձր հավասարակշռությունը՝ հաշվի առնելով պալատի նախագահի պաշտոնին ներհատուկ գործառույթների բովանդակությունը:

Սահմանադրության 163-րդ հոդվածի կարգավորումների հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատարանների, Վճռաբեկ դատարանի պալատների ստեղծումն ու վերացումն օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում է:

Վերոնշյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատի վերացման հիմքով Վճռաբեկ դատարանի՝ օրենսդրի կողմից վերացված պալատի նախագահի լիազորությունների դադարման հարցն Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության (վիճարկվող դրույթի)

սահմանադրականության ստուգման առումով չի կարող քննության առարկա դառնալ Սահմանադրության 49-րդ հոդվածով ամրագրված հանրային ծառայության անցնելու իրավունքի սահմանափակման համատեքստում: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «(...) ընդհանուր հիմունքներով *հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը*, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք:

Դատավորի պաշտոնն զբաղեցնող անձանց համար՝ այնքանով, որքանով որ դա վերաբերում է *դատավորի՝ որպես հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի կրողին*, առկա է լրացուցիչ՝ իրավական պետության հիմնարար սկզբունքից ածանցվող *անփոփոխելիության սահմանադրական երաշխիք* (...):

(...)

(...) դատավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման՝ Սահմանադրությամբ ամրագրված այն հիմքերի մեկնաբանության ժամանակ, որոնք ենթակա են կոնկրետացման սահմանադրական օրենքում, օրենսդիրը պետք է դրսևորի զսպվածություն և օրենսդրական կարգավորումների միջոցով չնենգափոխի Սահմանադրության համակարգային տրամաբանությունը, այն է՝ անհարկի չընդլայնի այդ հիմքերի կիրառման օրենսդրական հնարավորությունը, թույլ չտա դրանց կամայական մեկնաբանություն, երաշխավորի դրանց կիրառման ժամանակ արդարության բոլոր պահանջների պահպանումը, այդ թվում՝ պատշաճ ընթացակարգային երաշխիքներ դատավորի լիազորությունները դադարեցնելու ժամանակ:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ բոլոր դեպքերում, *երբ դադարեցվում են դատավորի լիազորությունները, դա վերաբերում է ոչ միայն դատավորի կարգավիճակին, այլ նաև նրա՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքին. նա զրկվում է հեղափոխական պաշտոնավարման իր իրավունքից*, ուստի նրա այդ իրավունքը սահմանափակվում է»:

Վերը մեջբերածից ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է դատավորին, վերջինիս կարգավիճակի տարրերին: Մինչդեռ վիճարկվող դրույթը վերաբերում է Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունների դադարման հիմքին: Տվյալ դեպքում փոփոխությունների արդյունքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը վերացվել է, ստեղծվել/ձևավորվել են երկու առանձին պալատներ (ստեղծվել է նաև Հակակոռուպցիոն պալատը): Նման պայմաններում Օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումից բխում է, որ համապատասխան հիմքով

Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի թափուր տեղ առաջանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում կազմվում և Խորհրդին է ներկայացվում Վճռաբեկ դատարանի տվյալ պալատի բոլոր դատավորների ցուցակը, եթե նրանք բավարարում են Օրենսգրքի նույն հոդվածի 1-ին մասով սահմանված (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի տվյալ պալատի նախագահի պաշտոնում չպաշտոնավարելու) պահանջները: Այդ կարգավորմամբ օրենսդիրը, ըստ էության, նպատակ է հետապնդել *Վճռաբեկ դատարանի տվյալ պալատի կազմում ընդգրկված բոլոր դատավորների համար սահմանել հավասար հնարավորություններ՝ ի թիվս այլնի, ամրագրելով տվյալ պալատի նախագահի պաշտոնում չպաշտոնավարելու պահանջը:*

Սահմանադրական դատարանը նկատում է, որ Օրենսգրքի՝ «Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի նշանակման կարգը» վերտառությամբ 134-րդ հոդվածի 1-ին մասում գործածված «տվյալ պալատի» արտահայտությունը, ուղղակիորեն բխելով Սահմանադրության՝ «Դատավորների ընտրության և նշանակման կարգը» վերտառությամբ 166-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված «համապատասխան պալատի» արտահայտությունից (հաշվի առնելով նաև Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասը, որի համաձայն՝ դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են Օրենսգրքով), բովանդակային առումով, նույնանում է Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասության «համապատասխան պալատ» արտահայտության հետ. տվյալ դեպքում Օրենսգրքի 134-րդ հոդվածում խոսքը վերաբերում է Վճռաբեկ դատարանի կոնկրետ պալատի նախագահի նշանակման կարգին, որպիսի հանգամանքով պայմանավորված, Օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասում գործածված «չեն պաշտոնավարել տվյալ պալատի նախագահի պաշտոնում» արտահայտության «տվյալ պալատի» ձևակերպումը չպետք է մեկնաբանվի ընդհանուր կարգավորումից/տրամաբանությունից անջատ՝ այնպես, որ խոսքը վերաբերում է Վճռաբեկ դատարանի նույն պալատին՝ նկատի առնելով Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությունը, որի համաձայն՝ նույն անձը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ կարող է նշանակվել միայն մեկ անգամ: Հատկանշական է, որ սահմանադիրը գործածել է «Վճռաբեկ դատարանի պալատի» ձևակերպումը, ինչից հետևում է, որ խոսքը վերաբերում է Վճռաբեկ դատարանի ցանկացած/որևէ պալատի: Հակառակ պարագայում, եթե սահմանադիրը նկատի ունենար Վճռաբեկ դատարանի կոնկրետ պալատը, ապա կորոշակիացներ այն՝ գործածելով «նույն պալատի» կամ «համապատասխան պալատի» արտահայտությունները:

Սահմանադրական դատարանը, բացահայտելով Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին և երկրորդ նախադասությունների

բովանդակությունը, գտնում է, որ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ համապատասխան պալատի կազմից կարող է նշանակվել միայն այն անձը, որը երբևէ չի պաշտոնավարել որպես Վճռաբեկ դատարանի որևէ պալատի նախագահ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի՝ սահմանադրական օրենքով վերացված պալատի նախագահի պաշտոնը զբաղեցրած անձը (անկախ որպես այդ պալատի նախագահ վերջինիս պաշտոնավարման փաստացի ժամկետից) Վճռաբեկ դատարանի որևէ (այդ թվում՝ նոր ստեղծված/ձևավորված) պալատի կազմում ընդգրկված լինելու փաստի ուժով չի կարող նշանակվել Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատի նախագահ՝ նկատի ունենալով Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությամբ հստակ սահմանված՝ պալատի նախագահի նշանակման/պաշտոնավարման պարբերականությունը: Հակառակ դեպքում, նույն անձը (Վճռաբեկ դատարանի վերացված պալատի նախագահի պաշտոնը զբաղեցրած անձը) կպաշտոնավարի մեկից ավելի անգամ: Արդյունքում՝ չի պահպանվի սահմանադրի սահմանած «միայն մեկ անգամ» նշանակվելու պահանջը, կխեղաթյուրվի Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի ինչպես երկրորդ, այնպես էլ առաջին նախադասությունների բովանդակությունը: Տվյալ իրավիճակում Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասության՝ «համապատասխան պալատի կազմից» արտահայտության (հաշվի առնելով նաև Օրենսգրքի 134-րդ հոդվածով ամրագրված վերաբերելի կարգավորումները) այնպիսի մեկնաբանության պայմաններում, որի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նոր պալատի ստեղծման/ձևավորման պայմաններում դրա կազմում ընդգրկված բոլոր դատավորները (օրենսդրական համապատասխան պահանջները բավարարելու դեպքում) կարող են նշանակվել նորաստեղծ պալատի նախագահ, նշված դատավորների համար «հավասար հնարավորությունների» ստեղծման/ապահովման առումով առաջ կգա/կփաստվի հնարավորությունների անհավասարությունն այն առումով, որ Վճռաբեկ դատարանի վերացված պալատի նախագահի պաշտոնը զբաղեցրած անձը (անկախ որպես այդ պալատի նախագահ նրա պաշտոնավարման ժամկետից) Վճռաբեկ դատարանի նորաստեղծ պալատի նախագահի պաշտոնին հավակնելով/ նշանակվելով, ըստ էության, ձեռք կբերի առավելություն տվյալ պալատի կազմում ընդգրկված մյուս դատավորների նկատմամբ: Նշված մոտեցումը վերաբերելի է Վճռաբեկ դատարանի ցանկացած (այդ թվում՝ ոչ նորաստեղծ) պալատի նախագահի պաշտոնին հավակնելուն/նշանակվելուն:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի վերացմամբ ստեղծվել/ձևավորվել են Վճռաբեկ դատարանի երկու առանձին պալատներ (քաղաքացիական և վարչական), որպիսի պայմաններում Խորհուրդը Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահի պաշտոնում

նշանակելու համար Հանրապետության նախագահին է առաջարկել այն անձի թեկնածությունը, որը զբաղեցրել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական՝ վերացված պալատի նախագահի պաշտոնը, այսինքն՝ հանդիսացել է ինչպես քաղաքացիական, այնպես էլ վարչական պալատի (մեկ պալատի տեսքով) նախագահ:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ նշանակված անձը, որի լիազորությունները դադարել են պալատի վերացման հիմքով (անկախ որպես պալատի նախագահ նրա պաշտոնավարման ժամկետից), չի կարող նշանակվել Վճռաբեկ դատարանի որևէ պալատի նախագահ:**

5.2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՎԴՕ վիճարկվող դրույթի՝ Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով ամրագրված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների՝ վարչադատավարական կարգով բողոքարկման հնարավորություն նախատեսելու մասով, սահմանադրականությունը գնահատել՝ նկատի ունենալով Խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը, առաքելությունը, դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման/ընտրության (Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ընտրության) գործընթացներին նաև Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի մասնակցության հանգամանքը և այդ առնչությամբ, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի կենսագործումն ապահովելուն ուղղված սահմանադրական վերաբերելի կարգավորումները/կառուցակարգերը:

Իշխանության յուրաքանչյուր մարմնի դերի և կարգավիճակի բացահայտումը չափազանց կարևոր է այդ մարմնի լիազորությունների իրականացմամբ ընդունվող ակտերի դատական կարգով բողոքարկման հնարավորության, դրա սահմանների գնահատման/հստակեցման հարցում: Այդ առումով առանցքային է Խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի բովանդակության բացահայտումը:

Սահմանադրական դատարանը նախ՝ արձանագրում է, որ Խորհրդին վերաբերող կարգավորումների արտացոլումը Սահմանադրության՝ «Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը» վերաբառությամբ 7-րդ գլխում արդեն իսկ վկայում է սահմանադրի կողմից Խորհրդին այնպիսի առանձնահատուկ կարգավիճակ վերապահելու մասին, որն ուղղակիորեն կապված է դրա՝ որպես *անկախ պետական մարմնի*, հիմնարար նշանակություն ունեցող սահմանադրական գործառույթի հետ, այն է՝ *դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելը* (Սահմանադրության 173-րդ

հողված): Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորվում է Խորհրդի՝ Սահմանադրությամբ և Օրենսգրքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով:

Սահմանադրության 174-րդ հոդվածով սահմանված են Խորհրդի կազմն ու կազմավորման կարգը: Մասնավորապես՝ *Խորհուրդը կազմված է տասն անդամից, որոնցից հինգին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը*: Ընդ որում՝ Սահմանադրության հիշյալ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանված է, որ *Խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ադյանների դատարաններից*: Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ *Խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով*: Ըստ այդմ՝ *Խորհրդի ոչ դատավոր անդամներն ընտրվում են ժողովրդի ներկայացուցչական մարմնի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների որակյալ մեծամասնությամբ*:

Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն՝ եթե Ազգային ժողովը եռամսյա ժամկետում Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով չի ընտրում համապատասխան պաշտոնատար անձանց, ապա մինչև Ազգային ժողովի կողմից նրանց ընտրությունը Հանրապետության նախագահն օրենքով սահմանված հիմքերով և կարգով նշանակում է ժամանակավոր պաշտոնակատարներ: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 31-ի ՍԴՈ-1518 որոշման մեջ նշված է, որ համապատասխան պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակումը Սահմանադրությամբ սահմանված հիմքերով (կարգով) Հանրապետության նախագահի կողմից իրականացվող պարտադիր լիազորություն է: Դատարանների և դատավորների անկախության պատշաճ երաշխավորման ապահովման նպատակով սահմանադիրը հատուկ շեշտադրել է Խորհրդի կազմավորման/համալրման անհրաժեշտությունը՝ փոխարինող լիազորություններ ամրագրելով Հանրապետության նախագահի համար: Ընդ որում, ի տարբերություն Խորհրդի ոչ դատավոր անդամների՝ դատավորների ժամանակավոր պաշտոնակատարների նշանակում Սահմանադրությունը չի նախատեսում: Սահմանադրական դատարանի նույն որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադիրը, սահմանելով Հանրապետության նախագահի փոխարինող մասնակցությունը սահմանադրական մի շարք մարմինների կազմավորմանը կամ համալրմանը, որպես Հանրապետության նախագահի պարտադիր լիազորություն (պարտականություն)՝ Հանրապետության նախագահին դիտարկել է որպես **առանցքային դերակատար**՝ մի կողմից, Ազգային ժողովին հակակշռելու, մյուս կողմից՝ սահմանադրական որոշակի մարմինների բնականոն գործունեությունը երաշխավորելու նպատակներով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 2(110)2023

(...)

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև շեշտել, որ Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կամ համալրման առումով անգործություն դրսևորելու և սահմանադրական պարտականությունները չկատարելու միջոցով թափուր տեղերի չհամալրումը կարող է վերջին հաշվով վտանգել նաև դատարանների անկախությունը, եթե նրանց անկախության երաշխավորը՝ Բարձրագույն դատական խորհուրդը, իրավագոր չլինի պատշաճ կերպով իրականացնել իր լիազորությունները»:

Սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Խորհուրդն իր կազմից Օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է Խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:

Սահմանադրության 174-րդ հոդվածի 8-րդ մասով ամրագրված է, որ Խորհրդի կազմավորման մանրամասները սահմանվում են Օրենսգրքով: Այդ առնչությամբ, Օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Խորհրդի դատավոր անդամներն ընտրվում են բոլոր ատյանների դատարանների դատավորներից՝ *Վճռաբեկ դատարանից՝ մեկ անդամ, վերաքննիչ դատարաններից՝ մեկ անդամ, առաջին ատյանի դատարաններից՝ երեք անդամ (ընդ որում՝ մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից՝ առնվազն մեկ անդամ)* համամասնությամբ: Օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Խորհրդում պետք է ներկայացված լինեն բոլոր մասնագիտացումների դատավորները: Նշվածից հետևում է, որ *Խորհրդում պետք է ապահովվի եռաստիճան դատական համակարգի բոլոր ատյանների դատարանների դատավորների ներկայացվածությունը:*

Խորհրդի կազմի և կազմավորման վերաբերյալ սահմանադրական և օրենսդրական վերոնշյալ կարգավորումները միտված են Խորհրդի՝ դատարանների և դատավորների անկախության երաշխավորման սահմանադրական գործառույթի առավելագույնս արդյունավետ իրականացումն ապահովելուն և այդ առնչությամբ, Խորհրդին՝ Սահմանադրությամբ և Օրենսգրքով վերապահված լիազորություններն անկաշկանդ իրականացնելուն՝ բացառելով որևէ արտաքին ներգործություն, ինչպես նաև այդ լիազորություններն իրականացնելիս ընդունվող որոշումներին առավելագույն լեգիտիմություն հաղորդելուն: Նշվածը (հավաքական առումով) Խորհրդի անկախության հույժ կարևոր երաշխիք է:

Սահմանադրության 175-րդ հոդվածով սահմանված են Խորհրդի լիազորությունները. Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով ամրագրված լիազորություններն են նշանակման ենթակա, ներառյալ՝ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին, նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին Հանրապետության

նախագահին առաջարկելը, Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին Ազգային ժողովին առաջարկելը: Խորհրդի՝ սահմանադրական մակարդակում ամրագրում ստացած լիազորությունների ցանկը սպառիչ չէ: Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանված են Օրենսգրքով:

Սահմանադրության 173-րդ հոդվածով նախատեսված գործառույթն արդյունավետ իրականացնելու համար *կարևորվում է* ոչ միայն Խորհրդին՝ իր դերին և կարգավիճակին համարժեք լիազորություններով օժտելը, այլև *իշխանության մարմինների համակարգում այդ լիազորություններին համահունչ գործելու իրական հնարավորության ապահովումը*:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 10-ի ՍԴԴ-1598 որոշման մեջ արձանագրված է. «(...) Բարձրագույն դատական խորհրդի կազմում հավասարապես ներկայացված են օրենսդիր և դատական իշխանությունների կողմից ընտրված անդամները, ինչով և շահեկանորեն ընդգծված է այս ատյանի ժողովրդավարական լեգիտիմությունը, որպես պետական իշխանության 2 ճյուղերի կողմից համատեղ ձևավորված ատյան, որի սահմանադրական լիազորությունների իրականացումը ապահովվում է պետական իշխանության նշված երկու ճյուղերի կողմից Բարձրագույն դատական խորհրդում ընտրված անդամների համաձայնությամբ»:

Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան*: Այդ առնչությամբ, մասնավորապես, Օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ այդ որոշումը ենթակա է բողոքարկման այն պահից սկսած մեկամսյա ժամկետում, երբ բողոք բերող անձը (մարմինը) իմացել է կամ կարող էր իմանալ այնպիսի էական ապացույցի կամ հանգամանքի ի հայտ գալու մասին, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա: Ընդ որում՝ նշված դեպքում բողոքը քննող մարմինը կրկին Խորհուրդն է, իսկ բողոքի քննության արդյունքներով կայացված որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է: Այլ կերպ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս Խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան, այդ հարցով Խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել բացառապես Օրենսգրքով նշված հիմքի առկայության դեպքում, իսկ բողոքը քննող մարմինը Խորհուրդն է:

Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «(...) գործող սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում բացակայում է Հայաստանի Հանրապետությունում գործող դատարաններից որևէ մեկում [եռաստիճան դատական համակարգի մասով] դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն, քանի որ դա կհակասի Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ սահմանադրական մարմնի կարգավիճակին: Բացի դրանից, տվյալ որոշումների վերանայումը, դրանով իսկ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը դուրս է Հայաստանի Հանրապետությունում դատարանների սահմանադրական գործառույթների շրջանակներից»:

Խորհուրդն օժտված է սահմանադրական այնպիսի կարգավիճակով, որ վերջինիս սահմանադրական մի շարք լիազորությունների իրականացմանը ցանկացած միջամտություն կարող է խոչընդոտել այդ մարմնի՝ դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու գործառույթի իրականացմանը:

Վերոնշյալ համատեքստում կարևորվում է Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2–4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների՝ դատական վերահսկողության առարկա հանդիսանալու, այլ կերպ՝ Խորհրդի նշված որոշումների՝ վարչական դատավարության կարգով բողոքարկման հնարավորության հարցը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հանրապետության նախագահին կամ Ազգային ժողովին համապատասխան անձանց թեկնածություններն առաջարկելու հետ կապված հարաբերություններում Խորհրդի կողմից գործադիր բնույթի վարչարարություն չի իրականացվում՝ պայմանավորված Խորհրդի սահմանադրական կարգավիճակով, ըստ այդմ՝ դրա սահմանադրական լիազորությունների բնույթով: *Սահմանադիրը դատական իշխանության (եռաստիճան դատական համակարգի մասով) ձևավորմանը մասնակցության/ներգրավվածության առումով Խորհրդին օժտել է բացառիկ լիազորություններով, որպիսի պայմաններում եռաստիճան դատական համակարգում ընդգրկված դատարանների կողմից Խորհրդի վերոնշյալ սահմանադրական լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողությունը կարող է հանգեցնել սահմանադրի կողմից բացառապես Խորհրդին վերապահված լիազորությունների ընդհուպ «յուրացմանը»:* Դրանով իսկ կձևախեղվի Խորհրդի՝ Սահմանադրության 173-րդ հոդվածով ամրագրված գործառույթի բովանդակությունը, քանզի Խորհուրդը չի կարող երաշխավորել դատարանների և դատավորների անկախությունն այն պայմաններում, երբ փաստացի դրա սահմանադրական լիազորությունների իրակա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 2(110)2023

նացումը, արդյունքում՝ կայացվող որոշումները, կախվածության մեջ են դրվում հենց դատարանից:

Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2–4-րդ կետերի՝ Խորհրդի լիազորություններն ամրագրող դրույթները փոխկապակցված են Սահմանադրության 166-րդ հոդվածի 3–7-րդ մասերի դրույթների հետ: Մասնավորապես՝ Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից: Սահմանադրության հիշյալ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Խորհրդի առաջարկությամբ, համապատասխան պալատի կազմից, իսկ 5-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից: Սահմանադրության 166-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված է, որ առաջին արյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Խորհրդի առաջարկությամբ: Սահմանադրության հիշյալ հոդվածի 7-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված է, որ առաջին արյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Խորհրդի առաջարկությամբ, համապատասխան դատարանի կազմից:

Սահմանադրական վերոնշյալ կարգավորումներից հետևում է, որ սահմանադիրը նախատեսել է դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման/ընտրության գործընթացին սահմանադրական երեք մարմինների՝ Խորհրդի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ներգրավվածությունը/մասնակցությունը: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի դերակատարության հարցին:

Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը: Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հանրապետության նախագահը Սահմանադրության 166-րդ հոդվածի 3, 4, 6 և 7-րդ մասերով սահմանված դեպքերում կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող մարմին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ

առարկությունը, ապա Հանրապետության նախագահն ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան: Սահմանադրության 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե Հանրապետության նախագահը չի կատարում Սահմանադրության նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

Վերոնշյալի համատեքստում, Սահմանադրական դատարանի 2020 թվականի մարտի 31-ի ՍԴՈ-1518 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Հանրապետության նախագահը, Սահմանադրության «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը» վերտառությամբ 4-րդ հոդվածի ուժով գործառնության առումով դասվելով գործադիր իշխանությանը, այդուհանդերձ, ամբողջովին դուրս դրվեց գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգից, և, ի տարբերություն գործառնության առումով գործադիր իշխանությանը պատկանող այլ անկախ կամ ինքնավար մարմինների, պետության գլուխն է և ունի այդ կարգավիճակին բնորոշ գործառնություններ և դրանցից ածանցվող լիազորություններ: Ըստ այդմ՝ Հանրապետության նախագահը՝ որպես պետության գլուխ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին մաս), **հանրությանը և պետությանն ինտեգրող, ազգային միասնությունը խորհրդանշող սահմանադրական մարմինն է:**

Ըստ էության, զերծ լինելով պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակմանը, ինչպես նաև կառավարմանը բովանդակային առումով մասնակցելու գործառնության և չկրելով դրանց պատասխանատվությունը՝ Հանրապետության նախագահին սահմանադրորեն պատվիրակվել է **լինել անաչառ և առաջնորդվել բացառապես համապետական և համազգային շահերով** (Սահմանադրության 123-րդ հոդվածի 3-րդ մաս): Ըստ այդմ՝ Հանրապետության նախագահին սահմանադրորեն վերապահվել է **վերկուսակցական արբիտրի դեր**, որն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ (Սահմանադրության 124-րդ հոդվածի 5-րդ մաս): Միևնույն ժամանակ վերկուսակցական (ապակուսակցական) արբիտրի դերը, որը հիմնված է թե՛ Հանրապետության նախագահի՝ որպես պետության գլխի, ինտեգրող գործառնության, թե՛ նրա անաչառության վրա, ենթադրում է **Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառնության իրականացում**, ինչը ևս ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրությամբ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ մաս): Բացի դրանից, Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառնությունը, իր հերթին, ենթադրում է, որ **Հանրապետության նախագահը պետք է ունենա զսպումների և հակակշիռների միջոցով այդ գործառնության արդյունավետորեն իրականացնելու հնարավորություն**, ուստի նա պետք է ոչ միայն կարողանա կատարված փաստերից հետո գնահատել ենթադրյալ հակասահմանադրական գործողությունները (անգործությունը) կամ որոշումները,

այլև պետք է կարողանա, նախևառաջ, **կանխել դրանց ի հայտ գալը՝ օժտված լինելով կանխարգելիչ սահմանադրական վերահսկողության որոշակի լիազորություններով:**

(...)

Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի շրջանակներում Հանրապետության նախագահը (...) օժտված է **հավասարակշռող լիազորություններով** թե՛ օրենսդիր մարմնի, թե՛ նաև գործադիր իշխանության մարմինների և անգամ Բարձրագույն դատական խորհրդի նկատմամբ: Հանրապետության նախագահին այդ առումով օժտված է, հատկապես, այնպիսի գործիքակազմով, ինչպիսիք են (...) Սահմանադրական դատարան դիմելը և պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակելը:

Հարկ է նշել, որ Հանրապետության նախագահի լիազորությունները, կախված սահմանադրորեն կանխորոշված նպատակներից, իրենց բնույթով ինչպես **պարտադիր են**, այնպես էլ **հայեցողական**: Հանրապետության նախագահի պարտադիր և հայեցողական լիազորությունները ինքնուրույն կամ ոչ ինքնուրույն (կաշկանդված) են:

(...)

Սահմանադրությամբ սահմանված հիմքերով (կարգով) Հանրապետության նախագահն իրականացնում է հետևյալ **հայեցողական լիազորությունները**.

(...)

(...) Վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների դատավորներին, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակելը (Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասություն, 4-րդ մասի առաջին նախադասություն, 6-րդ մաս և 7-րդ մասի առաջին նախադասություն) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

(...)

Հանրապետության նախագահի հայեցողական լիազորությունների մեծամասնությունը իրականացվում է կա՛մ Սահմանադրությամբ սահմանված նախադրյալների առկայությամբ, կա՛մ սահմանադրական այլ մարմնի (իրավասու սուբյեկտի) լիազորությունների իրականացման հիմքով: Այս կանոնից բացառություն են կազմում (...) նշանակումների հարցերով առարկություններ ներկայացնելու կամ՝ որպես այլընտրանք՝ Սահմանադրական դատարան դիմելու կամ որևէ գործողություն չկատարելու (Սահմանադրության (...) 166-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ մասեր՝ փոխկապակցված 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի հետ (...)), ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունները»:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 2(110)2023

Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ Սահմանադրության 166-րդ հոդվածի 3, 4, 6 և 7-րդ մասերով սահմանված դեպքերում իրավասու/առաջարկություն ներկայացնող մարմնի կողմից Հանրապետության նախագահի առարկությունը չընդունվելու դեպքում Հանրապետության նախագահին իրավասու է դիմելու Սահմանադրական դատարան: Ըստ այդմ՝ նշված գործընթացին կարող է ներգրավվել Սահմանադրական դատարանը՝ Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան՝ Սահմանադրական դատարան դիմելու դեպքում: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածը վերաբերում է նաև Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հարցերի վերաբերյալ գործերի քննությանը: Նշված սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ նույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան դիմում է Հանրապետության նախագահը՝ իր առարկություններն իրավասու մարմնի (Խորհուրդ կամ Ազգային ժողով) կողմից չընդունվելու պահից եռօրյա ժամկետում, եթե գտնում է, որ իրեն ներկայացված առաջարկությունը հակասում է Սահմանադրությանը: Նշված սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ նույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող դատավարությանը ներգրավվում է Հանրապետության նախագահին համապատասխան առաջարկություն ներկայացրած մարմինը (Խորհուրդը կամ Ազգային ժողովը): Հիշյալ սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ նույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը կարող է ընդունել որոշում Խորհրդի կամ Ազգային ժողովի կողմից Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը Սահմանադրությանը համապատասխանող կամ հակասող ճանաչելու մասին:

Սահմանադրական և օրենսդրական նշված կարգավորումները միտված են Խորհրդին, Ազգային ժողովին (Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ), Հանրապետության նախագահին և Սահմանադրական դատարանին՝ Սահմանադրությամբ վերապահված համապատասխան լիազորություններն իրացնելով Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի համապետքստում հակակշիռների և զսպումների կառուցակարգերի արդյունավետ իրացումն ապահովելուն: Տվյալ դեպքում Հանրապետության նախագահը, Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, իրավասու է իրացնելու իր՝ Խորհրդի կամ Ազգային ժողովի համապատասխան լիազորությանը հակակշռող լիազորությունը, իսկ Սահմանա-

դրական դատարանը՝ վերջնական լուծում տալ (բովանդակային առումով) համապատասխան խնդրին/հարցին:

Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությանը համապատասխան՝ *Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուներին՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից*, ինչպես նաև Սահմանադրության 166-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությանը համապատասխան՝ *Վճռաբեկ դատարանի նախագահին (Վճռաբեկ դատարանի կազմից) Խորհրդի առաջարկությամբ ընտրում է պետության միակ առաջնային մանդատով օժտված սահմանադրական մարմինը՝ Ազգային ժողովը՝* առաջին դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, երկրորդ դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: *Խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում նշվածն առավելագույն լեգիտիմություն է հաղորդում համապատասխան գործընթացին:*

Օրենսգրքի 133-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ *Ազգային ժողովը Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների մասով առաջարկվող թեկնածուին ընտրում և Հանրապետության նախագահին առաջարկում է, իսկ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահի առաջարկվող թեկնածուին ընտրում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:*

Վերոնշյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումներով համապատասխան առաջարկությունների ներկայացումը Հանրապետության նախագահին և Ազգային ժողովին որևէ կերպ չի կաշկանդում վերջիններիս չընդունել/մերժել դրանք: Հանրապետության նախագահը՝ Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ Սահմանադրության պահպանման իր գործառույթի շրջանակներում Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերում կարող է համապատասխան ակտն իր առարկություններով վերադարձնել Խորհուրդ:

Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում Հանրապետության նախագահը կարող է համապատասխան ակտն իր առարկություններով վերադարձնել Ազգային ժողով:

Խորհրդի կամ Ազգային ժողովի կողմից առարկությունների չընդունման դեպքում Հանրապետության նախագահն ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան (եթե Հանրապետության նախագահը չի կատարում նշված պահանջները, ապա համապատասխան

ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով (Սահմանադրության 139-րդ հոդվածի 3-րդ մաս):

Փաստորեն, վերոնշյալ դեպքերում սահմանադիրը նախատեսել է Հանրապետության նախագահ-Խորհուրդ, Հանրապետության նախագահ-Ազգային ժողով փոխհարաբերություններում համապատասխան գործառույթը/լիազորություններն իրացնելիս հակակշռող կառուցակարգեր: Բացի դրանից, սահմանադիրը նախատեսել է նշված գործընթացին Հանրապետության նախագահի նախաձեռնությամբ/դիմումով Սահմանադրական դատարանի ներգրավվածության հնարավորությունը: Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: Սահմանադրական դատարանն է իրավասու Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորություններն իրացնելիս լուծում տալ համապատասխան հարցին:

Ազգային ժողովը կարող է չընտրել Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությանը համապատասխան՝ վճռաբեկ դատարանի դատավորների՝ Խորհրդի կողմից առաջարկվող թեկնածուներին: Ազգային ժողովը կարող է չընտրել Սահմանադրության 166-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությանը համապատասխան՝ Վճռաբեկ դատարանի նախագահի՝ Խորհրդի կողմից առաջարկվող թեկնածուին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2–4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների նկատմամբ դատական վերահսկողության պայմաններում կիսեղայնության իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակությունը, այլ կերպ՝ սահմանադրի կամքը:

Հատկանշական է, որ Խորհուրդը վարչական գործերից մեկով որպես պատասխանող, իրավական դիրքորոշում է արտահայտել, մասնավորապես, առ այն, որ «Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակը չի բացառում առանձին դեպքերում նաև որպես վարչական մարմին հանդես գալու և վարչական ակտ ընդունելու իրավական հնարավորությունը, սակայն այդ մարմնի արտաքին ազդեցության ամբողջ գործունեությունն անվերապահորեն որպես վարչական մարմին բնորոշ հատկանիշ գնահատելն առնվազն անհիմն է:

(...)

(...) Սահմանադրության 173-րդ հոդվածի ուժով Բարձրագույն դատական խորհուրդը անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Կոնկրետ այս կարգավիճակի իրացմանն առնչվող գործունեությունը որևէ կերպ չի կարող հանդիսանալ որպես վարչական մարմնի գործունեություն, քանզի կխաթարվի այդ մարմնի

բնականոն գործունեության երաշխիքները: Վարչական մարմնի կարգավիճակը համատեղելի չէ դատական իշխանության մարմինների անկախությունը երաշխավորելու սահմանադրական իրավագործության հետ, հակառակ պարագայում դա կհանգեցնի անտրամաբանական և հակասական փաստական իրավահարաբերության, երբ արդեն իսկ արհեստականորեն կախվածության մեջ դրված մարմինն փորձ կարվի վերապահել մեկ այլ մարմնի անկախության երաշխավորման առաքելություն:

(...) ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ որևէ ներպետական օրենսդրական ակտով չի նախատեսվել Բարձրագույն դատական խորհրդի որոշումների վիճարկման այլ դատական ընթացակարգ:

Այն, որ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունն այնպիսին է, որ պետք է երաշխավորի անկախության և ընդունված իրավական ակտերի այնպիսի կայունության աստիճան, որը համահունչ ու անհրաժեշտ է իշխանության մի ամբողջ ճյուղի անկախությունը երաշխավորելու համար, բխում է նաև Սահմանադրության համապատասխան հիմնադրույթներից:

(...) հարցում դատարաններին Բարձրագույն դատական խորհրդի կողմից կայացվող որոշումների վերաբերյալ վերահսկողական լիազորություն վերապահելը կիմաստազրկի ՀՀ Սահմանադրությամբ դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի գոյությունն ընդհանրապես՝ որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավասություն իրականացնող անկախ պետական մարմնի»:

Հաշվի առնելով խորհրդի՝ որպես սահմանադրական մարմնի, առանձնահատուկ կարգավիճակը, ըստ այդմ՝ խորհրդի սահմանադրական առաքելությունը, կազմի և կազմավորման կարգի առանձնահատկությունները, սահմանադրական լիազորությունների բացառիկությունը, խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացման առնչությամբ Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-7-րդ մասերին համապատասխան՝ դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման/ընտրության (Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ընտրության) գործընթացներին առանցքային սահմանադրական մարմինների/ինստիտուտների՝ Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի, մասնակցությունը (ոչ թե ձևական, այլ բովանդակային առումով), ինչպես նաև Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ կենսագործումն ապահովելուն ուղղված համապատասխան սահմանադրական կարգավորում-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 2(110)2023

ների առկայությունը, այդ առնչությամբ՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի սահմանադրական վերաբերելի լիազորությունների ծավալը և դրանց արդյունավետ իրացումն ապահովող զսպումների և հակակշիռների կառուցակարգերի առկայությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումները չեն կարող հանդիսանալ դատական վերահսկողության առարկա. դրանք դատական կարգով չեն կարող բողոքարկվել:

Վերոնշյալը ենթադրում է նաև ՎԴՕ՝ «Գործերի առարկայական ընդդատությունը» վերտառությամբ 10-րդ հոդվածի կարգավորումների՝ օրենսդրական մակարդակում հստակեցում՝ սույն որոշմանը (վերջինիս շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումներին) համահունչ:

Հաշվի առնելով ողջ վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՎԴՕ 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով ամրագրված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումները դատական կարգով բողոքարկման ենթակա չեն:

5.3. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով ամրագրված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների պատճառաբանվածության հարցին:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված լիազորություններն իրականացնելիս կայացվող որոշումների պատճառաբանվածության պահանջն առանձնակի կարևորվում է այդ որոշումների բողոքարկման սահմանափակման պայմաններում: Հիշյալ սահմանադրական լիազորությունների իրականացմամբ որոշումներ կայացնելիս Խորհուրդը, անշուշտ, պետք է ունենա համապատասխան որոշման պատճառաբանության խորությունը և ծավալը որոշելու հայեցողություն, որը, սակայն պետք է իրականացվի դատավորների մասնագիտական առաջխաղացման և դրա վրա ազդող որոշումների համար հիմք ծառայող չափորոշիչների հիման վրա: Նշվածը կնպաստի դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուների ընտրության, դատավորների առաջխաղացման, վերջնարդյունքում՝ դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման/ընտրության գործընթացներում հանրային հաշվեպահության հարցերի ապահովմանը և կամայականությունների բացառմանը:

Սահմանադրական դատարանը Խորհրդի կողմից նշված լիազորությունների իրականացման շրջանակներում ընդունված և դատավորների կամ դատավորների թեկնածուների մասնագիտական առաջխաղացման վրա ազդեցություն ունեցող որոշումների պատճառաբանվածության անհրաժեշտության համարվեքսպրում անհրաժեշտ է համարում նշել, որ Խորհրդի՝ քննության առանցքում գտնվող սահմանադրական երեք լիազորությունները վերաբերում են իրավական գործընթացների, որոնցում որոշիչ դերակատարություն ունեն նաև Հանրապետության նախագահը (Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետեր) և Ազգային ժողովը (Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Այդ երկու սահմանադրական մարմինների որոշումների համար Խորհրդի որոշումներում պատճառաբանությունն անհրաժեշտ է տեղեկացված որոշում կայացնելու համար, քանի որ, թեպետ այս մարմինները սահմանափակված չեն ներկայացված դատավորների կամ թեկնածուների ընտրության հարցերի համար անհրաժեշտ այլ թույլատրելի աղբյուրներից տեղեկատվություն ստանալ, Խորհրդի հեղինակավոր դիրքորոշումը չի կարող փոխարինվել այլ մարմինների կողմից տրամադրված պատճառաբանություններով:

Ավելին, Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հատուկ շեշտադրում է Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ համապատասխան ակտն առարկություններով Խորհրդին վերադարձնելու և այդ առարկությունները Խորհրդի կողմից չընդունվելու դեպքում Սահմանադրական դատարանի դիմելու լիազորության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու հնարավորությունը, որն առաջնահերթությամբ Խորհրդի որոշման համար հիմք ծառայած պատճառաբանությունների առկայությունն է: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Խորհրդի հիշյալ որոշումների պատճառաբանվածությունը Հանրապետության նախագահի համար Խորհրդի որոշման առնչությամբ Սահմանադրական դատարանի դիմելու և նման դիմումի անհրաժեշտության գնահատականի համար հիմք է (տես՝ *mutatis mutandis*, 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1628 որոշում, կետ 5.3):

Մյուս կողմից՝ օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա խնդրո առարկա լիազորությունների իրականացման արդյունքում Խորհրդի որոշումների պատճառաբանվածությունը կոչված է համոզելու, որ դատավորի կամ թեկնածուի մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ կայացված որոշման հիմքում ընկած են ոչ թե անհատական կամ խմբային մոտեցումներ ու շահեր կամ տվյալ դատավորի կամ թեկնածուի անձի նկատմամբ սուբյեկտիվ և քողարկված վերաբերմունքը, այլ՝ Խորհրդի սահմանադրական առաքելության շրջանակին համատեղելի նպատակային նկատառումներ (տես՝ *mutatis mutandis*, 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1628 որոշում, կետ 5.3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ նշանակված անձը, որի լիազորությունները դադարել են պալատի վերացման հիմքով (անկախ որպես պալատի նախագահ նրա պաշտոնավարման ժամկետից), չի կարող նշանակվել Վճռաբեկ դատարանի որևէ պալատի նախագահ:


2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով ամրագրված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումները դատական կարգով բողոքարկման ենթակա չեն:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

2 հունիսի 2023 թվականի
ՍԴՈ-1691



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2022 թվականի Դեկտեմբերի 13-ին եւ 2023 թվականի
Փետրվարի 15-ին ՀԱՅՏԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ
ԿՆՔՎԱԾ՝ «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-Ի
ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳԵՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ (ՎՎԲ/KFW) ՏԵՂԱԿԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

2(110)2023

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

13 հունիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ.
Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաս-
տանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռ. Գևորգյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի դեկ-
տեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխա-
նակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության
ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի

(ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2023 թվականի մայիսի 4-ի N 654-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2023 թվականի մայիսի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով՝ Գերմանական Միջազգային համագործակցության ընկերության և Վերականգնման վարկերի բանկի տեղական գրասենյակներ հիմնելու և Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև համագործակցությունը զարգացնելու նպատակով:

Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությանը կձանուցի, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական պահանջները կատարված են:

2. Համաձայնագրի համաձայն՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև զարգացման համագործակցությունը սատարելու նպատակով Երևանում կարող են հիմնվել Միջազգային համագործակցության ընկերության տեղական գրասենյակ (այսուհետ՝

ՄՀԸ գրասենյակ) և Վերականգնման վարկերի բանկի տեղական գրասենյակ (այսուհետ՝ ՎՎԲ գրասենյակ):

Համաձայնագրի 2-րդ կետով սահմանվում է, որ ՄՀԸ գրասենյակն աջակցում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության անունից Տեխնիկական համագործակցության շրջանակում նախատեսված ծրագրերի կատարմանն ու կառավարմանը և ներկայացնում է ՄՀԸ-ն Հայաստանում: ՄՀԸ գրասենյակը կարող է կատարել նաև նախատեսված ծրագրերից դուրս մասնագիտական և վարչարարական այլ գործառույթներ, ինչպես նաև երկրին առնչվող և տարածաշրջանային բնույթի հանձնարարություններ: Գրասենյակն իրավունք ունի սարքավորումներ և վարչարարական աջակցություն տրամադրելու նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ միջոցառումներ իրականացնող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ կատարող կազմակերպություններ ՖՏԴԻ/PTB) և Երկրաբանական հետազոտությունների և բնական պաշարների դաշնային ինստիտուտին (ԵՀԲՊԴԻ/BGR):

Համաձայնագրի 3-րդ կետով սահմանվում է, որ ՎՎԲ գրասենյակը գործընկեր պետությանը և կատարող գործընկեր կազմակերպություններին օգնում է նախապատրաստել և իրականացնել Ֆինանսական համագործակցության շրջանակում Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից խրախուսվող ծրագրերը և ներկայացնում է ՎՎԲ-ն Հայաստանում: ՎՎԲ գրասենյակը կարող է կատարել նաև նախատեսված ծրագրերից դուրս այլ մասնագիտական և վարչարարական գործառույթներ, ինչպես նաև երկրին առնչվող և տարածաշրջանային բնույթի այլ հանձնարարականներ, որոնք վերաբերում են ծրագրերին: Գրասենյակն իրավունք ունի սարքավորումներ և վարչարարական աջակցություն տրամադրելու նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ միջոցառումներ իրականացնող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ կատարող կազմակերպություններ ՖՏԴԻ/PTB-ին և ԵՀԲՊԴԻ/BGR-ին):

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունն իր ծառայությունները մատուցում է կատարող կազմակերպություններ ՄՀԸ ու ՎՎԲ և իր հանձնարարությամբ գործող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ ՖՏԴԻ/PTB-ի և ԵՀԲՊԴԻ/BGR-ի) միջոցով, իսկ Հայաստանի Հանրապետության Կառավարությունն այդ կատարող կազմակերպությունների գործընկեր է նշանակում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը ստանձնում է գրասենյակների համար անհրաժեշտ բոլոր ներդրումային և գործառնական ծախսերը, գրասենյակների գործունեությունն ապահովող անձնա-

կազմի (ինչպես գործուղված, այնպես էլ տեղացի կամ տարածաշրջանային մասնագետների) ծախսերը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները պատշաճ հոգաձությամբ կապահովեն գրասենյակների անվտանգությունն ու պաշտպանությունը (կետ 7, ենթակետ ա),

3.2. գրասենյակների համար ներմուծված պարագաները, այդ թվում՝ սարքերն ու ավտոմեքենաները, ազատել ներմուծման ու արտահանման բոլոր տեսակի տուրքերից, նավահանգստային ու պահեստային վճարներից, ինչպես նաև այլ պետական վճարներից, և երաշխավորել դրանց անհապաղ բացթողումը (կետ 7, ենթակետ բ),

3.3. ՄՀԸ և ՎՎԲ կատարող կազմակերպություններին և նրանց գրասենյակներին ազատել բոլոր տեսակի ուղղակի հարկերից (կետ 7, ենթակետ գ),

3.4. ՄՀԸ և ՎՎԲ կատարող կազմակերպությունների կամ նրանց գրասենյակների՝ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերած պարագաները և ստացած ծառայություններն ազատել Հայաստանի Հանրապետությունում գանձվող շրջանառության հարկերից կամ համանման այլ անուղղակի հարկերից. ազատումը կարող է լինել փոխհատուցման կամ այդ հարկերից ազատման եղանակով (կետ 7, ենթակետ դ),

3.5. հաստատել կատարող կազմակերպությունների կամ գրասենյակների՝ հեռահաղորդակցային կապերի, այդ թվում՝ ռադիոկապի և արբանյակային կապուղիների միացման վերաբերյալ դիմումները, օգնել կատարելու բոլոր անհրաժեշտ գրանցումները (կետ 7, ենթակետ ե),

3.6. աջակցել կատարող կազմակերպությունների դիմումներին, որոնք վերաբերում են գրասենյակների աշխատակիցների աշխատանքի թույլտվություններին, ինչպես նաև կացության անհրաժեշտ թույլտվություններին և վիզաներին (կետ 7, ենթակետ զ),

3.7. գործուղված մասնագետներին և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամներին անվճար և անգրավ հիմունքներով տրամադրել անհրաժեշտ վիզա, աշխատանքի և կացության թույլտվություն (կետ 7, ենթակետ է),

3.8. ապահովել ՄՀԸ մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամների՝ 1998 թվականի հուլիսի 27-ի շրջանակային համաձայնագրով սահմանված բոլոր իրավունքները. միևնույն իրավունքները համապատասխան կիրառությամբ ապահովել նաև ՎՎԲ գործուղված մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամների, ինչպես նաև՝ հարկ եղած դեպքում, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ գործող այլ կատարող

կազմակերպությունների գործուղված մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամների համար (կետ 7, ենթակետ ը):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

13 հունիսի 2023 թվականի
ՍԴՈ-1692

2(110)2023



ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ՀԱՅՏԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎԱԾ՝ «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-Ի ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ (ՎՎԲ/KfW) ՏԵՂԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1692 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի հունիսի 13-ի ՍԴՈ-1692 որոշմամբ որոշել է, որ 2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի հունիսի 13-ի ՍԴՈ-1692 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻԿ 2/(110)2023

հողվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել

միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1692 որոշմամբ 2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտազարտի փոխանակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Միաժամանակ Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հետևում է, որ Կառավարության գործունեությունը ղեկավարում է վարչապետը, իսկ նրա բացակայության ժամանակ վարչապետի սահմանած կարգով վարչապետին փոխարինում է փոխվարչապետներից մեկը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված: Ընդ որում, վերը նշված կարգավորումները հնարավոր են համարում այդ հարցով դիմումի ստորագրումը նաև վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից: Միաժամանակ իմ գնահատմամբ, եթե դիմումը ստորագրվում է ոչ թե վարչապետի, այլ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից, Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին պետք է կցվի այդ փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը (դրա պատճենը), քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի փաստել նրա՝ որպես վարչապետին փոխարինող անձի՝ Սահմանադրական դատարանում Կառավարությանն ի պաշտոնե ներկայացնելու լիազորության առկայությունը:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է Հայաստանի Հանրապետության վարչապետի գրության ձևաթղթի վրա կազմված, Մեր Գրիգորյանի կողմից Սահմանադրական դատարանին հասցեագրված գրություն¹, որով նա, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասով, դիմել է Սահմանադրական դատարան՝ 2022 թվականի դեկտեմ-

¹ Ինչպես 2023 թվականի մայիսի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված գրության, այնպես էլ դրան կից ներկայացված՝ Կառավարության 2023 թվականի մայիսի 4-ի թիվ 654-Ա որոշման վրա առկա չէ ստորագրություն, ինչին անդրադարձ կկատարվի ստորև:

բերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

Մինչդեռ սույն գործի նյութերը հնարավորություն չեն տալիս եզրահանգում կատարել այն մասին, որ Սահմանադրական դատարան դիմած անձն իրավասու էր միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով Կառավարության անունից դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Մասնավորապես՝ գործի նյութերից պարզ չէ, թե Սահմանադրական դատարան դիմած անձն ինչ կարգավիճակով է Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն դիմել Սահմանադրական դատարան, արդյոք նա եղել է վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետ, թե՛ ոչ, այն դեպքում, երբ ըստ սույն գործի նյութերի՝ նշված դիմումը ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետ Միեր Գրիգորյան»-ի կողմից:

Գտնում են, որ դիմողի կողմից ներկայացված՝ գործի նյութերի հիման վրա նշված հարցերը պարզելու հնարավորության բացակայության պայմաններում դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ինչը հիմք էր «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման, այն է՝ եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին դիմողին տեղեկացնելու համար:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավական նորմերից հետևում է, որ դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների, իսկ էլեկտրոնային եղանակով դիմումի ներկայացումը Սահմանադրական դատարան թույլատրելի է միայն այն դեպքում, երբ

Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված

կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է

հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ որևէ ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա

առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ սույն դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ սույն դեպքում նաև առկա չէին ինչպես

գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու հրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«13» հունիսի 2023թ.



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻՆ**



2023 թվականի մայիսի 2-ին ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինին:

Սահմանադրական դատարանի նախագահը, ողջունելով Բարձր դատարան այցը, շնորհավորել է դեսպան Քվինին դիվանագիտական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(110)2023

առաքելությունը ստանձնելու կապակցությամբ՝ ընդգծելով նրա գործունեության կարևորությունը աշխարհում և հատկապես մեր տարածաշրջանում արձանագրվող բարդ գործընթացների ժամանակաշրջանում:

Անդրադառնալով Սահմանադրական դատարանի և ԱՄՆ դեսպանության միջև հաստատված ամուր գործընկերային կապերին՝ Արման Դիլանյանը հույս է հայտնել, որ դեսպան Քրիստինա Քվինի պաշտոնավարման ընթացքում այդ համագործակցությունը կշարունակի զարգանալ ու ընդլայնվել:

«Որպես Հայաստանի Բարձր դատարան, մեր հանձնառությունն է ապահովել ժողովրդավարության, ինքիշխանության, ազատության և իրավունքի գերակայության անշեղ ամրապնդումը մեր երկրում», - նշել է ՍԴ նախագահը: Արման Դիլանյանը բարձր է գնահատել ԱՄՆ գործընկերների կողմից համակարգային բարեփոխումներին շարունակական աջակցությունը՝ ի նպաստ Սահմանադրական դատարանի՝ որպես պետական կառավարման ինստիտուտի կարողությունների ամրապնդմանն ու ինստիտուցիոնալ անկախության խթանմանը:


ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նշել է, որ տպավորված է ՀՀ դատաիրավական համակարգում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումներով՝ հատկանշական համարելով, որ ժողովրդավարական արժեքները խարսխվում են ամուր դատաիրավական համակարգի վրա:

Տիկին Քվինը մեծապես կարևորել է Սահմանադրական դատարանի և ԱՄՆ դեսպանատան, տարբեր գործակալությունների միջև արդեն իսկ առկա համագործակցության դրական փորձը և պատրաստակամություն հայտնել աջակցել դրանց շարունակականության ապահովմանը:

Քննարկման ընթացքում կողմերն ընդգծել են հայ-ամերկյան «Դատական դիվանագիտության» զարգացման անհրաժեշտությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքներ իրականացնել ՀՀ Սահմանադրական դատարանի և ԱՄՆ Գերագույն դատարանի միջև համագործակցությունն ու երկխոսությունը վերականգնելու և ակտիվացնելու ուղղությամբ:

Հանդիպմանն անդրադարձ է եղել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ



2023 թվականի մայիսի 5-ին Միջազգային քրեական դատարանի (Հաագա, Նիդերլանդներ) չորրորդ նախագահ, պաշտոնաթող դատավոր Չիլե Էբո-Օսուջին Սահմանադրական դատարանում հյուրընկալել է դատարանի փոխնախագահ, դատավոր Վահե Գրիգորյանը:

Ողջունելով հյուրին՝ Բարձր դատարանի փոխնախագահը ներկայացրել է Հայաստանի Սահմանադրական դատարանի գործունեությունը, սահմանադրական արդարադատության ոլորտում առկա ձեռքբերումները և մարտահրավերները:


Վահե Գրիգորյանի ուղեկցությամբ Չիլե Էբո-Օսուջին այցելել է Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, ծաղիկ խոնարհել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, Ցեղասպանության թանգարանում ծանոթացել Մեծ եղեռնի փաստագրությանը, վկայություններին, լուսանկարներին:

2(110)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ



2023 թվականի մայիսի 24-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում պաշտոնապես մեկնարկել է «Աջակցություն Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումներին» ծրագիրը, որը միտված է Սահմանադրական դատարանում ընթացող ինստիտուցիոնալ բարեփոխումների խթանմանը, Բարձր դատարանի ներքին ընթացակարգերի բարելավմանը և հանրային հաշվետվողականության բարձրացմանը: Ծրագրի տևողությունը 18 ամիս է: Այն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության ֆինանսական աջակցությամբ՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի մեկնարկի պաշտոնական միջոցառմանը մասնակցել են պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ողջունելով հյուրերին, շնորհակալություն է հայտնել Նիդերլանդների Թագավորության դեսպան Նիկո Սխերմերսին՝ ինչպես բարեփոխումների ծրագրին աջակցելու, այնպես էլ Սահմանադրական դատարանի և Դեսպանության միջև ձևավորված օրինակելի գործընկերության և բարեկամության համար:

«Ժողովրդավարությունը և իրավունքի գերակայության ապահովումը շարունակական աշխատանք է, և որոշ իմաստով դա պետության և հասարակության յուրօրինակ հանձնառությունն է համընդհանուր ճանաչում ունեցող արժեքների համակարգին: Չնայած այսօր առկա համաշխարհային և տարածաշրջանային մարտահրավերներին՝ Հայաստանի Հանրապետությունը հեղուկականորեն շարունակում է իրականացնել ժողովրդավարական բարեփոխումների ու իրավունքի գերակայության ամրապնդմանը միտված օրակարգը:

Այսօր, ինչպես իմ գրեթե բոլոր ելույթներում, չեմ կարող չանդրադառնալ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված ինքնիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական ագրեսիայի դրսևորումներին, ինչպես նաև արդեն հինգ ամսից ավել շարունակվող Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակմանը և դրա հետևանքով արցախահայության առջև ծառայած խնդիրներին: Կարծում եմ, որ այս տարածաշրջանային զարգացումների համատեքստում այսօր առավել քան կարևոր է, որ մեր Հանրապետության դատաիրավական ոլորտի մարմինները պարզաճ իրականացնեն սահմանադրորեն իրենց վերապահված գործառույթները՝ դրանով միմիայն ուժեղացնելով անկախ, ժողովրդավար ու ինքնիշխան հանրապետության սահմանադրական փիլիսոփայությունը և արժեքանական հիմքերը», ասել է Բարձր դատարանի նախագահը:

Նիդերլանդների Թագավորության դեսպան Նիկո Սխերմերսը կարևորել է, որ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ առումով այս դժվարին ժամանակներում Հայաստանը հետևողական է՝ առաջ շարժվել ժողովրդավարության և օրենքի գերակայության ճանապարհով: «Մենք պատրաստ ենք աջակցել Հայաստանի իրավական ինստիտուտներին՝ ժողովրդավարական գործընթացների իրականացման գործում, ինչի վրա հիմնված է նաև այս ծրագիրը», - նշել է դեսպան Սխերմերսը:

Ծրագրի իրականացման պատասխանատու՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Լուսինե Հակոբյանի խոսքով, մեծ պատասխանատվությամբ են ստանձնել ծրագիրը կյանքի կոչելու պարտավորությունը և անելու են հնարավորը՝ այն արդյունավետ իրականացնելու համար:

«Մեզ համար էական է, որ Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ զարգացման այն կարիքները, որոնք նախանշվել էին Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանապա աջակցությամբ իրականացված մեր նախորդ ծրագրում և արտացոլվել

են այս ծրագրում, առավելագույն արդյունավետությամբ բավարարվեն», - նշել է Լուսինե Հակոբյանը:

Սահմանադրական դատարանի նախագահն ընդգծել է, որ ինստիտուցիոնալ կարողությունների ու հնարավորությունների իմաստով ամուր, մշտապես զարգացում ապրող սահմանադրական դատարանը նաև ժողովրդավարության անշրջելիության ապահովման և թվային ժամանակաշրջանում սահմանադրական իրավունքների անխափան իրացման կարևորագույն երաշխիք է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՏՆՕՐԵՆԻՆ



2023 թվականի հունիսի 21-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանի «Արդարադատության ոլորտի աջակցության» ծրագրի տնօրեն Մարկ Լասսմանին և ծրագրի թիմի անդամներին:

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը բարձր է գնահատել ԱՄՆ դեսպանության կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը, որոնք ուղղված են իրավունքի գերակայությանը, արդարադատության մատչելիությանը, դատական վարչարարության արդիականացմանը և պատրաստակամություն է հայտնել աջակցելու դրանց բնականոն կիրարկմանը:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանի «Արդարադատության ոլորտի աջակցության» ծրագրի տնօրեն Մարկ Լասսմանը ողջունել է Սահմանադրական դատարանում մեկնարկած ինստիտուցիոնալ բարեփոխումները և վերահաստատել է ԱՄՆ ՄԶԳ-ի անկեղծ հանձնառությունն աջակցելու դրանց բարեհաջող իրականացմանը:

ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի «Արդարադատության ոլորտի աջակցության» ծրագրի գործընկերների խնդրանքով ներկայացվել են Սահմանադրական դատարանի ներքին ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքը, ի հայտ եկած հրատապ կարիքները:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(110)2023 ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել իրավունքի գերակայության խթանման, Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման ոլորտներում համատեղ միջոցառումների իրականացմանը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքային մակարդակում համաձայնեցնել Սահմանադրական դատարանի և ԱՄՆ ՄՁԳ Հայաստանի «Արդարադատության ոլորտի աջակցության» ծրագրի միջև համագործակցության հստակ շրջանակներն ու ռազմավարական առաջնահերթությունները:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԵՆԿԱԼՎԵԼ ԵՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ
Մ. Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**



2023 թվականի մայիսի 11-ին և 12-ին Սահմանադրական դատարան են այցելել Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի և Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի ուսանողները: Ապագա իրավագետներին ընդունել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ներկայացրել Բարձր դատարանի դերն ու առաքելությունը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում:

Ուսանողների հետ հանդիպման ընթացքում Արման Դիլանյանը ապագա իրավագետների հետ քննարկել է Սահմանադրական իրավունքին, Սահմանադրական դատարանի գործառույթների առանձնահատկու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ ◆ 2(110)2023

թյուններին, լիազորությունների շրջանակին առնչվող՝ ուսանողներին հետաքրքրող մի շարք մասնագիտական հարցեր:

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողները հանդիպում են ունեցել նաև ՍԴ դատավոր Արթուր Վաղարշյանի հետ:

Երևանի պետական համալսարանի և Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի ուսանողները շրջայց են կատարել Սահմանադրական դատարանում:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ
ԵՐԵՎԱՆԻ Մ.ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ
Մ.Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԴԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 2(110)2023

2023 թվականի մայիսի 25-ին և 31-ին Սահմանադրական դատարան են այցելել Երևանի Մ.Մաշտոցի անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի և Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողները: Մ.Մաշտոցի անվան համալսարանի ուսանողների հետ հանդիպմանը Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը ներկայացրել է Բարձր դատարանի դերն ու առաքելությունը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում:

Արման Դիլանյանը ապագա իրավագետների հետ քննարկել է Սահմանադրական իրավունքին, Սահմանադրական դատարանի գործառույթների առանձնահատկություններին, լիազորությունների շրջանակին առնչվող՝ ուսանողներին հետաքրքրող մի շարք մասնագիտական հարցեր:

Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի ուսանողները և Մոսկվայից ժամանած

դասախոսները Սահմանադրական դատարանի նախագահի օգնական Նաիրա Հովհաննիսյանի հետ քննարկել են Հայաստանի դատաիրավական համակարգին առնչվող հարցեր, զուգահեռներ տարել տարբեր կրկրներում իրավական հարցերի օրենսդրական կարգավորումների շուրջ: Նաիրա Հովհաննիսյանը պատասխանել է դասախոսներին և ուսանողներին հետաքրքրող մի շարք մասնագիտական հարցերի:

Երևանի Մ.Մաշտոցի անվան համալսարանի և Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի ուսանողները շրջայց են կատարել Սահմանադրական դատարանում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ



2023 թվականի ապրիլի 6-ին Սահմանադրական դատարանի փոխնախագահ Վահե Գրիգորյանը մասնակցել է «Աջակցություն դատաիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում» ծրագրի տեխնիկական հանձնաժողովի հանդիպմանը: Ծրագիրն իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից և դրան պատակն է աջակցել Հայաստանին դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության շրջանակներում:

Հանդիպման ընթացքում շեշտելով Սահմանադրական դատարանի և Եվրոպայի խորհրդի համապատասխան ինստիտուտների համագործակցության կարևորությունը՝ փոխնախագահ Վ. Գրիգորյանը վերահաստատել է Սահմանադրական դատարանի պատրաստակամությունը սահմանադրական արդարադատության բարեփոխումների արդյունավետ իրականացման գործում, նշելով, որ լիափութ է Հայաստանի և Եվրոպայի խորհրդի միջև 2023-2026 թվականների գործողությունների պլանով սահմանադրական արդարադատության ոլորտում նշված համագործակցության արդյունավետության հարցում: Համագործակցության ծրագրերի բաժնի փոխտնօրեն Լիլիթ Դանեղյանն առանձնահատուկ շնորհակալություն է հայտնել Սահմանադրական դատարանին, Բարձրագույն Դատական խորհրդին, Վճռաբեկ դատարանին և այլ պետական մարմիններին՝ համագործակցության համար:

«Աջակցություն դատաիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում» ծրագիրը մեկնարկել է 2023 թվականի մարտի 1-ին և

2(110)2023

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

նպատակ է հետապնդում աջակցել Հայաստանին դատական համակարգի բարեփոխման հետագա արդյունավետ իրականացման հարցում՝ ամրապնդելով վերջինիս անկախությունը, հաշվետվողականությունը, պրոֆեսիոնալիզմը և քրեական արդարադատության շահառուներին՝ ապահովելու քրեական արդարադատության նոր օրենսդրության արդյունավետ իրականացումը մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան:

ՄԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐԿԱ Է ԳՏՆՎԵԼ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԻ՝ ԹԱԳԱՎՈՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ



Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը **2023 թվականի ապրիլի 27-ին** մասնակցել է Նիդերլանդների Թագավորության Ազգային տոնի՝ Թագավորի օրվա առթիվ Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատանը կայացած պաշտոնական ընդունելությանը:

Շնորհավորելով Հայաստանում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլաս Յակոբ Սխերմերսին, դեսպանության ողջ աշխատակազմին և բարեկամ նիդերլանդացի ժողովրդին ազգային տոնի՝ Թագավորի օրվա առթիվ, Բարձր դատարանի նախագահը նշել է, որ Նիդերլանդները պատմականորեն եղել են այն բնօրրանը, որտեղ իրենց զարգացումն են ապրել ժամանակակից միջազգային իրավակարգի առանցքային հայեցակարգերը, ինքնիշխան պետականության ու իրավունքի գերակայության փիլիսոփայությունը, միջազգային մարդասիրական իրավունքի ուղենիշային սկզբունքները:

«Նիդերլանդների ազգային տոնը՝ Թագավորի օրը, իր մեջ կրում է ազգային միասնության և համերաշխության խորհուրդը: Հենց նման գաղափարական հենքի վրա է կայանում ու ամրապնդվում ժողովրդավարական արժեքներով պետությունը: Դուք, ազգային արժեքները պահպանելով, քաղաքացիական բարձր գիտակցությամբ հասարակություն կերտելու և փոփոխվող աշխարհի մարտահրավերներին դիմակայելու և առաջ գնալու լավագույն օրինակն եք», - շնորհավորական խոսքում նշել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԵՍԱՊԱՆ ԴԵՍՊԱՆՍՏՐԱԿՏՆԵՐ 2(110)2023

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

2023 թվականի մայիսի 3-5-ը Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը և Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանը եռօրյա աշխատանքային այցով մեկնել են Բելոլին՝ մասնակցելու «Կլիմայի փոփոխությունը որպես մարտահրավեր սահմանադրական իրավունքի և սահմանադրական դատարանների համար» խորագրով համագումարին:

Եվրոպայի սահմանադրական դատարանների նախագահների համագումարը, որին մասնակցել են նաև Եվրոպական միության արդարադատության դատարանի նախագահ Կուն Լենարթսը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Շիոֆրա Օ'Լիրին, կազմակերպվել է Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի կողմից:

Աշխատանքային նիստերն ընթացել են երեք տարբեր օրակարգերի շուրջ՝ «Կլիմայի վերաբերյալ գործերով սահմանադրական դատարաններ դիմելը», «Սահմանադրական պարասխանալություն. պարճառայնություն, պաշտպանության պարտականություններ, ազատություններ» և «Սահմանադրական դատարանների ներուժը կլիմայի փոփոխության դեմ պայքարում. նրանց հնարավորություններն ու սահմանափակումները քաղաքական գործընթացում» խորագրերով:

Համագումարի մասնակիցներին Բելվյու ամրոցում հյուրընկալել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է «ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ XI ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ»



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(110)2023

2023 թվականի մայիսի 11-13-ը Սահմանադրական դատարանի պատվիրակությունը մեկնել է Սանկտ Պետերբուրգ, որտեղ կայացել է «Պետերբուրգյան XI իրավաբանական ֆորումը»:

Սահմանադրական դատարանի դատավորներ Արաիկ Թունյանը և Հովակիմ Հովակիմյանը մասնակցել են «Սահմանադրություն և սահմանադրական վերահսկողություն. դոկտրինի մշակում և պրակտիկայի բարելավում» խորագիրը կրող ֆորումին և դրան հաջորդող կոնֆերանսին: «Պետերբուրգյան XI իրավաբանական ֆորումը» միջազգային մասնագիտական հարթակ է, որը հնարավորություն է ստեղծում մասնագիտական հանրույթի համար քննակրելու սահմանադրաիրավական որոտի արդի խնդիրները:

ՍՈՖԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ 20-ՐԴ ՆԻՍՏԸ



«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) իրավերով Սահմանադրական դատարանի նախագահի օգնական Նաիրա Հովհաննիսյանը՝ որպես Վենետիկի հանձնաժողովում Սահմանադրական դատարանի լիազոր ներկայացուցիչ (կապի պատասխանատու), Սոֆիայում մասնակցել է **Սահմանադրական արդարադատության միացյալ խորհրդի 20-րդ նիստին**: Կապի պատասխանատուների և Վենետիկի հանձնաժողովի անդամների միջև տեղեկատվության և փորձի փոխանակումը նպատակ ունի ամրապնդել դատարանների համագործակցությունը՝ ապահովելով դատարանների միջև երկխոսության շարունակականությունը:

Սահմանադրական արդարադատության միացյալ խորհրդի նիստին հաջորդել է «Պետությունների կողմից ձեռնարկված միջոցառումները՝ ի պատասխան COVID-19 ճգնաժամի, և դրանց ազդեցությունը սահմանադրական արդարադատության վրա. սահմանադրական նախադեպային իրավունքն արտակարգ իրավիճակներում» թեմայով խորհրդաժողովը:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 372/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՆՅԱՆ, Ա.
ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱԴԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.Գ.Թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 01.09.2023թ.

Դասիչ՝ 77754

Գրաչափը՝ 70X100 1/16

Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
<http://www.concourt.am>


Вестник Конституционного Суда Республики Армения N 2(110)2023

Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 2(110)2023

Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 2(110)2023

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am

ISSN 8888-0000



ABC-abc-1234

